ՄԿՐՏԻՉՅԱՆ Ա. Ե., ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ Գ. Ն.,
ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Կ., ՎԱՐՏԻԿՅԱՆ Ա. Ռ.,
ՎԵՐՄԻՇՅԱՆ Հ. Ռ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մկրտիչյան Ա. Ե., Շահնազարյան Գ. Ն., Սահակյան Ա. Կ.,
Վարտիկյան Ա. Ռ., Վերմիշյան Հ. Ռ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.55
Ս 783

Հրատարակության է երաշխավորվել
ԵՊՀ գիտական խորհուրդը

Մկրտիչյան Ա. Ե., Շահնազարյան Գ. Ն., Սահակյան Ա. Կ., Վարտիկյան Ա. Ռ., Վերմիշյան Հ. Ռ.

Ս 783 Սոցիալական ինքնության պահպանման հիմնախնդիրները ՀՀ գյուղական համայնքներում: Կոլեկտիվ մենագրություն/ Ա. Մկրտիչյան, Գ. Շահնազարյան, Ա. Սահակյան, Ա. Վարտիկյան, Հ. Վերմիշյան- Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 198 էջ:

Գրքում ներկայացված են ՀՀ գյուղական համայնքներում սոցիալական ինքնության դրսևորման, պահպանման և վերարտադրության հիմնախնդիրները: Այդ տեսանկյունից, դիտարկվել են ՀՀ գյուղական համայնքներում սոցիալական փոխհարաբերությունների փոփոխության առանձնահատկությունները, իրականացվող սոցիալական քաղաքականության և գյուղական համայնքների վերարտադրության հիմնախնդիրները, մասնավորապես անդրադարձ է արվել աշխատանքի դերի ու նշանակության քննությանը:

Գիրքը տպագրվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ֆինանսավորմամբ: Գրքում ներկայացված հետազոտությունն իրականացվել է հայ-բելառուսական համատեղ գիտական նախագծի՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շրջանակներում: Աշխատությունը նախատեսված է ՀՀ գյուղական համայնքների հիմնախնդիրներն ուսումնասիրող, դրանով հետաքրքրվող մասնագետների, ուսանողների և հանրության լայն շրջանակների համար:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.55

ISBN 978-5-8084-1902-5

© ԵՊՀ հրատ., 2014
© Հեղ. խումբ, 2014

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....5
ԳԼՈՒԽ 1 ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 10
1.1 Հայկական գյուղական համայնքը պատմասոցիոլոգիական վերլուծության պրիզմայում.....10
1.2 Գյուղի սոցիալական կառուցվածքի փոփոխության օրինաչափությունները արդի հայաստանյան հասարակությունում 20
1.3 Ազգային ավանդույթներն ու կրոնականությունը գյուղական առօրյայում 29
ԳԼՈՒԽ 2 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 39
2.1 Պետական սոցիալական աջակցության հիմնական ուղղությունները.....39
2.2 ՏԻՄ ղեկավարները ՀՀ գյուղական համայնքների զարգացման հիմնախնդիրների մասին.....48
2.3 Աղքատության հիմնախնդիրը ՀՀ Թալինի շրջանի գյուղական համայնքներում.....61
ԳԼՈՒԽ 3 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....71
3.1 Գյուղացիների նյութական բարեկեցությունը և կյանքի որակը ՀՀ-ում 74
3.2 Գյուղում աշխատանքային ռեսուրսների սեռատարիքային բաշխվածության հիմնահարցերը ագրարային արտադրության համատեքստում.....94
3.3 Ֆերմերային շարժումը ՀՀ-ում և Բելառուսում.....109
3.4 Աշխատանքային գործունեության դերը գյուղական համայնքի համերաշխության պահպանման գործում 116

ԳԼՈՒԽ 4 ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 129
4.1 Գյուղական տնային տնտեսությունը որպես ինքնապահովման և ձեռներեցության ինստիտուտ 129
4.2 Սոցիալական համախմբվածության հիմնախնդիրները հայաստանյան գյուղերում 139
4.3 Գյուղական միգրանտների շրջանում սոցիալական կոգնիցիաների փոփոխության դրսևորումները (Տավուշի մարզի օրինակով) 157
4.4 Ագրարային ոլորտի բարեփոխումների փորձը և հեռանկարները ՀՀ-ում 173
ՀԱՎԵԼՎԱԾ 189
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 194

ՆԱԽԱԲԱՆ

Հասարակության արդի տիպը քաղաքային (ուրբան) է: Կապիտալիստական հասարակության ձևավորմամբ առաջնահերթություն ստացավ քաղաքը որպես սոցիալական կենսագործունեության արդի մոդել և միջավայր: Այս տեսանկյունից գյուղը որպես սոցիոլոգիական հետազոտության օբյեկտ և սոցիալական գործընթացների սուբյեկտ մնաց ստվերում: Դա են ամրագրում քաղաքի սոցիոլոգիայի շրջանակներում մշակվող հայեցակարգերը, ուր սոցիալականը հոմանիշվում է քաղաքայինին[1]: Իսկապես, սոցիոլոգիայի՝ որպես ինքնուրույն գիտության սկզբնավորման շրջանից մինչ այսօր սոցիոլոգիական գիտելիքն ուղղված է եղել արդիականացման (մոդեռնիզացիա) հիմնախնդիրների հայեցակարգմանը՝ առարկայական տիրույթից հաճախ դուրս թողնելով մինչարդիականության ժամանակաշրջանին բնորոշ այնպիսի սոցիալական երևույթներ, ինչպիսին են ***գյուղը և գյուղական համայնքը:*** Արևմտյան սոցիոլոգիական գրականության մեջ հազվադեպ կարելի է հանդիպել «գյուղը» մեկնաբանող սոցիոլոգիական հայեցակարգեր:

Ճիշտ է, արևմուտքում՝ մասնավորապես ԱՄՆ-ում և Եվրոպայում 20-րդ դարում ձևավորվել են գյուղական սոցիոլոգիայի ինստիտուցիոնալ միավորումներ (1937 թվականին RSS-ը (Rural Sociological Society) ԱՄՆ-ում և 1957 թվականին ESRA-ը (European Society for Rural Sociology) Եվրոպայում), սակայն դրանք պարբերաբար գտնվել են մարգինալ վիճակում: Դա են փաստում 1967 թվականին Ամերիկյան սոցիոլոգիական ասոցիացիայի (ASA) շրջանակներում իրականացված ոչ ֆորմալ հարցման արդյունքները, երբ Չ. Լումիսը բացահայտեց, որ հարցվածների 35 %-ը կողմ է «գյուղական սոցիոլոգիական հանրույթի» (RSS) վերացմանը, և հարցվածների մեծամասնությունը չի ցանկանում մասնագիտական փոխհարաբերու-

[1] Տե՛ս, Park R.“The City as Social Laboratory” // Glencoe, IL: The Free Press, 1952, 2-3.

թյուններ (գրասենյակային համագործակցություն, համատեղ գրքերի և մենագրությունների տպագրություն) ունենալ գյուղական սոցիոլոգիայի մասնագետների հետ[2]: Ինչպես Ս. Սմիթն է նկատում. **«Գյուղի սոցիոլոգիան հայտնվել է խրոնիկ ճգնաժամի վիճակում, այս գիտակարգն ունի ոչ բավարար տեսական հիմքեր, ինստիտուցիոնալ մեկուսացման մեջ է գտնվում, օտարվում է ընդհանուր սոցիոլոգիական գիտելիքի համակարգից, և, հաճախ, թվում է անպետք արդի քաղաքային հասարակության պայմաններում»[3]:**

Իսկապես, գյուղը, որպես սոցիոլոգիական տեսության օբյեկտ, առավել հետաքրքրել է քաղաքի ուսումնասիրության տեսանկյունից. հատկապես առանձնացվել են ուրբանիզացման համատեքստում գյուղ-քաղաք տեղաշարժերը, քաղաքի (ուրբան) մոդելով գյուղի (համայնքի) վերափոխման և զարգացման հեռանկարները և այլն: Դասական սոցիոլոգիական գրականության մեջ գյուղը հիշատակվում է համայնք-հասարակություն (Gemeinschaft և Gesellschaft) փոխհարաբերությունը մեկնաբանող հայեցակարգերում[4], ուր ավանդական-համայնականի կրող դիտարկվում է գյուղը, գյուղական համայնքը, իսկ արդիական-հասարակականի կրող՝ քաղաքը: Դեռևս XIX դարավերջից առավել նշանակալի առաջընթաց է ունեցել քաղաքի սոցիոլոգիան. թե՛ սոցիոլոգիայի դասականները, թե՛ արդի սոցիոլոգիայի ներկայացուցիչները հայեցակարգային վերլուծության են ենթարկել քաղաքը, քաղաքային կյանքն ու քաղաքաբնակին[5]: Քաղաքը, որպես արդիական (արդյունաբերական, հետարդյու-

---

[2] Loomis, C. P. (1981). "Parochialism in the ASA." The American Sociologist 16(February): 59. In Smith, Suzanne. "The Institutional and Intellectual Origins of Rural Sociology" (Paper for 2011 Rural Sociology Assn. meeting), p. 1.

[3] Smith, Suzanne. "The Institutional and Intellectual Origins of Rural Sociology" (Paper for 2011 Rural Sociology Assn. meeting)

[4] Տե՛ս, Теннис Ф. Общность и общество// СПб., 2001.

[5] Տե՛ս, Вебер М. “История хозяйства”: Город// М., 2001, Вебер М. “Избранные произведения”, М., 1990, Зиммель Г. Большие города и духовная жизнь// “Журнальный зал”, М., 2002 № 3-4, Wirt L. Urbanism, as way of life. In. R. Sennet// Classical essays in

նաբերական) հասարակության խորհրդանիշ, դարձել է սոցիոլոգիական ուսումնասիրության նշանակալի օբյեկտ: Քաղաքը՝ դիտարկվում է որպես սոցիալական փոփոխությունների հիմք և միջավայր, իսկ գյուղը անփոփոխ և փոփոխությունը բացառող սոցիալական միավոր[6]:

Իհարկե, վերոնշյալ տարբերակումը տեղին է գյուղը և քաղաքը որպես իդեալական տիպեր[7] դիտարկելու պարագայում, քանի որ սկզբունքորեն անփոփոխ և արդիականության ազդեցությունը չկրող միավոր գոյություն չունի: Գյուղ-քաղաք հակադրամիասնականության՝ որպես իդեալականացված բևեռների դիտարկումը մեթոդաբանական հնարավորություններ է ստեղծում այդ սոցիալական միավորների ուսումնասիրության համար:

Ինչպես Չ. Տիլին է նկատում, արդիականության քվինտէսենցիալ պատմությունը քաղաքի (ուրբան) պատմությունն է[8]: Այդ տեսանկյունից, արդի գյուղի՝ որպես սոցիալական նշանակալի միավորի, պատմասոցիոլոգիական վերլուծության համատեքստում անհրաժեշտ է այն դիտարկել հենց քաղաք-գյուղ տարաբերակման շրջանակներում: Ընդ որում, պատմասոցիոլոգիական ուսումնասիրության ժամանակագրական շրջանակի սահմանափակումը միայն արդիականությամբ բխում է պատմական սոցիոլոգիայի առարկայական բնութագրից[9]:

---

urban culture. Appleton Century Grofts. New York. 1969, Бауман З. Город страхов, город надежд// М., 2008, № 3, Парк Р. Город как социальная лаборатория// “Социологическое обозрение”, Т. 2, № 3, М., 2002.

[6] Տե՛ս Вукосавлевич С. История крестьянского общества (социология обитания)// Социология в странах Центральной и Восточной Европы: Хрестоматия, М., 2005, ст. 595-596.

[7] Տե՛ս Вебер М. Избранные произведения// М., 1990, ст. 132.

[8] “Handbook of historical sociology”// Edited by G. Delanty and E. F. Isin, London: SAGE pub., 2003, p. 313.

[9] Տե՛ս Тилли Ч. “Историческая социология”// 2009, http://comparsociology.com/wp-content/uploads/2012/07/Тилли-Историческая-социология.pdf

Մյուս կողմից, անհրաժեշտ է տարբերել գյուղի պատմական սոցիոլոգիան գյուղի պատմությունից: Եթե երկրորդը պատմաբանների և ազգագրագետների ուսումնասիրության տիրույթում է, ապա առաջինը՝ սոցիոլոգի, ուր անհրաժեշտ է վերհանել պատմական փոխակերպման ընդհանուր օրինաչափություններ, գյուղը, գյուղական համայնքը դիտարկել սոցիալական համակարգի վերարտադրության ընդհանրական մակրո և հասարակական սուբյեկտների առօրյա փոխհարաբերության միկրո մակարդակների փոխհարաբերակցության տիրույթում:

Սոցիոլոգիական տեսանկյունից գյուղի ուսումնասիրության համար անհրաժեշտ է տարբերակել երկու ասպեկտներ՝ տնտեսական ու սոցիալ-մշակութային: Առաջին դեպքում կարևորվում է գյուղատնտեսության՝ որպես տնտեսության կարևորագույն ու նշանակալի ճյուղի, երկրորդ դեպքում՝ գյուղական համայնքի՝ որպես ավանդական արժեքներ կրող և վերարտադրող միավորի, դերն ու նշանակությունը: Եթե սոցիալ-տնտեսական դիրքերից անվիճելի է գյուղի, մասնավորապես՝ գյուղատնտեսության, համահասարակական նշանակությունը, ապա երկրորդ դեպքում չկա միանշանակություն: Այստեղ կենտրոնական հարցադրում է դառնում այն, *թե ինչպիսի դեր և սոցիալական նշանակություն է պատմականորեն ունեցել գյուղը ազգային ինքնության ավանդական տարրերի վերարտադրման և տարածման գործընթացում:*

Կա վարկած, համաձայն որի, գյուղը՝ որպես համայնական արժեքներ կրող ու պահպանող սոցիալական միավոր, հանդես է գալիս ազգային ինքնության ավանդական տարրեր վերարտադրող մեխանիզմի դերում: Իսկապես, ավանդական հասարակություններին վերագրվող *ի ծնե ստատուսի, անձնավորված փոխհարաբերությունների, աֆեկտիվ կապերի, կոլեկտիվ գիտակցության և կայուն պարզ արժեքների* առանցնայնությունը պատմականորեն բնորոշ են եղել գյուղական համայնքներին, ի հակադրություն քաղաքը բնորոշող *ձեռքբերովի ստատուսի, անդեմ փոխհարաբերությունների, աֆեկ-*

տիվ չեզոք կապերի և ոչ հաստատուն բարդ արժեքների առաջնայնության[10]*:* Այս տեսանկյունից հիմնավոր է դառնում վերոնշյալ վարկածը՝ գյուղին վերագրելով ազգային ինքնության ավանդական տարրերի վերարտադրման և պահպանման դերը: Սակայն այստեղ նշմարվում է այն ոչ միանշանակությունը, որը վերը նկատեցինք: Եթե գյուղը, իսկապես, կրողն է ավանդական-համայնական արժեքների, ապա *որո՞նք են արժեքների վերարտադրման մեխանիզմները (1), ինչպիսի՞ն են դրանց տարածման ուղիները (2) և ինչպիսի՞ պատմահասարակական փոփոխություններ է կրել գյուղական համայնքը՝ որպես ավանդական արժեքներ վերարտադրող միավոր(3):* Սույն հարցադրումների պատասխանները գտնելու և լավագույնս ըմբռնելու համար սույն աշխատության շրջանակներում կդիտարկվեն ՀՀ գյուղական համայնքներում սոցիալական փոխհարաբերությունների փոփոխության առանձնահատկությունները, իրականացվող սոցիալական քաղաքականության և գյուղական համայնքների վերարտադրության հիմնախնդիրները, մասնավորապես անդրադարձ կարվի աշխատանքի դերի ու նշանակության քննությանը:

* * *

Գրքում ներկայացված սոցիալական հիմնախնդիրները ուսումնասիրվել են Բելառուսի Ա. Ա. Կուլեշովի անվան Մոգիլյովի պետական համալսարանի քաղաքագիտության և սոցիոլոգիայի ամբիոնի մասնագետների հետ համատեղ՝ հայ-բելառուսական համատեղ գիտական նախագծի («Գյուղական հայամքները որպես ազգային ինքնության ավանդական տարրեր վերարատադրող մեխանիզմ փոխակերպվող հասարակություններում (Հայաստանի և Բելառուսի օրինակով)» շրջանակներում: Գրքում որոշ հիմնախնդիրներ ենթարկվում են համեմատական վերլուծության՝ համադրելով Հայաստանի և Բելառուսի դեպքերը:

---

[10] Տե՛ս Парсонс Т., Понятие общества: компоненты и их взаимоотношения// Американская социологическая мысль, Москва, 1996, ст. 68-69.

ԳԼՈՒԽ 1
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1.1 Հայկական գյուղական համայնքը պատմասոցիոլոգիական վերլուծության պրիզմայում

Արդի հայաստանյան գյուղի, գյուղական համայնքի պատմական զարգացման, սոցիալ-մշակութային նկարագրի և կենսագրության ըմբռնման համար մեթոդաբանական տեսանկյունից ճիշտ կլինի քննության առնել և վերլուծությունը սկսել XIX դարի Արևելյան Հայաստանի (Ռուսահայաստանի) պատմությունից՝ որպես մեծ ժամանակափուլեր առանձնացնելով ***մինչխորհրդային, խորհրդային և հետխորհրդային*** շրջանները: Խորհրդային ժամանակաշրջանի վրա դրվող շեշտադրումը ևս հիմնավոր է, քանի որ Հայաստանի արդի գյուղական/քաղաքային բնակավայրերի համայնապատկերի ձևավորման և ինստիտուցիոնալացման գործընթացում նշանակալի դեր ունեցավ խորհրդային հասարակարգը:

Սկսած 1830-ական թվականներից, երբ Արևելյան Հայաստանը (որն արդի Հայաստանի Հանրապետության տարածքն է) շահական Պարսկաստանից անցավ ցարական Ռուսաստանի կազմը, հայ (արևելահայ) հասարակական կենսակերպը կրեց ռուսաստանյան հասարակարգի անմիջական ազդեցությունը, ինչն առավել ամրապնդվեց խորհրդայնացման արդյունքում: Ռուսաստանի գործոնին զուգահեռ էական նշանակություն է ունեցել նաև XIX դարում ընթացող համաշխարհային հասարակական գործընթացների ազդեցությունը: Կապիտալիստական հարաբերությունների, ուրբանացման և արդյունաբերականացման գործընթացների ազդեցությունն ու հետևանքները անմիջականորեն անդրադարձան ցարա-

կան Ռուսաստանի հասարակական կազմակերպման համակարգի վրա՝ XIX դարավերջին տարածվելով նաև հայաստանյան հասարակության վրա: XIX դարի 70-ական թվականներից արևելահայ հատվածում տեղի ունեցան կապիտալիստական բարեփոխումներ, որոնք ուղեկցվում էին գյուղից քաղաք տեղաշարժերով: Ինչպես Ղ. Աղայանն է նկատում. «Ստրկության ազատությունը և վերջն էլ դատական վերանորոգությունը, երկաթուղի, հեռագիր և այլն մին մինի ետևից հանկարծ գալով՝ շղթայեցին ժողովրդին, մի հավերժական փոփոխություն ձգեցին նրա նիստ ու կացի, վարք ու բարքի մեջ: Ժողովուրդն այնպես փոխվեց մի տասն տարվա մեջ, որքան փոխված չէր հարյուրավոր տարիների ընթացքում»[11]:

Նման գործընթացները դիտարկվում էին որպես ազգային գոյության պահպանման տիրույթում ձևավորվող ևս մեկ (որպես հիմնական խնդիր տեսնում էին «օտարի» տիրապետության տակ կենսագործունեությունը)՝ ազգային արժեքներն ու ինքնությունը խաթարող գործոն: Դա հատկապես դիտարկվում էր, որպես գյուղական, համայնական փոխհարաբերությունների վերափոխման գործընթաց: Պ. Պռոշյանը հետևյալ կերպ է նկարագրում այդ ժամանաշրջանը. «Նահապետական պարզ սովորությունները օրըստօրե անհետանում են, բարեկամություն, հարևանություն սուրբ բառերն իրենց նշանակությունը միմիայն քաղաքավարական ձևերի մեջ են պահում. էլ չկա էն ընտանեկան կապը, որ օտարներին միմյանց հետ մի տան պես պահում էր. խոր գյուղերումը, որպես և իցե, այժմ կտեսնես նախկին քաղցրության ստվերը, իսկ քաղաքներումն ու մեծ գյուղերումը՝ երբեք: Մի անմխիթար բան է գուշակում մեզ այս բանը»[12]:

Արդիականությանը բնորոշ հասարակական կազմակերպման նոր մոդելը, որն հաճախ հակադրվում էր գյուղական, համայնական փոխհարաբերությունների ավանդական մոդելին, էական գործոն

[11] Աղայան Ղ., «Երկերի ժողովածու»// հտ. 2, Ե., 1939, էջ 280:

[12] Պռոշյան Պ., «Երկերի ժողովածու»// հտ. 2, Ե., 1962, էջ 132:

դարձավ հայաստանյան հասարակական առօրյայի կազմակերպման հարցում: Մինչխորհրդային հայաստանյան հասարակության համատեքստում հայկական գյուղի, գյուղական համայնքի վերափոխման առանձնահատկությունների ըմբռնման համար կարելի է տարբերակել այդ ժամանակաշրջանը բնութագրող երկու փուլ.

1. մինչ XIX դարի 70-ական թվականները, կամ մինչ կապիտալիստական վերափոխումները,
2. XIX դարի 70-ական թվականներից մինչ Խորհրդային Հայաստանի ձևավորում:

Մինչխորհրդային ժամանակաշրջանի առաջին փուլի լավագույնս արտահայտումը տեսնում ենք Խ. Աբովյանի երկերում[13]: Ինչպես Թ. Ավդալբեգյանն է նկատում. «Խ. Աբովյանը հանդես է գալիս իբրև իդեոլոգ այնպիսի տնտեսակարգի, վորում փոխանակությունն ու ապրանքային արտադրությունը, փողն ու սրա շրջանառությունը զարգացած չեն, այլ գերիշխող և ինքնամփոփ գյուղացիական տնտեսությունը: Նա յերգում է գեղջկի լիքը մառանն ու առատ սեղանը, հյուրասիրությունն ու պարզասրտությունը, գովում է նահապետական գերդաստանի կազմակերպությունն ու այն հնազանդությունը, վոր ունեն ընտանիքի կրտսեր անդամներն ավագների ու կանայք՝ տղամարդկանց հանդեպ: ... միակ սրբագրելին նրանում՝ ոտարի բռունցքն է»[14]:

Այլ է պատկերը XIX դարավերջի հայ գյուղը բնութագրող գրականության մեջ: Օրինակ, Մուրացանի երկերում «հայ գյուղը հանդես է գալիս միանգամայն նոր կերպարանքով: Տրտունջն ոտարի

---

[13] Մինչխորհրդային ժամանակաշրջանի հայկական գյուղական համայնապատկերի լավագույն բնորոշումներ տալիս է Թ. Ավդալբեգյանը «Հայ գյուղը Հովի. Թումանյանի յերկերում» աշխատության մեջ: Հիմք ընդունելով XIX դարի հայ բանաստեղծների ստեղծագործությունները՝ Թ. Ավդալբեգյանը սոցիոլոգիական վերլուծություն է ենթարկում մինչխորհրդային (XIX դարավերջ- XX դարասկիզբ) հայաստանի գյուղի սոցիալական պատկերը:

[14] Ավդալբեգյան Թ. «Հայ գյուղը Հովի. Թումանյանի յերկերում»// էջ 13-14:

տիրապետության մասին չքացել է: Գյուղի կյանքում ոտարն այլևս դեր չի խաղում: Գյուղում այլևս չկա լիությունն ու հարստությունը: Չկա նախկին արհամարհանքը դեպի փողն ու փողատերը: Ցերկրում զարգացել են փոխանակությունը, ապրանքային տնտեսությունն ու փողի ծայրահեղ կարիքը: Գյուղացին շղթայված է մի սոսկալի բանից- շուկայից...»[15]:

Գյուղի, գյուղական համայնքի նման տարբերությունները բնութագրում են XIX դարավերջին հայ հասարակական արժեհամակարգում տեղի ունեցող փոփոխությունները՝ պայմանավորված արդիականությանը բնորոշ ոչ հաստատուն բարդ արժեքների տարածմամբ: Այս գործընթացները իրենց դրսևորումն էին ստանում հասարակական կազմակերման բոլոր ոլորտներում: Օրինակ, XIX դարավերջին և XX դարասկզբին հողային միավորումները արդեն կազմավորվում էին ունեծվացքային-տարածական (имущественно - территориальный) սկզբունքով, այնինչ առավել վաղ փուլերում (մինչև XIX դարավերջ) նման միավորումները կազմավորվում էին ազգակցական կապերի հիման վրա[16]: Կամ, օրինակ, XIX դարավերջին- XX դարասկզբին հայ գյուղացիության սոցիալ-տնտեսական դիֆերենցիացիայի աճի արդյունքում գյուղական հարսանիքներում հրավիրվում էին ոչ բոլորը (ինչպես նախկինում էր), այլ ավելի շուտ ունևոր մարդիկ, ովքեր կարող էին մեծ գումար նվիրաբերել[17]:

Իսկապես, XIX դարավերջին և XX դարասկզբին նշանակալի էր կապիտալիզմի ազդեցությունը հայ գյուղի վրա: Մասնավորապես այս գործընթացը զուգահեռվում էր քաղաքային կենսակերպի լեգիտիմացման ճանապարհով: Քաղաքի՝ որպես արդիականության խորհրդանիշի, ըմբռնումը և դրա հասարակական էֆեկտը շոշափելի է դառնում այդ ժամանակաշրջանում: Եթե XIX դարի միջնամա-

[15] Նույն տեղում, էջ 14-15:

[16] Акопян М.В. «Сельская община в Восточной Армении во второй половине XIX-начале XX вв.»// Е., 1988, ст. 118.

[17] Նույն տեղում, էջ 127:

սում գյուղ-քաղաք հարաբերակցության խնդիրը գրեթե չէր գիտակցվում և ինչպես Խ. Աբովյանի օրինակով արժևորվում էր «քաղաքից և «քաղաքայինից» հեռու գյուղի» կերպարը, ապա դարավերջին արդեն իսկ ներգործուն էին դառնում Ղ. Աղայանի «գյուղը բարեկրթել քաղաքայինով» և Հ. Թումանյանի «գյուղը բարեկրթել քաղաքայինով՝ չկորցնելով գյուղի ինքնատիպությունը» հասարակական հեռանկարները[18]:

Իսկապես, մինչխորհրդային Հայաստանի համար ակտոալ հիմնախնդիրների՝ պետականության բացակայության, ազգային ինքնության պահպանության, ինստիտուցիոնալ անկայունության, ֆոնին հատկապես ամրագրվում էին մշակութային ինքնիշխանության և ինքնատիպության գործոնները[19], ուր կենտրոնական ֆենոմեն էր «հայ գյուղը»:

Պատկերը փոխվեց XX դարի 20-ական թվականներին Խորհրդային Հայաստանի ձևավորմամբ: Խորհրդային շրջանում նշանակալի կառուցվածքային փոփոխություններ կրեց հայաստանյան հասարակությունը, որն անմիջականորեն իր ազդեցությունն ունեցավ հայկական գյուղի, գյուղական համայնքի վերափոխման հարցում: Գյուղական վերափոխումների տեսանկյունից Խորհրդային Հայաստանի պատմությունը կարելի է տարբերակել ըստ երկու հիմնական ենթափուլերի՝

1. ***մինչ կոլեկտիվացման փուլ,*** երբ գյուղում գործում էր հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը,

2. ***զանգվածային կոլեկտիվացման փուլ,*** երբ ձևավորվեց համաժողովրդական սեփականության ինստիտուտը:

Այս ժամանակաշրջաններում գյուղի վերափոխման ընթացքը, դրան զուգահեռվող կառուցվածքային փոփոխություններն առավել

---

[18] Այս մոտեցումների վերլուծությունը կարելի է գտնել Թ. Ավդալբեգյանի «Հայ գյուղը Հովի. Թումանյանի յերկերում» աշխատության մեջ:

[19] Ананун Д. “Армянский вопрос в России”// В кн: Сборник армянской литературы, под ред. М. Горького, Петроград, 1916, с. V-XLVI.

ըմբռնելի են դառնում վիճակագրական մի շարք նշանակալի ցուցանիշերի դիտարկմամբ: Քաղաք-գյուղ հարաբերակցության շրջանակներում դիտարկելով արդի հայաստանյան գյուղերի (գյուղական համայնքի, բնակչության, կենսակերպի, զբաղմունքի) վերջին գրեթե հարյուրամյա պատմությունը՝ կարելի է մեկնել հետաքրքրական վիճակագրական ցուցանիշերի (տե՛ս աղյուսակ 1.1):

Աղյուսակ 1.1

Բնակչության թվաքանակը տարեսկզբին[20]					
Տարիներ	Ամբողջ բնակչությանը, 1000 մարդ	այդթվում		Բնակչության ընդհանուր թվաքանակը %	
		Քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
1926*	881.3	167.1	714.2	19	81
1939*	1282.3	366.4	915.9	28.6	71.4
1959*	1763	881.8	881.2	50	50
1970*	2491.9	1481.5	1010.4	59.5	40.5
1979*	3030.7	1992.5	1038.2	65.7	34.3
1989*	3448.6	2368.5	1080.1	68.7	31.3
1995	3260.3	2166.4	1093.9	66.4	33.6
1996	3248.8	2149.1	1099.7	66.1	33.8
1997	3246	2138.4	1107.6	65.9	34.1
1998	3238.2	2122.9	1115.3	65.6	34.4
1999	3232.1	2111.6	1120.5	65.3	34.7
2000	3226.9	2095.8	1131.1	64.9	35.1
2001*	3213	2066.1	1146.9	64.3	35.7
2001	3215.3	2076.3	1139	64.6	35.4
2002	3212.9	2065.6	1147.3	64.3	35.7
2003	3210.3	2062.2	1148.1	64.2	35.8
2004	3212.2	2061.7	1150.5	64.2	35.8
2005	3215.8	2062.3	1153.5	64.1	35.9
2006	3219.2	2062.6	1156.6	64.1	35.9
2007	3222.9	2065.9	1157	64.1	35.9
2008	3230.1	2070.5	1159.6	64.1	35.9
2009	3238	2073.4	1164.6	64	36
2010	3249.5	2081	1168.5	64	36
2011	3262.6	2088.5	1174.1	64	36
2012	3274.3	2096	1178.3	64	36

[20] Ինֆորմացիայի աղբյուրը Հայաստանի վիճակագրական ծառայության կայքն է՝ www.armstat.am

* Մարդահամարի տվյալներով:

Եթե 1926 թվականի մարդահամարի տվյալների համաձայն հայաստանյան գյուղական բնակչությունը կազմում էր ողջ ազգաբնակչության 81%-ը, 1939 թ.-ին՝ 71,4%-ը, ապա իրավիճակը կտրուկ փոփոխվում է 1960-ական թվականներից հետո: 1959 թվականին գյուղական և քաղաքային բնակչության տեսակարար կշիռը հավասարվեց, իսկ հետագա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1960-ական թվականներից հետո հայաստանյան քաղաքային և գյուղական բնակչությունը ստանում է իր ֆիքսված հարաբերակցությունը՝ միջինում 65% քաղաքային և 35% գյուղական բնակչությամբ: Դրան նպաստեցին խորհրդային տարիների արդյունաբերական կենտրոնների և ընդհանուր քաղաքային համայնքների ձևավորման գործընթացը (տե՛ս աղյուսակ 1.2):

Աղյուսակ 1.2

Քաղաք		**Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը**	**Քաղաք**		**Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը**
1	Երևան	մ.թ.ա 782թ.	26	Ծաղկաձոր	1984
2	Գյումրի	1840	27	Մեղրի	1984
3	Գորիս	1924	28	Նոր Հաճն	1991
4	Վաղարշապատ	1924	29	Ագարակ	1995
5	Վանաձոր	1924	30	Ախթալա	1995
6	Ալավերդի	1938	31	Ապարան	1995
7	Գավառ	1938	32	Բերդ	1995
8	Կապան	1938	33	Բյուրեղավան	1995
9	Ստեփանավան	1938	34	Դաստակերտ	1995
10	Արթիկ	1945	35	Եղեգնաձոր	1995
11	Արմավիր	1947	36	Եղվարդ	1995
12	Դիլիջան	1951	37	Թալին	1995
13	Քաջարան	1958	38	Թումանյան	1995
14	Հրազդան	1959	39	Շամլուղ	1995
15	Սպիտակ	1960	40	Ճամբարակ	1995
16	Արտաշատ	1961	41	Մարալիկ	1995
17	Իջևան	1961	42	Մարտունի	1995
18	Ջերմուկ	1961	43	Մասիս	1995
19	Սևան	1961	44	Մեծամոր	1995
20	Արարատ	1962	45	Նոյեմբերյան	1995

21	Աբովյան	1963	46	Վայք	1995
22	Աշտարակ	1963	47	Վարդենիս	1995
23	Սիսիան	1974	48	Վեդի	1995
24	Չարենցավան	1983	49	Այրում	2006
25	Տաշիր	1983			

Հատկանշական է, որ 1926-1994 թվականներին հանրապետությունում վերացել են 279 գյուղ[21]: Արդեն իսկ խորհրդային տարիներին կոլեկտիվացման գործընթացների արդյունքում գյուղում զարգացան շուկայական փոխհարաբերություններն ու աշխատավարձի ինստիտուտը: Դրան նպաստեցին խորհտնտեսությունների* ձևավորումը և կոլտնտեսությունների քանակի նվազումը: Այսպես 1960 թ. Հայաստանում կար 83 խորհտնտեսություն, իսկ 1988 թ. դրանց թիվը հասավ 529-ի, կոլտնտեսությունների թիվը նույն ժամանակահատվածում 760-ից իջավ 275-ի[22]:

Խորհրդային ժամանակաշրջանն էական ազդեցություն է ունեցել հայաստանյան հասարակության կազմավորման, արդի աշխարհագրական, բնակավայրային կառուցվածքի ձևավորման վրա: Մասնավորապես այն պայմանավորել է արդի հայաստանյան գյուղական բնակավայրերում, զբաղվածության ձևերի և սոցիալ-մասնագիտական խմբերի կազմավորումը: Չնայած դրան, 70-ամյա

[21] Ավագյան Գ. «Հայաստանը 1920-1990 թթ.»// Ե., 1997, էջ 99, Պոտոսյան Ա. «Հայաստանի Հանրապետության գյուղական տարաբնակեցումը»// Ե., 1999, էջ 43: Տե՛ս Գաբրիելյան Մ. «Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը (ազգագրական ուսումնասիրություն)»// Ե., 2001, էջ 10:

* Խորհտնտեսությունը պետական գյուղատնտեսական միավորում է ԽՍՀՄ-ում: Ի տարբերություն կոլտնտեսությունների, որոնք գյուղացիների կոոպերատիվ միավորումներ էին՝ ստեղծված գյուղացիների միջոցներով, խորհտնտեսությունը պետական միավորում էր: Խորհտնտեսությունների աշխատողները վարձու աշխատողներ էին, որոնք ստանում էին ֆիքսված աշխատավարձ փողի տեսքով, այն դեպքում, երբ կոլտնտեսություններում մինչ 1960-ական թվականները կիրառվում էր աշխօրը:

[22] Տե՛ս Գաբրիելյան Մ. «Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը (ազգագրական ուսումնասիրություն)»// Ե., 2001, էջ 11:

ՀԽՍՀ պատմությունն ավարտվեց և իրավիճակը կտրուկ փոխվեց 1990-ական թթ.-ին՝ ԽՍՀՄ փլուզմամբ և նորանկախ ժողովրդավարական, շուկայական տնտեսությամբ Հայաստանի Հանրապետության ձևավորմամբ:

Հետխորհրդային փուլն իր հասարակական կառուցվածքային փոփոխություններով, պետական, տնտեսական, իրավական ինստիտուցիոնալ փոխակերպումներով իր անմիջական և նշանակալի ազդեցությունն ունեցավ հայաստանյան հասարակության, մասնավորապես հայաստանյան գյուղերի և գյուղական համայնքների վերափոխման վրա: Այս գրքի մյուս բաժիններում կմանրամասնվի և կվերլուծվի արդի (հետխորհրդային) շրջանի հայկական գյուղի և գյուղական համայնքի սոցիոլոգիական համայնապատկերը՝ անդրադառնալով ինքնության վերատադրության, ինստիտուցիոնալ փոխակերպման, գյուղական առօրյայի կազմակերպման և գյուղի պահպանության քաղաքականության հիմնահարցերի քննությանը:

1.2 Գյուղի սոցիալական կառուցվածքի փոփոխության օրինաչափությունները արդի հայաստանյան հասարակությունում*

Հղում կատարելով Գլեբ Ուսպենսկուն Դավիթ Անանունը նկատում է. «Գյուղացին բնության ամեն կարգի պատահարները կապում է Աստծո անվան հետ, իսկ հասարակական կյանքի անցուդարձերը՝ թագավորի: Գյուղացին բնության և հեղինակության գերին է»[23]: Իսկապես, սոցիալական փոփոխությունները դիտարկելիս «գյուղը» դառնում է ազդեցության օբյեկտ, իսկ «քաղաքը»*՝ սուբյեկտ: Պատճառը քաղաքի անմիջական ընդգրկվածությունն է սոցիալական փոփոխությունների համակարգում՝ որպես միջավայր և ակտիվ սուբյեկտ[24]: Դրան նպաստում են արդի հասարակություններում քաղաքի՝ տնտեսական (կապիտալիստական), քաղաքական և սոցիալ-մշակույթային, մոդելով գյուղական տնտեսությունների, վարչական համակարգերի և համայնական փոխհարաբերությունների վերափոխումները:

---

* Աղբյուր: Սոցիոլոգիական հետազոտությունը իրականացվել է ՀՀ ամբողջ տարածքում հայ-բելառուսական համատեղ գիտական նախագծի՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շրջանակներում (թեմա՝ «Գյուղական հայամքները որպես ազգային ինքնության ավանդական տարրեր վերարտադրող մեխանիզմ փոխակերպվող հասարակություններում (Հայաստանի և Բելառուսի օրինակով)»): 2011 թվականի նոյեմբերին իրականացվել է գյուղապետերի հարցաթերթիկային հարցում, իսկ 2012 թվականի մայիսին իրականացվել են խորին և ստանդարտացված հարցազրույցներ գյուղաբնակների հետ և փորձագիտական հարցազրույցներ գյուղապետերի հետ: Գրքի այս բաժնում օգտագործված են Вермишян А.Р. “Измененные формы взаимоотношений в современном армянском селе”// “Социология и Право”, СПб., № 1 (18), 2013 հոդվածում ներառված վերլուծական տվյալներ:

[23] Անանուն Դ. Հայության հավաքական զորությունը// “Մշակ”, 1915 թ., N 178, էջ 3:

* Այստեղ գյուղ և քաղաք հասկացությունները դրվում են չակերտների մեջ, քանի որ դիտարկվում են որպես իդեալականացված ֆենոմեններ, հակադրություններ, ուր առաջինը կրողն է ավանդական-համայնականի, դրա խորհրդանիշն է, իսկ երկրորդը արդիական-հասարակականի կրողն է և խորհրդանիշը:

[24] Տե՛ս, Бауман З. “Город страхов, город надежд”// Логос, 2008, № 3. ст. 24–53.

Դեռևս խորհրդային տարիներին սկսած ուրբանացման գործընթացները նպաստեցին քաղաքի՝ որպես հասարակական իդեալի սիմվոլիկայի, ձևավորմանը գյուղացու պատկերացումներում: Գյուղաբնակների պատկերացումներում քաղաքն իսկապես իդեալականացված միջավայր է, որը նրանց բնորոշմամբ կարող է ապահովել «ավելի լավ ապագա» և «քաղաքակիրթ կենսակերպ»: Խորին հարցազրույցների ընթացքում տրվում էին հետևյալ տիպիկ բնորոշումները. *«Թոռիս ապագան, եթե մասնագիտության ճյուղ պիտի ընտրե՝ քաղաքում է, եթե սովորական մարդ պիտի դառնա՝ իմ հանրապետությունում, թեկուզ քաղաքամերձ գյուղում» (գ. Միխայլովկա, արական, 65 տ.), «Կուզենք Հայաստանում լինենք, բայց քաղաքում: Օրինակ՝Կիրովական, Երևան» (գ. Գյուլագարակ, իգական, 42 տ.), «Քաղաքաբնակը լավ է ապրում: Գյուղացին անընդհատ պետք է մտածի, թե կարկուտը տարավ, անասունը սատկեց: Իսկ քաղաքաբնակը ինչ պիտի մտածի, մի բանով կապրի: Առավոտից իրիկուն չարչարվում է գյուղացին մի կտոր հաց հայթայթելու համար, իսկ քաղաքացին մաքուր հագած-կապած իր համար ման է գալիս: Կարևոր է մաքուր հագած-կապած լինելը» (գ. Ազատան, արական, 22 տ.):*

Հայկական արդի գյուղերում տեղի ունի ինքնության ավանդական և ժամանակակից տարրերի բախում: Գյուղական ավանդական ինքնության վերարտադրման գործընթացը կանխվում է, երբ ինքնություն ստեղծող գործոնները կրում են արտաքին բնույթ, երբ հասարակական իդեալը ոչ թե ներքին միջավայրն է, այլ գտնվում է դրրսում. «գյուղը» դադարում է լինել իդեալ և «քաղաքն» է դառնում այդպիսին: Արդի հասարակությունում ազգային ինքնության ճգնաժամը սկիզբ է առնում քաղաքում՝ կրելով արդի քաղաքակրթության արժեհամակարգը, անխտրականորեն փոխառելով գլոբալը: Ինչպես Է. Գիդենսն է նկատում. «Համաշխարհայնացումը, դրան զուգահեռվող արդիականացման գործընթացները սկզբունքորեն անկառավարելի են, օժտված են վերահսկողությունից հեշտությամբ դուրս գալու

հատկությամբ, ու, թեև, մեզ թվում է, թե դրանք ընթանում են ուղիղ հունով, սակայն ժամանակ առ ժամանակ կարող են դուրս գալ հունից, տարածվել այլ ուղղություններով, և նրա ընթացքը երբեք կանխատեսելի չէ»[25]:

Արդի կրթությունը, տնտեսությունը և իրավունքը ձևավորվում և ինստիտուցիոնալացվում են քաղաքում՝ փոխանցվելով գյուղին: Գյուղը քաղաքում տեղի ունեցող սոցիալական փոփոխության կրողն է: Գյուղը, որպես սոցիալական ֆենոմեն, կարծրատիպային համակարգ, առավել նշանակալի դեր ունի քաղաքաբնակի ինքնության ավանդական տարրերի վերարտադրման գործընթացում, քան գյուղացու: Քաղաքից է, որ գյուղը երևում է որպես «ավանդականը», «բնականը», «մաքուրը», «առողջարարը» կրող և վերարտադրող միջավայր, «թանգարան», ուր կարելի է գտնել ազգային ավանդական ինքնության իդեալականացված տարրեր, ի տարբերություն քաղաքին վերագրվող սիմվոլիկ հատկանիշերի՝ «արդի», «արհեստական», «կեղտոտ», «անառողջ»:

Իսկապես, ինչպես ցույց են տալիս վերջին տարիների հայաստանյան հետազոտությունները հետխորհրդային շրջանում տեղի ունեցող հասարակական վերափոխումներն ազդել են գյուղական համայնքի բոլոր կառուցվածքային միավորների վրա: Տեղի ունեցող փոփոխությունների հեռանկարում հատկապես սրվում է գյուղի և գյուղաբնակի ինքնության սահմանների ընդգծման և սահմանման հիմնահարցը: Այսօր գյուղի, որպես ուրույն սոցիալական համակարգի, յուրահատկությունների պահպանման և ընդգծման հիմնահարցը, ակտուալ է հատկապես Հայաստանի պես մեծաթիվ գյուղական համայնքներ ունեցող երկրում: Նման տարբերակիչ յուրահատկությունների համակարգը Ի. Վալերշտեյնը կոչում է գեոմշակույթ[26], և գյուղի պահպանման սոցիալական տեխնոլոգիաների բնութագրը-

[25] Տե՛ս Giddens A. The Consequences of Modernity// London, 1990, p. 136.

[26] Wallerstein I. The Modern World-System as a Capitalist World-Economy // The globalizatin reader / ed. by Frank J. Lechner, John Boli. 3rd edition, 2008, Blackwell Publishing Ltd., p. 55.

ման ժամանակ հենց գեոմշակույթի վերարտադրման մեխանիզմների առաջադրումն է, որ ամենաակտուալ խնդիրն է դառնում: Գեոմշակույթի տարրերի դրսևորման արդի առանձնահատկությունների ուսումնասիրության համար անհրաժեշտ է տալ գյուղի օպերացիոնալ սահմանումը՝ գյուղը տարբերակելով ըստ երեք հիմնարար բաղադրիչների՝ ***հող, ընտանիք և համայնք,*** փոխկապվածության[27]:

Գյուղը բնութագրող վերոնշյալ տարրերը՝ ***հող, ընտանիք և համայնք,*** սոցիոլոգիական տեսանկյունից բնութագրելի են դառնում առօրյա միջանհատական փոխհարաբերություններում դրսևորվող հարաբերականորեն կայուն և կրկնվող ձևերի (սոցիալական ձևերի) վերհանման ճանապարհով: Այս մեթոդաբանական սխեմայի կիրառմամբ ուսումնասիրվել են հայաստանյան արդի գյուղերը՝ վերհանելով «հող», «ընտանիք», «համայնք» ֆենոմենների վերաբերյալ գյուղաբնակների ընկալումներն ու մեկնաբանությունները:

Գյուղի՝ որպես ուրույն սոցիալական համակարգի, ինքնավերարտադրության գործընթացում հողը ամենանշանակալի և շոշափելի կապիտալն է: Առաջնային է հողի տնտեսական նշանակությունը, սակայն ոչ պակաս կարևոր է դրա սոցիալ-մշակութային արժեքը: Հողի հետ հարաբերակցության մեջ է բացահայտվում գյուղական ընտանիքի, համայնական կենսակերպի, առօրյա մշակույթի ու դերաստատուսային բաշխվածության բնույթն ու բովանդակությունը: Արհեստական կամ ոչ բնական միջամտությունների բացառմամբ գյուղի՝ որպես ավանդական-համայանական արժեքներ վերարտադրող մեխանիզմի, պահպանման սակավ հնարավորություններից մեկը ավանդական գյուղական կենսակերպի՝ որպես օբյեկտիվորեն սոցիալական կապեր վերարտադրող մեխանիզմի, ապահովումն է: Այս տեսանկյունից գյուղացի (գյուղական ընտանիք) - գյուղ

[27] Վերմիշյան Հ. "Գյուղը և ազգային ինքնությունը սոցիալական փոփոխությունների հեռանկարում" // "ԲԱՆԲԵՐ Երևանի Համալսարանի"- Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, N 137.5, Երևան: ԵՊՀ հրատ., 2012, № 5, էջ 4.

(համայնք) փոխհարաբերությունների ամրապնդումը հնարավոր է «գյուղացի-հող» օբյեկտիվ և սիմվոլիկ փոխհարաբերության ամրապնդման ճանապարհով:

Սակայն հայաստանյան արդի գյուղերում ապրանքաիրային արժեքների անմիջական ազդեցությամբ պատկերը ճիշտ հակառակն է: Ինչպես հարցազրույցի ժամանակ նկատում են գյուղաբնակները. *«Մարդիկ հույսները կտրել են հողից»*: Այսօր գյուղում *«Հարգվածը նա է, ով հարուստ է: Երեխաներն էլ են դա հասկանում, դրա համար էլ մանկուց բոլորը ձգտում են գնալ արտերկիր, օրինակ՝ Ռուսաստան, որպեսզի հարուստ լինեն»*:

Այսօր հայաստանյան գյուղերում եկամտի հիմնական աղբյուրը են արտագնա աշխատանքի մեկնած հարազատների կողմից ուղղարկված գումարներն են (31%), վարձու աշխատանքը (22,2%) և միայն 14,5% դեպքում այսօրվա գյուղացուն եկամուտ է բերում «հողը» (տե՛ս գրաֆիկ 1.1):

Գրաֆիկ 1.1



Այսօր հայաստանյան գյուղում ձևավորվել է **«արտագնա աշխատողի»** սոցիալական տիպը, որպես լեգիտիմ հասարակական իդեալ[28]: Այդ տիպի հարաբերակցությամբ է հաճախ որոշվում գյուղի ստրատիֆիկացիոն կառուցվածքն ու կարգավիճակը: Օրինակ հետևյալ բնորոշումն են տալիս գյուղաբնակները. *«Քանի որ մեր գյուղացիները շատ են գնում արտագնա աշխատանքի, ապա ավելի բարվոք կյանքով են ապրում, քան մյուս գյուղերի գյուղացիք»:* Արտագնա աշխատանքը դիտարկվում է որպես ընտանիքի կենսամակարդակը պահպանող արդարացված և հիմնավոր միջոց, որը գյուղաբնակների բնորոշմամբ. *«Էնքանով է շահեկան, որ գիտենք՝ էրեխեքը կուշտ են, դպրոց կերթան: Նրանց ուղարկած գումարով ենք տունը նորոգել, գույք ենք գնել»:* Իսկ ահա արտագնա աշխատանքի բացասական հետևանքների շարքում համատարած պատասխանները շատ սուբյեկտիվ բնույթի են՝ *«կարոտ», «անհանգստություն»:*

Արդի միտումները ցույց են տալիս, որ կապիտալիստական շուկան ներթափանցել է գյուղ, գյուղական միջավայր՝ նպաստելով արդի գյուղում վարձու աշխատանքի ինստիտուտի ձևավորմանը*: Վարձու աշխատանքը միշտ այլընտրանքային բնույթ ունի. եթե չի բավարարում աշխատանքի դիմաց փոխհատուցվող արժեքը կամ կա այլ ավելի բարձր վարձատրվող աշխատանք, ապա գյուղացին հեշտությամբ կարող է փոխարինել այն նորով՝ փոխելով նաև աշխատանքի բնույթը: Հետազոտության արդյունքները փաստում են, որ արդի հայաստանյան գյուղերում ընթանում է շուկայական, ապրանքաիրային փոխհարաբերությունների ինստիտուցիոնալացման գործընթաց: «Շուկան» դառնում է գյուղական առօրյայի մասը՝ նպաստելով ինքնության ավանդական տարրերի՝ անձնավորված

---

[28] Տե՛ս Франгян Е Обществоведческие этюды. Обоснование социально-философского мировоззрения партии Дашнакцутюн. Баку: изд. Арамазд, 1917.

* Չնայած վարձու աշխատանքի ինստիտուտը հայկական գյուղի մասն է կազմում դեռևս խորհրդային տարիներից՝ խորհտնտեսությունների ձևավորմամբ, սակայն ներկայումս այն կրում է որակապես նոր բնույթ:

փոխհարաբերությունների, աֆեկտիվ կապերի և կայուն պարզ արժեքների վերափոխմանը:

Իսկապես, հետխորհրդային շրջանում կտրուկ փոփոխության ենթարկվեց գյուղի ստրատիֆիկացիոն կառուցվածքը: Հիմնական փոփոխությունների շարքում հատկապես առանձնանում են հայկական գյուղերի սոցիալ-մասնագիտական խմբերի թվի նվազումը: Ինչպես նկատում է Մ. Գաբրիելյանը. «Գյուղերում խորհրդային շրջանում կարևոր դեր խաղացող տարբեր խմբեր՝ վարչական մտավորականություն, գյուղատնտեսության տարբեր բնագավառների աշխատողներ, արդյունաբերական բանվոր ծառայողներ, սպասարկման ոլորտի աշխատողներ, այսօր որպես այդպիսին գոյություն չունեն, փոփոխվել կամ էապես կրճատվել են»[29]:

Արտագնա աշխատանքի ինստիտուցիոնալացման, գյուղի ստարտիֆիկացիոն կառուցվածքի փոփոխության արդյունքում որակական փոփոխություններ են տեղի ունենում ոչ միայն գյուղական զբաղվածության ոլորտում, այլ նաև ներհամայնքային առօրյա փոխհարաբերություններում: Ընդ որում, եթե այսօր գյուղում կենտրոնական ինտեգրատոր շարունակում է մնալ *ընտանիքը,* ապա *հարևանության և գյուղական համայնքի* գաղափարը դառնում է պակաս կարևոր, նույնիսկ երկրորդային: Այս երևույթի տիպիկ բնորոշումը տալիս են գյուղաբնակները. *«Մարդու բնույթը ժամանակաշրջանն ինքը փոխում ա: Դե եթե նախկինում, օրինակ, ընկերական տեսակետով կամ բարեկամական, մեկը մեկին օգնեում էր, հիմա մեկը ոչ թե բոլորի համար կձգտի, անի, այլ հիմա ձգտում ա իրա համար անել կամ մի քանի լավ մարդկանց հետ մոտիկություն անել, հարևանություն անել, բայց ոչ գյուղի բոլոր մարդկանց հետ: Դե առաջ սովետական կարգերն էր, իսկ հմա մասնավոր կյանքի հիմքը մարդու մեջ դրվել ա, տեսնում ես, որ էն ժամանակվա իրավիճակը չի»,* կամ. *«Շատ ա փոխվել մարդկանց հարաբերությունները ու պատճա-*

[29] Տե՛ս Գաբրիելյան Մ. Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը (ազգագրական ուսումնասիրություն)// Ե., 2001, էջ 54:

ոը ֆինանասն ա, ֆինանսապես եթե մարդը չունի, տենց ա ըլնում, վստահությունը կորչում ա: Գալիս ա մարդը, ուզում ա, ասում ա, կտամ, հետո էլ չունի, որ տա, ու արդեն էդ վստահությունը կորչում ա: Ես, ճիշտ ասած, չեմ վստահում, կարող ա խղճամ, տամ, բայց չեմ վստահում»:

Քանակական ցուցանիշները ևս խոսուն են. գյուղաբնակների կողմից գնահատված հետևյալ արժեքների շարքում՝ *ընտանիք, բարեկամություն, ընկերություն, հարևանություն, ազգային ավանդույթներ, նյութաֆինանսական հաջողություն, բարեկեցություն, մարդու իրավունքներ, պարտականությունների կատարում, ազատություն, աշխատասիրություն, կրթվածություն, առողջություն, ըմբոստություն, օրինավորություն, կնոջ հնազանդություն, արդարություն, հանդուրժողականություն, համայնք և եկեղեցի,* որպես ոչ կարևոր արժեք նշել են ըմբոստությունը՝ 33.6%, ***հարևանությունը՝ 15.3% և համայնքը՝ 14.8%:*** Որպես «ոչ կարևոր» այլ արժեքներ (թվարկվածից բացի) նշողները չեն գերազանցել 1%-ը:

Չնայած, որ որպես «ամենակարևոր» արժեք գրեթե 100%-ով նշվել է ընտանիքը, սակայն ձևի տեսանկյունից արդի հայաստանյան գյուղերում էական փոփոխություն են կրել նաև ներընտանեկան փոխհարաբերությունները: Այսօր կարևոր հաղորդակցման միջոց են դարձել հեռահաղորդակցման տարատեսակները՝ հեռախոս, ինտերնետ: Այդ տեսանկյունից, հետաքրքրական են հայաստանյան գյուղերի գյուղապետերի հետ իրականացված անկետային հարցման արդյունքները, համաձայն որի վերջին երեք տարում արտագաղթի ցուցանիշի բարձրացումը ուղիղ համեմատական է ինտերնետի հասանելիության ցուցանիշի կտրուկ բարձրացմանը գյուղում: Ստացված գնահատականները ամրագրում են այն, որ գյուղատնտեսական, ենթակառուցվածքային, ոլորտային կամ սոցիալ-մշակութային նշանակալի հիմնախնդիրների շարքում ամանախնդրահարույցը դիտարկվում է արտագաղթը, իսկ որպես ամենադրական փոփոխություն նշվում է ինտերնետի հասանելիության գործոնը:

Արդյունքում գյուղական ընտանիքը, որի անդամները գտնվում են գյուղից դուրս, ընդգրկվում է սոցիալական փոխհարաբերությունների նոր տարածության մեջ, որը չի սահմանվում գյուղի լոկալ և համայնական տարածությամբ: Ընտանիքը ներփակվում է, իսկ խմբային կարգավիճակը որոշակիանում է համաձայն ֆինանսական հնարավորության, որում հիմնական ներդրումն ունի արտագնա աշխատանքը: Եթե, համաձայն Գ. Զիմելի առաջադրած «զարգացման մոդելի», խմբի ընդլայնման ունիվերսալ գործընթացը ուղեկցվում է նրա անդամների անհատականության ուժգնացմամբ, և խմբի անդամների քանակի աճը հանգեցնում է խմբի անդամների նմանության/նույնականության նվազմանը՝ բերելով խմբային համախմբվածության անկմանը[30], ապա արդի հայաստանյան գյուղի զարգացման օրինաչափությունը ստանում է հետևյալ տրամաբանությունը. ***թեև գյուղական բնակչության քանակը կտրուկ նվազում է, սակայն աճում են գյուղի ընտանիքների գյուղից դուրս հաղորդակցության ուղիները, որը հանգեցնում է ընտանիքների նմանության/նույնականության նվազմանը և համայնական խմբային համախմբվածության անկմանը:***

Այսպիսով, արդի հայաստանյան գյուղերում սոցիալական փոխհարաբերությունների ձևերի փոփոխության արդյունքում գյուղը կորցնում է իր յուրահատկությունը՝ կանգնելով տարալուծման և ինքնության կորստի վտանգի առաջ: Սույն վերլուծությունը թույլ է տալիս այսօր խոսել գյուղական համայնքների սոցիոլոգիական ուսումնասիրության և համապատասխան պրակտիկ սոցիալական տեխնոլոգիաների մշակման անհրաժեշտության մասին: Հակառակ դեպքում, արդի գործընթացները կշարունակեն նպաստել գյուղում միջանհատական փոխհարաբերություններում դրսևորվող հարաբերականորեն կայուն և կրկնվող սոցիալական ձևերի, նոր սոցիալական տիպերի (գյուղական կերպարին «հակասող») առաջացմանը,

[30] Տե՛ս Ионин Л. Г. “Георг Зиммель — социолог: критический очерк”// М.: Наука, 1981.

որոնց ինստիտուցիոնալացման պարագայում անհնար կլինի պահպանել գյուղի որպես սոցիալական համակարգի յուրահատկությունները:

1.3 Ազգային ավանդույթներն ու կրոնականությունը գյուղական առօրյայում

Արդիականացման և համաշխարհայնացման ներկայիս գործընթացները և դրանց շրջանակներում տեղի ունեցող սոցիալական փոփոխություններն ու տեղաշարժերը, համաձայն սոցիոլոգիական արդի մոտեցումների, օբյեկտիվորեն նպաստում են ավանդական-համայնականի վերափոխմանն ու փոխարինմանը: Համաշխարհային ինտեգրատիվ գործընթացները սոցիալական փաստեր[31] են, որոնցից անմասն չի կարող մնալ արդի որևէ հասարակություն: Ինչպես Յ. Հաբերմասն է նկատում. «Այս և յուրաքանչյուր այլ ինտեգրացիոն գործընթաց ոչ միայն կարգավորող, այլ նաև հակասական (երբեմն կոնֆլիկտային) բնույթ ունի, ընդ որում, այդ հակասականությունը դրսևորվում է ինքնության ճգնաժամի տեսքով, որից խուսափելու համար անհրաժեշտ է, որպեսզի համակարգն ընդգծի իր յուրահատկությունները»[32]: Այս տեսանկյունից հասարակության յուրահատկություններն, այլ հասարակություններից նրան տարբերակող հատկանիշները ամրագրված են հենց ազգային ավանդական կերպարում, որի կրողն է, ինչպես արդեն նկատեցինք «գյուղը»՝ որպես սոցիալական յուրատեսակ համակարգ: Գյուղի և գյուղական համայնքի ներկայիս ավանդական կերպարի փոխակերպման առանձնահատկությունները մասնավորապես կարելի է տեսնել գյուղում ավանդական-մշակութային/կրոնական պրակտիկաների վերարտադրության համատեքստում:

---

[31] Տե՛ս Դյուրկհեյմ Է. Սոցիոլոգիական մեթոդի կանոնները// Ե., 2006:

[32] Տե՛ս Habermas J. The theory of communicative action: reason and rationalization of society// Beacon press, 1897.

* * *

Գյուղի, գյուղական համայնքի՝ որպես ավանդական ինքնություն վերարտադրող մեխանիզմի, կառուցվածքային փոփոխությունները հանգեցրել են նաև գյուղական առօրյայի փոփոխմանը: Ավանդական գյուղական համայնքին բնորոշ հողագործական, անասնապահական կենսակերպի վերափոխման, հարևանի ինստիտուտի անկման, ինչպես նաև, քաղաքի և քաղաքային մշակույթի արժևորման ֆոնի վրա արդի հայկական գյուղերում փոփոխվում են նաև ավանդույթների, ծեսերի, կրոնականության վերարտադրության մեխանիզմները, վերաիմաստավորվում են պրակտիկաներն ու նվազում է լոյալությունը ավանդույթները, կրոնականությունը վերատադրող սուբյեկտների նկատմամբ: Ինքնության ավանդական տարրերի վերարտադրության գործընթացում կենտրոնական են ազգային ավանդույթների և կրոնական պրակտիկաների՝ որպես ավանդական ինքնության միջուկի, դերն ու նշանակությունը:

Ինչպես երևում է գրքի տարբեր բաժիններում առկա վերլուծությունից, արդի հայաստանյան գյուղում նկատելի է ընտանեկան լոկալացման և պարփակման միտումը: Ավանդական գյուղին բնորոշ համայնական համատեղ կենսակերպը փոխարինվում է ընտանեկան շրջանակներով: Հասարակական կազմակերպման հանրային ձևաչափը հաճախ փոխարինվում է լոկալ-խմբային և/կամ անհատական դրսևորումներով: Ինչպես երևում է սոցիոլոգիական հարցման արդյունքներից, հայաստանյան արդի գյուղերում կազմակերպվող բարեկամական, ընկերական տարբեր հանդիպումներին, ծեսերին, խնջույքներին և արարողություններին գյուղաբնակների 16%-ը հազվադեպ է մասնակցում, իսկ 12%-ը գրեթե երբեք չի մասնակցում (տես գրաֆիկ 1.2), ինչը գյուղական ավանդական համայնքի այլափոխվող կերպարի նշանակալի ցուցանիշ է: Համաձայն սոցիոլոգիական հետազոտության արդյունքների՝ հայաստանյան գյուղերում որպես կոլեկտիվ ավանդական միջոցառումներ, որոնց մասնակցում են գյուղաբնակները, առանձնացվում են ***հարսանիքներն ու***

թաղման արարողությունները, տոնակատարություններից՝ հատկապես ***Ամանորը,*** իսկ որպես ավանդական/կրոնական տոն՝ ***Վարդավառը, Զատիկը, Տերենդեզը:***



Գրաֆիկ 1.2

Կոլեկտիվ միջոցառումների իմաստավորման հարցում հաճախ կենտրոնական է արդիականությանը բնորոշ աֆեկտիվ չեզոք կապերի և ոչ հաստատուն բարդ արժեքների առաջնայնության գործոնը, մասնավորապես՝ գյուղաբնակների հետ խորին հարցազրույցների ժամանակ տիպիկ են նման մեկնաբանությունները. *«Եթե իրենց անձնական հարցը չէ, դժվար է համախմբել գյուղացիներին», «Երիտասարդը, որ դպրոցն ավարտելուց հետո կամ բանակից գալուց հետո աշխատանք չգտավ, նրան ոչ մի ավանդույթ էլ չի հետաքրքրի», «Առաջ մենք բոլոր կրոնական ծեսերը կատարել ենք շատ քիչ ծախսով, մի երկու ձվով, բայց շատ ուրախ սրտով անցկացրել ենք տոները: Հիմա դրանք գրեթե մոռացվում են: Եթե նույնիսկ մի ոչխար էլ մորթեն ու շատ շքեղ անցկացնեն, էլի չեն կարողանում ուրախանալ»:*

Ինչ վերաբերում է կրոնին, մասնավորապես կրոնական տոնակատարություններին, այն ևս իմաստային փոփոխություն է կրել: Կրոնական ծիսակատարությունը հաճախ ընկալվում է որպես սոցիալական առօրյա ակտիվության բաղադրիչ: Ընդ որում, կրոնականության արարողակարգային-ինստիտուցիոնալ և զգայական-ան-

հատական չափումները ցույց են տալիս, որ դրանք կարող են հաճախ հակադրվել:

Այն հարցին, թե որքան հաճախ են գյուղաբնակները մասնակցում կրոնական արարողություններին, 29%-ը նշեց, որ գրեթե երբեք չեն մասնակցում, 25%-ը մասնակցում են միայն հատուկ կրոնական տոներին, պարբերաբար մասնակցողների քանակը 30% է: Իսկ հարցին, թե որքա՞ն հաճախ են աղոթում, պատկերը հետևյալն է. 21%-ը գրեթե երբեք չի աղոթում, իսկ 65%-ը բավական հաճախ աղոթում է (տես աղյուսակ 1.3):

Աղյուսակ 1.3

Բացի հատուկ իրադարձություններից՝ հարսանիքներ, թաղումներ և այլն, որքա՞ն հաճախ եք Դուք ներկայումս մասնակցում կրոնական արարողություններին:		*Բացի հատուկ իրադարձություններից՝ հարսանիքներ, թաղումներ և այլն, որքա՞ն հաճախ եք աղոթում:*	
1. Գրեթե երբեք/երբեք	29%	1. Օրը մի քանի անգամ	23%
2. Միայն հատուկ կրոնական տոներին	25%	2. Օրը մեկ անգամ	22%
3. Ամիսը մեկ անգամ	19%	3. Շաբաթը մի քանի անգամ	20%
4. Տարին մեկ անգամ	10%	4. Միայն կրոնական արարողություններին մասնակցելիս	8%
5. Շաբաթը մեկ անգամ	9%	5. Միայն հատուկ կրոնական տոներին	2%
6. Տարին մեկ անգամից պակաս	5%	6. Տարին մեկ անգամ	3%
7. Շաբաթը մեկ անգամից ավել	2%	7. Տարին մեկ անգամից պակաս	1%
		8. Գրեթե երբեք/երբեք	21%

Ընդ որում, հետաքրքրական է, որ կրոնական արարողակարգային պասիվությունը պարտադիր պայման չէ զգայական պասիվության. այն է՝ կրոնական տոնակատարություններին գրեթե երբեք չմասնակցողների (որոնք կազմում են 29%) մոտ 49%-ը հաճախակի աղոթում է և հավատում է Աստծո գոյությանը (տես աղյուսակ 1.4.):

Աղյուսակ 1.4

Որքա՞ն հաճախ եք Դուք ներկայումս մասնակցում կրոնական արշարողություններին: Որքա՞ն հաճախ եք աղոթում: *Խաչաձև աղյուսակ …*		Որքա՞ն հաճախ եք աղոթում								
		Օրը մի քանի անգամ	Օրը մեկ անգամ	Շաբաթը մի քանի անգամ	Միայն կրոնական արարողություններին մասնակցելիս	Միայն հատուկ կրոնական տոներին	Տարին մեկ անգամ	Տարին մեկ անգամից պակաս	Գրեթե երբեք/երբեք	Ընդամենը
Որքա՞ն հաճախ եք Դուք ներկայանում կանոնավոր-ցումկրոնականարարողություններին:	Շաբաթըմեկանգամիցավել	58.2%	20.0%	-	21.8%	-	-	-	-	100.0%
		4.6%	1.6%	-	5.0%	-	-	-	-	1.8%
	Շաբաթըմեկանգամ	43.3%	29.6%	21.3%	2.0%	-	-	-	3.8%	100.0%
		18.2%	12.7%	10.1%	2.4%	-	-	-	1.7%	9.5%
	Ամիսը մեկ անգամ	20.7%	33.9%	20.4%	11.2%	5.2%	0.6%	0.9%	7.2%	100.0%
		17.9%	29.9%	19.9%	27.7%	44.7%	4.5%	13.1%	6.5%	19.4%
	Միայն հատուկ կրոնական տոներին	16.7%	20.9%	24.4%	15.6%	3.6%	1.6%	1.2%	16.0%	100.0%
		18.5%	23.5%	30.5%	49.6%	40.1%	15.3%	21.0%	18.4%	24.8%
	Տարին մեկ անգամ	20.1%	27.7%	23.7%	4.6%	-	8.8%	-	15.0%	100.0%
		8.8%	12.3%	11.7%	5.7%	-	33.8%	-	6.9%	9.8%
	Տարին մեկ անգամից պակաս	12.5%	23.7%	18.1%	7.1%	-	12.4%	4.9%	21.2%	100.0%
		3.0%	5.8%	4.9%	4.9%	-	25.9%	19.3%	5.3%	5.4%
	Գրեթե երբեք/երբեք	22.2%	10.8%	15.6%	1.3%	1.2%	1.8%	2.2%	45.0%	100.0%
		29.0%	14.3%	23.0%	4.8%	15.2%	20.5%	46.6%	61.3%	29.3%
Ընդամենը		22.5%	22.1%	19.9%	7.8%	2.2%	2.6%	1.4%	21.5%	100.0%

Որքա՞ն հաճախ եք Դուք ներկայումս մասնակցում կրոնական արարողություններին: Որքա՞ն հաճախ եք աղոթում: *Խնդրում ենք նշել ...*		Որքա՞ն հաճախ եք աղոթում								Ընդամենը
		Օրը մի քանի անգամ	Օրը մեկ անգամ	Շաբաթը մի քանի անգամ	Միայն կրոնական արարողություններին մասնակցելիս	Միայն հատուկ կրոնական տոներին	Տարին մեկ անգամ	Տարին մեկ անգամից պակաս	Գրեթե երբեք/երբեք	
Որքա՞ն հաճախ եք Դուք ներկայումս մասնակցում կրոնական արարողություններին:	Շաբաթը մեկ անգամից ավել	58.2%	20.0%	-	21.8%	-	-	-	-	100.0%
		4.6%	1.6%	-	5.0%	-	-	-	-	1.8%
	Շաբաթը մեկ անգամ	43.3%	29.6%	21.3%	2.0%	-	-	-	3.8%	100.0%
		18.2%	12.7%	10.1%	2.4%	-	-	-	1.7%	9.5%
	Ամիսը մեկ անգամ	20.7%	33.9%	20.4%	11.2%	5.2%	0.6%	0.9%	7.2%	100.0%
		17.9%	29.9%	19.9%	27.7%	44.7%	4.5%	13.1%	6.5%	19.4%
	Միայն հատուկ կրոնական տոներին	16.7%	20.9%	24.4%	15.6%	3.6%	1.6%	1.2%	16.0%	100.0%
		18.5%	23.5%	30.5%	49.6%	40.1%	15.3%	21.0%	18.4%	24.8%
	Տարին մեկ անգամ	20.1%	27.7%	23.7%	4.6%	-	8.8%	-	15.0%	100.0%
		8.8%	12.3%	11.7%	5.7%	-	33.8%	-	6.9%	9.8%
	Տարին մեկ անգամից պակաս	12.5%	23.7%	18.1%	7.1%	-	12.4%	4.9%	21.2%	100.0%
		3.0%	5.8%	4.9%	4.9%	-	25.9%	19.3%	5.3%	5.4%
	Գրեթե երբեք/երբեք	22.2%	10.8%	15.6%	1.3%	1.2%	1.8%	2.2%	45.0%	100.0%
		29.0%	14.3%	23.0%	4.8%	15.2%	20.5%	46.6%	61.3%	29.3%
Ընդամենը		22.5%	22.1%	19.9%	7.8%	2.2%	2.6%	1.4%	21.5%	100.0%
		100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%	100.0%

Համաձայն կրոնը մեկնաբանող արդի հայեցակարգերի արդիականացումը զուգակցվում է «արտաեկեղեցական կրոնի» ձևավորմանը՝ հանգեցնելով հանրային կրոնը անհատական կրոնով փախարինմամբ[33]: «Արտաեկեղեցական կրոնը» ենթադրում է մի կողմից կրոնի ինստիտուցիոնալ նշանակության և ինստիտուցիոնալ սահմանված նորմերի փոխակերպում, որն ուղեկցվում է կրոնականի անհատական մեկնաբանությամբ: Այսպես, չնայած բարձր են հայաստանյան գյուղաբնակների աղոթելու հաճախականության և որպես հավատացյալի ինքնանույնականացման ցուցանիշերը, սակայն տարբեր են կրոնի էության բնորոշումները (տե՛ս աղյուսակ 1.5), մասնավորապես՝

- կրոնի էությունը ոչ թե կրոնականության վերարտադրությունն է, այլ սոցիալական աջակցությունը,
- կրոնը, մասնավորապես քրիստոնեությունը, ներկայի իմաստավորումն է և ոչ պատկերացումը տրանսցենդենտալի, մասնավորապես մահվանից հետո կյանքի, մասին, այնինչ քրիստոնեության դասական իմաստը պարունակում է ասոցիալական բնորոշիչներ[34]:

Աղյուսակ 1.5

Ա.Անկախ նրանից՝ հաճախում եք եկեղեցի, թե ոչ, կարո՞ղ եք ասել, որ Դուք...	
1. Հավատացյալ եք	91%
2. Հավատացյալ չեք	8%
3. Աթեիստեք	1%
Բ. Այս դատողություններից ո՞րի հետ եք առավել համաձայն: Կրոնի հիմնական էությունն է...	
1. Հետևել կրոնական նորմերին և արարողություններին	33%

[33] Տե՛ս Бергер П. “Священная завеса”// Религия и общество: Хрестоматия по социологии религии. - М.:Аспект-Пресс, 1996.

[34] Տե՛ս Зиммель Г. “Социология Религии”// Избранное, Том 1, Москва: Юрист, 1996, ст. 558-567.

2. Լավություն անել մարդկանց	67%
Գ. Իսկ այս դատողություններից ո՞րի հետ եք առավել համաձայն: Կրոնի հիմնական իմաստն է...	
1. Իմաստավորել կյանքը մահվանից հետո	13%
2. Իմաստավորել կյանքն այս աշխարհում	87%

Մյուս կողմից, կրոնը հայաստանյան գյուղաբնակների ընկալմամբ կարևոր ինքնության (նույնականացման և տարբերակման) բաղադրիչ է, մասնավորապես՝

- միակ ընդունելի կրոնը սեփական կրոնն են համարում գյուղաբնակների 83%-ը,
- թեև այլադավանությունը ոչ միշտ են կապում ոչ բարոյական լինելու հետ, սակայն գյուղաբնակները դեմ են այլ կրոնների ինստիտուցիոնալացմանը (տես աղյուսակ 1.6.):

Չնայած կրոնի՝ որպես ինքնության նշանակալի բաղադրիչի ընկալումների, կրոնական գիտելիքն ու նորմերը հիմնականում հակադրվում են գիտական գիտելիքին և գիտությամբ սահմանված օրենքներին, և, ըստ հարցվածների 60%-ի, գիտական գիտելիք ճիշտ է և գերակա կրոնական դոգմայի համեմատ:

Աղյուսակ 1.6

Ասացեք խնդրեմ, թե արդյո՞ք հետևյալ պնդումների հետ ...	***Լիովին համաձայն եմ***	***Համաձայն եմ***	***Համաձայն չեմ***	***Բնավ համաձայն չեմ***
Միակ ընդունելի կրոնն իմ կրոնն է	38%	45%	15%	2%
Բոլոր կրոններն էլ պետք է ուսուցանվեն մեր հանրային դպրոցներում	2%	16%	34%	48%
Այլ կրոն դավանող մարդիկ նույնքան բարոյական են, որքան իմ կրոնակիցները	6%	49%	27%	18%

Բոլոր այն դեպքերում, երբ գիտությունն ու կրոնը հակասության մեջ են, կրոնը միշտ ճիշտ է	12%	28%	42%	18%

Ընդհանուր առմամբ, մշակութային ձևերի փոփոխություններն[35] իրենց դրսևորումներն են գտնում կրոնական պրակտիկաների, նորմերի և տիպականացումների փոխակերպումներում: Ինչպես ցույց է տրվում սույն գրքի մյուս բաժիններում արդիականության մոդելով փոխակերպումները օրինաչափ են գյուղի և գյուղական համայնքի կենսագործունեության բոլոր ոլորտներում: Հաճախ դա պայմանավորված է կենսակերպով: Այդ տեսանկյունից, հողն է գյուղի ամենանշանակալի և շոշափելի կապիտալը: Առաջնային է հողի տնտեսական նշանակությունը, սակայն ոչ պակաս կարևոր է դրա սոցիալ-մշակութային արժեքը: Հողի հետ հարաբերակցության մեջ է բացահայտվում գյուղական ընտանիքի, համայնական կենսակերպի, առօրյա մշակույթի ու դերաստատուսային բաշխվածության բնույթն ու բովանդակությունը: Արհեստական կամ ոչ բնական միջամտությունների բացառմամբ գյուղի՝ որպես ավանդական-համայնական արժեքներ վերարտադրող մեխանիզմի, պահպանման սակավ հնարավորություններից մեկը ավանդական գյուղական կենսակերպի՝ որպես օբյեկտիվորեն սոցիալական կապեր վերարտադրող մեխանիզմի, ապահովումն է: Այս տեսանկյունից գյուղացի (գյուղական ընտանիք) - գյուղ (համայնք) փոխհարաբերությունների ամրապնդումը հնարավոր է «գյուղացի-հող» օբյեկտիվ և սիմվոլիկ փոխհարաբերության ամրապնդման ճանապարհով: Ապրանքաիրային արժեքների անմիջական ազդեցության նվազեցման տեսանկյունից հատկապես անհրաժեշտ են գյուղատնտեսական մանր տն-

[35] Տե՛ս Зиммель Г. “Конфликт современной культиры”// Избранное, Том 1, Москва: Юрист, 1996, ст. 558-567.

տեսությունների խթանումն ու ձևավորումը: Պետության և շուկայի դերն այս դեպքում ոչ թե ընդգրկված միջամտության մեջ է, այլ՝ տնտեսական ռիսկերի նվազեցման և գյուղատնտեսական գործունեության խթանման քաղաքականության մշակման ճանապարհով արտաքին կարգավորման:

Իսկապես, եթե գյուղական միջավայրում արդի արժեքների և նորմերի ներթափանցման վերահսկողությունն ու կարգավորումը անհնարին է և ոչ արդարացված, ապա գյուղի ավանդական-համայնական ինքնության տարրերի վերարտադրության կարևորագույն նախապայման է դառնում համարժեք կենսակերպի ապահովումը: Այդ տեսանկյունից ժամանակին արժեքավոր դիտարկում է կատարել Մ. Նալբանդյանը՝ նշելով, որ երկրագործությունը կարող է դառնալ թե՛ տնտեսական, հասարակական առաջընթացի և թե՛ ազգային յուրահատկությունների պահպանման ուղիղ ճանապարհը[36]:

Նմանօրինակ սոցիալական և տնտեսական տեխնոլոգիաները իրատեսական հնարավորություն կարող են ընձեռել գյուղի պահպանման քաղաքականության մշակման և իրագործման, համապատասխանաբար, ազգային ինքնության ավանդական տարրերի վերատադրության համար, սակայն դա այս գործընթացի անհրաժեշտ, նշանակալի, բայց ոչ բավարար պայմանն է: Ինչպես արդեն նկատեցինք, քաղաքից-գյուղ արդիականությանը բնորոշ արժեքանորմատիվ տեղաշարժերը կարող են առաջացնել կիրառվող տեխնոլոգիաների, իրականացվող քաղաքականության լեգիտիմության ճըգնաժամ[37], որից հնարավոր է խուսափել այնքան ժամանակ, քանի դեռ «քաղաքն» ինքն է արժևորում և սիմվոլիկ ընկալումների մակարդակում կրում ավանդական-համայնականը[38]:

---

[36] Տե՛ս Նալբանդյան Մ. Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ// Ե., 1954:

[37] Տե՛ս Habermas J. Legitimation Crisis// Boston, 1975, էջ 68-75.

[38] Տե՛ս Վերմիշյան Հ. “Գյուղը և ազգային ինքնությունը սոցիալական փոփոխությունների հեռանկարում”// “ԲԱՆԲԵՐ Երևանի Համալսարանի”- Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, N 137.5, Երևան: ԵՊՀ հրատ., 2012, էջ. 3-9:

ԳԼՈՒԽ 2
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

2.1 Պետական սոցիալական աջակցության հիմնական ուղղությունները

Ըստ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման՝ երկրում կա 915 համայնք, դրանցից 866-ը գյուղական համայնքներ են: ՀՀ համայնքների 48%-ը (441 համայնք) ունեն 1000-ից պակաս բնակչություն, որի մեջ 300-ից պակաս բնակչություն ունեցողները 196-ն են, իսկ 100-ից պակաս բնակչություն ունեցողները՝ 29-ը[39]: Փոքր բնակչությամբ ամենաշատ համայնքները գտնվում են Սյունիքի և Արագածոտնի մարզերում, որտեղ 1000-ից պակաս բնակչություն ունեցող համայնքները մարզի ընդհանուր համայնքների թվի մեջ կազմում են համապատասխանաբար՝ 80% և 66%: Հանրապետության 184 համայնքներ համարվում են սահմանամերձ, դրանց զգալի մասը (հիմնականում Սյունիքի և Տավուշի մարզերում) տուժել է Ադրբեջանի կողմից ձեռնարկած մարտական գործողությունների ընթացքում:

ՀՀ Կառավարության կողմից 1998 թվականին ընդունված «ՀՀ բնակավայրերն ըստ բարձրունքային նիշերի դասակարգելու մասին» որոշման համաձայն, ըստ տեղակայման բարձրության մակարդակի՝ տարբերակվում են նախալեռնային, լեռնային և բարձր լեռնային համայնքներ[40]: Նախալեռնային են համարվում այն համայնք-

[39] Տե՛ս Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ, Երևան, 2012, էջ 39:

[40] Լեռնային և բարձր լեռնային համայնքների թիվը կազմում է համայնքների ընդհանուր թվի 41%-ը:

ները, որոնք տեղակայված են ծովի մակերևույթից մինչև 1700 մետր բարձրություն ունեցող գոտիներում, լեռնային են համարվում այն համայնքները, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 1700-2000 մետր բարձրության վրա, բարձր լեռնային են համարվում այն համայնքները, որոնք տեղակայված են 2000 մետրից բարձր տարածքներում: Կլիմայական պայմանների և դրանցով պայմանավորված գյուղատնտեսական եկամտաբեր գործունեությամբ զբաղվելու հնարավորությունների առումով առավել խոցելի են լեռնային և բարձր լեռնային համայնքները: Ընդ որում, ներկայումս այդպիսի համայնքների թիվը 375 է, և դրանց մոտավորապես կեսը՝ (188 համայնք) բարձր լեռնային համայնքներն են[41]:

Դասակարգման առանձին կատեգորիա են կազմում աղետի գոտու գյուղական համայնքները: 1988 թվականի աղետալի երկրաշարժի գոտին ընդգրկեց հանրապետության հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանները (ՀՀ տարածքի մոտ 40%-ը), զգալի վնաս հասցվեց 324 գյուղական համայնքներին: Այդ համայնքները մինչ օրս կրում են աղետալի արհավիրքի բացասական ազդեցությունները, քանի որ դեռևս լուծված չեն երկրաշարժից տուժած բնակչության մի շարք սոցիալական հիմնախնդիրներ:

Ամփոփելով և ի մի բերելով առավել խոցելի գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, կարելի է արձանագրել հիմնախնդիրների հետևյալ շրջանակը.

- ✓ աղետների և մարտական գործողությունների հետևանքով շարքից դուրս եկած կամ վնասված ենթակառուցվածքները (բնակարանային ֆոնդ, շինություններ, ճանապարհներ, խմելու ջրագծեր, ոռոգման ցանցեր և կոյուղագծեր և այլն),

[41] Բարձր լեռնային ամենաշատ համայնքները տեղակայված են Գեղարքունիքի մարզում, որտեղ այդպիսի համայնքների թիվը 78 է և Արագածոտնի մարզում, որտեղ կա բարձր լեռնային համարվող 39 համայնք: Այդ հանգամանքով է նաև պայմանավորվում աղքատության բարձր մակարդակը այս մարզերում:

- ✓ բնակչության բնակարանային ապահովության հիմնախնդիրը,
- ✓ գործազրկության բարձր ցուցանիշները,
- ✓ ֆինանսական միջոցների բացակայությունը կամ սակավությունը,
- ✓ օգտագործվող ցանկատարածությունների կրճատումը,
- ✓ դպրոցական շենքերի, բուժկետերի, մշակութային օջախների բացակայությունը կամ քայքայված վիճակը,
- ✓ երիտասարդության արտահոսքն ու ծնելիության մակարդակի անկումը:

Անկախության առաջին տարիներից սկսած Հայաստանի նախկին տնտեսական կարողությունների զգալի մասի փլուզումը այլ գործոնների հետ մեկտեղ երկրում, այդ թվում նաև գյուղական համայնքներում, մեծ չափերի հասնող աղքատություն առաջացրեց: Իրավիճակը չմեղմեց հողի համատարած սեփականաշնորհումը, քանզի գյուղատնտեսական աշխատանքները նախ սեզոնային բնույթ են կրում, հետո էլ շատ համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողերի սակավությունն ու կիրառվող տեխնոլոգիաների հետամնացությունը գյուղացիական տնտեսությունների համար խիստ դժվարացնում է տնտեսական խնդիրների լուծումը:

Թեև ըստ վերլուծաբանների՝ 2002-2009 թթ. գյուղատնտեսությունում զբաղվածների թիվը կայունացավ՝ տատանվելով 491-500 հազարի միջակայքում[42], 2009 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը նոր հարված հասցրեց Հայաստանի տնտեսական զարգացմանը: Գյուղական համայնքները մեծապես կրեցին այդ ճգնաժամի ազդեցությունը: Արդյունքում, 2008 թվականի համեմատությամբ 2010 թվականին աղքատությունը գյուղական հա-

[42] Տե՛ս Սոցիալական բարեփոխումները Հայաստանում, Երևան, 2011, էջ 113

մայնքներում 8.5%-ով աճել է: Գյուղական համայնքներում աղքատ համարվող բնակչության թիվը կազմում էր 36%:[43]

Մարզային կտրվածքով աղքատության մակարդակը հանրապետությունում ընդունված միջինից բարձր է այնպիսի մարզերում, ինչպիսիք են Շիրակը, Կոտայքը, Լոռին, Գեղարքունիքը, Արարատը և Վայոց Ձորը: ՀՀ Շիրակի մարզը բարձր աշխարհագրական դիրք ունենալով և համարվելով 1988 թվականի ավերիչ երկրաշարժից առավել մեծ թվով տուժած համայնքներ ունեցող մարզ՝ շարունակում է մնալ ՀՀ ամենաաղքատ տարածաշրջանը, որտեղ աղքատության գծից բարձր է գտնվում բնակչության միայն 48,3 %-ը[44]:

Վերոնշյալ պայմաններում գտնվող գյուղական բնակչության սոցիալապես անապահով մասին սոցիալական աջակցություն ցուցաբերելու խնդիր ծագեց: Պետության կողմից այդ խնդիրը լուծելու համար համապատասխան սոցիալական քաղաքականություն է իրականացվում, որի շրջանակներում անապահով գյուղական բնակչությունը մասնավորապես կարող է օգտվել «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված հետևյալ տեսակի նպաստներից՝ Ընտանեկան նպաստ, Երեխայի ծննդյան միանվագ նպաստ, Երեխայի խնամքի նպաստ և Ձոհված՝ Հայաստանի ազգային հերոսի, ինչպես նաև Մարտական խաչ շքանշանով պարգևատրված անձի ընտանիքի նպաստ: Օրենքով սահմանված են նաև նպաստների տրամադրման սկզբունքները: Օրինակ՝ Ընտանեկան նպաստ առավել աղքատ ընտանիքներին տրամադրում են հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը (բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր), հատուկ ուշադրություն դարձնելով բազմազավակ ընտանիքներին, ինչը հատկապես կարևոր է գյուղաբնակների համար:

---

[43] Տե՛ս Social Snapshot and Poverty in Armenia: Statistical Analytical Report. Yerevan, 2011, էջ 53:

[44] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2011, էջ 40:

Պետական սոցիալական քաղաքականության մյուս կարևոր բաղադրիչը կենսաթոշակային բարեփոխումներն են: ՀՀ կառավարությունը 2008 թ. նոյեմբերի 13-ի թիվ 1487-Ն որոշմամբ հաստատել է կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը (փոփոխություններով՝ համաձայն 2009 թ. դեկտեմբերի 3-ի ՀՀ կառավարության N 1401-Ն որոշման): 2014 թ.-ից Հայաստանում կգործի *կուտակային կենսաթոշակային բաղադրիչը,* որը ներդրվում է զուգահեռ ներկայումս գործող *սերունդների համերաշխության սկզբունքի* վրա հիմնված բաշխողական կենսաթոշակային համակարգին (երբ աշխատողների ու գործատուների կողմից կատարվող սոցիալական ապահովության պարտադիր վճարները ուղղվում են պետական բյուջե, որի ընդհանուր եկամուտներից ֆինանսական հատկացումներ են արվում կենսաթոշակների համար)[45]:

Կուտակային բաղադրիչին պարտադիր կերպով մասնակցելու են 1974 թ. հունվարի 1-ից հետո ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերն ու նոտարները: Մինչև 1974թ. ծնվածները կարող են կամավորության սկզբունքով մասնակցել այդ բաղադրիչին: Պարտադիր կուտակային վճար կատարելու պարտականությունը պահպանվում է մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը: Կենսաթոշակային խնայողությունները համարվում են անձնական սեփականություն և կարող են օգտագործվել կենսաթոշակային տարիքի (63 տ.) հասնելուց հետո՝ կենսաթոշակ ստանալու նպատակով: Ընդ որում, պետությունը երաշխավորում է, որ անձի կողմից կատարած կենսաթոշակային վճարները կվերադարձվեն: Կենսաթոշակային խնայողությունները կարող են ժառանգվել:

[45] Հայաստանի Հանրապետությունում 2013թ. հունվարի 1-ից եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարի փոխարեն գործում է մեկ միասնական՝ եկամտային հարկ: Անձի աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը և պարտադիր կուտակային վճարը հաշվարկվում և փոխանցվում է գործատուների կողմից:

Հայաստանում 16 տարին լրացած ցանկացած քաղաքացի կենսաթոշակային խնայողություններ կարող է կատարել նաև 2011թ. հունվարից գործող կամավոր կուտակային բաղադրիչի միջոցով՝ կամավոր ընդունված որոշման հիման վրա, անկախ պարտադիր կուտակային համակարգի մասնակից լինելու հանգամանքից: Այս դեպքում անձը ստանում է կենսաթոշակ կամավոր կուտակային համակարգից ի լրումն պետական բազային կենսաթոշակի և պարտադիր կուտակային համակարգից ստացված կենսաթոշակի: Կամավոր կենսաթոշակային բաղադրիչում նույնպես պահպանվում են կենսաթոշակային խնայողությունների նկատմամբ սեփականության և ժառանգման իրավունքները:

Սակայն կենսաթոշակային բարեփոխումների հաջողությունն ածանցյալ է մարդկանց աշխատանքային զբաղվածության հիմնախնդրի լուծումից[46]: Իսկ այդ խնդիրը գյուղական համայնքներում շատ սուր է դրված: Գյուղական ազգաբնակչության մի ստվար զանգվածի զբաղվածության խնդիրը յուրահատուկ մոտեցումներ է պահանջում: Բանն այն, որ թեև գյուղացիական նշանակության հողերի սեփականատերերը համաձայն «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համարվում են զբաղվածներ, ցածր եկամուտ բերող աշխատանքի պարագաներում շատ գյուղաբնակներ համարում են իրենց գործազուրկ[47]:

Մյուս կողմից՝ լուրջ հիմնախնդիր է այն, որ հայաստանյան գյուղերում այսօր չկա իրական հաշվառում, չի հաշվառվում իրա-

---

[46] Համաձայն ՀՀ ԱՍՀՆ 2012 թ. գործունեության հաշվետվության 2013թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում գրանցված էր 72043 աշխատանք փնտրող անձ, որոնցից 62171 գործազուրկ: Գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմել է 16.0%: 16257 գործազուրկ գործազրկության նպաստի ստացման իրավունք է ձեռք բերել օրենքի պահաջներին համապատասխան (http://www.mss.am/home/list_report.php?id=12&sec=report, 19.04.2012):

[47] «*Գյուղացուն տվել են երկու հարյուր մետր հող և համարում են զբաղված: Բայց նա մի օրում մշակում է դա ու սպասում, թե ով իրեն կտանի օրավարձով կաշխատեցնի*» (արտահայտություն սոցիոլոգիական հարցման ժամանակ ստացված պատասխանից):

կան եկամուտը: Բացի դրանից գյուղացիները սոցիալական ծառայություններում գրանցված չլինելով և համարվելով զբաղված, համապատասխան գումարներ չեն մուծում ու կենսաթոշակի անցնելուց, մինիմալ գումար են ստանում: Միայն 1991 թվից հետո ծնվածները կարող են համարվել գործազուրկ: Ստացվում է, որ գործազրկության իրական պատկերը երկրում «աղավաղված» է *սեփականատեր* համարվող գյուղացիների պատճառով:

Շատ տեղերում, օրինակ Տավուշի մարզում հողերի սեփականատերերը սահմանամերձ գյուղերի բնակիչներն են: Նրանք շատ դեպքերում չեն կարողանում մշակել այդ հողերը, քանի որ Ադրբեջանի հետ պատերազմի պատճառով դրանք ականապատված են կամ պարբերական կրակոցների տակ են, և խաղաղ բնակչության շրջանում արդեն կան բազմաթիվ զոհեր: Արդյունքում, մարդիկ համարվում են զբաղված, բայց փաստացի նրանք զբաղված չեն:

Խնդրի լուծման նպատակով ՀՀ պետական իշխանությունները մի շարք ռազմավարական ծրագրեր ընդունեցին և համապատասխան քայլեր ձեռնարկեցին, այդ թվում՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) համակարգում ստեղծվեց «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը, որն ունի 51 մարզային և տարածքային մարմիններ (մարզային և տարածքային կենտրոններ): Գործակալությունը, մասնավորապես, աշխատաշուկայի վերլուծություն է կատարում, աշխատանքի տոնավաճառներ կազմակերպում, մշակում է զբաղվածության ակտիվ ծրագրեր, համակարգում դրանց ներդրման և իրագործման աշխատանքները: Գործակալությունը զբաղվածության ծրագրեր է իրականացնում նաև գյուղական համայնքներում, սակայն, որոշ ծրագրերի իրականացման համար գոյություն ունեն լուրջ խոչընդոտներ: Օրինակ՝ թեև գյուղերում ուսուցիչների, բուժաշխատողների պահան-

ջարկը բարձր է[48], «Գործազուրկներին այլ վայր աշխատանքի գործուղելու կապակցությամբ նյութական ծախսերի փոխհատուցում» ծրագիրը դժվարությամբ է իրականացվում, քանի որ շատ դեպքերում տեղափոխվել ցանկացողներ չկան կամ էլ գյուղերում *ավանդական սոցիալական կապերի գերակայության պայմաններում* երիտասարդներին չեն թողնում իրենց ընտանիքները:

Իրականացվող սոցիալական ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներկայումս Հայաստանում «Համալիր սոցիալական ծառայությունների» կենտրոնների ստեղծման փորձնական ծրագիր է սկսվել: Առաջարկվում է ունենալ մեկ պետական մարմին իր տարածքային կենտրոններով, որոնք պետք է գործեն ՀՀ ԱՍՀՆ կառավարման ոլորտում, ինչը ենթադրում է վերակազմակերպել և միավորել ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական աջակցության պետական ծառայության (ՍԱՊԾ) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները, ՀՀ ԱՍՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության և ՀՀ ԱՍՀՆ Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի (ԲՍՓՀ) կառուցվածքային ստորաբաժանումները: «Համալիր սոցիալական ծառայությունների» տարածքային կենտրոններ կլինեն ՀՀ բոլոր մարզերում, և դրանց ծառայությունները հասանելի կլինեն նաև գյուղական բնակչության համար[49]:

---

[48] Պետք է նշել, որ թափուր հայտարարված ուսուցչական աշխատատեղերի դրույքից շատ պակաս դասաժամերը, ցածր աշխատավարձը, ինչպես նաև թափուր աշխատատեղերի հայտ ներկայացրած հիմնարկների ղեկավարների չհիմնավորված մերժումները գործուղվելու ցանկություն հայտնած անձանց լուրջ խոչընդոտում են ուսուցիչների համար այս ծրագրի իրականացումը:

[49] «Համալիր սոցիալական ծառայությունների» կենտրոնում աշխատող սոցիալական աշխատողներին կվերապահվի իրենց շահառուների վերաբերյալ բոլոր որոշումների կայացման պատասխանատվությունը, օրինակ, նպաստներ նշանակելու, մասնագիտացման կամ վերամասնագիտացման նպատակով շահառուներին վերապատրաստման դասընթացներում ու պետական երաշխիքներ ենթադրող զբաղվածության ծրագրերում ընդգրկվելու վերաբերյալ եզրակացությունները, տարեցներին, երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խոցելի խմբերի համար

Նպատակ հետապնդելով հասցեական սոցիալական աջակցություն ցուցաբերել գյուղական համայնքի այն անդամներին, ովքեր ունեն սոցիալական լուրջ հիմնախնդիրներ և չեն կարողանում ինքնուրույն լուծել այդ հիմնախնդիրները կամ ունեն սոցիալական այնպիսի կարիքներ, որոնց ադեկվատ բավարարման նպատակով անհրաժեշտ է համապատասխան մասնագետի աջակցության կարիքը՝ ՀՀ պետական իշխանությունները «Համալիր սոցիալական ծառայությունների» տարածքային կենտրոնների ներդրմանը զուգահեռ պլանավորում են գյուղական համայնքներում ունենալ համայնքային սոցիալական աշխատողներ: Քանի որ ցայսօր որոշ գյուղական բնակավայրերում ընդհանրապես որևէ տեսակի սոցիալական ծառայություններ չեն տրամադրվում, բացի ստանդարտ համարվող բուժկետի և դպրոցական ծառայություններից, նման համայնքի սոցիալական աշխատողը պիտի նախ մոբիլիզացնի տեղական ներուժը, ապա ստեղծի կապ «Համալիր սոցիալական ծառայությունների» տարածքային կենտրոնի հետ: Համայնքային սոցիալական աշխատողը կարևոր դերակատարում կունենա որպես գյուղացիների սոցիալական խնդիրներին առաջին արձագանքող և այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ ռեսուրսներ հայթաթող՝ ստեղծելով փոխօգնության ցանցեր և նպաստելով համայնքի բնակչության աղքատության հաղթահարման գործում համայնքի դերակատարման բարձրացմանն ու ակտիվացմանը:

Հետխորհրդային շրջանում գյուղական բնակչության ներգրավումը շուկայական հարաբերությունների մեջ ստիպում է ընտրել սոցիալական կառավարման նոր մոդելներ ու տեխնոլոգիաներ: Պետական կառավարման ապակենտրոնացման գործընթացը ենթադրում է նաև սոցիալական պաշտպանության գործառույթի ապակենտրոնացում: Ուստի, սոցիալական աշխատողի մուտքը գյուղա-

---

նախատեսված պետական ծառայությունների տրամադրման վերաբերյալ եզրակացությունները և այլն:

կան համայնք թույլ կտա կանխել մարդկանց սպառնացող մի շարք սոցիալական խնդիրների առաջացումն ու սրացումը, կազմակերպել նրանց սոցիալական աջակցության տրամադրումը՝ արդյունավետ օգտագործելով ընտանեկան և համայնքային ռեսուրսները: Հետևաբար, համայնքային մակարդակում իրականացվող և ընտանիքների ուժեղացմանն ու համայնքի ամրապնդմանը միտված սոցիալական քաղաքականության վերոգրյալ միջոցառումները կոչված են գյուղական բնակավայրերի բնակչության համար էականորեն բարելավել սոցիալական ծառայությունների մատուցման պրակտիկան՝ մատչելիություն, ժամանակի խնայողություն, ռեսուրսների կենտրոնացում և այլն[50]:

2.2 ՏԻՄ ղեկավարները ՀՀ գյուղական համայնքների զարգացման հիմնախնդիրների մասին

Տեղական ինքնակառավարումը քաղաքացիներին տեղական նշանակության հարցերի ինքնուրույն լուծման իրավունք է տրամադրում: Ժողովրդավարական պետությունը ճանաչում և երաշխավորում է այդ իրավունքի իրագործումը և ստանձնում տեղական ինքնակառավարման, բնակչության շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու պատասխանատվությունը: Տեղական ինքնակառավարումը որպես քաղաքացիների կողմից իշխանության իրացման ձև ապահովում է բնակչության մասնակցությունը համայնքի կառավարման, համայնքի և վերջինիս առանձին անդամների հիմնախնդիրների լուծման գործընթացներում:

[50] Այն գյուղական համայնքների պարագայում, որոնք հեռու տեղակայված «Համալիր սոցիալական ծառայությունների» կենտրոններից, սոցիալական ծառայությունների մատուցման արդյունավետությունը անշուշտ կախված է մի շարք գործոններից, հատկապես նշանակալից է մասնագետների մոբիլության խնդիրը (տրանսպորտ և այլ ծախսեր):

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով: Այդ օրենքի համաձայն՝ բնակչության սոցիալական աջակցության ցուցաբերման գործընթացներում ՏԻՄ-երին վերապահված են համապատասխան լիազորություններ, որոնց իրագործումը կախված է տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրության տակ եղած ռեսուրսներից (կադրային, ֆինանսական, ժամանակային և այլն.): Քաղաքացու սոցիալական պաշտպանությունը նույնպես կախված է տեղական ինքնակառավարումն իրականացնող մարմինների գործունեությունից և այդ գործունեության համար ներգրավված ռեսուրսներից: ՏԻՄ-երը կոչված են ոչ միայն աջակցելու համայնքի առանձին անդամներին կամ նրանց ընտանիքներին հաղթահարելու իրենց առջև ծառացած սոցիալական հիմնախնդիրները, այլ նաև նպաստելու համայնքի՝ որպես մի ամբողջական համակարգի, գործառման արդյունավետության և բարեկեցության մակարդակի բարձրացմանը: Համայնքի կենսագործունեության տարբեր ոլորտներում արդյունավետ իրագործելով իրենց գործառույթները՝ տեղական ինքնակառավարման մարմինները նպաստում են քաղաքացիների հիմնախնդիրների լուծմանը, բարեկեցության ապահովմանը, իրավունքների և ազատությունների իրագործմանը: Բայց ռեսուրսների սակավության պայմաններում համայնքի կառավարումն իրականացնող տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող որևէ շոշափելի ներդրում ունենալ համայնքների համար շատ լուրջ ու կարևոր համարվող սոցիալական հիմնախնդիրների լուծման և բնակչության սոցիալական պաշտպանվածության ապահովման գործում:

Այսօր ՀՀ-ում ՏԻՄ-երի դերը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի շրջանակներում սահմանափակվում է որոշակի ֆինանսական աջակցության ցուցաբերումով կամ որոշ պետական ու տեղային հարկերի համակարգում արտոնություններ

սահմանելով: Սակայն, այդ աջակցությունը ցուցաբերվում է ոչ համակարգված ձևով, տարերայնորեն և չի ունենում շոշափելի ազդեցություն համայնքի կարիքավոր անդամներին ու ընտանիքներին իրական օգնություն ցուցաբերելու գործում: Բոլոր դեպքերում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները (մեր դեպքում գյուղապետերը) առավել քաջատեղյակ են համայնքի հիմնախնդիրներին, գյուղացիների կարիքներին, հնարավորություններին, հետևաբար, կարող են արժեքավոր տեղեկատվություն տրամադրել տեղական նշանակության հարցերի լուծման, գյուղական համայնքների սոցիալական հիմնախնդիրների, դրանց կանխարգելման և հաղթահարման եղանակների վերաբերյալ: Նրանք այն «առաջնային օղակն են», որին, սովորաբար, դիմում են համայնքի կարիքավոր անդամները աջակցություն ստանալու համար:

Գյուղապետերի անկետավորմամբ, նախ, փորձ է կատարվել վերհանել նրանց գնահատականը վերջին երեք տարվա կտրվածքով իրենց համայնքում նշանակալի հիմնախնդիրների լուծման/կարգավորման միտումների վերաբերյալ: Հավելվածում բերված աղյուսակ 1-ում (տե՛ս հավելված) ներկայացված են գյուղական համայնքներում առկա հնարավոր նշանակալի հիմնախնդիրները և գյուղապետերի գնահատականները 5 բալանոց համակարգով, ուր 1-ը նշանակում է, որ տվյալ խնդիրը օրհասական է համայնքի համար, 5-ը՝ հիմնախնդիրը համայնքում լիովին լուծված է:

Հետաքրքրական է, որ գյուղատնտեսական, ենթակառուցվածքային, ոլորտային կամ սոցիալ-մշակութային նշանակալի հիմնախնդիրների դինամիկան վերջին երեք տարվա կտրվածքով տարբեր չափանիշներով և աստիճանով ունի առավել դրական միտում: Ընդհանուրի մեջ միակ բացասական միտումը նկատելի է արտագաղթի հիմնախնդրում: Թեև, ընդհանուր առմամբ, ընդգծված առաջընթաց չի նկատվում, սակայն կարելի է առանձնացնել մի քանի հիմնախնդիրներ, որոնք ըստ գյուղապետերի գնահատականների՝ դրականապես են փոփոխվել վերջին երեք տարվա ընթացքում:

Ըստ նվազման կարգի՝

1. ինտերնետի հասանելիություն,
2. աղբահանություն,
3. մշակույթային կառույցներ/ակումբների կառուցում/վերանորոգում,
4. հեռախոսակապ/փոստ,
5. խմելու ջուր,
6. գազամատակարարում,
7. դպրոցի նորոգում/վերանորոգում:

Մյուս հարցն ուղղված է եղել գյուղապետերի իրազեկվածության ստուգմանը: Հարցին, թե որքանո՞վ են գյուղապետերը տեղյակ ՀՀ տարածքային կառավարման հայեցակարգին, հիմնադրույթներին, ստացվել են հետևյալ պատասխանները (*տե՛ս* Գրաֆիկ 2.1):

Գրաֆիկ 2.1



Եվս երկու էական խնդիրների՝ գյուղական կոոպերատիվների ստեղծման և գյուղական համայնքների խոշորացման, շուրջ ստացվել է հետևյալ պատկերը (տե՛ս գրաֆիկ 2.2): Ստացված արդյունքնե-

րից պարզ է դարձել, որ ընդհանուր առմամբ գյուղապետերի զգալի մեծամասնությունը՝ 72%-ը դեմ են գյուղական համայնքների խոշորացմանը:

Գրաֆիկ 2.2



Աղյուսակ 2.1-ից էլ երևում է, որ մասնավորապես գյուղական կոոպերատիվների ստեղծումը գյուղապետերը չեն դիտարկում որպես աննպատակահարմար գործընթաց, սակայն մինչ այդ առանձնացվում են հիմնական երեք էական խոչընդոտներ. ա)գյուղացիների մոտ վստահության պակաս, բ) ֆինանսական աջակցության բացակայություն, գ) կառավարման արդյունավետ մոդելի բացակայություն:

Աղյուսակ 2.1

Որո՞նք են Ձեր համայնքում գյուղական կոոպերատիվների ստեղծման միջոցով գյուղատնտեսական նշանակության հողերի խոշորացմանը խոչընդոտող գործոնները:	
1. Գյուղացիների մոտ վստահության պակաս	33.0%
2. Ֆինանսական աջակցության բացակայություն	30.0%
3. Կառավարման արդյունավետ մոդելի բացակայություն	25.0%
4. Աշխատանքային տարիքի տղամարդկանց սակավություն	7.0%
5. Կոոպերատիվների ստեղծման աննպատակահարմարություն	5.0%

Հաջորդ քայլում գյուղապետերը 5 բալանոց սանդղակով գնահատել են իրենց համայնքում իրականացված ներդրումային և վարկային ծրագրերի արդյունավետությունը (տե՛ս աղյուսակ 2.2, որտեղ 1-ը նշանակում է, որ տվյալ ծրագիրը, ներդրումը կամ վարկատեսակը բացարձակ արդյունավետ է, իսկ 5-ը՝ լրիվ անարդյունավետ):

Աղյուսակ 2.2

Ինչպիսի՞ն է ներքոհիշյալ ծրագրերի իրականացման արդյունավետությունը Ձեր համայնքում (որտեղ 1-ը նշանակում է բացարձակ արդյունավետ, 5-ը՝ լրիվ անարդյունավետ):					
	1	**2**	**3**	**4**	**5**
1. Պետական ներդրումային ծրագրերի արդյունավետությունը Ձեր համայնքում	10%	15%	13%	31%	31%
2. Տեղական բանկերի վարկային ծրագրերի արդյունավետությունը	18%	30%	27%	15%	9%
3. Միջազգային վարկային ծրագրերի արդյունավետությունը	19%	23%	31%	4%	23%
4. Միջազգային ներդրումային ծրագրերի արդյունավետությունը	6%	22%	22%	19%	31%
5. Մասնավոր ներդրումների արդյունավետությունը Ձեր համայնքում	26%	9%	26%	26%	13%
6. Երաշխիքային ծրագրերի արդյունավետությունը Ձեր համայնքում	40%	40%	10%	10%	0%

Տվյալների վերլուծության արդյունքում նկատելի է, որ բացի միջազգային ներդրումային ծրագրերից մնացած բոլոր ներդրումների և վարկերի արդյունավետությունը առավել բարձր է գնահատվում «ոչ աղքատ» համայնքներում: Համաձայն գյուղապետերի գնահատականների՝ դրանց արդյունավետությունը ցածր է «աղքատ համայնքների ցանկում» ընդգրկված համայնքներում:

Յուրաքանչյուր համայնք իր պատմության ընթացքում զարգացրել է որոշակի ռեսուրսներ մարդկանց համայնքային կյանքի շրջանակներում առաջացող մի շարք սոցիալական խնդիրների լուծման և իր անդամների կարիքներին համապատասխան արձագանքման համար: Համայնքը մշակել և մարդկանց տրամադրության տակ է դրել սոցիալական աջակցության այնպիսի համայնքային ինստիտուտներ, ինչպիսին է օրինակ ընտանիքը և ազգակցությունը, ընկերությունը և հարևանությունը, ավանդույթը և տեղական իշխանությունը: Աղքատ համայնքներում այդ ինստիտուտների ու համայնքային կապերի թույլ լինելու պատճառով նվազ է նաև համայնքային զարգացման ռեսուրսը: Մարդիկ ենթակա են համայնքային կյանքի այնպիսի ռիսկերի ազդեցությանը, ինչպիսիք են գործազրկությունն ու աղքատությունը, կոնֆլիկտները, բնական և սոցիալական աղետները և այլն: Հայաստանյան ցանկացած աղքատ համայնքում կարելի է արձանագրել բոլոր այդ թվարկած հիմնախնդիրները:

Եվ վերջապես, գյուղապետերը առանձնացրել են համայնքներում հարկահավաքման հիմնական խոչընդոտները, որոնց առանձին գնահատականները պատկերված են աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ 2.3

Ներքոհիշյալ գործոնները որքանո՞վ են խոչընդոտում արդյունավետ հարկահավաքմանը համայնքում:			
	Ոչ մի կերպ	Որոշ չափով	Մեծ չափով
1. Անշարժ գույքի կադաստրային տվյալների անհամապատասխանությունը իրականությանը	5%	68%	27%

2. Ավտոտրանսպորտի վերաբերյալ պետավտոտեսչության տվյալների անհամապատասխանությունը իրականությանը	20%	63%	17%
3. Համայնքային բնակչության աղքատությունը	2%	58%	40%
4. Հարկահավաքման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը	11%	58%	31%
5. Հարկատուների բացակայությունը համայնքից	5%	67%	28%
6. Ազդեցիկ հովանավորների միջամտությունը	56%	38%	6%

Ավանդական արժեքների դերը. Ավանդական արժեքների պահպանումն ընդհանուր առմամբ շատ դրական ազդեցություն ունի գյուղացիների կյանքի վրա: Ինչպես վկայում է 2011թ.-ի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության Թալինի նախկին վարչական շրջանի 40-ից 26 գյուղական համայնքներում (շուրջ 27860 մարդ բնակչությամբ)[51] մեր կողմից մասնակցային մոտեցումների մեթոդաբանության տարրերի կիրառմամբ անցկացված սոցիոլոգիական հետազոտությունը, այդ համայնքներում ավանդական արժեքների պահպանումը կարելի է առանձնացնել որպես նպաստող գործոն գյուղական դպրոցներում կրթության որակի ապահովման համար: Տարբեր ծրագրերի շրջանակներում համայնքների դպրոցներին տրամադրվել էր որոշակի քանակությամբ համակարգչային և ռադիոտեխնիկա, սպորտային գույք, գրականություն և մեթոդական ձեռնարկներ, ստեղծվել էին աշակերտական խորհուրդներ, արտա-

[51] Թալինի շրջանը (1288 կմ^2) Խորհրդային Հայաստանի վարչական միավոր էր: Շրջկենտրոնը Թալին քաղաքն էր, որը այժմ շուրջ 5600 բնակիչ ունի: Շրջանում առավելապես գյուղատնտեսությամբ են զբաղվում: Պաշտոնական տվյալներով շրջանի բնակչության 49%-ն աշխատունակ է, 15%-ը կազմում են կենսաթոշակառուները, իսկ 36%-ն՝ անչափահաս բնակիչները: Բնակչության մինչև 5%-ը կազմում են էթնիկ եզդիները:

ժամյա խմբակներ, կազմակերպվել էր երեխաների զգալի մասի հանգիստն ամառային ճամբարներում: Այդ ամենը նպաստել է, որպեսզի երեխաները հաճույքով հաճախեն դպրոց, և չնայած հայաստանյան գյուղական դպրոցների այնպիսի «քրոնիկ հիվանդությունների», ինչպիսիք են ուսուցիչների ցածր աշխատավարձը և դրանով մեծապես պայմանավորված որակյալ ուսուցիչների պակասը, *կրթական մթնոլորտը* դպրոցում համարեն բաց և բարենպաստ[52]: Հարցմանը մասնակցած դպրոցականների ծնողների միջինը 64,5% և երեխաների միջինը 66,1%-ը 10 բալանոց սանդղակով 8-10 բալ է տվել կրթության որակի հետ կապված տարբեր արտահայտություններին: Իսկ կրթության որակի բոլոր բնութագրերը բարձր են գնահատվել ծնողների 19.4%-ի և երեխաների 23%-ի կողմից:

Ավանդական ընտանեկան արժեքների պահպանումը Թալինի շրջանի գյուղական համայնքներում նպաստող գործոն է նաև երեխաների իրավունքների պաշտպանության առումով: Այդ հանգամանքը հաշվի առնելով, երեխաների հիմնախնդիրներով զբաղվող World Vision միջազգային կազմակերպությունը շրջանում հնգամյա Տարածքային զարգացման ծրագիր է իրականացրել, որի նպատակն էր ստեղծել ակտիվ կազմակերպված համայնքներ, խթանել այդ համայնքների միասնական հոգևոր արժեքները, խրախուսել սեփական իրավունքների պաշտպանությունը և պատասխանատվության զգացումը կյանքի որակի շարունակական բարելավման համար[53]: Ծրագրի բաղադրիչներից մեկը գյուղաբնակ երեխաների համար հովանավորների ապահովումն էր: Եվ ուշագրավ է, որ հարցմանը մասնակցած տնային տնտեսություններում գրանցված երեխաների 84,4%-ը արդեն ուներ հովանավոր:

Ընդհանրապես, այն գյուղական համայնքներում, որտեղ նման ծրագրեր են իրականացվել, բնակչության լայն շրջանակները ներգը-

---

[52] Այն երեխաների տոկոսը, ովքեր համարում են *կրթական մթնոլորտը* դպրոցում բաց և բարենպաստ և հաճույքով են հաճախում դպրոց, հավասար է 97%:

[53] Ծրագրի ընդհանուր բյուջե՝ 2 402 009 ԱՄՆ դոլար:

բավված չէին զարգացման ծրագրերի պլանավորման գործընթացում: Իսկ համայնքի առավել ակտիվ անդամները թեև մասնակցում էին պլանավորման, այնուհետև նաև իրականացման աշխատանքներին, սակայն սահմանափակ չափով: Ծրագրերը համայնքներում հիմնականում ղեկավարում են գյուղապետերը: Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները լավ են պատկերացնում իրենց գյուղի կարիքները և կարողանում էին ապահովել Թալինի շրջանում իրականացված ծրագրերին համահունչ լինելը համայնքների կարիքներին: Սակայն, այդ կարիքները համայնքների սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակի պատճառով շատ են, և դրանց բավարարումը մեծ ծավալի ֆինանսավորում է ենթադրում:

Երեխաներն արժևորվում և պաշտպանվում են գյուղական համայնքներում, չնայած հազվադեպ են հաշվի նստում նրանց հետ համայնքում որոշումներ ընդունելիս: Հատկանշական է, որ ծեծը դեռևս չի դիտվում որպես երեխայի նկատմամբ բռնության կիրառում, այլ ընկալվում է որպես դաստիարակման միջոց (*տե՛ս* ներդիր 2.1):

<u>Ներդիր 2.1</u>՝ *Երեխաները արժևորվում են և պաշտպանվում*

«Հայրիկներն ու մայրիկներն են հարցնում մեր կարծիքը, բայց համայնքում չենք քննարկում»:

«Դե մտածում են, փոքրը միշտ անկապ բան պիտի ասի: Բայց հետո որ փոքրի ասածը ճիշտա լինում, իրենց են վերագրում, թե ես էլ էի էդպես մտածել»:

«Լավ են վերաբերում, կարծիքը որոշ դեպքերում հաշվի են առնում, եթե մի գործ ենք անում, ասում ենք ավելի լավ ա սենց անենք, մեծերը մտածում են ճիշտ ա, ընդունում են»:

«Ես իմ տղային ասել եմ, որ եթե չարություն ես արել, ծեծել են, լավ են արել: Էդ ոնց է լինում, որ ես կարող եմ ծեծել, բայց էդ խեղճ ուսուցիչը չի կարող»:

«Չէ, երեխաները բռնության չեն ենթարկվում, բռնություն ընդհանրապես չկա, բոլորը ստեղ արյունակցական կապի մեջ են, ինչ բռնություն»:

Գյուղական համայնքների բնակիչները նշվում են տնային գործերում կամ սեփական տնտեսությունում երեխաների ներգրավվածության մասին: Այդ գործերն իրենց բնույթով ծանր չեն, սակայն սակավ դեպքերում հնարավոր է խանգարեն դասերին, օրինակ՝ նախիրը արոտավայր տանելը, որն այս կամ այն պատճառով հաճախ ստիպված է լինում կատարել երեխան: Որպես երեխաներին սպառնացող վտանգներ, հիմնականում նշվում են թափառող շները և աղանդավորական կազմակերպությունները, ինչպես նաև նշվում են սպորտով զբաղվելու համար պայմանների բացակայությունը: Մեծահասակներն անհանգստանում են ազատ ժամանակի կազմակերպման վայրերի բացակայության կամ սակավության համար: Ազատ ժամանակի ոչ ճիշտ կազմակերպումը կարող է բացասական հետևանքներ ունենալ:

Ավանդական արժեքների ուժով գյուղաբնակ կանայք գրեթե չեն մասնակցում համայնքային մակարդակով որոշումների կայացմանը: Իսկ գենդերային դերերի մասին քննարկումները ցույց են տալիս, որ գյուղական համայնքում դեռևս պահպանվում է ավանդական կնոջ և տղամարդու կերպարը: Հիմնական որոշումների կայացման գործում գլխավոր դերում դեռևս շարունակում է մնալ տղամարդը, ինչն ի դեպ, վերաբերում է և՛ ներընտանեկան, և՛ ներհամայնքային որոշումներին (*տե՛ս* ներդիր 2.2): Սակայն սա չի նշանակում, որ կանայք չեն մասնակցում ընտանիքի հիմնական որոշումներիընդունմանը, նույնիսկ ավելին, երբեմն կինը աշխատանքի բնույթից կախված մասնակցություն է ունենում նաև համայնքային որոշումների ընդունմանը, կամ ամուսնու բացակայության ժամանակ ամբողջությամբ իր վրա է վերցնում որոշումների ընդունման պատասխանատվությունը:

<u>Ներդիր 2.2՝</u> ***Գենդերային դերերը***

«Կնոջ կարծիքը հաշվի է առնում, բայց տղամարդն է գլխավորը»:
«Պահպանողականություն կա, տղամարդիկ ավելի շատ արտոնություն ունեն»:
«Երկուսի աշխատավարձը բանկի վրա է, երկուսն էլ գիտեն, և ում երբ պետք է՝ ասում է, վերցնում է»:
«Համայնքի հարցերը հիմնականում տղամարդկանց են վերաբերում»:
«Գյուղի որոշումները տղամարդիկ են ընդունում, կանայք քիչ են մասնակցում, բայց մասնակցում են քննարկումներին»:
«Եվ մայրիկը, և հայրիկը մասնակցում են մեր տնից: Մայրիկը ավելի շատ, քանի որ գյուղապետարանում է աշխատում»:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ տվյալ համայնքներում կանայք հիմնականում շարունակում են ներգրավված մնալ տնային գործերում, որտեղ նրանք տղամարդկանց հետ հավասարապես տնօրինում են իրենց ունեցվածքն ու որոշակիորեն մասնակցում ընտանիքի հիմնական որոշումների ընդունմանը: Դեռևս աննշան է համայնքային մակարդակում հիմնական որոշումների ընդունման գործում նրանց ներգրավվածությունը: Գենդերային հարաբերություններում նկատվում է տղամարդու ավանդական գերակայությունը: Դաշտադեմ համայնքի կանանց խմբում նույնիսկ նկատվում է տղամարդու կողմից կնոջ նկատմամբ բռնության հանդեպ հանդուրժողական դիրքորոշում (*տե՛ս* ներդիր 2.3): Չնայած ընդհանուր առմամբ փոխադարձ հարգանքը պահպանվում է, սակայն տղամարդկանց նկատմամբ հարգանքն ավելի է արտահայտված: Կանայք ոտքի են կանգնում, երբ տղամարդ է անցնում կամ ներս մտնում (այս սովորույթը մասամբ է պահպանված), հիմնականում ենթարկվում են տղամարդկանց, ինչը ցույց է տալիս, որ պահպանված է ընտանիքի ավանդական կերպարը: Տղամարդը և կինը հնարավոր է, որ միմյանց հետ չզրուցեն, միայն բարևեն և/կամ ամուսնուց հարց-

նեն, եթե նրանց միջև ազգակցական կապ չկա: Սակավաթիվ դեպքերում կարող են խոսել առօրյա ընտանեկան խնդիրներից:

<u>Ներդիր 2.3</u>՝ *Գենդերային հարաբերություններ*

«Եթե տղամարդը ներս է մտնում, կանայք կանգնում են. հակառակը չենք տեսել»:

«Որ կինը շատ լեզվանի է լինում, տղամարդու համբերությունը կարող է դուրս գալ ու մի հատ էլ կխփի»:

«Տղամարդը միշտ էլ վերև է կնոջից, որ տղամարդը մտնում էր, կինը ոտքի էր կանգնում, դա է մեզ պահողը»:

«Կանայք հիմնականում ենթարկվում են տղամարդկանց»:

«Հարգանքը տղամարդկանց նկատմամբ մեծ է»:

Ինչ վերաբերում է աղջիկների և տղաների համար հավասար հնարավորություններին, ապա երկու համայնքներում էլ երեխաներն վերաբերվում են հավասարապես, թեև տղա երեխաների ծնունդը նախընտրելի է ընտանիքում: Երկու սեռի երեխաներն էլ նույն կերպ, հավասարապես հնարավորություններ ունեն նաև սընվելու և որոշ վերապահումով կրթություն ստանալու առումով: Երբեմն աղջկան հնարավոր է չուղարկեն այլ վայրեր (արտասահման) կրթություն ստանալու, քանի որ այն կարող է համայնքում բացասական կարծիքի ձևավորման խթան հանդիսանալ, ինչն էլ կարող է ազդել աղջկա ամուսնության վրա (*տե՛ս* ներդիր 2.4):

Մյուս բոլոր դեպքերում առկա է կրթության հավասար հնարավորություններ, երբեն նույնիսկ առաջնահերթությունը տրվում է աղջկան: Բացի այդ կրթության հնարավորությունը մեծապես կախված է նաև ընտանիքի ֆինանսական պայմաններից: Այլ հարց է ապահովության խնդիրը: Մեծահասակ գյուղաբնակները կարծում են, որ աղջիկների պարագայում ռիսկի գործոնը մեծ է՝ նրանց նկատմամբ անընդհատ պետք է ուշադիր լինել, որպեսզի «չփախցընեն»:

<u>Ներդիր 2.4՝</u> *Հավասար հնարավորություններ աղջիկների և տղաների համար*

«Ընտանիքները ուզում են և՛ տղա ունենա և՛ աղջիկ, բայց հիմնականում՝ տղա»:

«Բայց եթե առաջինը աղջիկ է լինում, ստիպված տղա էլ են ունենում: Օրինակ ես երկու աղջիկ ունեի, երրորդը տղա էր: Եթե առաջինը տղա լիներ, հնարավոր չի, որ ես երրորդը ունենայի»:

«Հա կրթություն ստանալու առումով, ստեղ կարևորը ծնողը ունենա հնարավորություն, էրեխեն կսովորի»:

«Մեր հարևանի տղան սովորում է բժշկականում և մտադիր են ուղարկել դուրս շարունակելու: Իմ տալի աղջիկն էլ է սովորում բժշկականում, ու ավելի լավ, բայց իրեն չեն պատրաստվում ուղարկել դուրս, որովհետև աղջիկ է»:

«Շատ ընտանիքներ էլ միանման են նայում, մտածում են, որ եթե հնարավորություն ունի, պետք է շարունակի (կրթությունը): Ամուսնության վրա է ազդում: Հետաքրքիրն այդ է՝ վայ դրսում է եղել, չգիտեմ ինչով է զբաղվել այնտեղ...»:

«Չենք նայում, ինքը տղա է, պետք է շատ ուտի: Ով ինչքան ուզում, ուտում է»:

«Աղջկա դեպքում ռիսկի գործոնը ավելի մեծ ա, կարողա Աստված ոչ անի, փողոցում կանգնած լինի, ոչ մեր գյուղից մի հատ ավտո անցնելուց լինի, տղուն հո բան չի անի, աղջկան կարա, ասենք, փախցնի»:

2.3 Աղքատության հիմնախնդիրը ՀՀ Թալինի շրջանի գյուղական համայնքներում

Թալինի շրջանի համայնքներում մեծ է բնակչության աղքատության չափը, շատ են սոցիալական հիմնախնդիրները: Տնտեսության ներկայիս առաջատար ճյուղը այստեղ գյուղատնտեսությունն է: Բնակչության մոտ 70%-ը զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով: Բայց գյուղական համայնքների բնակիչների հետ իրա-

կանացված սոցիոլոգիական հետազոտության[54] ընթացքում պարզվել է, որ տնտեսական խոցելիությունը Թալինի շրջանի համար խոցելիության հիմնական տեսակն է: Հիմնախնդիրները վերաբերում էին հենց գյուղատնտեսության խնդիրներին, օրինակ՝ ոռոգման ջրին: Ոռոգման համակարգերի վատ վիճակը կամ բացակայությունը սահմանափակում է գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների աճեցումը, և գյուղատնտեսությունը մեծապես կախված է կլիմայական պայմաններից: Ոլորտի արդյունավետությանը խոչընդոտում է նաև վատ վիճակում գտնվող գյուղտեխնիկան կամ դրա բացակայությունը: Գյուղատնտեսական գործունեության զարգացման հիմնական մարտահրավերներից է շարունակում մնալ իրացման խնդիրը:

---

[54] Թալինի գյուղական համայնքներում իրականացրած մեր հետազոտությունը վերաբերում էր շրջանի գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, առողջապահությանը, երեխաների կրթությանն ու հոգևոր դաստիարակությանը (եկեղեցու հետ համայնքի կապերի ամրապնդման միջոցով) և այլն: Այդ խնդիրների լուծման համար թիրախային խմբերից տեղեկատվություն ստանալու նպատակով կիրառվել են և՛ որակական, և՛ քանակական հետազոտական մեթոդներ: *Որակական հետազոտության* սահմաններում իրականացվել են 21 ֆոկուս-խմբային և *առանցքային տեղեկատուի* հետ չորս հարցազրույցներ (թիրախային համայնքների առավել հեղինակավոր անձինք, այդ համայնքներում գործող կոպերատիվների ներկայացուցիչներ, գյուղատնտեսությամբ զբաղվող համայնքների անդամներ): *Քանակական հետազոտության* սահմաններում իրականացվել է *կիսաձևայնացված* հարցազրույցներ թիրախային խմբերի ներկայացուցիչների հետ (թիրախային համայնքների չափահաս բնակիչներ, այդ համայնքների 10–18 տարեկան երեխաներ և երեխաների ծնողներ):

Որակական հետազոտության ընտրանքը կառուցվել է տիպային ներկայացուցչության սկզբունքի հիման վրա, ինչպես նաև յուրաքանչյուր խմբում տեսական հագեցվածության սկզբունքի վրա: Անցկացվել են 21 ֆոկուս-խմբային հարցազրույցներ և 4 հարցազրույց *առանցքային տեղեկատուի* հետ: *Քանակական հետազոտության* ընտրանքը յուրաքանչյուր թիրախային խմբի համար իրականացվել է որպես երկաստիճան շերտավորված ընտրանք (որպես շերտեր ընդգրկվել են բոլոր 26 համայնքները): Առաջին աստիճանում ընտրվել են տնտեսությունները՝ շերտավորված ըստ համայնքների համաձայն համակարգային /սիստեմատիկ/ հավանականային ընտրանքի սկզբունքի երկրորդ աստիճանում «ամենամոտ եկող ծննդյան օրվա» սկզբունքով ընտրվել է հարցվողը: Քանակական հետազոտության ընտրանքը հաշվարկվել է յուրաքանչյուր թիրախային խմբի համար 0,05 նշանակալիության աստիճանով այնպես, որ ընտրանքի սխալը չգերազանցի 5%-ը:

Ընտրանքի ծավալը ներկայացված է Հավելվածում բերված Աղյուսակ 2-ում: *Քանակական հետազոտության* տվյալները մշակվել են IBM SPSS Statistics 19 ծրագրի միջոցով:

Իհարկե, որոշակի հաջողություններ նույնպես արձանագրվել են: Առաջին կարգի վարելահողերը Թալինի շրջանում քիչ են, ուստի գյուղացիները հակված են իրենց հողակտորներում հացահատիկ աճեցնելու փոխարեն բանջարաբոստանային կուլտուրաներ աճեցնել: Նրանք սկսել են ավելի շատ բանջարեղեն վաճառել: Հարցվածների 82,8 %-ը պահում են կենդանիներ կամ տնային թռչուններ: Արոտավայրերը հիմնականում օգտագործվում են ոչխարաբուծության նպատակով: Գյուղացիներից հարցվածների 12,6 %-ը կաթ է վաճառում: 2004 թ-ին ԱՄՆ Գյուղդեպարտամենտի աջակցությամբ գյուղերից մեկում հիմնադրվել է պանրի փոքր արտադրություն: Ստեղծվել են կաթի հավաքման երկու կոոպերատիվներ, որոնք հաջողությամբ համագործակցում էին հանրապետությունում որպես կաթնամթերքի արտադրության առաջատարներից մեկը հայտնի «Մարիաննա» ընկերության հետ: Ըստ հետազոտության տվյալների՝ հարցված գյուղացիների 67,5 %-ը արտադրում էր միրգաչիր: Չրերի պատրաստմամբ զբաղվող մի կոոպերատիվ էլ համագործակցում է «Արկոլադ» ՓԲԸ-ի հետ: Հարցվածների 10,5 %-ը զբաղվում էր մեղվաբուծությամբ: Ավելի ու ավելի մեծ կարևորություն է ձեռք բերում սննդի վերամշակման ոլորտը:

Այս ամենը, սակայն, չի լուծում գյուղացիների զգալի մասի աղքատության հիմնախնդիրը: Թիրախային համայնքների ներկայացուցիչների աղքատության ընկալման համաձայն 55 ամենաաղքատ տնային տնտեսությունների թիվն իրենց համայնքներում 12,3 % է կազմում: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև միջազ-

[55] Համայնքի առավել հեղինակավոր անդամներից կազմված խումբն իրենց համայնքի օրինակով առանձնացնում է տնային տնտեսությունների բարեկեցության կատեգորիաները բնութագրող հիմնական չափորոշիչները և, ըստ համապատասխանության, աստիճանակարգում տվյալ համայնքի տնային տնտեսությունները: Այս եղանակով տնային տնտեսությունների բարեկեցության գնահատումն անցկացվել է շրջանի երեք համայնքներում՝ Սուսեր, Հացաշեն, Ցամաքասար: Հավելվածի Աղյուսակ 2-ում ներկայացվում է նշված երեք համայնքների բարեկեցության աստիճանակարգի ընդհանրական բնութագիրը:

գային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը, որի արդյունքում երկրի տնտեսությունը 14.4 % անկում գրանցեց, ինչն ուղղակիորեն մեծացրեց նաև ամենաաղքատ տնային տնտեսությունների թիվը:

Հոգատարություն այլոց հանդեպ. Ավանդույթի ուժով գյուղացիները փորձում են համատեղ լուծել իրենց համայնքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները: Ընդհանրապես, նրանք, ովքեր նպատակադրված պահպանում են իրենց ավանդական արժեքները (իսկ Թալինի շրջանի գյուղերում պատմական հանգամանքների բերումով այդպիսիք շատ են[56]), ավելի են հակված համայնքային մասնակցության, ավելի են պատրաստակամ «հոգ տանել» ուրիշների համար: Եվ իրոք, սոցիոլոգիական հետազոտության տվյալները փաստում են այդ իրողությունը:

«Հոգատարություն այլոց հանդեպ» ցուցիչի օգնությամբ չափվել է համայնքի անդամների վերաբերմունքը, գործողությունները և արժեքները, որոնք հիմնարար են միմյանց հետ փոխհարաբերություններում: Միմյանց նկատմամբ հոգատարությունը նշանակում է, որ տղամարդիկ, կանայք, տղաները և աղջիկները համարում են, որ իրենք հոգատար են ուրշների նկատմամբ և ուրիշներն էլ՝ իրենց: Այն սահմանվում է համայնքի ռեսուրսների (համատեղ) օգտագործման, գենդերային հարաբերությունների, երեխաների պաշտպանության և գնահատման, բնակչության խոցելի անձանց բարեկեցության, կոնֆլիկտի կանխարգելման ու լուծման հարթությունների շրջանակում:

Ֆոկուս խմբի ընթացքում քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հիմնական ռեսուրսեների համատեղ օգտագործումը, համայնքի բարեկեցությանն ուղղված համատեղ գործողությունները, գենդերային դերերն ու հարաբերությունները, աղջիկների և

[56] Շուրջ մեկ դար առաջ շրջանի գյուղերում բնակություն են հաստատել 1915-1923 թթ. Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված ցեղասպանությունից փրկված Սասունի հայերը, ովքեր մինչ օրս պահպանել են իրենց ավանդույթները և ավանդապաշտությունը:

տղաների հավասար հնարավորությունների ապահովումը, բնակչության խոցելի անձանց բարեկեցությունը, համայնքում կոնֆլիկտների կանխարգելումն ու լուծումը: Հոգատարություն այլոց հանդեպ ցուցիչը չափվել է Թալինի շրջանի Զովասար և Դաշտադեմ գյուղական համայնքներում, յուրաքանչյուրում 4-ական ֆոկուս խումբ: Ինչպես երևում է ստորև բերվող հարցազրույցների մասնակիցների ասույթներից, քննարկման ժամանակ որպես *համատեղ օգտագործման հիմնական ռեսուրսներ* առանձնացվել են հետևյալները՝ գյուղտեխնիկա, հողատարածք, տուն, գոմ (*տե՛ս* ներդիր 2.5): Հազվադեպ տրամադրվում է նաև հագուստ, սնունդ: Երկու համայնքներում էլ ռեսուրսները համատեղ օգտագործվում է ոչ միայն ազգակիցների, այլև հարևանների և համայնքի այլ անդամների հետ: Գյուղատնտեսական տեխնիկան հիմնականում տրամադրվում է վարձավճարով (ինչը կարելի է մաս-մաս տալ) կամ վառելիքի դիմաց: Սգո և այլ դժբախտությունների դեպքերում ամենատարբեր ռեսուրսների տրամադրմամբ ամբողջ համայնքն է օգնության ձեռք մեկնում:

<u>Ներդիր 2.5՝</u> ***Հիմնական ռեսուրսների օգտագործում***

«Գյուղտեխնիկան համատեղ է օգտագործվում, առանց դրա հնարավոր չի»:

«Այո, հողատարածքներն են օգտագործվում համատեղ: Պայմանավորվում են, իրար հետ ցանում են, հետո հավասար բաժանում են: Գոմերը նույնպես, կենդանիներին մի գոմի մեջ են պահում»:

«Եղբորս ընտանիքը ու մենք մի տանն ենք ապրում, բայց ամեն մեկն իր ընտանիքով, իր անասունն է պահում, իր առանձին մուտքն ունի, ոչ մի բան ընդհանուր չի»:

«Շատ կան ընտանիքներ, որ ուրիշի տանն են ապրում: Ես բարեկամիս տանն եմ մնում, ուրիշ տեղ չունենք»:

Համայնքի բարեկեցությանն ուղղված միասնական գործողությունները պահանջում են համագործակցություն տարբեր մակարդակներում: Երկու համայնքներում էլ տեղի են ունենում, համախմբման և մոբիլիզացման դեպքեր: Դրանք կապված են թե՛ կենցաղային պայմանների բարելավման, թե՛ համայնքի բարեկարգման ու գեղեցկացման աշխատանքների հետ: Մասնավորապես, բերվում են գազաֆիկացման, ջրագծի անցկացման և համայնքում այս կամ այն վայրերի բարեկարգման համար համայնքի անդամների մոբիլիզացման օրինակներ (*տե՛ս* ներդիր 2.6): Համայնքի բարեկեցությանն ուղղված գործողություններում մարդկանց մեծամասնությունը աշխատուժի ձևով, իսկ որոշ դեպքերում էլ ֆինանսական մասնակցություն է ցուցաբերում: Համայնքում կան խմբեր և անհատներ, որոնք նախաձեռնություն են ունենում համայնքի բարեկեցությանն ուղղված գործողությունների կազմակերպման գործում: Սակայն մյուս կողմից այդպիսի գործողություններում ներգրավվածությունը մեծապես պայմանավորված է անհատի սեփական շահով և անհրաժեշտ մոտիվացիայի առկայությամբ: Հիմնականում մարդկային տեսանկյունից ընդգրկուն են լինում այնպիսի միջոցառումները, որոնք ուղղակիորեն առնչվում են յուրաքանչյուրին:

<u>Ներդիր 2.6՝</u> ***Համայնքի բարեկեցությանն ուղղված միասնական գործողություններ***

«Վերջերս ջրի խողովակ պետքա նորոգեինք, ամբողջ գյուղը մասնակցեց: 15% ներդրում համայնքն ա արել, դե մարդիկ ֆինանսապես չեն կարողանում օգնել, միայն ֆիզիկապես են մասնակցում»:

«Գերեզմանների սետկաները, որ գողացել էին, մարդիկ հավաքվեցին, գումար դրեցին և նորոգեցին»:

«Հուշարձանի ցայտաղբյուր դրեցին, բոլորը մասնակցեցին՝ ավազ բերեցին, քար բերեցին»:

«Գազաֆիկացման և ջրագծի համար գումար ենք հավաքել»:

«Ծառատունկ ենք առաջարկել երեխաներով և իրականացվեց»:

<u>Ներդիր 2.7</u>՝ *Համայնքի խոցելի անհատների բարեկեցությունը*

«Խոցելի են հիմնականում բազմանդամ ընտանիքները, էն մարդիկ, որ աշխատանք չունեն, կամ աշխատանք ունեն, բայց ծախսը շատ ա»:

«Երկու հոգի կան, անօգնական ծեր կանայք են: Ժառանգ չունեն»:

«Խոցելի խմբերը ավելի շատ նրանք են, որ ընտանիքի կողմից անտեսված են»:

«Ոչ մի տարբերություն չենք դնում նրանց և հարուստների միջև: Նյութականը երբեք պատճառ չի լինում չշփվելու: Մեր խնջույքներին եթե փող ենք հավաքում, նրանց տեղն էլ ենք դնում»:

«Համայնքը նրանց նկատմամբ ուշադիր է: Եթե որևէ միջոցառում է լինում, ապա նրանց անպայման բաժին են տանում»:

«Ես չեմ հանդիպել դեպք, որ համայնքով հավաքվեն, օգնեն իրենց: Բայց հարևաններով օգնում ենք»:

Համայնքի խոցելի անհատների բարեկեցությունը. քննարկման ընթացքում առանձնացվել են խոցելի անհատների և ընտանիքների հետևյալ ձևերը՝ բազմանդամ ընտանիքներ, միայնակ ապրող ծերեր, կարիքավոր մարդիկ, աղքատներ (*տե՛ս* ներդիր 2.7): Այսինքն առանձնացվել է խոցելիության երկու տեսակ՝ ֆիզիկպես և ֆինանսապես: Դաշտադեմի բոլոր 4 ֆոկուս խմբերում հիշատակվեց երկու ծեր կանանց մասին, որոնց անընդհատ ուշադրության կենտրոնում են պահում և՛ համայնքի ղեկավարությունը, և՛ հասարակ բնակիչները: Ինչ վերաբերում է ֆինանսապես խոցելիներին, ապա համայնքի անդամները հաճախակի նրանց այս կամ այն աշխատանքների կատարման համար վարձատրում են: Հատկանշական է, որ նույնիսկ ֆինանսապես խոցելիության պայմաններում կան մարդիկ, որոնք ոչ միշտ են համաձայնում վճարի դիմաց կատարել որոշակի աշխատանք:

Համայնքներում կոնֆլիկտները տարածված չեն, սակայն լինում են դեպքեր, երբ դրանք առաջ են գալիս ոռոգման ջրի, տարածքի հետ կապված խնդիրների առնչությամբ: Կոնֆլիկտներ կարող են լինել նաև ընտրություններից առաջ: Սակայն դրանք ապակառուցո-

ղական բնույթ չեն կրում և երբեք թշնամանք չեն առաջացնում բնակիչների շրջանում: Կոնֆլիկտների լուծմանն ու կանխարգելմանը մեծապես նպաստում է համայնքի ղեկավարությունը, մասնավորապես, գյուղապետը: Երբեմն վիճաբանող կողմերի համար միջնորդ կարող է հանդիսանալ հարևանը (*տե՛ս* ներդիր 2.8):

<u>Ներդիր 2.8՝</u> ***Հակամարտության կանխարգելում և լուծում***
«Կոնֆլիկտ լինում է հարևանների մեջ ջրի, տարածքի համար, որոնք լուծվում են համայնքի ներսում»:
«Այդ կոնֆլիկտները նկատվում են ընտրություններից առաջ: Այդ կուսակցական խաղերը բոլորին լարում են իրար դեմ»:
«Գյուղում սաղ իրար հետ լավ են, տենց չի լինում որ առանձին լինեն, ասենք դուրսը սաղ կանգնած իրար հետ խոսում են, դրանից ա, որ կոնֆլիկտները քիչ են»:
«Թեթև բաներ են, երբեք պատերազմ չի դառնում»:
«Հիմնականում գյուղապետն է հանդարտեցնում»:
«Որոշ դեպքերում հարևանները միջնորդ են հանդիսանում»:

Համայնքային մասնակցություն. Հետազոտության շրջանակներում Թաթուլ և Վերին Սասնաշեն համայնքներում (յուրաքանչյուրում 4-ական ֆոկուս խումբ) չափվել է նաև համայնքի մասնակցությունը զարգացման ծրագրերին: Հարցի քննարկումը ֆոկուս խմբերում փաստել է, որ կանայք ավելի լավ են իրազեկված իրականացվող ծրագրերց, քան տղամարդիկ: Կանայք գտնում էին, որ զարգացման ծրագրերը լուծել են առաջնահերթ խնդիրները, և իրենց գյուղը զարգացում է ապրել: Ծրագրերի վերաբերյալ տրամադրվածությունն առավել հոռետեսական էր Թաթուլ համայնքի տղամարդկանց մոտ: Նրանք գտնում էին, որ զարգացումը հնարավոր է միայն աշխատատեղերի ստեղծմամբ: Նախաձեռնությունների առումով Վերին Սասնաշեն համայնքն ավելի ակտիվ էր: Ֆոկուս խմբի իրա-

կանացման ժամանակ հիշատակվում էին համագյուղացիների կողմից ծրագրերի նախաձեռնության դեպքերը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Թաթուլ համայնքի բնակիչները որոշակի մասնակցություն են ունենում ծրագրերի պլանավորմանը (*տե՛ս* ներդիր 2.9):

Ներդիր 2.9՝ ***Մասնակցությունը ծրագրերի պլանավորմանը***

«Գյուղապետարանում հավաքվեցինք մի 50-60 հոգի, ով ցանկացել ա, որովհետև տեղյակ է պահվել, որ էսպես հարցի քննարկում կա, և գյուղապետի հետ որոշեցինք, որ առաջնահերթ խնդիրը ջրագծերն են, հետո դիմեցինք Վորլդ Վիժն»:
«Բոլորը հնարվորություն ունեն ներգրավվելու»:

Գյուղական այս համայնքի բնակչությունն իր մասնակցությունն է ցուցաբերում զարգացման ծրագրերի ռեսուրսների տնօրինման և բյուջեի կազմման գործում (*տե՛ս* ներդիր 2.10), իսկ նրանց համաֆինանսավորումը կարող է կազմել ծրագրի ամբողջ գումարի 30-40%-ը (Վերին Սասնաշենում այդ ներդրումները լինում են մինչև 10%, մնացած ռեսուրսն ապահովվում է որոշ անհատ ձեռներեցների կամ գյուղապետարանի ջանքերով):

Ներդիր 2.10՝ ***Փոխադարձ պատասխանատվություն ծրագրի ռեսուրսների տնօրինման և բյուջեի համար***
«Անհատները ֆիզիկապես և տեխնիկայով են օգնում: Մոտ 40%-ը համայնքը ներդրում է ունենում»:
«Բուժկետի կառուցման համար շինանյութը իրենք էին բերում, իսկ աշխատանքի կատարման համար գյուղացիներից ոմանք, ովքեր կարողանում էին, ֆինանսավորում էին»:
«Օրինակ՝ խաղահրապարակի աշխատանքները, ներկելը կամ այլ աշխատանք արել են մեր գյուղացիները»:

Այսպիսով, ծրագրերի մասին համայնքի անդամները հիմնականում իրազեկ են լինում, և առանց նրանց համաձայնության որևէ ծրագիր չի իրականացվում: Այնուամենայնիվ, վերջնական որոշումները ընդունվում են գյուղապետի, ինքնակառավարման մարմինների, դոնորների կողմից, չնայած քննարկմանը, մասնակցում են բոլորը, եթե մեծամասնությունը համաձայն չէ, որոշումը չի ընդունվում:

Եզրակացություններ և առաջարկություններ. Այսպիսով, 2011-2012 թվականներին Հայաստանի տարբեր գյուղական համայնքներում իրականացրած սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները փաստում են, որ ժամանակակից հայաստանյան գյուղը հրատապ լուծումներ պահանջող բազմաթիվ սոցիալական խնդիրներ ունի: Այդ խնդիրների վերհանումը անհրաժեշտ քայլ է գյուղական համայնքներում արդյունավետ սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման համար:

Քանի որ գյուղական համայնքների բնակչության համար ամենամեծ խոցելիությունը տնտեսական խոցելիությունն է, ապա գյուղացիներին կարելի է առաջարկել ավելի ինտենսիվ տեղեկատվական ծառայություններ: Կոնկրետ ինչպե՞ս կազմակերպեն նրանց տնտեսությունները, ինչպիսի՞ բիզնես ծրագրեր կարող են իրականացնել, արտադրանքը որտե՞ղ կարող են իրացնել, ի՞նչ է ավելի նպատակահարմար աճեցնել:

Պետք է նշել նաև, որ թեև ոչ բոլոր համայնքներն են ի վիճակի ինքնուրույն, առանց դոնորների ֆինանսավորման շարունակել համայնքի զարգացման աշխատանքները, այնուամենայնիվ համայնքի մասնակցության ընդլայնման նպատակից ելնելով ճիշտ կլինի սոցիալ-տնտեսական ծրագրերը շարունակել այն համայնքներում, որոնք պատրաստ են մասնակցել դրա համաֆինանսավորմանը՝ համապատասխան պատասխանատվություն կրելով ծրագրի կայունության և արդյունքների համար:

Եվ վերջապես, պետք է սոցիալական ծրագրերի թիրախները սահմանելիս հաշվի առնել տեղական ավանդույթներն ու մշակութային կոդը:

ԳԼՈՒԽ 3
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Այս գլխում վերլուծվում է աշխատանքի դերը ավանդական համայնքային սոցիալական կարգավորման գործում հասարակության մոդեռնիզացիայի տեսանկյունից, ինչպես նաև ագրարային տնտեսվարման զարգացման սոցիալական ասպեկտները ՀՀ-ում և Բելառուսում:

Աշխատանքը դիտարկվում է որպես մարդու արտադրական, ստեղծարար գործունեություն, որը բերում է հավելյալ արժեքի առաջացմանը: Ավանդական հասարակության և ագրարային տիպի տնտեսությունների համար բավական ակտուալ է աշխատանքի հետևյալ բնորոշումը, որը տրվում է Կ. Մարքսի կողմից. «Աշխատանքը նախ և առաջ գործընթաց է, որը տեղի է ունենում մարդու և բնության միջև. գործընթաց, որում մարդը սեփական գործունեությամբ միջամտում, կարգավորում և վերահսկում է իր և բնության միջև տեղի ունեցող նյութափոխանակությունը: Բնության էությունը իր կյանքին պիտանելի ձևով յուրացնելու համար մարդը գործի է դնում իր մարմնին պատկանող բնական ուժերը. ձեռքերն ու ոտքերը, գլուխն ու մատները»[57]: Ավանդական սոցիալական կարգավորումը և ագրարային տնտեսվարումը հիմնվում է բնության ցիկլերի (ցերեկ-գիշեր, գարուն-աշուն, ևն) բնական ռիթմով աշխատանքային գործընթացում մարդու անմիջական մասնակցությամբ տեղի ունեցող նյութական ռեսուրսների վերաձևավորման վրա: Այս բնութագրիչները յուրահատկություն են տալիս գյուղական համայնքի տնտեսվարման գործունեությանը և գյուղում յուրաքանչյուր անհատի

[57] Այստեղ և հետո՝ Маркс К. Капитал. Критика политической экономии. – Т.1. – М.: Гос. изд-во политической литературы, 1950. – С. 184-185.

կյանքին՝ ներառելով ընդարձակ ընտանիքում ապրելու առանձնահատկությունները, երեխաների ավելի վաղ ընդգրկումը ընտանեկան տնտեսության գործունեության մեջ, և այլ առանձնահատկություններ, որոնք ձևավորում են Ֆ. Թյոնիսի կողմից բնութագրվող ավանդական համայնքը:

Այս առումով կյանքի որակը գյուղական համայնքում նվազագույն կերպով է համապատասխանում տարբերակված հասարակության (Տ. Պարսոնս) տնտեսական ենթահամակարգի գնահատման վրա հիմնված ժամանակակից (մոդեռն) հասարակության չափանիշային, գնահատող մոդելին: Բացի այդ այն ավելի արտահայտում է կյանքի որակի գնահատականների ժամանակակից միտումների որոնումը, որն իրականացվում է ազգային վիճակագրական հետազոտությունների և ՄԱԿ-ի փորձագիտական հանձնաժողովների շրջանակներում՝ հաշվի առնելով կյանքի որակի գնահատման բավարարության և բազմազանության ոչ տնտեսական գործոններն ազատ ժամանակի, ազգականներին մոտ լինելու, կյանքի բնական միջավայրի, «ազնիվ խաղի», արդարության (fair-trade) և այլ տեսանկյուններից:

Ժամանակակից արևմտաեվրոպական և հյուսիսամերիկյան քաղաքակրթություններում հետինդուստրիալ զարգացման շրջանակներում տարածում են գտել ինքնաիրականացման նոր ձևեր, ինչպիսիք են դաունշիֆթինգը, վերադարձը ծաղիկների, մրգերի և բանջարեղենների ինքնուրույն աճեցմանը: Այս ձևերը հետևանք են «X սերնդի» ներկայացուցիչների իրավիճակային սոցիալ-տնտեսական վարքի արտահայտման: Այս սերնդի ներկայացուցիչները քաղաքի տնտեսության մեջ ձեռք են բերում նշանակալի դիրք և որոշումներ են ընդունում նախընտրությունների փոփոխության վերաբերյալ, որոնք ուղղված են բնական զարգացման վերակենդանացմանը, մասնավորապես երեխաների և թոռների էկոլոգիական ու բնական դաստիարակման նպատակով, որոնք, իրենց հերթին, տեղեկատվական հասարակության և ենթակառուցվածքների (մասնա-

վորապես տրանսպորտային և հեռուստահաղորդակցման) արագ զարգացման պայմաններում չունեն քաղաքի առավելությունների կարիքը՝ հաջող սոցիալականացման և արդյունավետ տնտեսական գործունեության համար[58]: Այս առումով գյուղական տարածքի և տնտեսվարման դերը փոփոխության է ենթարկվել. դրա աճը պայմանավորված է ոչ այնքան անհրաժեշտ արտադրությամբ, որքան գիտակցված ընտրությամբ: Գյուղական համայնքում տնտեսական գործունեության սուբյեկտները զբաղվում են ագրարային արտադրությամբ՝ մի կողմից համայնքի գոյատևումն ապահովելու և քաղաքի կարիքները հոգալու, իսկ մյուս կողմից՝ հանգստի և ինքնաիրականացման համար, կամ որպես հակառակ ձև՝ մտավոր գործունեությամբ (ծրագրավորողներ, նկարիչներ, գրողներ, դասավանդողներ, դիզայներներ, ճարտարապետներ և այլն) զբաղվողների համար, ովքեր աշխատում են ուրբանիզացված բնակավայրերի կազմակերպություններում ու հիմնարկություններում, սակայն բնակվում են գյուղական համայնքներում: Այս երևույթը նշանակալի ազդեցություն է ունենում ագրարային տիպի բնակավայրերի ժամանակակից իրավիճակի և զարգացման հեռանկարների վրա:

[58] Դա տեղի է ունենում այնպիսի պայմաններում, երբ նյութական արտադրության մակարդակը (ըստ Կ. Մարքսի՝ արտադրական ուժեր) թույլ է տալիս ապահովել սպառողների գոյատևման և գոյության նվազագույն մակարդակ, որից հետո մարդը սկսում է հոգալ որակյալ նյութական և հոգևոր պահանջմունքների մասին Բ.Մ. Գենկինի պահանջմունքների ընդհանուր տեսության. Генкин Б.М. Человек и его потребности. М.: Норма, 2013.

3.1 Գյուղացիների նյութական բարեկեցությունը և կյանքի որակը ՀՀ-ում

Բարեկեցությունը բնակչության ապահովումն է անհրաժեշտ նյութական և հոգևոր բնույթի բարիքներով (իրեր, ծառայություններ, պայմաններ, որոնք բավարարում են որոշակի պահանջմունքներ): Միևնույն ժամանակ ընդունված է առանձացնել նյութական բարեկեցության (կենսամակարդակ) և հոգևոր զարգացման ու բավարարվածության (կյանքի որակ) գնահատականը: Նմանատիպ գնահատականների ուղղությունները տրվում են կոնկրետ հասարակության արժեքային-նորմատիվ համակարգի միջոցով, քանի որ միայն կոնկրետ արժեքային սանդղակի շրջանակներում է հնարավոր որակավորել այս կամ այն ցուցանիշը դրա դրական կամ բացասական բնույթի տեսանկյունից. այսինքն՝ դրանք համարվում են զարգացման, թե՞ դեգրադացիայի ցուցանիշներ: Օրինակ՝ բնակությունն ընդարձակ կամ նուկլեար ընտանիքում. դեռևս կես դար առաջ բնակարանային պայմանների ապահովումը անհատի (միայնակ կամ երկու ամուսիններ) բնակության համար միանշանակորեն գնահատվում էր որպես նյութական բարեկեցության զարգացում, իսկ արդեն XX դարի վերջում առաջացավ մի միտում, որը ենթադրում էր «քոթեջների» կամ այլ խոշոր տիպի բնակարանների (բազմասենյականոց բնակարաններ և այլն) կառուցման նախընտրություն, ընդարձակ ընտանիքում ապրելու համար:

Այս առումով տեղի է ունենում մի շարք ցուցանիշների վերանայում, զարգացումը ենթադրում է կոնկրետ հասարակության գործառնման սոցիալական և տնտեսական ցուցանիշների որակի բարձրացում, բարելավում ու կատարելագործում: Կարելի է առանձնացնել հետևյալ հայեցակարգային մոտեցումները սոցիալ-տնտեսական զարգացումը հասկանալու համար, որոնք դրա հաջողության և արդյունավետության գնահատման չափանիշները բնութագրում են այս կամ այն ցուցանիշի կամ կատեգորիայի տեքով:

Աղյուսակ 3.1

Սոցիալ-տնտեսական զարգացման գնահատման չափանիշային համակարգի հայեցակարգային մոտեցումները[59]

Ելակետային հայեցակարգ	Անկյունաքարային հեղինակներ	Զարգացման չափանիշները բնորոշող հիմնադրույթներ
Կոնֆուցիոնիզմ Հելլենիզմ	Կոնֆուցիոս Արիստոտել	Երջանկություն, կարգուկանոն, չափ
Բարեկեցություն	Ա. Սմիթ Ա. Մարշալ Ա. Լյուիս	Հարստություն, անհատի սպառման ծավալ
Հիմնարար կարիքներ	Կ. Գրիֆին Ա. Նայտ	Եկամուտների վերաբաշխում բարօրության և բոլորի համար նվազագույն կենսակերպի ապահովման համար
Մարքեթինգ	Ֆ. Բրոդել Ֆ. Կոտլեր	Սպառման բազմազանություն, բարիքների տեսականի
Հետինդուստրիալ տնտեսություն	Դ. Բելլ Տ. Լուման	Անհատական հնարավորությունների տեսականի
Հնարավորությունների ընդլայնում	Ա. Սեն	Հնարավորությունների, ասոցիացիաների և մասնակցությունների տեսականի
Մարդկային կապիտալ	Ժ. Բեկկեր Ջ. Մինսեր Տ. Շուլց Ջ. Կոլիմեն	Արտադրության և արդյունավետության մաքսիմիզացիա, կարևոր են առողջությունը և կրթությունը

[59]Աղյուսակի աղբյուրը. Акопян Е.А. Демографическая политика как фактор социально-экономического развития региона (на примере Санкт-Петербурга и Ленинградской области). – Дисс. … канд. социол. наук, спец. 22.00.03 – Теории среднего уровня, социальные структуры, социальные институты и процессы. – Ереван: ЕГУ, 2013.

Նորարարական տնտեսություն, գիտելիքների տնտեսություն	Է. Տոֆլեր Ջ. Նեյսբիտ	Կրեատիվություն, ստեղծագործություն, ինքնաիրականացման ազատություն, նախաձեռնողական գործողությունների հնարավորություններ
Վիճակագրական գնահատական	Է. Էնգել Մ. Օ. Լորենց	Ցուցանիշների խումբ, որը ձևավորում է կենսամակարդակի ինտեգրալային ցուցանիշ
ՄԱԿ-ի զարգացման ծրագիր	ՄԱԿ-ի փորձագետներ	Մարդու վրա ամբողջական կենտրոնացում Բարեկեցության մակարդակ և ընտրության ընդլայնում: Կենսամակարդակը որպես ցուցանիշների խումբ

Նշված հայեցակարգերը արտացոլում են նյութական բարեկեցության և կյանքի որակի ցուցանիշների գնահատման մոտեցումների մասին հիմնական պատկերացումները, որոնք գոյություն են ունեցել տարբեր հասարակություններում զարգացման տարատեսակ փուլերում:

Այս մոտեցումների մի մասը կիրառում է միմիայն որակական չափանիշներ, օրինակ՝ ինքնաիրականացման, ստեղծագործության, ասոցիացիաների ստեղծման և վերջապես երջանկության հնարավորությունները: Իսկ մոտեցումների մյուս մասը փորձում է օպերացիոնալիզացիայի ենթարկել այնպիսի հասկացություններ, ինչպիսին է օրինակ՝ երջանկությունը՝ հաշվի առնելով հարցման արդյունքների վրա հիմնվող սոցիալական, մասնագիտական և անձնական կյանքի տարբեր ասպեկտներից բավարարվածության տարատեսակ

ցուցանիշները, որոնց միջոցով է արտահայտվում ամբողջական հասկացությունը: Նման օպերացիոնալիզացիան նեղացնում է գնահատականների բազմազանությունն ու ամբողջականությունը, սակայն հնարավորություն է տալիս օգտագործել չափման, համեմատության և ռացիոնալ նպատակադրման մեխանիզմները սոցիալ-տնտեսական զարգացման առկա իրավիճակի և ռազմավարության ձևավորման վերլուծության շրջանակներում:

Բնակչության բավարարվածության խնդիրները սկսել են ուսումնասիրվել սննդի և այլ մթերքների պահանջարկի բավարարվածության մակարդակի վերլուծությունից ի վեր (Է. Էնգելս), սակայն հասարակության զարգացման ուսումնասիրությունը պահանջում էր նաև այն հարցի պատասխանը, թե որքանո՞վ են բավարարված հասարակության անդամները, արդյո՞ք տեխնոլոգիական, քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացումը հասել է բնակչությանը երջանկացնելու իր նպատակին: Այսպես, Բութանի թագավոր Ջիգմե Սինգե Վանգչուկը 1972 թվականին ներմուծել է ժողովրդի երջանկության ցուցանիշը՝ անվանելով այն համախոն ազգային երջանկության ցուցանիշ[60]՝ բացի տնտեսական ձեռքբերումներից դրանում ներառելով նաև բարոյական և հոգևոր արժեքների իրացումը: Բութանի տնտեսության զարգացման դանդաղ բարեփոխումը և զգուշավոր պետական կարգավորումը պետք է համապատասխանի Բութանի յուրահատուկ մշակույթին, որը հիմնվում է բուդդիստական հոգևոր արժեքների վրա՝ հնգամյա պլանավորման հիման վրա, որի պայմաններում շեշտը դրվում է ընտանիքի, մշակույթի, բնության, բուդդիստական կրոնի նկատմամբ ավանդական արժեքային կողմնորոշումների պահպանման վրա:

Ժամանակակից վիճակագրությունում օգտագործվում են բնակչության բավարավածության հետևյալ 2 ցուցանիշները՝ կենսամակարդակ ու կյանքի որակ: Առաջին ցուցանիշն իր էությամբ կրում է

[60] Տե՛ս Բութանի կառավարության պաշտոնական կայքը: http://www.gnhc.gov.bt/

տնտեսական բնույթ, քանի որ արտացոլում է բնակչության ապահովվածությունը անհրաժեշտ նյութական բարիքներով ու ծառայություններով, դրանց սպառման ընթացիկ մակարդակը և բանական (ռացիոնալ) պահանջմունքների բավարարվածության աստիճանը: Երկրորդ ցուցանիշը հաճախ անվանում են կյանքի մակարդակ լայն իմաստով, քանի որ այն «ներառում է նաև կյանքի, աշխատանքի և զբաղվածության, կենցաղի և հանգստի պայմանները, մարդու առողջությունը, կրթությունը, բնակության բնական միջավայրը և այլն»: Այս դեպքում ավելի հաճախ կիրառվում է «կյանքի որակ»[61] հասկացությունը: Այսպիսով, կենսամակարդակը արտացոլում է տնտեսական զարգացման արդյունքները, իսկ կյանքի որակը՝ հասարակության ձեռքբերումների սոցիալ-տնտեսական և սոցիալ-հոգեբանական մակարդակը: Կենսամակարդակի ցուցանիշը պետք է ներառի այնպիսի ինդիկատորներ, ինչպիսիք են համախառն ներքին արդյունքի ծավալը, գործազրկության մակարդակը, գնաճի մակարդակը, իրենց համար և տնտեսության մեջ ներդրումներ անելու բնակչության հնարավորությունները, աշխատանքի վարձատրման նվազագույն և առավելագույն չափերի հարաբերակցությունը, կրթության, մշակույթի, առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտներում պետական ծախսերի ծավալները, մարդու կյանքի տևողությունը, մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, շրջապատող միջավայրի վիճակի շեղումը նորմայից: Որպես տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքների ինտեգրալային ցուցանիշ կյանքի որակի գնահատումը ներառում է ցուցանիշների այնպիսի խմբեր[62], ինչպիսիք են բնակչության եկամուտների ու ծախսերի հարաբերակցությունը, պայմանականորեն ազատ տնօրինելի եկամտի մեծությունը, վերջնական սպառման ծախսերը, կրթական հաստատությունների, բժշկական անձնակազմի, մշա-

[61] Елисеева И.И. Социальная статистика. М.: Финансы и статистика, 2001. с. 271.
[62] Елисеева И.И. Социология. М.: ЭКОС, 2003. с. 58.

կույթի և հանգստի կազմակերպման հիմնարկությունների քանակը, աղքատության մակարդակը, կյանքի սպասելի տևողությունը ծննդյան պահին:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում և Բելառուսի Հանրապետությունում կիրառվող վիճակակգրական ցուցանիշների կազմի և բովանդակության տարբերությունները՝ բավական դժվար է համեմատել այս երկրների բնակչության բարեկեցության մակարդակները ազգային պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա: Այդուհանդերձ, վիճակագրական ազգային ծառայությունների աղբյուրների համաձայն[63] երկերների մասին կարելի է ստանալ առանձին տեղեկատվություն, որը տալիս է Բելառուսի և Հայաստանի բարեկեցության հետևյալ բնութագիրը.

Աղյուսակ 3.2

Բարեկեցության ցուցանիշները Հայաստանի և Բելառուսի Հանրապետություններում

	2000	2005	2008	2009	2010	2011
1 շնչին հասնող համախառն ներքին արդյունքը, ԱՄՆ դոլար						
- Հայաստան	592,4	1523,8	3610,0	2670,7	2849,8	3107,3
- Բելառուս	1141,7	3113,4	6328,0	5153,5	5783,2	5591,0
ՀՆԱ ինդեքսները նախորդ տարում, %						
- Հայաստան	-	113,9	106,9	85,9	102,2	104,7
- Բելառուս	-	111,4	110,2	100,2	107,7	105,3

[63] Статистический ежегодник республики Беларусь, 2012. – Минск: Национальный Статистический Комитет Республики Беларусь, 2012. – 715 с. Статистический ежегодник Армении, 2012. – Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2012. – 595 с. Статистический ежегодник Армении, 2008. – Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2008. Статистический ежегодник Армении, 2005. – Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2005.

Միջին ամսական նոմինալ աշխատավարձը միջին տարեկան ազգային արժույթների հիման վրա ԱՄՆ դոլարի նկատմամբ						
- Հայաստան	42,1	113,7	285,7	264,3	274,7	290,2
- Բելառուս	73,6	215,2	403,9	350,2	406,6	338,9

Ինչպես երևում է աղյուսակից բնակչության մեկ շնչին հասնող ՀՆԱ մակարդակը դոլարային արտահայտմամբ Բելառուսում հաստատուն մեծամասնություն է կազմում՝ մոտ 1,5-2 անգամ գերազանցելով բնակչության մեկ շնչին հասնող ՀՆԱ-ին Հայաստանի Հանրապետությունում (2011 թ. գերազանցումը կազմել է 79,9%):

Բելառուսում ձեռնարկությունների և բնակչության պետական աջակցությունը հնարավորություն է տվել թեթևացնել ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը երկրի տնտեսության վրա, իսկ 2008-2011 թթ. ՀՆԱ-ը չի նվազել, միչդեռ Հայաստանի տնտեսությունը 2009 թ. անկում ապրեց 14, 1 %-ով, սակայն 2010 թ. գրանցեց թույլ՝ 2,2%-ով աճ:

2010 թ. Բելառուսում 1,5 անգամ ավելացել են պետական սեկտորի աշխատավարձերը, ինչի արդյունքում 2010 թ. վիճակագրական ցուցանիշները ցույց են տալիս միջին ամսական աշխատավարձի աճ (350-ից 400), որից հետո, սակայն, արժույթի կուրսի և գների հարկադիր լիբերալիզացիան 2011 թ. այդ ցուցանիշը հասցրեց ամսական 340 դոլարից պակաս: Հայաստանում պետության կողմից ճգնաժամային տարիները հաղթահարելու համար բնակչության աջակցության փորձեր չեն եղել, սակայն դոլարային արտահայտմամբ միջին ամսական աշխատավարձի կորը ցույց է տալիս ավելի սահուն տատանումներ՝ 285-ից 265, իսկ հետո աստիճանաբար՝ մինչև 290 դոլար:

Սակայն, դիտարկելով այս երկրներում բնակչության դրամային եկամտի կառուցվածքը, կարելի է գտնել ինչպես նմանություններ (օրինակ՝ աշխատանքի վարձատրության եկամտի գերակշռումն ընդհանուր եկամտի շրջանակներում), այնպես էլ տարբերություններ (մասնավորապես արտասահմանից ընդունվող միջոցների հետ կապված):

Գրաֆիկ 3.1

ՀՀ դրամային եկամուտների կառուցվածքի հիմնական հոդվածները



Գրաֆիկ 3.2

Բելառուսի Հանրապետության դրամային եկամուտների կառուցվածքի հիմնական հոդվածները



Վիճակագրական այս տվյալների հիման վրա կառուցված սխեմաները ցուցադրում են հանրապետությունների բնակչության դրամային եկամուտների բավական նման կառուցվածք վերջին տասնամյակի ընթացքում. մեծ մասամբ երկրների բնակչությունը եկամուտների կեսից ավելին միջինում ստանում են աշխատանքի վարձատրությունից, մոտ 20%-ը՝ սոցիալական տրանսֆերտների (թոշակներ, նպաստներ և այլն) տեսքով: Սակայն դրամային եկամտի մնացած մասը Բելառուսում ձևավորվում է հիմնականում ձեռներեցության ու սեփականության, իսկ Հայաստանում՝ «այլ դրամային եկամուտների» հիման վրա, որոնք 2005 թ. Հայաստանի ազգային պետական վիճակագրական տարեկան հաշվետվությունում անվանվում են «արժույթի վաճառքից ստացված եկամուտներ»: Այսպիսով, հայերի եկամուտների կառուցվածքում արտասահման աշխատելու մեկնած ընտանիքի անդամների կողմից Հայաստան փոխանցվող եկամուտների չափը 12 %-ից (2008 թ., ֆինանսական ճգնաժամի սկիզբ) հասնում է մինչև 18 % ճգնաժամի գագաթնակետ հանդիսացող 2010 թվականին:

Հայաստանի բնակչության մեր ընտրանքային հետազոտությունում այն հարցին, թե արդյոք հարցվողի ընտանիքի անդամներից որևէ մեկը այդ պահին գտնվում է արտասահմանում, հարցվողների ¾-ից ավելին (75,8 %) պատասխանել են դրական, միայն 24,2 %-ն են պատասխանել «ոչ»: Հայաստանի սահմաններից դուրս գտնվող ընտանիքի անդամ ունեցող հարցվողների պատասխանները արտասահմանում գտնվելու նպատակների մասին հարցին բաշխվել են հետևյալ կերպ.

Աղյուսակ 3.3

Հարցվողների ընտանիքի անդամների արտասահմանում գտնվելու նպատակները

Գործնական/ աշխատանքային ուղևորություն	63,9%
Մշտական բնակություն	34,6%
Այլ տարբերակներ՝ ներառյալ «դժվարանում եմ պատասխանել»	1,5%

Այսպիսով, չնայած գրեթե 2/3-ը գտնվում է արտասահմանում գործնական կամ աշխատանքային ուղևորության շրջանակներում, բնակչության 1/3-ը գտնվում է արտասահմանում մշտական բնակության մեջ, ընդ որում նրանցից 74,6% -ը գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում, իսկ 22,3% -ը պատասխանել են, որ իրենց ընտանիքի անդամները գտնվում են Եվրոպայում կամ ԱՄՆ-ում: Այն հարցին, թե ինչ ներդրում ունի արտասահմանում գտնվող ընտանիքի անդամն ընտանիքի ֆինանսական կյանքում, ապա գրեթե կեսը (48,8%) պատասխանել են, որ նա ապահովում է ընտանիքի եկամտի մեծ մասը, ևս 37%-ը՝ ոչ նշանակալի մասը, այսինքն՝ հարցվողների 85,8%-ը նշել են, որ Հայաստանում իրենց ընտանիքները ֆինանսական տեսանկյունից կախված են արտասահմանում բնակվող ազգականների կողմից ստացվող միջոցներից:

Վիճակագրական տվյալների համադրումը վկայում է այն մասին, որ երկու երկրներն էլ, ունենալով ամուր կապեր ԱՊՀ հետ, իրականացնում են ակտիվ արտաքին տնտեսական գործունեություն, որը ուղղված է նախկին խորհրդային երկրներին, մասնավորապես Ռուսաստանին: Միևնույն ժամանակ Բելառուսի և Հայաստանի տնտեսություններում կարելի է դիտարկել երկու տարբեր ուղղվածությունների միտումներ.

Հայաստանում գերակշռում են եկամուտները արժույթի տեսքով (այսինքն՝ միջոցները ուղարկվում են արտասահմանից տեղի ստացողներին), իսկ Բելառուսում բիզնեսից վարման արդյունքում ստացված եկամուտները ներկրվում են արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից: Դա բացատրվում է ՌԴ հետ պետական միասնության և լայնածավալ սահմանի առկայությամբ, որի հատումը բավական հեշտացված է Բելառուսի քաղաքացիների և ներմուծվող ապրանքների և ծառայությունների համար, այդ իսկ պատճառով բելառուսները գերադասում են շարունակել ապրել իրենց երկրում՝ ակտիվ գործարարությամբ զբաղվելով ԱՊՀ այլ երկրների, նախ և առաջ ՌԴ հետ: Հայաստանը չունի նման հնա-

բավորություններ՝ հաշվի առնելով երկրի դիրքը, աշխարհագրական պայմանները, տարածքի մակերևույթը, զինված կոնֆլիկտների վտանգը և այլ գործոններ, այդ պատճառով արտաքին տնտեսական գործունեության շրջանակներում վաստակելու ցանկություն ունեցող հայերը ստիպված են ֆիզիկապես տեղափոխվել Հայաստանի սահմաններից դուրս:

Վերջին տասնամյակի ընթացքում Բելառուսը իրականացրել է բնակչության բավական նշանակալի սոցիալական պաշտպանություն (տասնամյակի ընթացքում սոցիալական տրանսֆերտների մակարդակը ստաբիլ կերպով գերազանցում էր Բելառուսի բնակչության եկամուտների 20%-ը): Ֆինանսական ճգնաժամի պայմաններում Բելառուսը հնարավորին չափ երկար ժամանակ վարում էր բնակչության սոցիալական աջակցության ակտիվ քաղաքականություն, սակայն որոշակի պահի (2011թ.) ստիպված էր ընդունել լիբերալիզիցիոն միջոցառումներ (աջակցության նվազեցումը 2011 թվականին մինչև 20%-անոց մակարդակ): Հայաստանն ավելի շուտ իրականացնում էր իր քաղաքացիների աջակցության ռեակտիվ քաղաքականություն՝ արձագանքելով նպաստների հետ կապված աճող պահանջարկին. 2007 թ. նպաստառու մինչև 2 տարեկան 4262, իսկ 2011 թ.՝ արդեն 10 495 երեխա: Այսինքն՝ աճը կազմել է 146%, չնայած 2007-2011թթ. ծնվածների թիվը 40 100-ից աճել է մինչև 43 300 մարդ (աճը կազմել է 8%): Սակայն, ինչպես երևում է նոմինալ աշխատանքային վարձատրության դոլարային արտահայտման վերոնշյալ դինամիկայում, Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը բերել է ավելի հավասարակշռված փոփոխությունների, այսինքն՝ բնակչության համար նախատեսված տնօրինելի ռեսուրսների ծավալի ավելի քիչ տատանումների:

Բնակչության թվաքանակի ընդհանուր ցուցանիշների հարաբերակցության ժամանակ, մասնավորապես դրանց հիման վրա, կարելի է գնահատել Հայաստանի և Բելառուսի Հանրապետություններում ուրբանիզացման դինամիկայի աստիճանը և ուղղվածությունը: Ինչ-

պես երևում է ներքոնշյալ աղյուսակից (աղյուսակ 3.4) ՀՀ-ում ուրբանիզացման մակարդակը էականորեն ցածր է, քան Բելառուսում. Բելառուսի և Հայաստանի քաղաքային բնակավայրերի բնակչության կոնցենտրացիաների միջև տարբերությունը 2012 թ. կազմել է 12%: Ընդ որում կարևոր է, որ Բելառուսում ուրբանիզացումը տեղի է ունեցել անընդհատ տեմպերով (2000-2012 թթ. դրա ռիթմը չի նվազել և կազմել է տարեկան մոտ 12%): Մինչդեռ Հայաստանում 2000 թ. անընդհատ և չշեղվող ռիթմով տեղի է ունենում քաղաքային բնակիչների զանգվածի նվազում և ընդհանուր թվաքանակում գյուղական բնակիչների թվի ավելացում՝ չնայած Հայաստանում չկան նմանատիպ ներքին միգրացիաներ գյուղից դեպի քաղաք և հակառակը, ինչպես Բելառուսում: ՀՀ բնակչության թվաքանակում գյուղական բնակչության աճը տեղի է ունենում թույլ, բայց չշեղվող ծնելիության բաշխման ֆոնի վրա: Սակայն չի կարելի ասել, որ գյուղական բնակավայրերում ծնելիությունը էականորեն գերազանցում է ծնելիությանը քաղաքային բնակավայրում. քաղաքի և գյուղի միջև տարբերությունը կազմում է մոտավորապես 0,2 % (այդպես, 2011 թ. նշվում է 13,2 երեխա 1000 մարդու նկատմամբ քաղաքային բնակավայրերում, և 13,4 %՝ գյուղական համայնքներում): Բացի այդ, եթե ՀՀ-ում տեղի է ունենում բնակչության դանդաղ (2003 թ-ից չշեղվող) ընդհանուր թվաքանակի աճ, ապա Բելառուսում 2000-2012 թթ. ընթացքում դիտարկվում է չշեղվող և անդադար կրճատում:

Աղյուսակ 3.4

Բնակչության թվաքանակը և բաշխումը քաղաքային և գյուղական բնակավայրերում

	Հայաստան			Բելառուս		
	Բնակչության թվաքանակ, հզ. Մարդ	Քաղաքակային բնակչության կշիռը, %	Գյուղական բնակչության կշիռը, %	Բնակչության թվաքանակ, հզ. մարդ	Քաղաքային բնակչության կշիռը, %	Գյուղական բնակչության կշիռը, %
2000	3226.9	64.9	35.1	10 002,5	69,7	30,3
2001	3215.3	64.6	35.4	9 956,7	70,1	29,9
2002	3212.9	64.3	35.7	9 900,4	70,5	29,5
2003	3210.3	64.2	35.8	9 830,7	70,9	29,1
2004	3212.2	64.2	35.8	9 762,8	71,4	28,6

2005	3215.8	64.1	35.9	9 697,5	71,8	28,2
2006	3219.2	64.1	35.9	9 630,4	72,2	27,8
2007	3222.9	64.1	35.9	9 579,5	72,7	27,3
2008	3230.1	64.1	35.9	9 542,4	73,2	26,8
2009	3238.0	64.0	36.0	9 513,6	73,9	26,1
2010	3249.5	64.0	36.0	9 500,0	74,5	25,5
2011	3262.6	64.0	36.0	9 481,2	75,1	24,9
2012	3274.3	64.0	36.0	9 465,2	75,8	24,2

Դա տեղի է ունենում քաղաքային և գյուղական բնակչության ռեսուրսներով ապահովվածության ակնհայտ շերտավորման դեպքում: Նմանատիպ շերտավորման գնահատումը հնարավոր է իրականացնել միայն տարատեսակ ցուցանիշների և տվյալների հարաբերակցման հիման վրա: Սակայն առաջին իսկ հարաբերակցման ժամանակ կարելի է գտնել բավական հետաքրքիր տարբերություններ տնօրինելի ռեսուրսների ծավալների ու կառուցվածքի, ծախսերի նկատմամբ ռեսուրսների հարաբերակցման և քաղաքային ու գյուղական բնակչության ռեսուրսներով ապահովվածության այլ ցուցանիշների միջև: Օրինակ՝ աշխատանքի դիմաց նոմինալ վարձատրության միջև տարբերությունները ՀՀ-ում բավական էական են.

Աղյուսակ 3.5

Միջին ամսական նոմինալ աշխատավարձը քաղաք/գյուղ բաժանման մեջ ՀՀ-ում, դրամ[64]

	Ընդհանուր	Քաղաք	Գյուղ	Քաղաք/գյուղ ցուցանիշի հարաբերակցությունը
2011թ.	113 270	116 673	85 143	137,0%
2012թ.	118 921	122 562	88 536	138,4%

[64] Տվյալները վերաբերում են համապատասխան տարիների հունվար-նոյեմբեր ամիսների համար Социально-экономическое положение Республики Армения в январе-декабре 2012 года: Информационный месячный доклад. – Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2013 տվյալների հիման վրա:

Քաղաքի ու գյուղի միջև դիֆերենցիացիայի գնահատման համար վիճակագրությունը Հայաստանում և Բելառուսում տալիս է տարբեր ցուցանիշներ: Համադրման համար կարելի է վերցնել առանձին բնորոշ ոլորտներ, որոնցում նոմինալ աշխատավարձի համեմատական վերլուծությունը հնարավորություն կտա պատկերացում կազմել եկամուտների դիֆերենցիացիայի մասին քաղաքի ու գյուղի միջև:

Աղյուսակ 3.6

Միջին ամսական նոմինալ աշխատավարձի հարաբերակցությունը մի քանի տնտեսական գործունեությունների տեսակներով միջին հանրապետական մակարդակի նկատմամբ, %[65]

	Հայաստան		Բելառուս	
	2005	2011	2005	2011
Գյուղական տնտեսություն, որս, անտառային տնտեսություն, ձկնորսություն և ձկնաբուծություն	63,8	65,7	70,6	72,4
Լեռնահանքային գործունեություն	205,0	219,9	188,9	152,0
Ֆինասական և ապահովագրական գործունեություն	336,0	262,0	157,5	175,0
Պետական կառավարում և պաշտպանություն	144,5	112,4	146,3	113,5

Ինչպես երևում է Բելառուսի և Հայաստանի տվյալներից 2 երկրներում էլ նոմինալ աշխատավարձն էականորեն ցածր է գյուղական տնտեսությունների և գյուղական գործունեությանը մոտ զբաղվածության ձևերի դեպքում, քանի որ այստեղ այն չի գերազանցում երկրում միջին նոմինալ աշխատավարձի 70-75% -ը: Որպես ֆինանսական միջոց՝ նոմինալ աշխատավարձը կարող է կազմել

[65] ՀՀ գնահատականները հիմնված են հետևյալ վիճակագրական տարեգրքերի տվյալների վրա. Статистический ежегодник Армении, 2012. – Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2012, 595 с, с. 89. Статистический ежегодник Армении, 2008. – Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2008, 589 с, с. 74.

150-300 % և ավելի միջին մեծությունից: Ընդ որում՝ նոմինալ աշխատավարձերի դիֆերենցիացիան փոքր-ինչ կրճատվել է միայն 2005-2011 թթ.: Բելառուսում և Հայաստանում աշխատավարձի չափը գյուղական տնտեսություններում և դրան մոտ ոլորտներում աճել է 2-ից ցածր տոկոսով: Հարկ է նշել, որ Բելառուսում դիֆերենցիացիան ավելի ցածր է, քան Հայաստանում, սակայն այդ տվյալները դեռևս պրակտիկորեն հաշվի չեն առնում գների և բելառուսական ռուբլու արժույթի լիբերալիզացիայի էֆեկտը: Կարելի է ենթադրել, որ շուկայական տնտեսության մեկուսացման պայմաններում երկրում դժվար թե հնարավոր կլինի պահպանել դիֆերենցիացիայի համեմատաբար ավելի ցածր մակարդակը:

Աղյուսակ 3.7

Դրամական ռեսուրսների ծավալի բաշխումն ըստ տնային տնտեսությունների քվինտիլային (20%-անոց) խմբերի.

	2007	2008	2009	2010	2011
Բելառուս					
Տնօրինելի ռեսուրսներն ըստ քվինտիլային (20%-անոց) խմբերի	-	-	-	-	-
Նվազագույն (ամենաքիչ ռեսուրսներով)	9,3	9,2	9,6	9,4	9,2
Առավելագույն (ամենաշատ ռեսուրսներով)	37,5	36,7	37,3	36,7	37,0
Ջինիի գործակից (ռեսուրսների կոնցենտրացիայի ցուցանիշ)	0,274	0,274	0,268	0,265	0,284
Տնօրինելի ռեսուրսների միջին մակարդակների հարաբերակցությունը	-	-	-	-	-
20% ամենաշատ և 20% ամենքիչ ապահովված բնակչություն	4,0	4,0	3,8	3,9	4,0
10% ամենաշատ և 10% ամենաքիչ ապահվված բնակչություն	5,9	5,9	5,6	5,6	6,0
Հայաստան					
Դրամային եկամուտներն ըստ քվինտիլային (20%-անոց) խմբերի	-	-	-	-	-
Նվազագույն (ամենաքիչ ռեսուրսներով)	**7**	**7**	**7**	**5**	**7**
Առավելագույն (ամենաշատ ռեսուրսներով)	39	38	37	45	37

Ջինիի գործակից (ռեսուրսների կոնցենտրացիայի ցուցանիշ)	-	0,339	0,355	0,362	0,371
Տնօրինելի ռեսուրսների միջին մակարդակների հարաբերակցությունը	-	-	-	-	-
20% ամենաշատ և 20% ամենաքիչ ապահովված բնակչություն	5,6	5,4	5,3	9,0	5,3
10% ամենաշատ և 10% ամենաքիչ ապահովված բնակչություն	15,2	14,4	14,3	13,9	14,5

Ինչպես երևում է տրված աղյուսակից ՀՀ-ում հասարակության շերտավորումն իրոք հասնում է ավելի բարձր մակարդակի, քան Բելառուսում: Ընդ որում՝ 2009 թ. Հայաստանում դիտարկվում էր տնային տնտեսությունների ծախսերի գերակշռում եկամուտների նկատմամբ (տե՛ս հաջորդ աղյուսակը՝ աղ. 8): Դա ապահովում է ոչ միայն տնային տնտեսությունների ռեսուրսներով ապահովվածության զգալիորեն ցածր մակարդակ, այլ նաև հանդիսանում է (որոշ չափով) չնախատեսված կամ նախատեսված ռեսուրսների վկայություն, որոնք ներառված են ազգային վիճակագրության դրամային եկամուտների այս կամ այն ցուցանիշներում: Օրինակ՝ որոշակի պայմաններում, երբ տնային տնտեսությունները որպես մթերք օգտագործում են սեփական այգեգործության ու բանջարանոցային գործունեության արդյունքները և այլն: Նոմինալ աշխատանքային վարձավճարների մակարդակը լիովին չի արտացոլում ռեսուրսային ապահովվածության ամբողջական պատկերը: Այսպես, Բելառուսում կարելի է հաշվարկել ռեսուրսների հարաբերակցությունը ծախսերի նկատմամբ, այսինքը՝ բնութագրել, թե որքանով են տնային տնտեսությունների ռեսուրսները գերազանցում վերջիններիս ծախսերը:

Աղյուսակ 3.8

Բելառուսի Հանրապետության տնային տնտեսությունների տնօրինելի ռեսուրսների հարաբերակցությունը սպառողական ծախսերի նկատմամբ, %

	Քաղաքացիներ[66]	Գյուղացիներ	Բոլոր տնային տնտեսություններ
2000	120,2	164,3	129,5
2005	119,0	141,5	124,5
2006	120,3	139,6	125,0
2007	125,4	144,3	129,7
2008	132,1	152,2	137,0
2009	136,1	159,5	140,6
2010	134,1	152,0	137,7
2011	131,4	150,1	135,4

Ինչպես երևում է աղյուսակից, ֆինանսական ճգնաժամից հետո (այն հատկապես հիվանդագին հետաձգմամբ է հարվածել Բելառուսին վերջինիս հզոր սոցիալական քաղաքականության շնորհիվ, որը վարվում էր երկրում ճգնաժամի առաջին տարիներին, սակայն այն չպահպանեց նախկին մակարդակի վրա 2010-2011 թթ.) այդ հարաբերակցությունը փոքր-ինչ կրճատվել է ի համեմատություն մինչճգնաժամային և ճգնաժամային տարիների. եկամուտների նկատմամբ ռեսուրսների մաքսիմալ գերազանցումը դիտարկվել է 2009 թ.: Միևնույն ժամանակ գյուղում գերակշռումը ռեսուրսների նկատմամբ միջինում զգալիորեն բարձր է, քան քաղաքում:

Բացի այդ, հարկ է հաշվի առնել այլ՝ ոչ դրամային, ռեսուրսների աղբյուրները: Այսպես, Բելառուսում գոյություն ունեն տվյալներ տնային տնտեսությունների կողմից տնօրինվող ռեսուրսների կառուցվածքի վերաբերյալ:

[66]Քաղաքացիներ – «քաղաքներում և քաղաքային տիպի բնակավայրերում ապրողներ», գյուղացիներ – «գյուղական բնակավայրերում ապրողներ».

Աղյուսակ 3.9

Տարբեր բովանդակություն ունեցող տնային տնտեսությունների կողմից տնօրինվող ռեսուրսների կառուցվածքը Բելառուսի Հանրապետությունում 2011թ.[67] (%-ներով)

Տնային տնտեսություններ, որոնք բնակվում են	Դրամական միջոցներ	Սպառողական սննդամթերքի արժեքը, որն արտադրվում է սեփական տնտեսությունում	Նպաստների ու վճարների բնական արտահայտման արժեքը	Տնօրինների ռեսուրսներ–ընդհանուր
Քաղաքներում և քաղաքային տիպի բնակավայրերում	96,3	2,9	0,8	100
Գյուղական բնակավայրերում	90,8	8,5	0,7	100

Այսպիսով, Բելառուսի Հանրապետության վիճակագրական տվյալներում հաշվի են առնված տնային տնտեսությունների ոչ դրամական ռեսուրսները, մինչդեռ ՀՀ վիճակագրության ցուցանիշները հաշվի են առնում տնային տնտեսությունների ռեսուրսների միայն դրամական ձևերը: Բելառուսի տվյալներից երևում է, որ քաղաքային տնային տնտեսությունները տնօրինում են 5,5 %-ով ավելի շատ դրամական միջոցներ իրենց բոլոր ռեսուրսների շրջանակներում, ընդ որում, իրենց սեփական աշխատանքի մասը երեք անգամ պակաս է, քան գյուղի բնակիչների մոտ (2,9 % 8,5 %-ի դիմաց): Ներկայացված տվյալների պայմանական ճշգրտմամբ՝ տնօրինելի եկամուտների շրջանակում հաշվի առնելով միայն դրամական եկամուտը ՀՀ տվյալների հետ համեմատության համար, կարելի է ստանալ հետևյալ աղյուսակը:

[67] Статистический ежегодник республики Беларусь, 2012. – Минск: Национальный Статистический Комитет Республики Беларусь, 2012. – 715 с. - с. 194.

Աղյուսակ 3.10

Տնօրինելի ռեսուրսների (Բելառուս) կամ դրամական եկամուտների (Հայաստան) հարաբերակցությունը սպառողական ծախսերի նկատմամբ տնային տնտեսություններում[68], %

		Բելառուս		Հայաստան
	Քաղաքաբնակ[69]	Գյուղաբնակ	Բոլոր տնային տնտեսությունները	Բոլոր տնային տնտեսությունները
1999	-	-	-	67,7
2000	115,8	149,2	123,2	-
2005	114,6	128,5	118,4	75,4
2006	115,8	126,8	118,9	79,2
2007	120,8	131,0	123,3	84,8
2008	127,2	138,2	130,3	93,0
2009	131,1	144,8	133,7	101,3
2010	129,1	138,0	131,0	114,1
2011	126,5	136,3	128,8	105,0

ՀՀ վիճակագրության տվյալներում չկան տվյալներ տնօրինելի ռեսուրսների և սպառողական ծախսերի մասին (բաշխված՝ ըստ քաղաքների ու գյուղերի), այդ պատճառով աղյուսակում համեմատության համար բերված են Հայաստանի միայն ընդհանուր տվյալները: Սակայն դրանցից երևում է, որ Հայաստանում ռեսուրսների գերակշռումը ծախսերի նկատմամբ ձեռք է բերվել միայն 2009 թ., ընդ որում՝ ըստ վիճակագրական տվյալների դա տեղի է ունեցել բնակչության սպառողական ծախսերի խիստ կրճատման շնորհիվ, որը հավանաբար առաջացել է ֆինանսական ճգնաժամի դաժան հետևանքների մտավախության հիման վրա: Հայերը իրենց ծախսերը կրճատել են ընդհուպ մինչև այնպիսի նվազագույն մակարդակի, ինչը նրանց հնարավորություն է տվել ունենալ անգամ ռեսուրսների

[68] Հաշվարկված է ըստ՝ Статистический ежегодник республики Беларусь, 2012. – Минск: Национальный Статистический Комитет Республики Беларусь, 2012. – 715 с. - с. 193-195. Статистический ежегодник Армении, 2012. – Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2012. – 595 с. –

[69] Քաղաքացիներ – «քաղաքներում և քաղաքային տիպի բնակավայրերում ապրողներ», գյուղացիներ – «գյուղական բնակավայրերում ապրողներ».

«ավելցուկ»՝ հետագա ծախսերի համար խնայողությունների աղբյուր տնային տնտեսությունների մակարդակով:

Միևնույն ժամանակ կարելի է օգտագործել աղքատության գնահատման ՀՀ վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 3.11

Աղքատության մակարդակի ցուցանիշները ՀՀ-ում ըստ բնակավայրի տիպի, 2010 թ., ընդհանուր բնակչության նկատմամբ %-ային արտահայտմամբ

Աղքատության մակարդակներ	Բոլոր տնային տնտեսություններ	Քաղաքացիներ	Գյուղացիներ
Ծայրահեղ աղքատ (սպառումը մեծահասակի հաշվարկով աղքատության սննդային (էքստրեմալ) շեմից ցածր)	3,0	4,1	1,1
Աղքատներ (սպառումը մեծահասակի հաշվարկով աղքատության վերին ընդհանուր շեմից ցածր)	35,8	35,7	36,0

Ինչպես երևում է բերված վիճակագրական տվյալներից, Հայաստանում քաղաքացիների ռեսուրսային ապահովվածության մակարդակը բնորոշվում է ավելի բարձր շերտավորմամբ: Քաղաքացիների շրջանում ավելի շատ են ծայրահեղ աղքատները (4,1 % 1,1%-ի դիմաց), սակայն միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ վիճակագրական տվյալները կարող են տալ սխալ պատկեր պետական մարմինների բյուրոկրատական ապարատի պայմաններում քաղաքացիների գործառնման հմտությունների և հնարավորությունների մասին (որպեսզի հնարավոր լինի ռեսուրսների ներգրավման մաքսիմալացումը), ինչը մասնավորապես կարող է «գրանցել» ծայրահեղ աղքատ կամ աղքատ կատեգորիայում այն քաղաքացիներին, որոնք գյուղացիներից ավելի հմտորեն են թաքցնում իրենց ռեսուրսների աղբյուրները: Այնուամենայնիվ, ազգային վիճակագրական տվյալների հիման վրա կարելի է համարել, որ գյուղացիների շրջանում

աղքատությունը ավելի քիչ է կրում մինչև սով հասնող ծայրահեղ բնույթ, որքան քաղաքում: Սակայն գյուղում աղքատների ընդհանուր թիվը ավելին է, քան քաղաքում (0,3 %-ով):

Վերջապես, վիճակագրական տվյալները և հաշվարկների արդյունքում ստացված ցուցանիշները վկայում են գյուղական բնակավայրերում սոցիալ-տնտեսական դիֆերենցիացիայի մակարդակն ավելի ցածր է, քան քաղաքում: Գյուղական բնակավայրերում զբաղվածության տարբեր ձևերը արտահայտում են տնտեսվարման ագրարային տիպը, որը պահանջում է աշխատողի անմիջական մասնակցություն և ներգրավում աշխատանքային գործունեության մեջ, ընդ որում, նման ներգրավվածությունը տարբերվում է յուրաքանչյուր աշխատակցի հնարավորություններից կախված՝ ներառյալ սեռատարիքային և անձնային որակները: Այդ տարբերությունները բերում են գյուղում աշխատանքի բաժանման յուրահատուկ բնութագրիչների առաջացմանը՝ ներառյալ գենդերային խտրականությունը և սեգրեգացիան: Սա ձևավորում է աշխատանքային ռեսուրսների յուրահատուկ բնութագրիչներ գյուղական բնակավայրերում և ագրարային տիպի տնտեսություններում:

3.2 Գյուղում աշխատանքային ռեսուրսների սեռատարիքային բաշխվածության հիմնահարցերը ագրարային արտադրության համատեքստում

Տարածքի մարդկային ներուժը գնահատվում է նախ և առաջ համախառն արդյունքի, աշխատանքի սուբյեկտի պահանջմունքների և մտադրությունների համապատասխան աշխարհի փոխակերպման աշխատանքային գործընթացի, արտադրության մեջ վերջինիս բնակիչների հնարավորությունների և պրակտիկաների ներգրավման տեսանկյունից:

Աշխատանքային ռեսուրսների գնահատումը հիմնվում է 2 հիմնական բաղադրիչների վրա.

1. ամբողջ բնակչությունը իր սեռատարիքային կառուցվածքով, որակավորման և կրթական կազմով և այլ բաղադրիչներով,

2. տնտեսապես ակտիվ, մասնավորապես զբաղված բնակչություն: ՀՀ-ում, ինչպես արդեն նշվեց, ուրբանիզացման գործընթացների դինամիկան տարբերվում է Բելառուսից. եթե Բելառուսական բնակչությունը հաստատուն կերպով տեղաշարժվում է դեպի քաղաք, ապա հայկական բնակչությունը մնում է գյուղերում, ընդ որում, գյուղական բնակչության մոտ պրակտիկորեն աննշան տեմպով, բայց ամեն դեպքում աճում է:

Աշխատանքային վիճակագրությունը փոքր-ինչ տարբերվում է բացակայող բնակչության պայմաններում բնակչության ընդհանուր տվյալներից, այսինքն՝ երկրի սահմանից երկար ժամանակով մեկնած քաղաքացիները, ինչի արդյունքում աշխատանքային ռեսուրսների բաշխումը քաղաքային և գյուղական բնակավայրերում ունի հետևյալ տեսքը.

Աղյուսակ 3.12

Աշխատանքային ռեսուրսները՝ ըստ տարիքային խմբերի[70]

Տարիք	Ընդամենը հզ. մարդ	Քաղաքային հզ. մարդ	Գյուղական հզ. մարդ	Քաղաքային %	Գյուղական %
15-19	226,3	132,2	94,0	58,4	41,5
20-24	273,7	174,7	99,0	63,8	36,2
25-29	234,7	157,9	76,8	67,3	32,7
30-34	187,7	133,2	54,5	71,0	29,0
35-39	174,3	121,0	53,2	69,4	30,5
40-44	162,3	101,6	60,8	62,6	37,5
45-49	215,2	129,7	85,5	60,3	39,7
50-54	241,0	151,0	90,0	62,7	37,3
55-59	187,9	127,8	60,1	68,0	32,0
60-64	143,9	108,6	35,3	75,5	24,5
65-69	85,6	62,8	22,8	73,4	26,6
70-75	153,7	97,8	55,9	63,6	36,4
Ընդամենը	**2286,3**	**1498,3**	**788,0**	**65,5**	**34,5**

[70] Այստեղ և այսուհետ օգտագործվում են տվյալներ հետևյալ աղբյուրից՝ Labour Marketin the Republic of Armenia 2007-2011. Statistical handbook. – Yerevan: National Statistical Service of the Republic of Armenia, 2012.

Ըստ տարիքային խմբերի՝ տվյալները թույլ են տալիս հաստատել բավական կարևոր եզրակացություններ Հայաստանում քաղաքի և գյուղի միջև բնակիչների տեղաշարժման դինամիկայի վերաբերյալ: Այդպես, 15-34 տարեկան խմբերը նախաձեռնում են բավական ակտիվ տեղաշարժ գյուղից դեպի քաղաք՝ կրճատելով գյուղական բնակչության կշիռը 41.5-ից մինչև 29.0 %: Միևնույն ժամանակ 35 տարեկանից բարձր քաղաքացիները աստիճանաբար տեղափոխվում են գյուղեր՝ արտացոլելով 35-55/60 տարեկան գյուղական բնակչության աճը: Սակայն երկրի բնակիչները, մոտենալով կենսաթոշակի տարիքին, մասնավորապես բնակվում են քաղաքում (60-70 տարեկան տարիքային խմբերի միջև տեսակարար կշիռը կազմում է մոտ 1/4), իսկ 70 տարեկանից սկսած ավագ սերնդի 1/3-ից ավելին բնակվում է գյուղում: Կարելի է ենթադրել, որ գյուղական բնակավայրերում ապրող ավագ տարիքային խմբում գերակշռում են նրանք, ովքեր մեկնել են քաղաք: Միևնույն ժամանակ թոշակային տարիքին մոտենալու հետ կապված (55 տարեկանից և հատկապես 60-69 տարիքային խմբերը) տարեց ծնողները տեղափոխվում են քաղաք իրենց 30-40 տարեկան երեխաների մոտ՝ հիմնականում ավելի հարմարավետ պայմանների և ենթակառուցվածքներին մոտ գտնվելու (օր.՝ առողջապահություն), ինչպես նաև թոռներին մեծացնելու գործում իրենց երեխաներին օգնելու համար:

Այսպես, հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հայկական ընտանիքների մեծամասնությունը բնակվում է 2 կամ 3 սերունդների հետ միասին (87.2%), դրանցից կեսից ավելին ապրում է 3 սերունդներով (48.5%), ավելի քիչ հարցվողներ նշում են «2 սերունդների» բնակությունը միասին (38.7%): Ընդ որում, հաջորդ հարցի պատասխաններում նշվել է, որ 30 % ընտանիքներում բացակայում են հարաբերությունները կամ ավագ սերնդի ներկայացուցիչները: Արդյունքում այն հարցին, թե որքանով են ավագ սերնդի ներկայացուցիչները մասնակցում երեխաների դաստիարակությանը, ընտանիքում ավագ և ավագ կրտսեր սերունդների ներկայացուցիչներ

ունեցող հարցվողներիի 86.5%-ը տվել են «ակտիվ մասնակցում են» (57.9%) և «հիմնականում մասնակցում են» (28.7%) պատասխաններ-ը: Հարցվողների միայն 2%-ն է պատասխանել, որ իրենց ընտանիք-ների ավագ սերունդների ներկայացուցիչները «ընդհանրապես չեն մասնակցում» երեխաների դաստիարակությանը:

Եվ վերջապես, վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ Հայաստանում կան ինչպես առավելապես գյուղում բնակություն հաստատելու ոլորտներ (օր.՝ Արարատ, Արմավիր) այնպես էլ քաղաքում (Կոտայք կամ Լոռի):

Աղյուսակ 3.13

Աշխատանքային ռեսուրսները՝ ըստ ՀՀ մարզերի և Երևանի, 2011 թ., հզ. մարդ

	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական
Երևան	794.8	794.8	-
Արագածոտն	80.3	22.4	57.9
Արարատ	190.6	52.6	138.0
Արմավիր	201.9	70.3	131.6
Գեղարքունիք	142.6	56.8	85.9
Լոռի	211.3	129.7	81.6
Կոտայք	228.2	131.0	97.2
Շիրակ	202.9	124.9	78.0
Սյունիք	96.6	63.9	32.7
Վայոց Ձոր	41.7	16.5	25.2
Տավուշ	95.4	35.4	60.0
Ընդամենը	2286,3	1498,3	788,0

Ընդ որում, բուհական կամ ոչ բուհական կրթության, ինչպես նաև գիտական աստիճան ունեցող բնակչության ճնշող մեծամաս-նությունը բնակվում է քաղաքում, իսկ գյուղական բնակավայրերում գերակշռում են միջնակարգ կրթությամբ բնակչության խմբերը:

Աղյուսակ 3.14

Աշխատանքային ռեսուրսների բաժանումը՝ ըստ տարիքային խմբերի և կրթական աստիճանի, 2011 թ., հզ. մարդ

Ընդամենը	Ընդամենը, հզ. մարդ	Բարձրագույն, գիտական աստիճան-ներ	Միջին մասնագիտա-կան, չավարտված բարձրագույն	մասնագիտական	Ընդհանուրի իջնակարգ	Բազային	Տարրական
	2286,3	*486,6*	*528,9*	*44,3*	*954,3*	*233,8*	*38,4*
15-24	500,0	65,7	82,9	5,8	229,8	104,7	11,0
25-34	422,4	123,9	83,3	6,3	178,6	27,7	2,5
35-44	336,6	86,0	83,0	8,2	143,8	13,2	2,3
45-54	456,2	90,1	135,0	13,8	192,9	22,2	2,2
55-64	331,8	77,5	100,6	6,9	120,6	22,8	3,3
65-75	239,3	43,3	44,1	3,3	88,5	43,2	17,0
Քաղաքային բնակչություն							
	1498,3	*410,5*	*390,0*	*27,0*	*532,9*	*121,9*	*16,1*
15-24	306,9	50,2	59,8	3,1	131,1	57,7	5,1
25-34	291,1	105,2	62,1	5,2	104,9	12,4	1,3
35-44	222,6	74,2	62,1	4,7	73,8	6,8	1,0
45-54	280,7	73,3	91,6	7,2	97,6	10,1	1,0
55-64	236,4	67,4	78,0	4,5	71,9	13,1	1,6
65-75	160,6	40,2	36,4	2,3	53,6	21,9	6,2
Գյուղական բնակչություն							
	788,0	*76,2*	*138,9*	*17,3*	*421,4*	*111,9*	*22,3*
15-24	193,0	15,6	23,1	2,7	98,7	47,0	6,0
25-34	131,3	18,7	21,2	1,1	73,7	15,4	1,2
35-44	114,0	11,8	20,9	3,5	70,0	6,4	1,3
45-54	175,6	16,8	43,4	6,6	95,3	12,1	1,3
55-64	95,4	10,2	22,6	2,4	48,7	9,7	1,8
65-75	78,7	3,1	7,7	0,9	35,0	21,3	10,7

Ինչպես երևում է վիճակագրական տվյալներից գյուղական բնակավայրերում ապրող 65 տարեկանից բարձր տարիքային խմբի ներկայացուցիչների միայն 3.9 %-ը ունի բարձրագույն կրթություն (31.000 մարդ), իսկ 25-34 տարիքային խմբում՝ 14.2 %-ը: Միջին մասնագիտական, չավարտած բարձրագույն և բարձրագույն կրթություն-

ների գումարման դեպքում կարելի է տեսնել գյուղական բնակչության շրջանում՝ ըստ տարիքային խմբերի բաժանումը դառնում է ավելի նշմարելի. Նշված կրթական մակարդակի ներկայացուցիչները 25-34 տարիքային խմբերում կազմում են 30.4 %, 45-64 տարիքային խմբերում՝34.4 %, իսկ 65 տարեկանից բարձր խմբում՝ միայն 13.7%: Մի կողմից դա վկայում է կրտսեր սերնդի շրջանում բարձրագույն կրթության տարածվածության, ինչպես նաև Հայաստանում բարձրագույն կրթությանը տրվող նշանակության մասին: Մյուս կողմից դա նշանակում է, որ գյուղական բնակչության ավագ սերունդը կրթություն ստանալու իր հնարավորությունները զոհաբերել է ի շահ երեխաների կրթությանը և իր ընտանիքի նյութական հիմքերի ստեղծմանը:

Ինչպես երևում է բերված տվյալներից գյուղական բնակավայրերում աշխատանքային ռեսուրսները կտրուկ տարբերվում են ընդհանուր միջին կրթական մակարդակ ունեցող խմբերում, մինչդեռ քաղաքում դիտարկվում է ավելի հավասարաչափ բաշխում ընդհանուր միջնակարգ, բարձրագույն կամ միջին մասնագիտական և չավարտած բարձրագույնի միջև: Այսպես, 25-34 տարիքային խմբում 36.1 %-ը ունեն բարձրագույն կրթություն, 36.0 %-ը ՝ ընդհանուր միջնակարգ, 21.3 %-ը՝ չավարտած բարձրագույն, իսկ ընդհանուր առմամբ քաղաքային բնակչության հիմնական զանգվածում 25-64 տարիքային խմբում այդ ցուցանիշները հետևյալն են. 31.1 %-ը՝ ունի բարձրագույն կրթություն, 28.5 %-ը՝ չավարտած բարձրագույն կամ միջին մասնագիտական և 33.8 %-ը՝ ընդհանուր միջնակարգ: Վերջապես, քաղաքային բնակչության ավելի մեծահասակ մասը՝ 34-64 տարիքային խումբը, բաշխված է ավելի հավասարաչափ՝ 29.1 %-ը ունեն բարձրագույն կրթություն, 31.3 %-ը՝ չավարտած բարձրագույն կամ միջին մասնագիտական, 32.9 %-ը՝ ընդհանուր միջնակարգ:

Իսկ գյուղական բնակչության շրջանակներում առանձնացնում են հետևյալ խմբերը՝ ըստ տարիքի և կրթության. գյուղի աշխատանքային ռեսուրսը կազմող ամբողջ բնակչության կեսից ավելին, այ-

սինքն 53.5 %-ը, ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, իսկ 25-44 տարքիային խմբում այդ մասը կազմում է մոտ 60 % (58.6 %): Միևնույն ժամանակ չավարտած բարձրագույն կամ միջին մասնագիտական ունեն միայն գյուղական բնակչության 17.6 %-ը, իսկ 45-64 տարիքային խմբում այն կազմում է մոտավորապես քառորդը՝ 24.4 %: 25-64 ընդհանուր տարիքային խմբում միայն 8.4 %-ը ունեն հիմնական կրթություն (չավարտած միջնակարգ), իսկ 65 տարեկանից բարձր խմբում այդպիսի միայն 27.1 %-ը, ինչը կրկին անգամ ապացուցում է վերը արված ենթադրությունն այն մասին, որ հայկական գյուղական համայնքում ավանդական արժեքները մարմնավորվում են մասնավորապես ոչ միայն կրտսեր սերնդի ավագ սերնդի հանդեպ հարգանքի միջոցով (ինչը «աչքի է ընկնում» այլ էթնիկ խմբերում), այլ նաև նախ և առաջ նրանում, որ այդ հարգանքին նրանք արժանացել են (այնքանով, որքանով տեղին է օգտագործել այդ հասկացությունը միջսերնդային հարաբերություններում) հսկայական զոհաբերմամբ փոքր սերունդներին կրթելու, մեծացնելու և նրանց բարեկեցությունը ապահովելու համար:

Հարկ է նշել նաև, որ գյուղական բնակավայրերում երեխաների նկատմամբ վերաբերմունքը բավական յուրահատուկ է: Ինչպես նշում է Բեստուժև-Լադան, գյուղական կենսակերպում երեխան փոքրուց օգնում էր ծնողներին, 10 տարեկանում պատրաստ էր փոխարինել ծնողներին կենցաղային շատ գործերում, 15 տարեկանում ստեղծում էր ընտանիք, իսկ 20 տարեկանում դառնում էր ծնող՝ միևնույն ժամանակ կատարելով «կենդանի թոշակի» դերը իր ծնողների համար:[71] Այս տեսակետից գյուղական աշխատանքի ռեսուրսներն ունեն յուրահատուկ բնույթ աշխատանքային գործընթացում ներգրավվելու առումով. ըստ էության, գյուղում սոցիալականացումը հիմնված է աշխատաքնային սոցիալականացման, ընտանիքի գործունեության մեջ երեխայի ներգրավման վրա: Այսպես, Բելառու-

[71] Бестужев-Лада И.В. Альтернативная цивилизация. М.: Алгоритм, 2003. – 448 с.

սի Հանրապետությունում 5-14 տարեկան երեխաների 1.4 %-ը ներգրավված է մանկական աշխատանքի տարբեր ձևերում, ընդ որում քաղաքներում և քաղաքային տիպի ավաններում՝ 1.3 %-ը, գյուղական բնակավայրերում՝ 1.8 %-ը:[72] Վիճակագրական տվյալները կառուցված են հետևյալ պայմանների վրա. երեխան համարվում է մանկական աշխատանքի ձևերում ներգրավված, եթե շաբաթվա ընթացքում՝

- 5-11 տարեկան երեխան շաբաթական գոնե 1 ժամ զբաղվել է աշխատանքային գործունեությամբ ոչ տնային պայմաններում, ընտանեկան բիզնեսի շահերի շրջանակներում կամ շաբաթվա ընթացքում նվազագույնը 28 ժամ կատարել է տնային գործեր, որոնք կապված են եղել սենյակը կարգի բերելու, սպասքը լվանալու և այլնի հետ,
- 12-14 տարեկան երեխան շաբաթական նվազագույնը 14 ժամ զբաղվել է աշխատանքային գործունեությամբ ոչ տնային պայմաններում, ընտանեկան բիզնեսի շահերի շրջանակներում կամ շաբաթվա ընթացքում նվազագույնը 28 ժամ կատարում է տնային գործեր:

Ցավոք, չկան նմանատիպ տվյալներ ՀՀ-ում համեմատելու համար, սակայն որոշ չափով վստահորեն կարելի է պնդել, որ ընտանիքի բոլոր սերունդների (ներառյալ կրտսեր) աշխատանքային գործընթացում ինտեգրացիայի կազմակերպման սկզբունքային տարբերություններ չպետք է լինեն: Այսպես, Ս. Լուրյեն նշում է[73]. «Հայ գյուղացիների սովորական իրավունքի համաձայն մարդու՝ հողին տիրանալու հիմնավորումը տրվում էր դրանում արված աշխատանքի հիման վրա: Աշխատանքային գործընթացը սինխրոն էր, այսինքն՝

[72] Многоиндикаторное кластерное обследование по оценке положения детей и женщин, 2012. Предварительный отчет, февраль 2013 г. – Минск: Юнисеф, Национальный статистический комитет Республики Беларусь, 2013. –20 с. –с.11. http://belstat.gov.by/homep/ru/households/mics/results.pdf

[73] Лурье С.В. Историческая этнология. – М.: Академический проект, 2004. – 624 с.

խաղաղությունը պայմանավորում էր բոլոր գյուղատնտեսական աշխատանքների ժամանակները, չնայած աշխատանքը տեղի էր ունենում ոչ թե տեղեկացնելով, այլ յուրաքանչյուրն աշխատում էր իր հողամասում և սեփական շահի համար»: Այս դեպքում ընտանիքի բոլոր անդամների ներգրավումը հողի հետ աշխատանքում բնական էր և ըստ էության, համանքի համար անդառնալի երևույթ: Այս դիրքորոշումը դիտարկվում է որպես բացատրություն այն հարցին, թե ինչու մինչև վերջին ժամանակներս (մինչև XX դարի կեսերը) Հայաստանում գյոուղական բնակչության սերունդները ստանում էին միայն տարրական կամ հիմնական կրթություն: Պատասխանը վկայում է, որ այսօր Հայաստանում ավագ հանդիսացող սերնդի ժամանակաշրջանը պրակտիկորեն ամբողջովին զբաղված է եղել գյուղական աշխատանքով՝ չթողնելով այլ զբաղմունքների հնարավորություն:

Ինչ վերաբերում է գենդերային տարբերություններին, ապա կարելի է նշել ընդհանուր առմամբ տղամարդկանց և կանանց տնտեսական ակտիվության միջև էական տարբերությունը Հայաստանում, որտեղ ավանդապես կնոջ վարքի կարծրատիպը ուղղված է ընտանիքին, տնային տնտեսության վարմանը և երեխաների դաստիարակությանը, ինչպես նաև փոքր չափով ընտանիքի համար միջոցների վաստակումը:

Այսպես, կանանց և տղամարդկանց դերի նկատմամբ կարծրատիպային գնահատականները պատասխանում են այն հարցին, թե այսօր ընտանիքի ստեղծման և բարեկեցիկ ընտանիք ունենալու համար որքանով են կարևոր հետևյալ պայմանները.

Աղյուսակ 3.15

Ընտանիքի բարեկեցության պայմանները, ռեսպոնդենտների պատասխանները %-ով

	Շատ կարևոր է	Հիմնակա-նում կարևոր է	Հիմնակա-նում կարևոր չէ	Ընդհան-րապես կարևոր չէ	Դժվ. պատ.
Ամուսնու նյութական ապահովվածություն	49,1%	36,4%	8%	5,9%	0,7%
Կնոջ նյութական ապահովվածություն	20,7%	41,1%	23,7%	13,8%	0,7%
Առանձին բնակարան	45,8%	29,3%	16,4%	8,2%	0,2%
Ամուսնու ընտանիքի հեղինակությունը	50,5%	26,8%	14,8%	7,3%	0,7%

Ինչպես երևում է հետազոտության արդյունքներից, կնոջ դերը ընտանիքի նյութական ապահովվածության գործում ընդունվում է որպես երկրորդական («շատ կարևոր է» – միայն 20.7%, ի տարբերություն ամուսնու դերի՝ 4.9 %, սակայն «հիմնականում կարևոր է»՝ 41.1%):

Այս կարծրատիպը արտահայտվում է նաև Հայաստանում կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվության համատեքստում.

Աղյուսակ 3.16

Տնտեսական ակտիվության մակարդակը ՀՀ-ում, 2011 թ., հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների քանակի համապատասխան, %

Տարիք	Կանայք	Տղամարդիկ
15 – 19	13,5	12,8
20 – 24	45,9	68,8
25 – 29	51,8	88,9
30 – 34	63,3	90,6
35 – 39	72,1	92,3
40 – 44	78,9	91,5
45 – 49	74,4	89,9
50 – 54	70,9	85,2

55 – 59	66,6	85,3
60 – 64	49,6	70,9
65 – 69	37,4	57,1
70 – 75	26,3	42,7
Ընդամենը	**55,3**	**72,7**

Միջինում կանանց շրջանում 2011 թ. տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է ½-ից ավելի, մինչդեռ տղամարդկանց մոտ այդ ցուցանիշը փոքր-ինչ հեռու է ¾-ից (2010-ի տվյալներ):

Միևնույն ժամանակ կարելի է առանձնացնել կանանց յուրահատուկ դերը գյուղատնտեսությունում և ագրարային արտադրությունում, ինչի մասին վկայում են տվյալները հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 3.17

Զբաղվածության աստիճանը կրթության մակարդակի և զբաղվածության ճյուղի հիման վրա Հայաստանում, 2011 թ., հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների քանակի համապատասխան, %

	Հզ. մարդ			%		
	Ընդամենը	Ընդհանուր միջնակարգ և ցածր	Մասնագի տական և բարձրագույն	Ընդամենը	Ընդհանուր միջնակարգ և ցածր	Մասնագի տական և բարձրագույն
Ընդամենը	1175,1	573,5	601,6	100,0%	100,0%	100,0%
Գյուղական տնտեսություն	457,4	335,2	122,2	38,9%	58,4%	20,3%
Տղամարդիկ	610,9	315,9	295	52,0%	55,1%	49,0%
Գյուղական տնտեսություն	200,5	143,8	56,7	43,8%	42,9%	46,4%
Կանայք	564,2	257,5	306,6	48,0%	44,9%	51,0%
Գյուղական տնտեսություն	256,9	191,4	65,5	56,2%	57,1%	53,6%

Բերված աղյուսակից երևում է, որ ագրոարդյունաբերության մեջ հիմնականում զբաղված են կանայք (կեսից ավելին), գյուղատնտեսական գործունեությունը հիմնականում օգտագործում է մեծ մասամբ կանանց աշխատանքը, քան տղամարդկանց. եթե ընդհանուր առմամբ տնտեսության մեջ զբաղվածների շրջանում տղամարդիկ գերակշռում են, ապա ագրոարդյունաբերությունում ընդհանուր

զբաղվածների շրջանում 56.2 % կանայք են և միայն 43.8% տղամարդիկ: Ավելի մեծ տարբերակում է նկատվում կնոջ ավելի ցածր որակավորում ունեցող աշխատանքը. գյուղատնտեսական աշխատողների շրջանում ընդհանուր միջնակարգ և ցածր կրթություն ունեցողների 57.1 %-ը կանայք են, իսկ 42.9 %-ը՝ տղամարդիկ: Իսկ ագրոարդյունաբերությունում ավելի բարձր որակավորում ունեցող աշխատակիցների շրջանում տղամարդիկ գերակշռում են (սակայն չեն հասնում կեսին) և կազմում են 46.6 %:

Այս վիճակագրությունը, որը բնորոշ է հետխորհրդային երկրներին, արտացոլում է մասնագիտական գենդերային սեգրեգացիան: Այսպես, Ռուսաստանի վիճակագրական տվյալները ավանդորեն տղամարդկանց զբաղվածության տեսակների մեջ առանձնացնում են որակավորված գյուղատնտեսության, ձկնաբուծության և անտառային տնտեսության աշխատակիցներին[74]: Միևնույն ժամանակ ագրոարդյունաբերության մեջ ցածր որակավորում ունեցող աշխատանքը իրականացվում է կանանց կողմից: Գենդերային սեգրեգացիան արտահայտվում է ճյուղային, մասնագիտական և պաշտոնական կառույցներում տղամարդկանց և կանանց անհամաչափ բաշխվածությամբ: Ընդ որում, հորիզոնական սեգրեգացիան արտահայտվում է տարատեսակ մասնագիտական խմբերում, մասնավորապես՝ արդյունաբերություններում մասնագիտական որակավորում չունեցող աշխատանքը՝ ի տարբերություն գյուղատնտեսության, որպես կանոն իրականացվում է տղամարդկանց կողմից, իսկ ուղղահայաց սեգրեգացիան արտահայտվում է միևնույն մասնագիտական կատեգորիայի շրջանակներում պաշտոնների և աշխատավարձերի տարբերության միջոցով:

[74] Рощин С. Равны ли женщины мужчинам? // Демоскоп: население и общество. – 2005. – №219-220. http://demoscope.ru/weekly/2005/0219/tema04.php

Այսպես, եկամուտների մակարդակի վիճակագրական տվյալները ցույց են տալիս դրամային եկամուտների ծավալների զգալի գենդերային սերեգացիան.

Աղյուսակ 3.18

Միջին ամսական աշխատավարձը՝ ըստ սեռի, %-ով ՀՀ-ում

	2007	2008	2009	2010	2011
Կանայք	78,3	77,8	80,3	77,9	78,6
Տղամարդիկ	130,4	133,6	132,0	121,5	121,5

Բերված տվյալներից երևում է, որ Հայաստանում տղամարդիկ հաստատուն կերպով վճարվում են մոտավորապես ½ անգամ ավելի շատ, քան կանայք, ինչը կարճ ժամանակով փոքր-ինչ փոխվել է միայն 2009 թվականի ճգնաժամային տարում՝ տղամարդկանց գործազրկության զգալի աճի հետ կապված: Այս սեգրեգացիան վերաբերում է նաև, ըստ տարիքի, զբաղվածությանը.

Աղյուսակ 3.19

Զբաղվածությունը՝ ըստ տարիքային խմբերի և կրթական մակարդակի, հզ. մարդ

	Ընդամենը, հզ. մարդ	Բարձրագույն, գիտական աստիճաններ	Միջին մասնագիտական, չավարտած բարձրագույն	Մասնագիտական	Ընդհանուր միջնակարգ	Բազային	Տարրական, ոչ լրիվ տարրական
Ընդամենը	1175.1	294.9	278.1	28.7	478.4	81.9	13.2
15-24	113.0	27.6	20.6	2.3	50.5	10.7	1.3
25-34	239.2	79.6	41.3	3.8	96.5	17.1	0.9
35-44	236.9	64.3	57.4	6.2	99.5	8.5	1.0
45-54	312.2	67.3	92.0	9.8	126.9	15.6	0.7
55-64	189.8	44.3	54.1	4.7	71.9	13.1	1.6
65-75	84.0	11.8	12.6	1.9	33.2	16.9	7.6

Տղամարդիկ	610.9	144.1	132.1	18.8	261.0	48.7	6.3
15-24	69.0	12.9	9.6	1.2	36.9	7.4	1.1
25-34	139.0	41.3	19.9	2.6	62.2	12.3	0.7
35-44	110.5	27.1	23.6	4.2	49.4	5.6	0.6
45-54	152.0	32.0	43.8	6.9	60.6	8.5	0.2
55-64	97.8	24.5	27.4	2.3	35.7	7.1	0.8
65-75	42.5	6.3	7.7	1.6	16.2	7.9	2.9
Կանայք	564.2	150.8	146.0	9.9	217.5	33.2	6.9
15-24	44.0	14.7	11.0	1.1	13.5	3.3	0.2
25-34	100.2	38.3	21.4	1.2	34.4	4.7	0.3
35-44	126.4	37.2	33.8	2.0	50.1	2.9	0.4
45-54	160.2	35.2	48.2	2.9	66.2	7.1	0.5
55-64	92.0	19.8	26.7	2.4	36.2	6.1	0.8
65-75	41.5	5.5	4.9	0.3	17.0	9.0	4.7
Քաղաքային	631.8	234.2	171.5	14.8	185.3	24.1	2.0
15-24	58.8	21.1	12.6	1.3	20.0	3.3	0.4
25-34	151.4	65.4	28.5	3.1	48.3	5.6	0.4
35-44	134.5	52.7	38.3	3.1	37.5	2.7	0.1
45-54	154.3	51.2	50.9	3.8	43.0	5.2	0.2
55-64	105.1	34.5	34.5	2.2	28.9	4.8	0.2
65-75	27.8	9.2	6.8	1.2	7.5	2.4	0.7
Գյուղական	543.3	60.7	106.6	13.9	293.2	57.8	11.2
15-24	54.2	6.5	8.0	1.0	30.5	7.4	0.9
25-34	87.9	14.1	12.9	0.7	48.2	11.4	0.6
35-44	102.4	11.6	19.1	3.1	61.9	5.8	0.9
45-54	157.9	16.0	41.1	6.0	83.9	10.4	0.5
55-64	84.6	9.8	19.7	2.4	43.0	8.4	1.4
65-75	56.3	2.6	5.8	0.7	25.7	14.5	6.9

Ինչպես երևում է աղյուսակից կանայք միջինում ավելի ուշ են սկսում աշխատել պաշտոնական զբաղվածության շրջանակներում, քան տղամարդիկ: Ընդ որում, 35-54 տարիքային խմբում կանայք ավելի շատ են (286600 մարդ), քան տղամարդիկ (262500 մարդ): Որոշ չափով դա կապված է միգրացիոն գործընթացի հետ, որոնցում նախ և առաջ ներգրավված են 35-55 տարիքային խմբի տղամարդիկ: Դա նաև վերաբերում է ճյուղային սեգրեգացիային, ընդհանուր սկզ-

բունքի հիման վրա. եթե ճյուղը, մասնագիտությունը կամ շրջանը, բարենպաստ տնտեսական հանգամանքներով պայմանավորված ձեռք է բերում բարձր եկամտաբերություն, ապա այնտեղ շարժվում են մեծ թվով տղամարդկանց ուժի հոսքեր: Կարելի է նշել, որ ընդհանուր առմամբ տղամարդկանց հոսքերի շարժը մեկ ճյուղից դեպի մյուսը պրակտիկորեն միշտ կապված է եկամտաբերության հետ. գործունեության «մասկուլին ձևերը» դառնում են ավելի եկամտաբեր, իսկ «ֆեմինին ձևերը»՝ ցածր եկամտաբեր: Ընդ որում, անգամ «իգական» գործունեության ձևերում տղամարդիկ որպես կանոն զբաղեցնում են ավելի բարձր պաշտոններ, ինչը ապահովում է ավելի բարձր տնտեսական դիրք: Մի կողմից գործատուները նախընտրում են նրանց, իսկ մյուս կողմից ավելի բարձր եկամտաբերությամբ ճյուղերը և մասնագիտությունները պահանջում են ավելի ծանր աշխատանքային ծանրաբեռնվածություն, որին կանայք ոչ միշտ են ընդունակ դիմանալ նրանց ընտանեկան պարտականությունների մեծ ծավալի պատճառով: Այս դեպքում գործում են դիրքերի և վարքերի կարծրատիպեր. Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը[75], ժամանակակից գործատուները ինչպես Հայաստանում, այնպես էլ Բելառուսում ու Ռուսաստանում, աշխատանքի վերցնելով տղամարդկանց ու կանանց, մտքում ունեն նրանց պարգևատրման տարբեր մակարդակներ: Կարելի է բերել հետևյալ դիպուկ արտահայտությունը. «Ես գիտեմ, որ Ն. (կին) ինձ մոտ կաշխատի 8 000 ռուբլիով, և լավ կաշխատի, սակայն ես չեմ կարող վճարել Ս-ին (տղամարդ) 16 000-ից քիչ»: Գյուղում համայնքային հարաբերությունները չեն ենթադրում նմանատիպ սեգրեգացիա, ըստ եկամտի, սակայն ներառում են տարանջատում, ըստ գործունեության ձևերի որպես անբաժանելի տարր:

[75] Бахшян А.Ж., Оганян К.М., Покровская Н.Н., Саакян А.К. Ценностные ориентации в трудовом поведении и кросс-культурное исследование трудовой миграции. Ереван: Изд. «Эдит Принт», 2012.

3.3 Ֆերմերային շարժումը ՀՀ-ում և Բելառուսում

Խոսելով տնտեսական գործառնման և ինքնուրույնության և ադապտացիոն ռազմավարությունների արդյունավետության մասին գյուղական տնային տնտեսությունների ու համայնքների մակարդակում՝ անհրաժեշտ է նշել գյուղական տնային տնտեսության կառավարման այնպիսի կարևոր տարր, ինչպիսին է ֆերեմերությունը՝ ընտանեկան կամ ընտանեկան-ազգակցական կապերի մակարդակում ագրոարդյունաբերության վարումը վարձու աշխատանքի կիրառմամբ:

Եվ Բելառուսում, և Հայաստանում ԽՍՀՄ փլուզումից հետո վերափոխումների առաջին տարիներին գործում էին շուկայական հարաբերությունների և տնտեսական ավտոնոմիայի «ստիպողաբար» օգտագործման մեխանիզմները: Սակայն երկու հանրապետություններում էլ այդ փորձերը առաջին շրջանում բերեցին բացասական հետևանքներ: Ինչպես արդեն նշվել է Բելառուսում այդ հետևանքները կառավարվում էին պետական կարգավորմամբ: 2011 թվականից Բելառուսում սկսվեց ապրանքների արտադրության ծավալի աճ[76], իսկ 2007 թվականին այն կազմում էր 99 %, ինչպես 1990-ին,վարձակալության մակարդակը հասել էր 5,2 %-ի, իսկ վնասակար կազմակերպությունների սահմանային կշիռը կրճավեց մինչև 1,3 %:

1999 թվականի հողի մասին կոդեքսը հանել է մի շարք սահմանափակումներ անհատական հողօգտագործման հարցերում: Տնամերձ հողատարածքների տերերը իրավունք ունեն վարձակալել մինչև երկու հա հողատարածք այն վարելու նպատակով: Արդյունքում սեփականատիրոջ հողերը կարող են հասնել մինչև 3 հա-ի:

Սակայն կան նաև այլ նոր սահմանափակումներ: Հատկապես կարևոր է այն, որ հստակեցվել են պատճառները, որոնց համաձայն

[76] Семенас С., Синицкий Д. Органическое сельское хозяйство в Беларуси. – Минск, 2009. – с. 11, http://agracultura.org/files/Organik_review.pdf

հողի սեփականատերը կարող է դադարեցնել իր գյուղատնտեսական իրավունքները դրա ոչ արդյունավետ կիրառման դեպքում:

Բացի այդ, տեղական կառավարման մարմինները նույնպես իրավունք են ստացել թելադրել իրենց պայմանները հողօգտագործողներին ցանքի համար նախատեսված տարածքների վերաբերյալ: Իշխանությունների այսպիսի գործողությունները բերել են հողի օգտագործման արդյունավետության նվազմանը, որը նախատեսված էր գյուղական և ֆերմերային տնեսությունների զարգացման համար: Եթե 1997 թ. հունվարի 1-ի դրությամբ Բելառուսի Հանրապետությունում գործում էր 29800 ֆերմերային տնտեսություն, ապա 1998 թ.՝ 2677, 1999 թ.՝ 2641, 2000 թ.՝ 2651, 2001 թ.՝ 2525[77].

Պետությունը չի ստեղծում է բավարար բարենպաստ պայմաններ ֆերմերային տնտեսության զարգացման համար: «Գյուղական ֆերմերային տնտեսության մասին» օրենքն ընդունվել է 1991 թ. փետրվարի 18-ին, իսկ նոր հրատարակությամբ՝ 2005 թ. հուլիսի 19-ին:

Ապագայում օրգանական օրենսդրության մշակման ժամանակ կարելի է դիտարկել ֆերմերներին հողատարածքների տրամադրրման միջոցառումների ընթացակարգի հեշտացումը էկոլոգիական տնտեսությունների համար օրենսդրական կարգավորման և արտոնությունների հարցերի հետ մեկտեղ:

2012 թ. փետրվարին Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց սուբսիդիաների վճարման մասին ֆերմերների համար դիզելային վառելիքի վճարների կոմպենսացիայի նպատակով: Ծրագրի նպատակն էր հասանելի դարձնել դիզելային վառելիքը բոլոր համայնքների ֆերմերների համար, ինչը իր հերթին կնպաստեր մշակվող հողերի տարածքների ավելացմանը, առավել ևս, որ դիզելային վառելիքը կազմում է գյուղատնտեսական ապրանքների ինք-

[77] Здесь и далее данные приводятся по обзору: Семенас С., Синицкий Д. Органическое сельское хозяйство в Беларуси. – Минск, 2009. – с. 11, http://agracultura.org/files/Organik_review.pdf

նարժեքի կարևորագույն մասը: Արդյունքում դիզելային վառելիքը ֆերմերի համար արժե 350՝ շուկայական 440 դրամի փոխարեն:

Հայաստանում հացահատիկի արտադրման ծավալը 2012 թ. հասնում էր 240 հզ. տոննայի՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ 7,4%: Գյուղատնտեսության նախարարության տվյալների համաձայն աշնանացանի համար երկիր էր ներմուծվել 640 տ հացահատիկի էլիտար սերմ, որոնք տրամադրվել են 166 տնտեսվարման սուբյեկտների: Գյուղացիները ստացել են նաև 2741 տոննա աշնանացանի առաջնային մշակման հացահատիկ[78]:

Այնուամենայնիվ, Ս. Սեդրակյանը տեսնում է մի շարք խնդիրներ, որոնք առկա են ոլորտում. բնական ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործում, մասնագիտական կադրերի բացակայություն և այլն: «Հայաստանն ուներ հսկայական ներուժ զարգացած ագրարային պետություն դառնալու առումով»,- նշել է նա: Սակայն ճիշտ ագրարային քաղաքականության բացակայությունը հնարավորություն չի տալիս ապահովել հանրապետության անվտանգությունը և գյուղերում զբաղվածությունը:

Որպես ոլորտի խնդիրների լուծում «Ֆերմերային շարժում» ՀԿ նախագահը տեսնում է կոոպերատիվների տեղծման ծրագրի իրականացման միջոցով, որոնք նախատեսված են Հայաստանի առանձին և աղքատ շրջանների ֆերմերների համար, ինչպես նաև պետության կողմից երաշխավորվող պետական վճարները շուկայականից բարձր գներով, ինչը լայնորեն կիրառվում է համաշխարհային պրակտիկայում: Հետաքրքիր է, որ գյուղական համայնքի ինքնուրույն տնտեսության զարգացումը դարձել է ՄԱԿ-ի ծրագրերի շրջանակներում ուսումնասիրվող առարկա:

[78] Араратян В. Две горстки семян и два стакана солярки // PanArmenian. 23 января 2013 г., http://www.panarmenian.net/rus/news/142477/

Այսպես, ՄԱԿ-ի համապատասխան ծրագիրը պետք է ներառի ինչպես կառավարական, այնպես էլ տեղեկատվական գործառույթներ.

Կառավարման հետ կապված գործունեությունը ներառում է հետևյալ խորհուրդները և գործառույթները.

1. Կառավարման մարմինները համապատասխան մակարդակում համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների աջակցությամբ պետք է իրականացնեն հետևյալ գործառույթները.
   - ազգային մակարդակում իրականացնել քաղաքականություն, որը հիմնվում է հողային ռեսուրսների կառավարման ապակենտրոնացման մոտեցման վրա՝ տրամադրելով լիազորություններ գյուղական կազմակերպություններին,
   - հիմնել և ամրապնդել գյուղական կազմակերպություններ, որոնք պատասխանատու են համայնքային և արոտավայրային հողերի ռացիոնալ օգտագործման համար,
   - ստեղծել և զարգացնել տեղական, ազգային և միջսեկտորային մեխանիզմներ հողագործության էկոլոգիական հետևանքների հետ կապված խնդիրների լուծման համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կանանց սեփականության, ինչպես նաև անասուն բուծող և քոչվոր խմբերի իրավունքների պաշտպանությանը, ովքեր բնակվում են գյուղական շրջաններում,
   - հիմնել և ամրապնդել գյուղական ասոցիացիաներ, որոնց հիմնական ուշադրությունը կենտրոնանում է տնտեսական գործունեության վրա, որը շահեկան է գյուղական համայնքի համար,
   - աջակցել գյուղական բնակչությանը կրեդիտների տրամադրման գործընթացներին բանկային համակարգերի կիրառման միջոցով,

- զարգացնել ենթակառուցվածքները և ներուժը տեղական արտադրության և սպառման համար տեղական բնակչության ներգրավման միջոցով,
- ստեղծել աշխատանքային ֆոնդ գյուղական ձեռներեցների և տեղական խմբերի համար:

Տվյալների հավաքում և մշակում, համայնքներում գյուղատնտեսության զարգացման համար աջակցության գործընթացների տրամադրում

2. Կառավարման մարմինները համապատասխան մակարդակում համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների աջակցությամբ պետք է իրականացնեն հետևյալ գործառույթները.
   - իրականացնել հիմնարար սոցիալ-տնտեսական հետազոտություններ հստակ ինֆորմացիա ստանալու նպատակով ծրագրի այն մասի վերաբերյալ, որը կապված է մասնավորապես ռեսուրսների առկայության և հողի տիրապետման հարցերին, հողային ռեսուրսների օգտագործման ավանդական պրակտիկաներին և արտադրական համակարգերի բնութագրիչներին,
   - իրականացնել բնական ռեսուրսների ինվենտարիզացիա, ինչպես նաև դրանց քայքայման աստիճանի ինվենտարիզացիա՝ հիմնվելով հիմնականում տեղաբնակների ինֆորմացիայի վրա,
   - տարածել տեխնիկական միջոցների փաթեթների մասին ինֆորմացիան, որոնք հարմարեցված են սոցիալ-տնտեսական և էկոլոգիական պայմաններին, որոնք բնորոշ են յուրաքանչյուր խմբին,
   - նպաստել ինֆորմացիայի տարածմանը այլընտրանքային միջոցների զարգացման ինֆորմացիայի միջոցով:

Միջազգային և տարածաշրջանային համագործակցություն և կոորդինացիա

3. Կառավարման մարմինները համապատասխան մակարդակում համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների աջակցությամբ պետք է իրականացնեն հետևյալ գործառույթները.
   - նպաստել համագործակցությանը և ինֆորմացիայի փոխանակմանը գիտահետազոտական հիմնարկությունների միջև, որոնք զբաղվում են երաշտային և կիսաերաշտային հողերի հիմնախնդիրներով,
   - կոորդինացնել և համաձայնեցնել միջազգային հասարակական և ոչ պետական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի և նախագծերի իրականացումը:

Հաշվի առնելով դժվարությունները և նեգատիվ միտումները, որոնք առկա էին հետխորհրդային երկրների գյուղատնտեսական ճյուղերում, կարելի է առաջարկել տնտեսությունների համագործակցության փորձը, որը կուտակվել է ամբողջ աշխարհում: Այդպես կարելի է մեծ ուշադրություն դարձնել իսրայելական կիբուցներին:

Կիբուցը գյուղատնտեսական համայնք է, որը հիմնվում է ունեցվածքի և արտադրության միջոցների կոլեկտիվ տիրապետման սկզբունքի վրա, ինչպես նաև աշխատանքում հավասարության, սոցիալական ծառայությունների և ապրանքների կիրառման վրա՝ հրաժարվելով վարձու աշխատանքից[79]: Առաջին կիբուցները ստեղծվել են իսրայելական ավանաբնակների կողմից 1909 թ.: Այդ ժամանակներից ի վեր դրանք սկսեցին ակտիվորեն զարգանալ՝ տարածվելով ամբողջ Իսրայլեի պետության տարածում:

Այսօր Հայաստանում նաձեռնվում են գյուղատնտեսության գործառնման կոոպերատիվ մոդելի զարգացման մեխանիզմներ: Այդ մոդելների առավել արդյունավետ զարգացման համար համայնքնե-

[79] Синицына Е. Трансформация общины // Лаборатория социальных инноваций, http://www.cloudwatcher.ru/analytics/6/view/60/

ռում մինչև կոոպերատիվենրի ստեղծումը իրականացվում էին հավաքներ, հանդիպումներ և քննարկումներ: Ֆերմերների մեծամասնությունը դրական էր գնահատում կոլեկտիվիզացիայի գաղափարի իրականացումը:

Բացի այդ գոյություն ունի ևս մեկ գործոն: Հողատարածքների և հոտերի միջև տարբերությունները առաջացնում են որոշակի դիֆերենցիացիա, բնականաբար նաև եկամուտներում: Խոչընդոտ է համարվում գյուղացու կողմից իր իսկ կատարված աշխատանքի և պոտենցիալ հնարավորությունների ոչ բավարար գնահատումը[80]:

Ճիշտ է ստիպված ենք ընդունել, որ Հայաստանում նշված համայնքների թիվը շատ չէ: Ինչպես արդեն նշվել է մեր հետազոտության շրջանակներում ռեսպոնդենտների 75,8 %-ն ունի բարեկամներ, ովքեր գտնվում են արտերկրում, որոնք այնտեղ մեկնել են աշխատելու կամ մշտական բնակություն հաստատելու նպատակներով:

Չնայած համաշխարհային և ազգային տնեսություններում տրանսֆորմացիաների և ճգնաժամային երևույթների առկայությանը, համայնքի ինստիտուտը հողի վրա ինքնուրույն աշխատանքը դեռևս զարգանում է[81]: Պատմական փորձը վկայում է, որ ավելի կենսաունակ են համարվում այն համայնքները, որոնցում ներդաշնակորեն հարաբերակցվում են անհատական և կոլեկտիվ շահերը:

Համայնքը, ինչպես ցանկացած այլ համախմբություն, կենդանի օրգանիզմ է, որը ծագում, զարգանում է տարերայնորեն, իր սեփական օրենքներով, պետության հետ գործընկերային հարաբերություններով:

---

[80] Как идет процесс коллективизации в Армении. Интервью руководителя Агентства по реализации сельскохозяйственных программ Гагика Хачатряна // Новости Армении, http://m.news.am/rus/news/143617.html

[81] Синицына Е. Трансформация общины // Лаборатория социальных инноваций, http://www.cloudwatcher.ru/analytics/6/view/60/

3.4 Աշխատանքային գործունեության դերը գյուղական համայնքի համերաշխության պահպանման գործում

Չնայած գյուղական համայնքի՝ որպես ընդլայնված ընտանիքի, բազմադարյան պատմության մեջ հայրիշխանական սոցիալական ձևի մասին տարածված պատկերացմանը, գյուղական համայնքի այս հայեցակարգը լրացուցիչ վերլուծական բացատրություն է ստացել պատմական ակնարկում, որը ներկայացվել է Բ. Չիչերինի կողմից: Նա մասնավորապես նկարագրում է համայնքային սոցիալական կազմակերպությունը որպես ավելի հին, դեպերսոնիֆիկացված հարաբերությունների նկատմամբ տոհմային հարաբերությունների գերիշխման վրա հիմնվող, մասնավոր սեփական ապաանհատականացված տիրապետում. «Հնագույն պետություններում, որտեղ քաղաքացիությունը զարգացած է եղել բարձր մակարդակով, տոհմային սեփականությունը երկար ժամանակ համարվել է քաղաքացիական կեցության գերիշխող ձև: Այդպես է եղել հրեաների մոտ, որոնց շրջանում տարեդարձային տարում հողի առանձնացված մասը վերադառնում է իրենց ցեղ: Այդպես եղել է պատրիցիանիստական Հռոմում, որտեղ հողը համարվում էր սուրբ կամ պետական դաշտ (ager sacer, ager publicus), ինչպես նաև պատրիցիանիստական ցեղերը տիրապետում էին յուրաքանչյուրն իր համար մեկ անգամ որոշված, անքակտելի ունեցվածքի: Նույնն էր նաև Հունաստանում, մասնավորապես, Սպարտայում: Ճիշտ է տիրապետման այդ ձևերը փոքր-ինչ տարբերվում էին գերմանական և սլավոնական ազգերի հողի վերաբաշխման ձևերից, սակայն դրանք ունեն ընդհանուր բնութագրիչ՝ մասնավոր սեփականության սահմանափակումը տոհմայինի օգտին: Սա ընդհանուր ելակետ է, որը դիտարկվում է բոլոր ազգերի շրջանում…սկիզբ, որը պատկանում է մարդկության հնագույն պատմությանը»[82]: Հայրիշխանական համայնքի զարգացման

[82] Чичерин Б.Н. Обзор исторического развития сельской общины в России // "Русский Вестник", No 1, 1856. http://az.lib.ru/c/chicherin_b_n/text_1856_obzor.shtml

պատմությունը աստիճանաբար տեղը զիջում է պայմանագրային, ինչը տեղի է ունենում նոր սոցիալական, տնտեսական և քաղաքական երևույթների ազդեցության տակ, ինչպիսիք են ավագանու միջամտությունը և կառավարումը սոցիալական կազմակերպությունում, որը հիմնվում է տոհմահամայնքային հարաբերությունների հակադարձ համարվող սկզբների վրա, որը կազմված է անծանոթ և միևնույն նպատակով միավորված, միություն կազմող մարդկանցից, որտեղ հարաբերությունները հիմնվում են յուրաքանչյուրի դրական կամքի վրա:

Դաշինքի հիման վրա ձևավորվող համայնքները կարող են կապված լինել զգալի աշխատանքի ծավալի էքստենսիվ բաշխման անհրաժեշտության հետ, որը չէր կարող իրականացվել մեկ ընտանիքի կողմից, օրինակ՝ անտառային կամ լեռնային բնությունից զավթել որոշակի հողատարածք, որը նպատակահարմար է գյուղատընտեսական արտադրության համար: Սա աշխատանքի բաժանման մեխանիկական օրինակ է՝ ըստ Է. Դյուրքհեյմի, որի դեպքում անհատներին կամ խմբերին ավելի ձեռնտու և հարմար է միասին իրականացնել աշխատանքի զգալի մասը: Սակայն չի բացառվում, որ հնարավոր չէ իրականացնել այդ աշխատանքը առանձին կամ խմբի մասնակցի կողմից: Այդպես մի քանի ընտանիքներ որոշում են կառուցել կամուրջ գետի վրա, քանի որ նման շինարարությունը մեկ ընտանիքի համար չափազանց երկարատև կարող էր լինել: Միևնույն ժամանակ Է. Դյուրքհեյմը տարբերակում է հասարակության օրգանական համերաշխությունը, որը հիմնվում է զանազան գործառույթների վրա, որոնք ունակ են իրականացնել սոցիալական համակարգի անդամները, օրինակ ճապոնական գյուղական համայնքները պաշտպանության համար ստիպված էին վարձել ռազմիկի՝ սամուրայի, ով տիրապետում էր զենքին և պատերազմական գործողություններին: Երկրորդ դեպքը ցուցադրում է պատճառներից մեկը, որով պայմանավորված գյուղական ամուսնությունը որպես կանոն բաժանման ելք ունենում է ավելի հազվադեպ, քան քաղա-

քում, քանի որ երկու մարդիկ ընտանիք են կազմում ոչ միայն փոխադարձ շահի և կապվածության հիման վրա, այլ նաև աշխատանքի բաժանման հիման վրա, որի դեպքում յուրաքանչյուրը կախված է մյուսից և վերջինիս կողմից իր գործառույթների իրականացումից:

Այս իմաստով, օրգանական համերաշխությունը ընկած է տոհմային համայնքի հիմքերում, որում ընտանիքի կամ ցեղի յուրաքանչյուր անդամ ունի իր ամրագրված աշխատանքային գործառույթները: Ընդ որում, անհատները կարող են փոխարինել միմյանց այդ գործառույթների իրականացման գործում, սակայն երկու գործառույթներն էլ ավելի հեշտ է բաժանել դրանց արական և իգական ձևերի մասին կարծրատիպերի համաձայն: Միևնույն ժամանակ գյուղական համայնքում գոյություն ունեն մեխանիկական համերաշխության ախտանիշներ, որոնք ըստ Է. Դյուրքհեյմի ներկայացման[83] հենվում են ընդհանուր կոլեկտիվ գիտակցականի վրա, որը հստակ բաշխում է ընդհանուր բարոյականությունը և արժեքանորմատիվային պահանջները որոշակիացնող դերերը: Այս տեսանկյունից համայնքի անդամների միջև հողը բաշխվում էր ըստ ընտանիքի աշխատանքային ռեսուրսների և այն մշակելու վերջինիս հնարավորությունների համաձայն, ինչը արտացոլում էր աշխատանքի մեխանիկական բաժանումը: Իր հերթին օրգանական համերաշխությունը արտահայվում է ընտանիքի կամ ցեղի ներսում՝ մասնավորապես արտացոլվելով գենդերային սեգրեգացիայի միջոցով:

Բացի դա, Հայաստանի գյուղական համայնքներում կարևոր դեր է խաղացել եկեղեցին՝ ցուցադրելով սոցիալական կառուցվածքի դիֆերենցիացիան, որն ընկած է օրգանական համերաշխության հիմքում, ինչպես գրում է Ս. Լուրյեն[84]. «Հայկական, ինչպես և ռուսական համայնքը, համեմատաբար թեթև է տարել սոցիալական և տնտեսական ճնշումը, սակայն նրանք հուսահատորեն պայքարում

[83] Дюркгейм Э. О разделении общественного труда. М.: Канон, 1996. – с. 46.
[84] Лурье С.В. Историческая этнология. – М.: Академический проект, 2004. – 624 с.

էին պետության դեմ իրենց տեղական առանձնահատկությունների, այն լիազորությունների համար, որոնք ժողովրդի կարծիքով մտնում էին «աշխարհի» հայեցակարգի մեջ, ինչը տեղի ունեցավ 1903 թվականին: Հուլիսի 12-ի օրենքի համաձայն ցարական կառավարությունը սեկուլյարիզացնում էր հայկական եկեղեցական ունեցվածքը, ինչի հետևանքով այդ ունեցվածքի եկամուտների հիման վրա պահպանվող դպրոցների և մշակութային հիմնարկությունների մեծամասնությունը փակվեց: Օրենքի հրապարակումից հետո բոլոր հայկական բնակավայրերում սկսեցին իրականացվել բազմաթիվ հավաքներ, որոնց ընթացքում ընդունվում էին որոշումներ չհամաձայնել օրենքի հետ և պայքարել դրա իրականացման դեմ անգամ եթե գործը հասնի կառավարության դեմ զինված բախումների»[85]: Այդպես Աշտարակում, երբ գյուղի ավագանուն կանչեցին քաղաքի ունեցվածքի բանալիներն ու փաստաթղթերը հանձնելու, վերջինս պատասխանի փոխարեն վզից հանեց շղթան, փոխանցեց տարածքային կառավարչին և հրաժարվեց պաշտոնից: Ախալցխայի թվով 10 000 գյուղացիներ ստորագրեցին բողոքը և գնացին կաթողիկոսի մոտ՝ ասելով. «Ավելի շուտ կմեռնենք, քան թույլ կտանք մեր իրավունքների շահագործումը»: Շարժման կազմակերպիչն այստեղ նախապես ձեռբակալվել էր, որից հետո 1903 թ. սեպտեմբերի 16-ին հանձնաժողովը սկսեց իրականացնել եկեղեցական ունեցվածքի առգրավումը: Գյուղացիներին օգնության եկան նույն շրջանի հարևան գյուղերի մոտ 100 բնակիչներ[86]: Այս պայքարը ըստ էության կարելի է անվանել ազգային-ազատագրական, սակայն այն ուներ գյուղական պատերազմի, պետության դեմ հողատերերի պայքարին բնորոշ գծեր: Դա արտահայտում է այն փաստը, որ հայկական գյուղական տարածքում ռուսական կառավարության արշավանքը դադարեց, գյու-

[85] Крестьянские движения в Армении. Составитель В. Ристуни. Ереван: изд-во АН Арм. ССР, 1948. – с. 13.

[86] Крестьянские движения в Армении. Составитель В. Рштуни. Ереван: изд-во АН Арм. ССР, 1948. – с. 124.

ղացիերին թողեցին հանգիստ, անմիջապես դադարեց առճակատումը, իսկ հայ հեղափոխականները մնացին անգործ[87]:

Այսպիսով, պատասխանելով այն հարցին, թե որքանով են հարցվողները վստահում սոցիալական հարաբերությունների այս կամ այն մասնակցին, ստացվել են հետևյալ պատասխանները.

Աղյուսակ 3.20

Պատասխանների բաշխումը՝ ըստ տարբեր սուբյեկտների նկատմամբ վստահության աստիճանի, %

	Լիովին վստահում եմ	Հիմնակա-նում վստա-հում եմ	Հիմնականում չեմ վստահում	Ընդհանրա-պես չեմ վստահում	Դժվ. պատ.
Ընտանիքի անդամներ, ազգականներ	95,1	4,0	0,2	0,5	0,2
Հայկական եկեղեցի	41,6	32	13,9	11,1	1,4
Ազգականներ	31,1	57,4	7,7	3,3	0,5
Ընկերներ	25,4	53,4	13,6	6,8	0,7
Հարևաններ	13,9	41,4	26,6	17,9	0,2
Ոստիկանություն	12,9	28,5	19,3	37,4	1,9
Տեղական ինքնակառավարման մարմիններ	11	28,7	22,1	37,6	0,5
Մտավորականներ	8,0	28,5	34,4	27,1	2,1
Համայնքային հեղինակություններ	6,6	26,1	28,9	36,0	2,4
Համագյուղացիներ	6,4	27,5	33,4	31,8	0,9
Սովորական ծանոթներ	1,4	20,5	38,8	39,1	0,2
Հարուստներ	1,2	10,8	21,4	64,9	1,6

[87] Лурье С.В. Историческая этнология. – М.: Академический проект, 2004. – 624 с.

Ռեսպոնդենտների վստահությունը վայելող սուբյեկտների շրջանում առաջին տեղը գրավում են ընտանիքն ու ազգականները, իսկ երկրորդ տեղում ռեսպոնդենտները դրել են հայկական եկեղեցին, որը հայկական բազմադարյա պատմության ընթացքում ծառայել է որպես հայ ազգի ամբողջականացման ուղեծիր և սոցիալական կյանքի կարգավորիչ: Այնուամենայնիվ, վստահության մակարդակի հարցումներում երկրորդ տեղը բավական հեռու է առաջին տեղից. 95.1 %-ը լիովին վստահում են իրենց ընտանիքի անդամներին և ազգականներին, իսկ զումարած նաև «հիմնականում վստահում եմ» պատասխանը՝ 99.1 %: Ինչ վերաբերում է հայկական եկեղեցուն, ապա դրա հանդեպ լաիրժեք վստահություն պատրաստ է ունենալ միայն 41.6 %, չնայած ընդհանուր առմամբ վստահում է հարցվողների ¾-ը (73.6 %):

Ավելին, տարատեսակ խմբերի կարծիքների և գնահատականների նշանակալիության մասին տրվել են պատասխաններ, որոնք նույնպես դեպի երկրորդ պլան են հեռացնում համայնքի դերը արդի հայաստանյան առօրյայում.

Աղյուսակ 3.21

Տարատեսակ խմբերի կարծիքների և գնահատականների նշանակալիության մասին պատասխանների բաշխումը, %

	Շատ կարևոր է	Կարևոր է	Կարևոր չէ	Դժվ. պատ.
Ընտանիքի անդամներ, ազգականներ	90,8	7,7	0,9	0,5
Ազգականներ	29,1	58,2	12,2	0,5
Ընկերներ	26,8	53,8	19,2	0,2
Արտասահմանում բնակվող ազգականներ	20,4	39,7	30,8	9,2
Հարևաններ	13,1	46	40,8	0
Համագյուղացիներ/ Համաքաղաքացիներ	7,0	39,7	53,3	0
Ծանոթներ	5,9	53,1	40,8	0,2
Անծանոթ մարդիկ	3,1	14,8	81,9	0,2

Անգամ արտասահմանում բնակվող ազգականները (չնայած հարցվողների ընտանիքների կենսագործունեության ֆինանսավորման գործում նրանց դերի) զբաղցնում են միայն 4-րդ տեղը: Հարցվողների 40. 8 %-ի համար հարևանների կարծիքը ընդհանրապես կարևոր չէ, իսկ համագյուղացիների կարծիքը կարևոր չէ հարցվողների 53.3. %-ի համար, ընդ որում, ավելի մեծ անտարբերություն են ծնում միայն անծանոթ մարդիկ:

Ազգային, էթնիկ, կրոնական, մշակութային ինքնության ինտերպրետացիան տալիս է մարդաբանությունը՝ հաստատելով յուրաքանչյուր մշակույթի յուրօրինակության սկզբունքը Բոասի, Մալինովսկու, Ռեդկլիֆ-Բրաունի հետազոտությունների համաձայն[88]: Մշակույթի բնութագրիչները արտահայտվում են որպես կառուցվածքից դուրս, դիֆուզային և ինստիտուցիոնալից դուրս կազմավորումներ: Լևի-Սթրոսը եկել է եզրակացության հոգեկան կառուցվածքի գոյության մասին, որը հնարավորություն է տալիս մարդկանց դասակարգել մշակույթի տարրերը և սոցիալական վարքը: Այստեղ ինքնությունը ընկալվում է որպես մշակույթ, որը արտացոլվում է անհատական վարքում և ուղղված է «համընդհանուրի» հետ ինտեգրացիային: Կոլեկտիվ գիտակցությունը, ըստ Է. Դյուրքհեյմի, անցնում է անհատական գիտակցությունների պրիզմայով, իսկ «կոլեկտիվ ենթագիտակցականը»՝ ըստ Կ. Յունգի զուտ անհատական է և անսահման բազմազան: Անգիտակցականը պայմանավորված է գբլխուղեղի կեղևի գործունեության առանձնահատկություններով և հանդես է գալիս օբյեկտիվ ելակետի դերում, որը կազմում է ցանկացած հասարակություն: Այս իմաստով ազգային և էթնիկ ինքնությունը միշտ հենվում է յուրահատուկ մշակույթի վրա: Մշակույթի բնութագրման հսկայական բազմազանության մեջ կարելի է առանձնաց-

[88] Рэдклифф-Браун А. Методы этнологии и социальной антропологии // Антропология исследования культуры. Т. 1: Интерпретация культуры. – СПб., 1997. – С. 604.

նել հետևյալ, այս նյութի համար օգտակար բնութագրիչները[89]: Մշակույթը՝

- Ամբողջական համակարգ է, հնարավոր չէ առանձնացնել կամ փոփոխել մշակույթի մասը՝ փոփոխության չենթարկելով ընդհանուրը:
- Առաջնային սոցիալականացման ընթացքում, բնորոշում է մարդու վարքը:
- Ծագել է մարդու էվոլյուցիայի ընթացքում շրջապատող միջավայրի պայմաններին առավել կատարյալ հարմարման նպատակով:
- Ներառում է ռեպրեզենտատիվ և նորմատիվ տարրեր[90]:

Ընդհանուր առմամբ մշակույթում առանձնացնում են նյութական (քաղաքակրթական) և ոչ նյութական (զուտ մշակութային) տարրեր: Չնայած այս տարբերակումը բավական պայմանական է, դրա մասին պետք է հիշատակել տվյալ նյութում, քանի որ ազգային և էթնիկ մշակույթը ընդունված է նկարագրել այն նյութական օբյեկտների և դրանց օգտագործման տեխնոլոգիաների տեսանկյունից, որոնք տիպիկ են դիտարկվող էթնոսի համար:

Այնուամենայնիվ, մենք դիտարկում ենք մշակույթի երկու ասպեկտները մեկ միասնական աղբյուրում, քանի որ մեր տեսանկյունից նյութական ասպեկտները մեծամասամբ հանդիսանում են մշակույթի ֆիզիկական իրականացումը որպես ներկայացուցչական համալիր և արժեքանորմատիվային մեխանիզմներ:

Մեր հետազոտության ընթացքում ռեսպոնդենտներից մենք ստացել ենք հետևյալ պատասխանները այն հարցին, թե որ բնութագրիչներն են կարևոր հայ լինելու համար.

---

[89] Более 500 определений этого понятия упомянуты в работе: Кертман П.И. История культуры стран Европы и Америки. – М.: Высшая школа, 1987.

[90] См. подробнее о репрезентативном, ценностном и нормативном аспектах культуры как регуляционной системы в работе: Покровская Н.Н. Трансформация нормативной регуляции экономического поведения. – Берлин: Lambert Academic Publishing, 2012.

Աղյուսակ 3.22

	Շատ կարևոր է	Հիմնա-կանում կարևոր է	Հիմնա-կանում կարևոր չէ	Կարևոր չէ	Դժվ. պատ.
Սիրել հայերին	77,8	13,9	4,2	3,8	0,2
Խոսել հայերեն	67,5	20,0	8,0	4,2	0,2
Ծնողներից գոնե մեկը պետք է լինի հայ	67,2	21,9	5,4	4,2	1,2
Ծնողները պետք լինեն հայ	61,1	24,8	11,1	2,8	0,2
Ունենալ հայկական ազգանուն	56,4	25,9	13,2	4,0	0,5
Հետևել ազգային ավանդույթներին	53,5	32,8	9,4	3,8	0,5
Լինել Հայկական եկեղեցու հետևորդ	40,8	33,5	13,0	12,0	0,7
Ծնվել Հայաստանում	30,0	20,6	19,1	30,0	0,2
Ապրել Հայաստանում	24,8	14,6	21,0	38,9	0,7

Հայ հասարակական իրականությունը պատմության ընթացքում հայերին սովորեցրել է, որ Հայաստանում ապրելը նշանակալի գործոնն չէ հայ լինելու համար:

Առաջին տեղերը զբաղեցնում են հայկական ինքնության այնպիսի պայմաններ, ինչպիսիք են հարգանքը և նվիրվածությունը սեփական ազգին (սիրել հայերին՝ 77,8 %, գումարային շատ կարևոր է և կարևոր է պատասխաններից՝ 91.8%), հայերենին տիրապետելը (շատ կարևոր է 67.5 %, գումարային՝ 87.5 %), ազգային ավանդույթներին հետևելը (կարևորության գումարային գնահատականով՝ 86,3 %): Ընդ որում, զուտ կենսաբանական կամ գենետիկ գործոնները զբաղեցնում են երրորդ և չորրորդ տեղերը՝ զիջելով ինքնության սոցիալ-մշակութային այնպիսի տարրերի, ինչպիսիք են ազգային լեզուն և հարգանքն ու սերը հայ ազգի նկատմամբ, չնայած գումարային ցուցանիշի համաձայն ծնողերից գոե մեկի հայ լինելը զբաղեցնում է երկրորդ տեղը (89.2%):

Երրորդ և չորրորդ տեղերում են պատմական իրադարձությունները, որոնց ակտուալությունը արտահայտվում է Հայաստանի առօրյա կյանքում այսօրվա տվյալներով, հավանաբար հայերի համար կծառայի որպես հպարտության և հայկական ինքնության գործիք հետագա մի շարք տարիների ընթացքում: Խոսքը գնում է հայ գրերի գյուտի (10% և գումարային 51.4%) և քրիստոնեության՝ որպես պետական կրոնի հռչակման (10%, գումարային՝ 51.2%) մասին:

Վերջապես, բավական հետաքրքիր է, որ հարցվողների համար հպարտության կարևոր առարկա է հանդիսանում «Ձեր գյուղի պատմական անցյալը»՝ 9.2% այս պատասխանը նշել են առաջին տեղում, իսկ գումարային՝ 47.1%: Սովետական Հայաստանի, Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը, Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակը պատասխանները հարցվողների համար ավելի քիչ նշանակալի են որպես հարցվողների անհատական հպարտության առարկա:

Համայնք հասկացությունը բավական հայտնի է արևմտյան սոցիոլոգիայում: Սոցիոլոգիական գիտություններում համայնք հասկացությունը ներմուծվել է Ֆ. Թյոնիսի կողմից, ով տարբերակում էր համայնքը (gemeinshaft) ըստ հարաբերությունների բնույթի և ժամանակակից հասարակության գործառնման էությունը, ասոցիացիաները (geselshaft)՝ հարաբերությունների պերսոնիֆիկացված բնույթը համայնքի ներսում և դրան բնորոշ «օրգանական» (Է. Դյուրքհեյմ) համերաշխություն, հարաբերությունների և կապերի փոխադարձ կապվածություն: Ֆ. Թյոնիսի համայնքը արտացոլում է ընտանեկան, էմոցիոնալ, անձնական իրերը՝ ի տարբերություն ժամանակակից հասարակությունում ֆունկցիոնալ փոխանակման:

Այսօր համայնք հասկացությունը կիրառվում է շատ լայն: Հիլարին առանձնացնում է այս հասկացության 94 մեկնաբանություն անգլալեզու գրականությունում, որտեղ միասնական հանդիսանում

է հանրության միավորող գործառույթը[91]: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել համայնքի հետևյալ բնութագրերը[92].

- Համայնքը միավորում է մարդկանց, որոնք բնակվում են որոշակի աշխարհագրական տարածքում:
- Համայնքի անդամները միավորված են որոշակի մշակույթով, արժեքներով, էթնիկ կամ ռասայական ցուցիչներով, որոնք թույլ են տալիս տարբերել «օտարներին» և «յուրայիններին»:
- Համայնքը ենթադրում է մարդկանց միջև հաստատուն սոցիալական փոխադարձություն:

Համայնքը արդյունավետ է այն խնդիրների լուծման համար, որոնք պահանջում են շրջապատող միջայրի նկատմամբ հարմարման, գոյության և զարգացման կոլեկտիվ մեխանիզմներ. Մասնավորապես համայնքը հենվում է բնակիչների կոլեկտիվ պատասխանատվության և փոխադարձ աջակցության, պաշտպանության և աջակցության վրա:

Հայաստանում գյուղական համայնքը իրականացնում է բազմաթիվ սոցիալական գործառույթներ, որոնցից այս նյութի համար կարելի է առանձնացնել հետևյալը.

- Սոցիալականացում – անհատի սոցիալական որակների ձևավորում և դաստիարակում որպես հասարակության անդամ, հայրենասեր և քաղաքացի:
- Միջավայրի տեղական առանձնահատկությունների արդյունավետ կիրառման զարգացում:
- Հասարակության ընդհանուր առմամբ շրջապատող միջավայրի բնական և տեխնածին միջավայրի նկատմամբ հարմարվողական հնարավորությունների տարածում:

---

[91] См.: Almgren G. Community // Encyclopedia of Sociology. New York, 2000. – P. 363.

[92] Crow G. A. Community life. An introduction to local social relations. London:Harvester Wheatsheat. 1994. См. также: H. Gans. People? Plans and policies. New York: Columbia University Press and Russel Sage Foundation. 1991.

- Էթնիկ և մշակութային ժառանգության յուրահատուկ զոնայի ստեղծում, որը գրավիչ է բնակիչների և զբոսաշրջիկների, այդ թվում սփյուռքի համար:

Հայկական գյուղական համայնքը կրում է տիպիկ արևելյան գծեր: Այն չի եղել միայն հողային ու տնտեսական, այլ նախ և առաջ հանդիսացել է գյուղական աշխարհի իր տարատեսակ գործառույթներով, այսինքն, ըստ էության եղել է մինի-հանրապետություն: Հողի տիրապետման հիմքը գյուղացուն տրվում էր կատարված աշխատանքի հիման վրա: Համայնքը որոշում էր գյուղատնտեսական աշխատանքների ժամանակը:

Հայկական համայնքի զարգացման միտումները, ընդհուպ մինչև XX դարի սկիզբը, ուղղված էր դրանում հավասարեցնող ելակետի ամրապնդմանն ու ուժեղացմանը, միչդեռ արաբական, պարսկական, թուրքական և քրդական գյուղական համայնքներում նկատվում էր մասնավոր սեփականության անցումը դեպի հողատարածքները: Եթե ռուսական գյուղում սոցիալական կառուցվածքը հենվում էր երկու աստիճանների՝ ընտանիքի ու համայնքի վրա, իսկ համայնքի հեղինակությունը ավելի ուժեղ էր ընտանիքի հեղինակությունից, ապա հայերի մոտ ընտանիքի հեղինակությունը ավելի նշանակալի էր և՛ ընտանիքի, և՛ համայնքի միջև կանգնած էր ազգակցական-արյունակցական խումբը (ազգը), ինչպես օրինակ Մերձավոր և Միջին Արևելքի ազգերի մոտ:

Բացի այդ հայկական համայնքները գրեթե տեղյակ չէին հողի վարման համայնքային աստիճանի մասին, որը կարող էր հանդես գալ ինստիտուցիոնալացված ձևով: Սակայն Հայաստանում համայնքն իրականացնում էր գործառույթներ, որոնք նման էին պետականին. «աշխարհիկ» ոգին միաձուլվում էր ազգային էտատիզմին:

Հայկական համայնքային ինքնակառավարումը փաստացի իրականացնում էր ազգային էտատիզմը՝ տարերայնորեն լրացնելով կառուցվածքի կորսված տարրերը, որոնք զբաղեցնում են արժեքային սանդղակի առաջնային տեղերը: Հայաստանի պատմության

ընթացքում դա վերաբերում էր հայկական գրագրությանը, գրքային մշակույթին, կրթությանը, հայկական եկեղեցուն: Հայկական գյուղական համայնքը «օտար լծերի դեմ պայքարում» խաղում էր «էթնոքաղաքական կազմակերպության հիմնական տեղական ձևի» դեր: Ներհամայնքային կապերի կառուցվածքը ևս հարմարեցված էր նրան, որպեսզի չեզոքացներ արտաքին միջավայրի ագրեսիվության հետևանքները:

Անգամ հասարակության մոդեռնիզացիան կյանքի ոճի ուրբանիզացման և տնտեսության ինդուստրիալիզացիայի հետ մեկտեղ չի կարողացել ոչնչացնել գյուղական համայնքի ավանդական գիտակցությունը, ինչպես դա տեղի ունեցավ պրակտիկորեն բոլոր ազգ-պետություններում: Սովետական շրջանում կոլեկտիվ բրիգադները կազմվում էին ընտանեկան համայնքին բնորոշ ազգակցական կապերի սկզբունքով (պատկանելիությունը ազգին): Այսպես, Լեռնային Ղարաբաղում բոլոր կոլտնտեսությունների չափերը համապատասխանում էին մի ամբողջ գյուղական համայնքի չափերին: Համայնքային կառուցվածքի փլուզումը սկսվեց 1950-ականներին՝ տնտեսությունների ամրապնդման շրջանում, սակայն համայնքային ոգու մի շարք գծեր պահպանվում են միչ օրս, հատկապես Հայաստանի լեռնային շրջաններում:

Այսօր Հայաստանի գյուղական համայնքը պահպանում է հայ քաղաքացու և հայկական ազգային ինքնության ձևավորման իր գործառույթը, սակայն էական դժվարություն են իրենցից ներկայացնում տնտեսական հիմնախնդիրները:

ԳԼՈՒԽ 4
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

4.1 Գյուղական տնային տնտեսությունը որպես ինքնապահովման և ձեռներեցության ինստիտուտ

Տնային տնտեսությունը (ՏՏ) իրենից ներկայացնում է մարդկանց խումբ, որոնք միավորված են ընդհանուր հիմնախնդիրներով, բնակության վայրով, բյուջեով և սովորաբար ընտանեկան և ազգակցական կապերով: ՏՏ հիմքում ընկած են ռեսուրսների բաշխման ընդհանուր տնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության հարաբերություններ ու իրավունքներ: ՏՏ նպատակն է իր անդամների համար բարեկեցության երաշխավորված մակարդակի ապահովումը անկանխատեսելի իրավիճակների առաջացումից անկախ: Պլատոնի, Արիստոտելի, Քսենոֆոնի աշխատություններում տնային տնտեսությունները բնութագրվում են որպես տնտեսության առանձին տարր, բնութագրվում է դրա տեղը և դերը տնտեսության շրջանառության մեջ: Պատմական դպրոցի շրջանակներում (Կ. Բրյուխեր) ընտանեկան տնտեսությունը առանձնացվում է որպես տնտեսական համակարգի ինստիտուցիոնալ հիմքերից մեկը:

Շուլցի և Բեկկերի (1992 թ. պարգևատրվել է Նոբելյան մրցանակով իր մշակման համար) կողմից առաջարկված մարդկային կապիտալի հայեցակարգում ՏՏ հիմնական գործառույթը կարելի է համարել արտադրությունը, մարդկային կապիտալի իրականացումն ու պահպանումը, որը իր հերթին ընկալվում է որպես մարդու գիտելիքի, պրակտիկ հմտությունների և աշխատանքային ջանքերի ամբողջություն, որն ունակ է եկամուտ բերել իր ամբողջ կյանքի ընթացքում կամ առնվազն կյանքի զգալի ժամանակահատվածում՝ ներառելով

անաշխատունակության ժամանակաշրջանը: Քեյնսը SS-ներին վերագրում էր «կենսուրախության» սկզբունքը, որը բնութագրում էր SS-ն որպես սուբյեկտ, որը գործում է այս կամ այն կերպ «ինքնաբուխ լավատեսության», «գործելու բնական ցանկության» հիման վրա:

SS-ները թույլ են տալիս խնայել զգալի ռեսուրսներ որոշումների կայացման, սովորույթների ու ծեսերի մշակման (նպատակահարմարության ընկալումից և հաշվարկից դուրս ձեռքբերվող և վերարտադրվող պատրաստի կրկնվող շաբլոնների համաձայն գործելու պրակտիկայի) գործընթացների և մեխանիզմների տեսակյուններից:

Սովորական գործողությունը, նախկինում գործող կարգի վերարտադրումը, ընդունելի նորմերի շրջանակներում գործունեությունը SS-ը բնութագրում է որպես տնտեսության տարր (որը տնտեսագետների կողմից ուսումնասիրվում էր պրոցեսոր մոտեցման շրջանակներում): Որպես պրոցեսոր (կամ «սև արկղ») SS-ը ուսումնասիրվում էր միայն միջավայրի հետ փոխազդեցության տեսանկյունից, իսկ հաղորդակցման և որոշումների կայացման ներքին գործընթացները չէին դառնում տնտեսական գիտության ուսումնասիրության առարկա: SS-ների կողմից ռացիոնալ սպառողական ընտրության իրականացումը դիտարկվում էր որպես տրված պայման, որը վերաբերում է օգտակարության մաքսիմալացմանը կամ որևէ այլ նպատակային գործառույթին: Ընդ որում, այդպիսի ռացիոնալ ընտրության սկզբունքները դիտարկվում էին միայն մասնակիորեն (Քեյնսի կենսուրախության սկզբունքը, միջին կարծիքի որոշման սկզբունքը և այլն):

Իրենց էությամբ SS-երը լիովին դուրս էին գալիս տնտեսական գիտության վերլուծությունից, նախ և առաջ վերջինիս դասական դպրոցի վերլուծությունից, քանի որ այն ամբողջովին տարաձայնության մեջ էր գտնվում տնտեսական մարդու մոդելի գործողության սկզբունքների հետ. ռացիոնալ գործող մարդ նախընտրությունների անձնական հիերարխիայով, լավ տեղեկացված և շուկայական ին-

ֆորմացիայի առկա ծավալը մշակել կարողացող իր շահի մասին էգոիստաբար մտածող: Տվյալ մոդելը համեմատաբար ադեկվատ է ՏՏ՝ որպես արտադրական պրոցեսորի գործողության նկարագրության համար, այդ պատճառով փաստը, որ ՏՏ-ների ներսում անհատները իրենց դրսևորում են մոդելին ուղիղ հակադարձ ձևով, հաշվի չէ առնվում դասական և ոչ դասական տնտեսության դպրոցների կողմից:

Միևնույն ժամանակ սոցիալ-տնտեսական գիտությունների ինստիտուցիոնալ ուղղություններում մշակվել է «բարիքների փոխանակման» և փոխադարձության հայեցակարգը, այսինքն՝ փոխանակումը փոխադարձ ծառայություններով, որոնք տրամադրվում են դերերի բաշխման շրջանակներում պարտքի մասին պակերացումների հիման վրա, որը ծգում է մասնակիցների կամքից անկախ (երեխաների բարոյական պարտքը ծնողների նկատմամբ) կամ այդպիսի կամքի իրականացման միջոցով («լինել միասին դժբախտության և երջանկության պահին» և այլն):

ՏՏ-ների գործառնման խորը վերլուծություն տալիս է Կ. Պոլանյին: Նա հենվում էր մարդաբանների հետազոտությունների վրա, որոնք վստահորեն ցուցադրում են այն հասարակությունների հնարավարությունները և հաստատունությունը, որոնցում սոցիալական նորմերը չեն ձևավորվում անհատի տնտեսական էգոիզմից, այլ հետ են պահում դրանից: Շուկայական տրամաբանության գերիշխումը սոցիալական նորմերի նկատմամբ ծագել է վերջերս: Մինչկապիտալիստական ժամանակաշրջանում շուկայական հարաբերությունները «կառուցվում էին» թույլատրելիի սոցիալական կառուցվածքում: «Սովորույթի ու օրենքի, մոգության ու կրոնի համատեղ գործունեությունը անհատին ստիպում էր հետևել այն վարքային կանոններին, որոնք ի վերջո նրան թույլ էին տալիս իր տեղը ձեռք բերել տնտեսական համակարգում»: Հարյուրամյակների ընթացքում բացակայում էին մեխանիզմներ, որոնք անհատի տնտեսական բարեկեցությունը վերփոխում էին որպես նրա վարքի սոցիալական ըն-

դունում: «Չնայած շուկայի ինստիտուտը լայն տարածում ուներ հին քարե դարից ի վեր, սակայն նրա գործառույթը տնտեսական կյանքում մնում էր երկրորդային կարգավիճակում»[93]: Միայն XIX դ. սոցիալական նորմերը սկսեցին դուրս մղվել տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից, իսկ մարդու սոցիալական կարգավիճակը սկսեց կախված լինել նրա կապիտալից: «Շուկայի անվնաս ինստիտուտը սկսվեց սոցիոլոգիական պայթյունով… Եթե առաջ տնտեսական համակարգը արմատավորված էր սոցիալական հարաբերություններում, ապա այժմ սոցիալական հարաբերությունները դարձան արմատավորված տնտեսական համակարգում»[94]:

Շուկայական մեխանիզմների ենթարկվող դերի ժամանակաշրջանում գերակշռում էին տնտեսվարման այլ սկզբունքներ՝ փոխադարձություն, վերաբաշխում և SS: SS էությունը կայանում է արտադրության սպառման համար՝ ի տարբերություն շահույթի դիմաց արտադրության: Այսինքն՝ SS սկզբունքը կայանում է փակ խմբի պահանջմունքների բավարարման համար արտադրության մեջ (ընտանիքներ, ավաններ կամ ֆեոդալ հողատարածքներ): Վերաբաշխումը հիմնվում է միասնական կենտրոնում ռեսուրսների կենտրոնացման վրա դրանց հետագա վերաբաշխմամբ, որն իրականացվում է տվյալ հասարակության կողմից ընդունված չափանիշների համաձայն: Փոխադարձությունը (ռեցիպրոկայնությունը) ենթադրում է մթերքների և իրերի փոխանցումը որպես նվեր (ենթարկվելով ընդունված կարգին), ինչի արդյունքում սոցիալական նորմերով կարգավորվող բարիքների փոխանակումը դառնում է համախմբության հիմնական բաշխիչ մեխանիզմը: Պոլանյին նշում է, որ այդ սոցիալ-տնտեսական սկզբունքները բնորոշ են ոչ միայն պարզ տնտեսվարման ընթացակարգերին կամ փոքր խմբերին, այլ նաև փոխադարձ տրա-

[93] Տե՛ս Polanyi K. La Grande Transformation. Aux origins politiques et economiques des notre temps. – Paris: Gallimard, 1983.

[94] Նույն տեղում:

մադրվածությամբ բարդ սոցիալական տարածքային համակարգեր ունեցող բարդ սոցիալական օրգանիզմներով բազմաթիվ համայնքների և ՏՏ-ների դարավոր գործառնմանը: Այսպես, Հայաստանում կոոպերացիաների զարգացման պայմաններում իրականացվում է տարածքի օգտագործման բարդ մոդել. «Հեռավոր և մերձակա արոտավայրերը գործառնական ամուր կապի մեջ են և կազմում են միասնական համակարգ: Սակայն դրանց օգտագործման ինտենսիվության տարբերությունները հենց բերել են գյուղացիներին մոտիկ արոտավայրերի դեգրադացիային և հողի էրոզիային: Հեռավոր արոտավայրերի ենթակառուցվածքի զարգացմամբ հավասարեցվում է հեռավոր և մերձակա արոտավայրերի ծանրաբեռնվածությունը: Այլ կերպ ասած՝ հոտի ինտենսիվ արածումը հաջորդաբար տեղափոխվում է դեպի հեռավոր արոտավայրեր, ինչը իր հերթին ապահովում է վերջիններիս բարձր արտադրողականությունը: Ինչպես արդեն նշվել է, ծրագրի իրականացման ընթացքում մոտավորապես 46 000 հա տարածք ապահովվել է ջրով հոտեր համար: Դրանով իսկ լուծվում է մեկ այլ կարևոր խնդիր արդեն էկոլոգիայի ուղղությամբ. Ֆլորայի բազմազանության ապահովումը, դեգրադացիայի կանխարգելումը և հողի հետագա էրոզիան»: Այդպիսով համայնքային կյանքի կազմակերպումը և փոխհարաբերությունների բարդ մոդելը, որոնք կառուցված են ոչ ֆորմալ փոխադարձ պարտականությունների վրա, ստեղծում է Հայաստանում գյուղական համայնքների և ՏՏ-ների ժամանակակից զարգացման հիմքեր:

Մեր հետազոտության շրջանակներում ռեսպոնդենտների կողմից տրվել են հետևյալ պատասխանները արժեքային նախընտրությունների մասին հարցին, թե ինչն է նրանց համար իսկապես կարևոր.

Աղյուսակ 4.1

Ժամանակակից հայերի արժեքային կողմնորոշումները

	Շատ կորևոր է	Կարևոր է	Կարևոր չէ	Դժվ. պատ.
Ընտանիք	97,9	2,1	0	0
Առողջություն	92,5	6,6	0,5	0,5
Աշխատասիրություն	79,6	18,8	1,1	0,5
Արդարություն	78,9	19,7	0,9	0,5
Կրթվածություն	74,2	24,4	0,7	0,7
Նյութաֆինանսական հաջողություն, բարեկեցություն	69,5	28,9	1,4	0,2
Մարդու իրավունքներ	66,7	29,4	3,5	0,4
Ազատություն	66,4	30,8	2,8	0
Ազգականներ	64,8	34,3	0,9	0
Պարտականությունների կատարում	64,8	33,6	1,2	0,5
Կնոջ ազատություն	62,9	27,0	9,9	0,2
Օրինավորություն	58,5	37,1	3,3	1,2
Եկեղեցի/կրոն/հավատք	57,5	33,1	8,5	0,9
Ընկերներ	54,7	43,0	2,3	0
Ազգային ավանդույթների պահպանում	49,5	43,5	6,1	0,5
Հանդուրժողականություն	47,4	46,0	5,6	0,9
Հարևանություն	39,2	45,3	15,3	0,2
Համայնք	38,0	46,5	14,8	0,7
Ընբոստություն	18,5	46,7	33,6	1,2

Ինչպես երևում է իրականացված հետզոտության արդյունքներից, այսօր Հայաստանի բնակիչների համար առաջին տեղում գտնվում է ընտանիքը: Համայնքը՝ որպես այդպիսին, զբաղեցնում է նախավերջին տեղը: Եթե դիտարկենք զումարային մեծությունները «շատ կարևոր է» և «կարևոր է» պատասխանների դեպքում, ապա համայնքը գտնվում է ցուցակի վերջից երրորդ տեղում:

Տրանսֆորմացիոն տնտեսությունում ՏՏ-ների յուարահատկությունը կայանում է նրանում, որ անգամ սպառման «դեմոնստրատիվ» և «ընտրողական» մոդելների շրջանակներում դրանց որոշակի

մասի համար գոյության ամենասովորական ձևը դեռևս սպառման ոչ շուկայական միջոցներ են (հակվածությունը պատերնալիզմին, ինֆորմացիոն ասիմետրիան և այլն):

Որպես տնտեսվարող սուբյեկտ ՏՏ-ները գործառնում են աշխատանքի, սպառողական բարիքների և ֆինանսական շուկաների և տնտեսության ոլորտներում: Դրանց տնտեսական վարքը և գործառույթները նպաստում են արտադրական և տնտեսական պոտենցիալի ձևավորմանը, որոշում են տնտեսական աճի տեմպերը, ազդում են անցկացվող տնտեսական և սոցիալական ռեֆորմենրի արդյունքների վրա: Միևնույն ժամանակ ՏՏ-ների վարքի մոդելներին բնութագրական են դինամիզմը, տարատեսակ սոցիալ-տնտեսական գործոնների փոփխությունների ազդեցության տակ ընկնելը, ներառյալ ճգնաժամային երևույթները, ինչի հետ կապված տրանսֆորմացիոն տնտեսությունում նորովի են բնորոշվում դրանց՝ որպես տընտեսական սուբյեկտների բնույթն ու գործառույթները:

Բացի աշխատավարձից նշանակալիության տեսանկյունից երկրորդ տեղն են զբաղեցնում ձեռներեցության գործունեության եկամուտները (տնամերձ արտադրությունը, այգեգործությունը և բանջարաբուծությունը և այլն), ընդ որում, այդ եկամուտները հաճախ ունենում են բնական, այլ ոչ փողային տեսք: Օրինակ՝ ջրագծերի վերանորգման համար կարելի է շնորհակալություն հայտնել մուրաբայով կամ չամիչով: Ինչպես արդեն նշվել է գյուղական ՏՏ-ներում անգամ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական վիճակագրական տվյալները ֆիքսում են մոտավորապես 10 % դրամային ռեսուրսներ, որոնք ծագում են բնական տեսքով սեփական արտադրության, հողագործական և այլ աշխատանքների, ծառայությունների և ապրանքների փոխանակման արդյունքում:

Ձեռներեցությունը անհատական աշխատանքային պրակտիկայում ներկա պահին չափանց բազմազան է և բնակչությունը տրամադրում է պրակտիկորեն կենցաղային և մշակութային բնույթի բոլոր տիպի ծառայությունները՝ բնակարանների շինարարություն ու

վերանորոգում, շների ու կատուների վաճառք, բժշկական ծառայություններ և այլն:

Հասարակական արտադրության ընդհանուր անկման արդյունքում զարգանում է բնական և կենսաբանական տնտեսությունը: Ընտանեկան կոլեկտիվները գոյության համար ապրանքներ են արտադրում սեփական և տնամերձ հողատարածքներում, զբաղվում են անհատական աշխատանքային գործունեությամբ և ձեռներեցությամբ, մատուցում են վճարովի ծառայություններ:

ՏՏ-ի՝ որպես տրանսֆորմացիոն տնտեսության ինստիտուտի և սուբյեկտի սոցիալ-տնտեսական բնութագրիչների, յուրահատկությունը կայանում է նրանում, որ վերջինիս գործունեությունը կարող է համապատասխանել ինչպես տնային, այնպես էլ շուկայական տնտեսության ախտանիշներին: Իրավական նորմերին ենթարկվելը արտահայտվում է միաժամանակ ոչ ֆորմալ գործունեությամբ, սակայն բացառում է ֆորմալ և բարոյական վարքաձևերի հանդեպ ուղղվածությունը: Ռեսուրսների «պայուսակը», որը թույլ է տալիս խուսափել բարեկեցության և դրամական եկամուտների չափերի միջև կոպիտ կախվածությունից, այնուամենայնիվ նախապայմանավորում է գոյատևման վերարտադրողական մոդելը և միևնույն ժամանակ որպես շուկայական բնութագրվող բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների խմբերի վարքային մոդել:

ՏՏ-ի մնացած մասը իր գոյությամբ և տնտեսվար գործունեությամբ ցույց է տալիս, որ իրենց ռեսուրսները պահանջված չեն առօրյա և պրակտիկորեն վաստակվող պոտենցիալի տեսքով, ինչն անհրաժեշտ է ռուսական տնտեսական համակարգում հետագա տրանսֆորմացիայի համար: Այդ ռեսուրսների շարքում են.

- ՏՏ-ի բավական բարձր մասնագիտական որակավորված կարգավիճակը,
- աշխատուժի հարմարման ռազմավարությունները շուկայում, որոնք պայմանավորվում են վարքի մի քանի ձևերի առկայությամբ և դրանց համադրությամբ,

- ՏՏ-ի ուղղվածությունը դեպի ինքնազբաղվածություն և գործատուի հետ գործընկերային հարաբերությունները,
- մասնավոր ձեռքերում գտնվող հողը, կոլեկտիվ կամ ասոցիացված սեփականությունը սեփականատիրոջ համար արտադրության միջոցների ձևավորման համար,
- ուղղվածությունը դեպի պահանջմունքների որակական և քանակական աճը, սպառման ներդրումային բնութագիրը, որը արտահայտվում է տնային տնտեսությունների կազմակերպած սպառման ձևերում,
- շուկային համապատասխան նորմերի և կանոնների ձևավորումը որպես վստահության գրավական,
- զանգվածային շարժերի համար մոբիլիացիա և այլն:

Սա ապացուցում է տնային տնտեսության ձևավորման և գործառնման հնարավորությունը և անհրաժեշտությունը՝ որպես ինստիտուցիոնալ կազմավորումների հիմնական սուբյեկտ տրասֆորմացիոն հասարակություններում:

Լիբերալիզմի լոզունգը վերաձևակերպելով («հարուստ երկիրը հարուստների երկիրն է»)՝ կարելի է ցույց տալ, որ «բարեկեցիկ ազգային հասարակությունը բարեկեցիկ ընտանիքների և համայնքների հասարակությունն է»: Հայաստանի շրջանների զարգացման հայեցակարգում շեշտը դրվում է տեղական զարգացման համամասնության վրա: Գյուղական համայնքի տնտեսական գործառույթը նախ և առաջ ուղղված է սոցիալ-տնտեսական զարգացման տեղական գործոնների իրականացման, յուրահատուկ միջավայրին հարմարեցված առօրյա տեխնոլոգիաների կիրառման վրա: Համայնքը իրենից ներկայացնում է կենսապահովման միասնական տեղային ինտեգրացված համակարգ, որը ունակ է ինքնուրույն և արդյունավետ լուծել սոցիալական հիմնախնդիրները:

Հայաստանի համայնքների 83 %-ը մեծ մասամբ փոքր գյուղական համայնքներ են, որոնք ունեն մոտավորապես 1000 մարդ բնակչություն՝ բացառությամբ մի շարք խոշոր գյուղական համայնքները,

47 քաղաքային համայնքները, Երևանի 12 համայնքները: Վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանի կողմից անկախության ձեռքբերումը թույլ տվեց իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների ռեֆորմացիա:

Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ այսօր համայնքները ավելի շատ են ենթարկվում այնպիսի սոցիալ-տնտեսական ռիսկերին, ինչպիսիք են գործազրկությունը, եկամտի կորուստը, կրթության հասանելիության սահմանափակումները և այլն: Հարցվողների մեծամասնության կարծիքով (57%) IPSC գնահատումների համաձայն գործադիր իշխանությունները պետք է նախ և առաջ զբաղվեն աշխատատեղերի ստեղծմամբ, որից հետո՝ մարզերում գյուղատնտեսական հարցերի և ճանապարհների ու բակերի խնդիրների լուծմամբ (19%):

Հայաստանում կան լավ պայմաններ կլաստերների զարգացման և միջհամայնքային միությունների ստեղծման համար. «Համայնքի կառավարման մարմինները պետք է մշակեն ընդհանուր խնդիրենրը, իսկ ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը պատրաստ է աջակցել նշված խնդիրների լուծման գործում, առավել ևս, որ ՄԱԿ-ը ստեղծում է աշխատանքի հիմքեր, իսկ կառավարությունը հայտնում է համագործակցելու իր պատրաստակամությունը»[95]:

Սոցիալ-հոգեբանական հետազոտությունը ցույց է տալիս, որ հայրենասիրությունը արտացոլվում է ոչ թե պետության նկատմամբ սիրո դրսևորմամբ, այլ ընտանիքի, ցեղի, ծնված և մեծացած վայրի նկատմամբ նվիվածությամբ:

Այսպես, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը բնութագրվում է որպես «պետության, հասարակության և անհատի, հայկական ինքնության պահպանման պետական քաղաքականության ստաբիլ զարգացման և անվտանգության ապահովման համա-

[95] Տե՛ս http://analitika.at.ua/news/2008-07-10-1195.

կարգ»[96]: Ինչպես նաև նշվում է, որ հայ ինքնության պահպանումը պետք է հիմնվի Սփյուռքի մոբիլիզացիայի, հայոց լեզվի և պատմության զարգացման վրա՝ որպես գործոններ, որոնք ապահովում են ազգային ժառանգության հարատևությունը և արտացոլում են ազգային ինքնությունը[97], ինչպես նաև աշխարհում հայկական մշակութային ժառանգության ու ձեռքբերումների տարածումը:

Հայերի ինքնության պահպանման համազգային խնդիրը հենվում է մի հիմքի վրա, որը ձևավորվում է սեփական հողի վրա՝ գյուղական համայնքում:

4.2 Սոցիալական համախմբվածության հիմնախնդիրները հայաստանյան գյուղերում*

Սոցիալական համախմբվածության կարևորագույն ցուցիչներից մեկը սոցիալական վստահությունն է: Այդ տեսանկյունից հայաստանյան արդի գյուղերում պատկերը հետևյալն է՝ հարցվողները գրեթե ամբողջությամբ (99 %) վստահում են իրենց ընտանիքի անդամներին, հարազատներին: Միևնույն ժամանակ բարեկամներին այս կամ այն չափով վստահում են հարցվողների 88.5 %-ը: Զգալի համամասնություն ունեն բարեկամներին չվստահողները՝ ընդհանուր առմամբ 10.1 %: Ընկերների նկատմամբ վստահության ցուցանիշները դեռևս շարունակում են գերազանցել անվստահության ցուցանիշներին: Այսպես, ընկերներին վստահում է հարցվողների ավելի քան 78.8 %-ը մինչդեռ տարօրինակ է հակառակ պատկերը, ըստ որի ընկերներին չեն վստահում ռեսպոնդենտների 20.5 %-ը, այ-

[96] Стратегия национальной безопасности Республики Армения. Одобрена Советом национальной безопасности при Президенте Республики Армения 26.01.2007. – стр. 1.

[97] Նույն տեղում, էջ. 3-4:

* Այս գլխում օգտագործվել են «CRRC-Հայաստան» կենտրոնի ռեսուրսները և երկրորդային վերլուծության են ենթարկվել «Social Cohesion Survey» և «World Values Survey in Armenia» հետազոտության տվյալները: Տե՛ս http://crrc.am/research-and-surveys/completed-projects/world-salues-survey-in-armenia?lang=en և http://crrc.am/research-and-surveys/ongoing-projects/social-cohesion-survey?lang=en.

սինքն յուրաքանչյուր 5-րդը: Հարևանների նկատմամբ վստահությունը գյուղական համայնքներում շարունակում է դեռևս բարձր մնալ՝ ընդհանուր առմամբ 55.5 %, մինչդեռ բավականին ցածր է այս պարագայում հարևաններին լիովին վստահողների մասնաբաժինը՝ 14 %: Զգալի է հարևաններին ընդհանուր առմամբ չվստահողների՝ 44.5 % և, մասնավորապես, բոլորովին չվստահողների մասնաբաժինը՝ 18 %, այսինքն հարևաններին բոլորովին չի վստահում գյուղաբնակների յուրաքանչյուր 5-րդը: Առաջին հայացքից անսպասելի է նաև այն, որ համագյուղացիների նկատմամբ անվստահությունը գերազանցում է վերջիններիս նկատմամբ վստահությունը մոտավորապես 2 անգամ: Այսպես, համագյուղացիներին ըստ էության չեն վստահում հարցման մասնակիցների 65.2 %-ը, որից 32 % իր համագյուղացիներին ընդհանրապես չի վստահում: Առավել զգալի է անվստահությունը այսպես ասած սովորական ծանոթների նկատմամբ, որոնք իհարկ է կարող են լինել նաև համագյուղացիներ, բայց ընդհանուր առմաբ ընկալվում են որպես առանձին խումբ: Այսպես «սովորական ծանոթներին» (խոսքը չի գնում անծանոթների մասին, ուր ցուցաիչներն առավել հակված կլինեին դեպի անվստահություն) չի վստահում այս համախմբության գրեթե 79 %-ը, որից 40 % -ը սովորական ծանոթներին ընդհանրապես, անկախ պայմաններից և իրավիճակներից չի վստահում: Վստահության ցածր, աստիճանաբար ցածրացող ցուցանիշները որոշ խմբերի նկատմամբ, հատկապես նրանց, որոնց հետ չկան առաջին հերթին գործառնական կապեր թույլ են, ոչ գործառնականները վկայում են անվստահության մթնոլորտի ծավալման, գյուղացու առօրեականության միայն ներընտանեկան, հարազատական միջավայրով սահմանափակվելու, համայնքից, առավել լայն, նույնիսկ, ընկերական, ապա հարևանական շրջապատից օտարվելու մասին: Այսօրվա գյուղացին հանգամանքների բերումով ընտրել է իր սոցիալական վերարտադրման համար հարմար, հնարավորինս նվազագույն միավորը՝ ընտանիքը, մոտիկ հարազատներին: Մնացած խմբերը այս հարցում առաջնահերթ չեն

և կարող են հանդես գալ որպես վերը նշված պարամետր մասնակիորեն, որոշ հիպոթեթիկ դեպքերում: Նման պատկերը վկայում է համայնքային, արտաընտանեկան ինտեգրացիայի, հավանաբար նաև ձևավորված պայմաններում դրա անհրաժեշտության պակասի, կամ նույնիսկ բացակայության մասին: Մեծ է անվստահությունը (65 %) համայնքի, տեղական հեղինակությունների նկատմամբ, ինչը այլ հավասար պայմաններում պայմանավորված է անարդարության զգացմամբ, հնարավոր է նաև վախի մթնոլորտով: Ասվածն առավել քան ակնհայտ է մեծահարուստների պարագայում, որոնց չեն վստահում ընդհանուր առմամբ ավելի քան 86.5 %-ը, ինչը նույնպես, այլ հավասար պայմաններում կարելի է մեկնաբանել վերարտադրվող սոցիալական անարդարության զգացմամբ, հարաբերական զրկմամբ, ձևավորված, գյուղացու համար բացասական, անցանկալի իրավիճակի անելանելիությամբ, որոնց մեղավորները գյուղացու կարծիքով հավանաբար նույնպես մեծահարուստներն են: Առաջին հայացքից անսպասելի է նաև բարձր անվստահությունը մտավորականների նկատմամբ (61.5%), որոնք ժամանակին ընկալվելով որպես մասնավորապես հակակշիռ սոցիալական անարդարության վերարտադրողների, չարդարեցրին իրենց նկատմամբ տածվող սպասումները: Իրավիճակը, ի տարբերություն մասնավորապես մայրաքաղաքի հատկապես խորացվում է գյուղական բնակավայրերում մտավորականության ոչ միայն գործառնական նշանակության, այլ նաև վերջինիս սիմվոլիկ դրսևորումների, ինչպես նաև ներկայումս դրանց անհրաժեշտության բացակայությամբ:

Սպասելի է պատկերը ինստիտուցիոնալ վստահության վերաբերյալ: Այսպես, ոստիկանության նկատմամբ անվստահությունը հասնում է 57 %-ի, որից ավելի քան 37 %-ը ոստիկանությանը ոչ մի դեպքում չի վստահում: Սկզբունքորեն նման պատկեր է ՏԻՄ-ի (տեղական ինքնակառավարման մարմինների) դեպքում: Վերջիններիս այս կամ այն չափով չեն վստահում գյուղաբնակ ռեսպոնդենտների գրեթե 60 %-ը: Ասվածը այլ հավասար պայմաններում կարելի է մեկ-

նաբանել մասնավորապես ընդհանուր անվստահության մթնոլորտով, հատկապես անվստահությամբ դեպի իշխանական, պետական կառույցներ, որոնցում թե՛ ոստիկանությունը, թե՛ ՏԻՄ-ը, այս դեպքում հավանաբար գյուղապետարաններն ու մարզպետարանները, որոնց գործունեության անցանկալի դրսևորումները առավել քան ուղղակի են առնչվում գյուղացու, իր առօրեականության հետ: Սոցիալական ինստիտուտների շարքում, ըստ նկարագրվող հետազոտության, առանձին է կանգնած Հայ առաքելական եկեղեցին, որի նկատմամբ վստահությունը հասնում է 74 %-ի: Չնայած տարբեր գործոնների և հանգամանքների բերումով շարունակական ձևավորվող անվստահությունը նույնպես փոքր չէ (24 %): Վստահության բարձր ցուցանիշը հավանաբար արդյունք է Հայ առաքելական եկեղեցու դերի, նշանակության վերագնահատմամբ հատկապես հետխորհրդային ժամանակաշրջանում, սոցիալական գործունեության ծավալմամբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում և այլն: Բացի այդ նշված սոցիալական ինստիտուտի նկատմամբ բարձր վստահությունը կարող է պայմանավորված լինել նաև վերջինիս դրական սիմվոլիզմի իներտությամբ: Հիմնվելով ասվածի վրա կարող ենք ենթադրել, որ ներկա, կտրուկ փոփոխվող, հաճախ անկանխատեսելի, անվստահելի պայմաններում, ուր ակնհայտ է արժեքային անհասկանալի բազմազանությունը, վարքային անընդունելի դրսևորումները, բացասաբար ընկալվող արդեն կայունացող սոցիալական պրակտիկաները Հայ առաքելական եկեղեցին դիտարկվում են որպես հասարակական, իսկ գյուղի պարագայում նաև հանրային ինտեգրատիվ նշանակալի էլեմենտ:

Չնայած այն բանին, որ եկեղեցին, հատկապես նոր կառուցվածը կամ վերանորոգվածը կարող է հանդես գալ որպես գործարարների նախկինում անընդունելի գործունեության, դրանց սոցիալական կարգավիճակի լեգիտիմացման տարր, այնուամենայնիվ պատահական չէ, որ եկեղեցու կառուցումը կամ վերանորոգումը առավել միարժեք է ընդունվում քան այլ նման գործունեություն:

Եկեղեցու նկատմամբ անվստահությունն այլ հավասար պայմաններում կարելի է մեկնաբանել եկեղեցական գործունեության մի շարք անցանկալի դրսևորումներով, որոնք երբեմն ավելի ակնհայտ են դառնում հենց գյուղական համայնքներում, բացի դրանից եկեղեցի, հավատք, կրոն հասկացությունների անհասկանալի վերադրմամբ և միևնույն ժամանակ տարանջատմամբ:

Համայնքային կապերի վերափոխման, երբեմն նաև ձևափոխական, հասարակական վստահության մասին կարող են խոսել իրականացված հետազոտության արդյունքում ստացված տվյալները: Այսպես, հատկանշական է, որ գյուղաբնակ ռեսպոնդենտների բացարձակ մեծամասնությունը (72 %), իր ընտանիքի առջև ծառացած խնդիրները լուծելիս որևէ մեկի օգնությանը չի դիմում, փորձում է հաղթահարել դրանք առանց կողմնակի աջակցության:

Գրաֆիկ 4.1



Երկրորդ տեղում, ում դիմում է գյուղացին աջակցություն, օգնություն ստանալու համար տարատեսակ խնդիրներ լուծելիս՝ հայաստանաբնակ հարազատներն են, բարեկամները (11.6 %): Երրորդ տեղում արտասահմանաբնակ հարազատներն ու բարեկամներն են (8 %): Հատկանշական է, որ հարևաններին, որոնք ի տարբերություն արտասահմանաբնակ հարազատների, բարեկամների մոտ են ավելի, որոնց թվում է թե կարելի է դիմել օգնության անհրաժեշտության դեպքում, դիմում են հարցվողների ընդամենը 3.8 %-ը: Ասվածը կրկնում է նախորդ տվյալների արդյունքում ստացված պատկերը, ըստ որի հարևանական հարաբերություններն ու կապերը ոչ մի դեպքում առաջնահերթ չեն: Այս դեպքում նույնպես կարող ենք ենթադրել, որ չնայած հարևանների տեխնիկապես առավել հասանելիությանը, օգնության համար դիմելու տեխնիկական նպատակահարմարությանը, գյուղաբնակ ռեսպոնդենտների համար սոցիալական վերարտադրության, այս օրինակում նաև փոխօգնության առաջնահերթ խումբ են հարազատներն ու բարեկամները, անկախ վերջիններս գտնվելու վայրից:

Ներկայացված աղյուսակի տվյալները սկզբունքորեն կրկնում են վստահության վերաբերյալ տվյալների արդյունքները: Գյուղացիների գրեթե 2 %-ն է դիմում համայնքի հեղինակավոր մարդկանց և տեղական իշխանությունների համապատասխան, ինչն այլ հավասար պայմաններում վկայում է վերջիններիս նկատմամբ վստահության, հավատի պակասի մասին: Գյուղացիները, կարելի է ասել, համոզված են, որ այս մարդիկ լավագույն դեպքում չեն օգնի լուծել առաջացած որևէ խնդիր:

Ուշագրավ է եկեղեցու սպասավորներին օգնության անհրաժեշտության դիմելու ցուցանիշը՝ ընդամենը 1 %, որը կարող է հակասական թվալ նախորդ տվյալների հետ համեմատելիս, ուր Հայ առաքելական եկեղեցուն վստահում էին գյուղաբնակների գրեթե 73 %-ը: Ստացված, երկրորդ ցուցանիշը լրացուցիչ հիմնավորում է վերը բերված հատկապես եկեղեցու՝ որպես ընդհանրական կառույցի, որ-

պես դրական սիմվոլի նշանակությունը, ի հակադրություն եկեղեցականի, վերջիններիս գործունեության անցանկալի, անընդունելի գործունեությունների:

Հետազոտության արդյունքում ստացվել են մի շարք տվյալներ, որոնցից կարելի եզրակացնել գյուղացու արժեքային համակարգը: Այսպես, ընտանիքը ծայրահեղ կարևորում է հարցվողների գրեթե 98 %-ը: Միևնույն ժամանակ առողջությունը հույժ կարևոր է հարցվողների 92.5 %-ի համար: Աշխատասարիությունը համարվում է կարևորագույն հարցվողների գրեթե 80 %-ի համար, մինչդեռ այստեղ պատասխանողների գրեթե 20 %-ը աշխատասիրությանն արդեն առաջնահերթ կարևորություն, նշանակություն չեն տալիս, հավանաբար համարելով, որ աշխատասիրությունն արդի պայմաններում հաջողության հասնելու առաջնահերթ նախապայման չէ:

Պատկերը սկզբունքորեն նման է արդարության դեպքում, որն առաջնահերթ կարևոր, նշանակալի կատեգորիա է հարցվողների մոտ 80 %- ի համար, մինչդեռ ընդհանուր առմամբ, ոչ առաջին հերթին արդարությունը կարևորում են հարցվողների մոտ 20-58.5 %-ը, ըստ էության, հիմնականում կարևոր են համարում հարցվողների մոտ 37%-ը, մինչդեռ հարցվողների մոտ 3.5 %-ն այն որևէ կերպ չեն կարևորում, հավանաբար համարելով անիրական, անիրագործելի:

Կրթվածությունը կարևորագույն կատեգորիա է հարցվողների մոտ 75 %-ի համար, մինչդեռ այս դեպքում նույնպես կիրթ լինելը, կրթվածությունը ոչ առաջնահերթ, բայց այնուամենայնիվ կարևոր է հարցվողների մոտ 24.5 %-ի համար:

Հետաքրքրական է, որ նյութաֆինանսական հաջողությունները որպես առաջնահերթ, կյանքի համար կարևոր համարել են հարցվողների 69.5 %-ը:

Զգալի են մարդու իրավունքները այս կամ այն չափով կարևորողները՝ ընդհանուր առմամբ 96 %: Մինչդեռ որոշակի փոքր խումբ՝ 4 % մարդու իրավունքները որևէ կերպ իր կյանքի համար չի կարևո-

ռում: Ազատությունը այս կամ այն ձևով կարևորվում է հարցվողնե-րի մոտ 97%- ի կողմից:

Միևնույն ժամանակ հետաքրքրական է, որ ազգային ավան-դույթների պահպանումը որպես արժեք շատ կարևորվում է ռես-պոնդենտների ընդամենը 49 % կողմից և որևէ կերպ կարևոր չէ ավե-լի քան 6 % ռեսպոնդենտների համար:

Առաջին հայացքից անսպասելի է, որ կնոջ հնազանդությունը որևէ կերպ կարևոր չէ հարցվողներից մոտ 10 %- ի կյանքում: Իսկ եկեղեցին, կրոնը, հավատը որևէ կերպ կարևոր չեն համարում հարցվողների մոտ 9%-ը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ մեր հասարակությունում, տվյալ պարագայում գյուղական հանրույթներում ընտանիքը, հա-բազատական կապերն ու հարաբերությունները առաջնահերթ նշա-նակություն ունեն: Առաջնահերթ նշանակություն ունեն այնպիսի ընդհանրական արժեքներ ինչպիսին են առողջությունը, արդարու-թյունը, կրթվածությունը և այլն, նույնիսկ չնայած այն բանին, որ դրանցից մի քանիսը շարունակում են այդպիսին լինել զուտ սիմվո-լիկ տեսակետից, որ որևէ գործնական արդյունքների համար որպես հիմք չեն ծառայում:

Ուշագրավ են հետազոտության արդյունքում բացահայտված պատկերացումները մի շարք որակների վերաբերյալ, որոնք հա-մայնքի նկարագրման և բնութագրման համար հետաքրքրական են: Այսպես հարցվողների բացարձակ մեծամասնության համար (50.5 %) համայնքում ամուսնության համար առաջնահերթ կարևոր են համարել ամուսնու հայրական ընտանիքի հեղինակությունը: Հարց-վողների ընդամենը 7.3 %-ն է համարում, որ հաջող, երջանիկ ամուսնության համար ամուսնու հայրական ընտանիքի հեղինակու-թյունը որևէ կերպ կարևոր չէ: Կարող ենք ենթադրել, որ համենայն դեպս այս հարցում Հայաստանի գյուղական համայնքներում դեռևս գործում են ավանդական պատկերացումները և մոտեցումները: Առավելապես շարունակում են վերարտադրվել կոլեկտիվ պատաս-

խանատվության մեխանիզմները, երբ այնպիսի կենսական որակի համար ինչպիսին երջանկությունն է, հարցվողների մեծամասնությունը ապավինում է բարձ վարկանիշ ունեցող խմբին, այլ ոչ թե առանձին անհատի անձնական որակներին:

Հարցվողների գրեթե կեսը (49.1 %) համարում է, որ հաջող, երջանիկ ամուսնության համար շատ կարևոր հանգամանք է հենց ամուսնու նյութական ապահովվածությունը: Ասվածը որևէ կերպ չեն կարևորում հարցվողների մոտ 6 %-ը: Ասվածը, ըստ էության, վկայում է այն, որ ընտանիքի, տնային տնտեսության նյութաֆինանսական բարեկեցության համար շարունակում է առավելապես պատասխանատու լինել տղամարդը, ամուսինը: Ասվածը ամրապընդվում է իհարկե մի շարք օբյեկտիվ պատճառներով ևս: Հայաստանի գյուղական համայքներում եկամտի հիմնական աղբյուրները (բացի որոշ գյուղատնտեսական պրակտիկաներից) փոխկապակցված են արական համարվող գործունեության ձևերի հետ (արտագնա աշխատանք, վարձու ժամանակավոր, երկարաժամկետ աշխատանք և այլն…): Կանանց համար տարբեր հանգամանքների բերումով գտնել քիչ թե շատ կայուն, բավարար վարձատրվող աշխատանք հիմնականում հնարավոր չէ:

Հայրիշխանական արժեհամակարգի, տղամարդու դերի և նշանակության հավելյալ գնահատման մասին են վկայում նաև այն տվյալները, որ համայնքում հաջող ամուսնությամ համար կնոջ նյութական ապահովվածությունը շատ կարևոր են համարում հարցվողների ընդամենը 20.7 %-ը: Միևնույն ժամանակ այս հանգամանքը ընդհանուր առմամբ կարևոր է մոտ 41 % հարցվողների համար, ինչը կարելի է դիտարկել որպես ընտանեկան բարեկեցության լրացուցիչ աղբյուր, որը երբեք անիմաստ չի լինի: Մինչդեռ կնոջ նյութական ապահովվածությունը հաջող, երջանիկ ամուսնության համար որևէ կերպ կերևոր չէ հարցվողների գրեթե 14 %-ի համար: Բավականին բարձր ցուցանիշ, որն անուղղակիորեն խոսում է կնոջ պակաս նշանակության մասին:

Հետաքրքրական է, որ այսօր, նույնիսկ գյուղական բնակավայրերում, ուր գերակշռում են մեկ հարկի տակ բնակվող ընդարձակ ընտանիքները՝ տան առկայությունը հաջող ամուսնության գրավական է ընդհանուր առմամբ ավելի քան 75 % հարցվողների համար: Առանձին բնակարանի առկայություն հաջող ամուսնության համար որևէ կերպ կարևոր չէ ընդամենը 8.2 % հարցվողների համար: Տվյալները անուղղակիորեն խոսում են համայնքային կյանքի վերարտադրման ավանդական մեխանիզմների ձևախեղման մասին: Գյուղում աստիճանաբար առաջ են գալիս քաղաքային արժեքներ, ձգտումներ:

Հարցվողների մեծամասնության շրջանում շարունակում են, ըստ էության գերակշռել երիտասարդների վերաբերյալ ավանդական, դրական պատկերացումներ և գնահատականներ: Այսպես, ռեսպոնդենտների 84.7 %-ը ժամանակակից երիտասարդ հայ գյուղացուն ընկալում է առավելապես որպես հյուրընկալ: Ընդհանուր առմամբ հարցվողների մոտ 81 %-ը վերջիններիս համարում է ընտանիքապաշտ, ընտանիքին նվիրված: Հարցվողների ավելի քան 74 %-ը ժամանակակից հայ երիտասարդ գյուղացուն համարում է այլասեր, ընկերասեր:

Այսօրվա գյուղի երիտասարդության վերաբերյալ պատկերացումները միարժեքորեն դրական չեն: Չնայած այն բանին, որ հարցվողների մոտ 53.3 %- ը երիտասարդ գյուղացուն համարում է ավանդապաշտ, այնուամենայնիվ մոտ 20 %-ը հակառակ կարծիքին է, իսկ 27.5 %-ը այս հարցում ընտրել են միջանկյալ դիրքորոշում:

Միևնույն ժամանակ հարցվողների ավելի քան 57 %-ը համարում է, որ երիտասարդ գյուղացին անհրաժեշտության դեպքում օգնության ձեռք կմեկնի, մինչդեռ հարցվողների մոտ 20 %-ը համարում է, որ երիտասարդ գյուղացին անտարբեր է, ու գուցե և որևէ կերպ օգնության չհասնի:

Պատկերը առանձնահատուկ է նաև աշխատասիրություն որակի դեպքում, ուր հարցվողների մոտ 66 %-ը երիտասարդ գյուղացուն

համարում է աշխատասեր, երբ վերջինս իր ուսերին է վերցնում ընտանիքի բարեկեցության ապահովման ողջ բեռը՝ ներկայանալով թե որպես աշխատանքային միգրանտ, որը տարվա մեծ մասը արտասահմանում է, թե որպես վարձու աշխատող, թե որպես գյուղատընտեսության մեջ զբաղված մարդ:

Մյուս կողմից հարցվողների մոտ 20 %-ը համարում է երիտասարդ գյուղացուն ծույլ, երբեմն նաև ոչ միայն ընդանիքի բարեկեցության համար չհոգացող, այլ նաև ավելին՝ լրացուցիչ բեռ ընտանիքի եկամուտն ապահիովող այլ անդամների ուսերին: Հավելենք նաև, որ հարցվողների 15.5 %-ը այս հարցին տալիս է չեզոք պատասխան:

Հարցվողների 57 %-ը երիտասարդ գյուղացուն համարում է հավատացյալ, մարդ, որը հարգում է կրոնական ավանդույթները, եկեղեցին, մինչդեռ այստեղ նույնպես հարցվողների մինչև 20 %-ը համրում է, որ հայ գյուղացին այդպիսինը չէ, ընդհուպ մինչև որևէ կերպ կապ չունի հավատքի, կրոնի, եկեղեցու հետ: Չեզոք վերաբերմունքի կողմնակից են հարցվողների մոտ 24 %-ը:

Ամփոփելով կարող ենք ասել, թե չնայած այն բանին, որ հայ երիտասարդ գյուղացին շարունակում է կրողը մնալ հայկական գյուղական համայնքներում նշանակալի, առաջնահերթ մի շարք արժեքների, այնուամենայնիվ կա նաև իրավիճակի որոշակի շեղում: Հարցվողները խոսում են նաև երիտասարդ գյուղացու անտարբերության, անհավատության, ծուլության մասին, ինչից կարելի է ենթադրել ինչպես նաև սերունդների միջև «բնական» հակասության, այնպես նոր սերնդի, կարելի է ասել ապագայի նկատմամբ անվստահության մասին:

Այն հարցին, թե առաջիկա հինգ տարիների ընթացքում համայնքի առջև ծառացած խնդիրները որքանով, ինչպես կլուծվեն ստանում ենք առավելապես բացասական պատասխաններ: Ինչպես տեսնում ենք ներկայացված գծապատկերից հարցվողների մոտ 21 %-ի կարծիքով համայնքի, գյուղի առջև ծառացած, գյուղում կյանքը երբեմն անտանելի դարձնող խնդիրները առաջիկա համենայն դեպս 5 տարինե-

րի ընթացքում այդպես էլ չեն լուծվի: Ապագայի նկատմամբ վստահություն, ապագայից սպասելիքներ չունեն գյուղաբնակ հարցվողների գրեթե 51 %-ը: Իհարկե կան նաև ապագայի նկատմամբ դրական հայացքներ ունեցողներ: Խնդիրների հաղթահարման, լուծման մեջ համոզված են ցավոք հարցվողների ընդամենը 5.5 %-ը:

Պատկերը, ըստ էության, պատահական չէ, քանի որ ներկայում ակնհայտ է անվստահությունը, անորոշությունը, անբարարվածությունը: Հարցվողների ավելի քան 7.5 %-ը ընդհանրապես բավարարված չէ, դժգոհ է իր կյանքից: Մինչդեռ այսօրվա կյանքով ընդհանուր առմամբ բավարարված են հարցվողների մոտ 4 %-ը:

Հատկանշական են գյուղական համայնքներում ժողովրդական, ազգային, համայնքային ավանդույթների երիտասարդ սերնդին փոխանցման մեխանիզմները: Հարցվողների 42.5 %-ի կարծիքով ավանդույթները, արժեքները երիտասարդ սերնդին փոխանցվում են ընտանիքներից: Կարելի է ենթադրել, որ այս մեխանիզմով են փոխանցվում նաև զուտ համայնքային ավանդությունները, արժեքները:

Գրաֆիկ 4.2



Երիտասարդ սերնդին ավանդույթների, ազգային արժեքների փոխանցման հարցում երկրորդ տեղում է դպրոցը՝ 15.8%, ուր կազմակերպվում են հատուկ միջոցառումներ, քննարկումներ, դասեր և այլն: Ազգային, այս դեպքում նաև համայնքային ավանդույթների, արժեքների երիտասարդ սերնդին փոխանցմանը, նրանց ասվածին հաղորդակից դարձնելը տեղի է ունենում նաև համայնքում պարբերաբար նշվող հիշարժան օրերի միջոցով:

Ազգագրական, մշակութային խմբակների դերը և նշանակությունը այս հարցում առաջնահերթը չէ: Նշվածում մեծ չէ նաև Հայ առաքելական եկեղեցու դերը: Ռեսպոնդենտների մոտ 11 %-ի կարծիքով է նա այս հարցում ունենում գործուն նշանակություն: Ռեսպոնդենտների 8.3 %-ը համարում է, որ ավանդույթների փոխանցմանը նպաստում են նաև երեխաների համար պարբերաբար կազմակերպվող էքսկուրսիաներն ու տարատեսակ հանդիպումները:

Ռեսպոնդենտների միայն 7.5%-ի կարծիքով է, որ ավանդույթներն ու արժեքները փոխանցվում են այս կազմակերպությունների օգնությամբ: Խնդիրն այս դեպքում հավանաբար նրանում է, որ բազմաթիվ գյուղական համայնքներում մշակութային, ազգագրական մանկական, պատանեկան խմբակներն ու կազմակերպությունները լավագույն դեպքում անմխիթար վիճակում են, հաճախ չեն գործում կամ էլ ի սպառ բացակայում են:

Նշված խնդրում կարելի է ասել, որ տուրիստական միջոցառումները, տուրիզմն ընդհանրապես որևէ նշանակություն չունի: Այն լավագույն դեպքում նպաստում է միայն որոշ գյուղական բնակավայրերի, ուր կան գրավիչ տուրիստական օբյեկտներ, մի խումբ բնակիչների նյութաֆինանսական բարեկեցությանը, բայց հավանաբար ոչ ավանդույթների և արժեքների փոխանցմանը երիտասարդ սերնդին:

Բավական հետաքրքրական են հետազոտության արդյունքում ինքնության վերաբերյալ ստացված մի շարք տվյալներ: Այսպես, այն հարցին, թե ինչն է կարևոր հայ լինելու, հայ կոչվելու համար հարց-

վողնորի բացարձակ մեծամասնությունը կարևորում է հայասիրությունը՝ մոտ 92 %, որոնցից 77.8 % -ը հայասիրություն հայ լինելու համար ամենից շատն է կարևորում: Հարցվողների բացարձակ մեծամասնության կարծիքով հայ լինելու համար առաջնահերթ կարևոր է նաև հայերեն խոսելը (67.5 %): Նույն համախմբության 20 %-ը համարում են որ դա կարևոր է ընդհանուր առմամբ, բայց առաջնային որակ չէ: Միևնույն ժամանակ հարցվողների ավելի քան 12 %-ը հայերեն խոսելը հայ լինելու համար անհրաժեշտ չեն համարում, հավանաբար մտաբերելով բազմաթիվ հայերեն չխոսող ծագումով հայերի, որոնք Հայաստանի բարօրության գործում ավելի մեծ ներդրում ունեն, քան շատ հայերեն լավ խոսողներ:

Հայ համարվելու համար կարևորվում է երկու ծնողների հայ լինելու նախապայմանը: Այսպես, հարցվողների ավելի քան 85 %-ի կարծիքով հայ լինել նշանակում է ունենալ հայ ծնողներ, հայկական ծագումը հավանաբար մասամբ նույնականացնելով նշված պահանջի հետ: Առաջին հայացքից արտասովոր է, որ հայ լինելու համար պարտադիր չէ ունենալ հայ ծնողներ: Այդպես են համարում պատասխանողների գրեթե 14%-ը: Մյուս կողմից, հայ համարվելու համար պարտադիր է գոնե մեկ ծնողի հայ լինելու փաստը (մոտ 67 % ռեսպոնդենտների համար): Նույնը ցանկալի է, հայ լինելու համար հարցվողների գրեթե 22 %- ի համար: Ծնողներից նույնիսկ մեկի հայ լինելը նախապայման չէ հայ լինելու համար (մոտ 10 % ռեսպոնդենտների դեպքում): Հատկանշական է հայկական ազգանունի դեպքը: Այն հայ համարվելու համար ընդհանուր առմամբ նախապայման է 82.3 %-ը հարցվողների համար, երբ այն առաջնահերթ կարևորում է հարցվողների ավելի քան 56 %-ը: Մյուս կողմից հայկական ազգանունի առկայությունը դեռ չի նշանակում լինել հայ ավելի քան 17 % պատասխանողների համար: Պատկերը սպասելի է, հաշվի առնելով բազմաթիվ օտար ազգանուններով հայտնի, մեծ հաջողությունների հասած հայերի:

Հայ լինելու համար կարևոր է նաև հայկական ավանդույթներին հետևելը: Ռեսպոնդենտների ավելի քան 86 % նշված որակն այս կամ այն չափով կարևորում են հայ կոչվելու համար: Որոշ դեպքերում տեղի ունի նաև հակառակ պատկերը: Ավանդականություն, վերջիններիս նկատմամբ հարգանքը և այլն այս կամ այն չափով նշանակալի չէ հարցվողների ավելի քան 13 %-ի համար:

Պարզենք, թե ինչ նշանակություն ունի Հայաստանում ծնված լինելը, ինչպես նաև Հայաստանում բնակվելը հայ համարվելու համար: Այսպես առաջին պայմանը կարևոր չէ հարցվողների գրեթե 50 %-ի համար: Տվյալների հիմքում բնականաբար ընկած է հայկական ընդարձակ սփյուռքը և այն փաստ, որ էթնիկ հայերը Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս քանակապես գերազանցում են հայաստանաբնակ հայերին: Պատկերն առավել սուր է երկրորդ դեպքում, ուր Հայաստանում բնակվելը որևէ նախապայման չէ հայ համարվելու համար պատասխանների գրեթե 60 %-ի դեպքում: Կարող ենք ասել, որ նախորդ մեկնաբանությունը տեղին է նաև այս օրինակի համար, բացի այդ նման հայացքների, գնահատականների զգալի ծավալը հատկապես գյուղական բնակավայրերում պայմանավորված է ներկայումս մեծ ծավալների հասնող, թե ժամանակավոր, թե մշտական միգրացիայի առկայությամբ:

Գրաֆիկ 4.3



Հետազոտության արդյունքում պարզվել են գյուղաբնակների պատմական հիշողության մի շարք առանձնահատկություններ: Այսպես, պատմական անցքերից, որն առավել հիշարժան է, որով առավել շատ են հպարտանում հաղթանակն է ղարաբաղյան հակամարտությունում: Նման կարծիքի են ռեսպոնդենտների մեծամասնությունը՝ 12.2 %: Ցուցանիշը պայմանավորված է մասնավորապես նրանով, որ ղարաբաղյան հակամարտությունը ոչ վաղ անցյալում էր, հիշողությունները դեռ թարմ են: Բազմաթիվ են պատերազմի մասնակիցները: Բացի այդ այն խիստ փոխկապված է, այսպես կոչված, ազգային զարթոնքի հետ:

Երկրորդ տեղում է «Ծովից ծով Հայաստան» սիմվոլը, որով հպարտանում են ռեսպոնդենտների ավելի քան 12 %-ը: Ակնհայտ է, որ այս պարագայում նույնպես այն միարժեքորեն ասոցիացվում է Հայաստանի փառքի հետ:

Իր կարևորությամբ երրորդ տեղում է հայոց գրերի գյուտը (10 %): Ցուցանիշը պայմանավորված է հավանաբար դեռևս դպրոցից այս պատմական անցքի վերաբերյալ ունեցած պատկերացումներով,

ըստ որոնց այն հայապահպանության հիմնական, առաջնային տարրերից էր: Բացի այդ, այն շարունակվում է ընկալվել որպես սիմվոլ, որն առաջնահերթ հատկանշական է Հայաստանի և հայ մարդու համար:

Սկզբունքորեն նույնն է քրիստոնեությունը պատական կրոն հռչակելու փաստը, որով հպարտանում են ռեսպոնդենտների նույնպես 10 %-ը:

Հետաքրքիր է, որ Հայաստանի նորանկախ Հանրապետության հռչակմամբ հպարտանում են հարցվողների 9.7 %-ը: Ակնհայտ է, որ այս ցուցանիշը առաջնահերթ չէ, ինչը հավանաբար պայմանավորված է սովետական անցյալի վերաբերյալ ունեցած դեռևս վառ, երբեմն նաև առասպելականացված հիշողություններով, որոնց համեմատ նորանկախ Հայաստանը ներկայանում է առավելապես գորշ գույներով: Այլ կերպ ասած, Հայաստանի Հանրապետության հռչակումը չարդարացրեց բնակչության սպասումները: Նորանկախ Հայաստանի խնդիրները, որոնք կարող են ասոցիացվել նաև անկախության հռչակման հետ, առավել քան ակնհայտ են հատկապես գյուղական բնակավայրերում, ուր և անցկացվել է հետազոտությունը:

Որպես նշանակալի հիշողություն՝ գյուղի, համայնքի պատմական անցյալը նույնպես առաջնային դիրքերում չէ: Վերջինով հպարտանում են, այն կարևոր են համարում հարցվողների միայն 9.2 %-ը: Ցուցանիշը կարող է պայմանավորված լինել տվյալ գյուղում որևէ հիշատակման արժանի պատմական անցքի բացակայությամբ: Մյուս կողմից, եթե այդպիսիք նույնիսկ կան (պայմանավորված մասնավորապես հայ-ադրբեջանական հակամարտությամբ և այլն), ապա բավարար ժամանակ դեռ չի անցել դրանց առասպելականացման համար: Բացի այդ, գյուղի, կարելի է ասել, անբարենպաստ առօրյան իր բազմաթիվ ամենօրյա խնդիրներով առանձնապես թույլ չի տալիս անցյալից որև է իրադարձություն արժևորել այսօր:

Հետաքրքրական է, որ Հայաստանի խորհրդային անցյալով հպարտանում են հարցվողների ընդամենը 7 %-ը: Ցուցանիշը մաս-

նավորապես կարող է վկայել խորհրդային անցիալի աստիճանաբար վերագնահատման և ինչու չէ մոռացման մասին:

Աստիճանաբար մոռացվում է փառավոր հաղթանակը Երկրորդ համաշխարհային պատերազմում, ինչն առավել քան հատկանշական է հատկապես գյուղական բնակավայրերի համար, որոնցում պատերազմի վետերանների թվաքանակի անկմամբ գնալով դադարում են մայիսյան միջոցառումների կազմակերպումը: Այստեղ հավանաբար նշանակություն ունի նաև մայիսի 9-ի վերաիմաստավորումը: Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակի նշանակալիության անկումը գյուղաբնակների գիտակցության մեջ պայմանավորված է մեզանից այս անցքի ժամանակագրական հեռավորությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ գյուղացին նախընտրում է ապրել այսօր, ներկա պահով, սահմանափակելով թե անցյալը, թե ներկան հնարավորինս կարճ ժամանակահատվածներով:

Վերջին տեղում են Սարդարապատի ճակատամարտը (8.8 %) և Հայաստանի առաջին հանրապետությունը (7.4 %): Այստեղ նույնպես հավանաբար տեղի ունի վերջիններիս պատմական հեռացվածությունը, բացի այդ ներկայացված պատմական իրողությունների հանրային անբավարար լուսաբանումը: Առաջին Հանրապետության և Սարդարապատի հերոսամարտի վերաբերյալ տեղեկատվության հիմանական տարածողը հետխորհրդային դպրոցն է: Դրանք դեռևս շարունակում են մնալ մի շարք ընտրյալների ուշադրության կիզակետում, որոնք ցավոք գյուղերում էլ ավելի պակաս են:

4.3 Գյուղական միգրանտների շրջանում սոցիալական կոգնիցիաների փոփոխության դրսևորումները (Տավուշի մարզի օրինակով)

Յուրաքանչյուր հասարակությունում ընթացող մակրո քաղաքական, սոցիալական և մշակութային փոխակերպումները, անխուսափելիորեն արտահայտվում են նաև անհատների և խմբերի ինքնաբնկալման և ինքնադրսևորման փոփոխություններում, ինչպես նաև ինքնության, արժեքային համակարգի, դիրքորոշումների (ժամանակակից սոցիոլոգիական տեսություններում՝ սոցիալական կոգնիցիաների) արմատական փոխակերպումներում: Միգրացիոն գործընթացները ևս իրենց ազդեցությունն են ունենում միգրանտների սոցիալական կոգնիցիաների բովանդակության և վերարտադրման վրա: Ներկայումս սոցիալական կոգնիցիաների ուսումնասիրությունը առավելապես ակտիվորեն զարգանում է կոգնիտիվ սոցիոլոգիայի շրջանակներում, որն իրենից ներկայացնում է միջառարկայական ուղղություն՝ հիմնված սոցիալական հոգեբանության, էթնոմեթոդաբանության, ֆենոմենոլոգիայի, գիտելիքի սոցիոլոգիայի և սոցիալական կոնստրուկտիվիզմի հիմնադրույթների վրա: Կոգնիտիվ սոցիոլոգիայի հետաքրքրության շրջանակներում են հետևյալ հարցադրումները՝ *«ինչպե՞ս են մշակութային և սոցիալական ատրիբուցիաները դրսևորվում առօրյա կյանքում, դիրքորոշումներում և վարքային մոդելներում», «ինչպե՞ս է տեղի ունենում իրականության սոցիալական կառուցակցման գործընթացը», «ինչպե՞ս են տարբեր սոցիալական խմբերի և խավերի ներկայացուցիչներն ընկալում միմյանց և նույն իրադարձությունները»:* Թեև կոգնիտիվ սոցիոլոգիան առավելապես ակտիվորեն զարգացում է ապրում վերջին տարիներին, այնուամենայնիվ, սոցիալական կոգնիցիաների վերաբերյալ գաղափարները հանդիպում են այնպիսի դասականների աշխատություններում, ինչպիսիք են Է. Դյուրքհեյմը, Մ. Վեբերը, Կ. Մանհեյմը, Ա. Շյուցը: Սոցիալական կոգնիցիաների փոխակեր-

պումների տեսական և մեթոդաբանական հիմքերը զարգացվել են նաև ինտեգրատիվ սոցիալական տեսությունների շրջանակներում, որոնց կիզակետում է մակրո-միկրո հայեցակարգերի միավորումը (Է. Գիդենս, Պ. Բուրդյե, Յու. Հաբերմաս, Մ. Արչեր, Դ. Լայդեր): Այս տեսությունների շրջանակներում սոցիալական կոգնիցիաների ուսումնասիությունը ենթադրում է համակարգային մոտեցում և դիտարկում է ինքնության, դիրքորոշումների, վարքային մոդելների և միջանձնային հարաբերությունների փոխակերպումները պայմանավորված սոցիալական համատեքստով և հասարակությունում գերիշխող դոմինանտ դիսկուրսներով[98]: Միևնույն ժամանակ, ինտեգրատիվ տեսությունների ներկայացուցիչների կարծիքով տարբեր խմբերի սոցիալական կոգնիցիաների փոխակերպումները համապատասխան պայմաններում կարող են հիմք ստեղծել սոցիալական շարժումների համար և բերել մակրո մակարդակի համակարգային և ինստիտուցիոնալ փոխակերպումների:

Կոգնիտիվ սոցիոլոգիայի զարգացման վրա չափազանց մեծ ազդեցություն է ունեցել նաև իրականության սոցիալական կառուցակցման տեսությունը (Պ. Բերգեր, Տ. Լուկման, Ջ. Սեռլ), որը լայնորեն քննարկում է տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակությունում գերակայող գաղափարների և պրակտիկաների ազդեցությունը ինքնության կառուցման վրա և դիտարկում է ինքնությունների վիզուալացման և ներկայացման հիմնախնդիրը գերակայող դիսկուրսների համատեքստում: Ինչպես նշում է Մ. Ֆուկոն սոցիալական կոնստրուկտիվիզմի տեսանկյունից ինքնությունը կարող է ուսումնասիրվել միայն որպես տվյալ դիսկուրսի մանիֆեստացիա[99]:

Սակայն հենց «կոգնիտիվ սոցիոլոգիա» տերմինը առաջին անգամ կիրառվել է ամերիկացի սոցիոլոգ Ա. Սիկուրելի կողմից 1973 թ., որպես *«սոցիոլոգիայի ուղղություն, որն ուսումնասիրում է այն,*

---

[98] Տե՛ս Ritzer, G. Goodman, D. *Classical Sociological Theory*. (2004).

[99] Տե՛ս Burr, V. *Social Constructionism.* (2003).

թե ինչպես են մարդիկ կիրառում «մեկնաբանողական ընթացակարգեր» տարբեր սոցիալական իրավիճակներին իմաստ հաղորդելու համար»: Ժամանակակից սոցիոլոգ Է. Զերուբավելը սահմանում է կոգնիտիվ սոցիոլոգիայի գլխավոր նպատակը որպես *«մարդկանց մտածողության միջև նմանությունների և տարբերությունների բացահայտում և ընկալման և հիշողության գործընթացների սոցիալական նախադրյալների վերլուծություն»*[100]*:* Ըստ Զերուբավելի՝ կոգնիտիվ սոցիոլոգիան գտնվում է կոգնիտիվ ինդիվիդուալիզմի և կոգնիտիվ ունիվերսալիզմի հատման կետում, ընդգծում է մտածողության և աշխարհընկալման սոցիալական և մշակույթին հիմքերը և կարևորում կոգնիտիվ սոցիալականացման դերը[101]:

Կոգնիտիվ սոցիոլոգիայի շրջանակներում առավել ուսումնասիրված են այնպիսի հասկացություններ ինչպիսիք են սոցիալական կոգնիցիան, սոցիալական սխեման, սոցիալական ներկայացումը (ռեպրեզենտացիա), սոցիալական դասակարգումը և սոցիալական ինքնությունը:

1. ***Սոցիալական կոգնիցիաները*** սահմանվում են որպես «ճանաչողական գործընթացների ամբողջականություն, որը ձևավորվում է սոցիալական և մշակութային գործոնների ազդեցության ներքո»:
2. ***Սոցիալական սխեմաները*** տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի ներկայացուցիչների պատկերացումներն են հասարակությունում գերակայող փոխհարաբերությունների բնույթի, վարքային մոդելների մասին[102]:
3. ***Սոցիալական ներկայացումները*** (ռեպրեզենտացիաները)՝ հասարակության տարբեր խմբերի կողմից իրականության սոցիալական կառուցակցման համար օգտագործվող գաղա-

---

[100] Տե՛ս E. Zerubavel. *Social Mindscapes,* p. 10. (1997).

[101] Տե՛ս նույն տեղում:

[102] Տե՛ս Kunda, Z. *Social cognition: Making sense of people.* (1999).

փարներն են, պատկերացումները, պրակտիկաները և առօրյա գիտելիքը:

4. ***Սոցիալական դասակարգումները*** (կատեգորիզացումները)՝ տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի ներկայացուցիչների փոխադարձ պատկերացումները և ընկալումները: Սոցիալական դասակարգումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ տարբեր սոցիալական խմբերի կողմից «մենք»-ի և «նրանք»-ի սահմանները, ինչպես նաև ներխմբային և միջխմբային ընկալումները, դիրքորոշումները և «կոլեկտիվ ես»-ի և վարքի առանձնահատկությունները: Սոցիալական դասակարգումների վերհանումը հնարավորություն է տալիս հասկանալ նաև տարբեր սոցիալական խմբերի մասին ստիգմաների առաջացման պատճառները[103]:
5. ***Սոցիալական ինքնության***՝ տարբեր սոցիալ-ժողովրդագրական խմբերի ներկայացուցիչների ինքնաընկալումները և վերջիններիս կառուցակցման գործընթացի առանձնահատկությունները:

Վերջին տարիներին կոգնիտիվ սոցիոլոգիայում բավականին մեծ տարածում են ստացել նաև սոցիալական կոգնիցիաների և խմբային ինքնագնահատականի հարաբերակցական հետազոտությունները: Սա ենթադրում է տարբեր սոցիալական դիսպոզիցիաներ, արժեքային համակարգեր և «ես-հայեցակարգ» ունեցող խմբերի ինքնագնահատականի և սուբյեկտիվ բարեկեցության գնահատում: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ բարձր ինքնագնահատական և ինքնադրսևորման լայն հնարավորություններ ունեցող սոցիալական խմբերն ավելի բավարարված են իրենց կյանքով և հակված չեն արտագաղթելու, ունեն ավելի բարձր վերահսկողության լոկուս, այսինքն՝ գտնում են, որ կարող են ազդել

[103] Տե՛ս Moskowitz, G. *Social Cognition: Understanding Self and Others.* (2005).

երկրում ընթացող տարբեր քաղաքական և սոցիալական իրադարձությունների վրա[104]: Եվ հակառակը, անբարենպաստ տնտեսական և սոցիալական պայմաններում գտնվող կամ խտրականացված և մարգինալացված սոցիալական խմբերի մոտ գերակայում են այսպես կոչված «ուսուցանված անօգնականության», ֆրուստրացիայի և ապագայի մասին մռայլ պատկերացումները, ինչպես նաև տվյալ հասարակությունում ինքնադրսևորման համար հնարավորությունների զգալի թերագնահատումը: Խմբային ինքնագնահատականի չափումը թույլ է տալիս նաև փաստել տարբեր սոցիալական խմբերի կողմից ինքնադրսևորման հնարավորությունների լեգիտիմացման ընկալումները (բարձր ինքնագնահատական և կարգավիճակ ունեցող խմբերը համապատասխանաբար առավել հակված են լեգիտիմ համարել տվյալ հասարակությունում ինքնաակտուալացման և ինքնադրսևորման առկա մեխանիզմները և ճանապարհները):

Սոցիալական կոգնիտիվիմզն ընդունում է նաև այն փաստը, որ սոցիալապես կառուցակցված են ոչ միայն մեր գիտելիքները, հիշողությունը և մտածողությունը, այլև մեր Ես-ի ընկալումը մեր իսկ կողմից: Անկասկած «Ով եմ ես» հարցին պատասխանը կախված է յուրաքանչյուրի անհատական փորձից, սակայն միևնույն ժամանակ պայմանավորված է սոցիալական, քաղաքական և տնտեսական գործոններով: Ինչպես նշում են Դ. Օսերմանը և Հ. Մարկուսը սոցիալական ինքնության ձևավորման, զարգացման և պահպանման գործընթացում առավել մեծ դեր են խաղում սոցիալական ներկայացումները, որոնք ըստ էության տրամադրում են մեզ տվյալ հասարակության և մշակույթի համար լեգիտիմ պատասխաններ «Ով եմ ես» և «Ով ենք մենք» հարցերին: Հատկապես վերջին տարիներին միկրոսոցիոլոգիայում և սոցիալական հոգեբանությունում մեծ ուշադրություն է դարձվում սոցիալական ինքնության ձևավորմանը և կառուցակցմանը: Բազմաթիվ միջառարկայական մոտեցումներից

[104] Տե՛ս Serbin, T. & Sheila, K. *Studies in Social Identity*. (1983).

կարելի է առանձնացնել սոցիալական կոնստրուկտիվիզմը, սիմվոլիկ և դրամատուրգիական ինտերակցիոնիզմը, էթնոմեթոդաբանությունը, գիտելիքի սոցիոլոգիան և սոցիալական կոգնիտիվիզմը:

Ինչպես արդեն նշվեց, մեր վերլուծությունը իրականացվելու է առավելապես ***սոցիալական կոգնիտիվիզմի*** տեսանկյունից: Սոցիալական կոգնիտիվիզմի շրջանակներում սոցիալական ինքնությունը ուսումնասիրվում է միայն սոցիալական ռեպրեզենտացիաների, ինքնակատեգորիզացումների և սոցիալական համեմատության համատեքստում:

Սոցիալական ինքնությունը ճանաչողական դիրքերից սկսել է հետազոտվել դեռևս անցյալ դարի վաթսունական թվականներին՝ որպես հետևանք սոցիալական հոգեբանների կողմից իրականացվող բազմաթիվ գիտափորձերի սոցիալական կատեգորիզացումների, էթնոցենտրիզմի և միջխմբային հարաբերությունների ոլորտում: Ավելին՝ այս մոտեցումը ստացել է տեսության կարգավիճակ և կոչվել է սոցիալական ինքնության տեսություն: Սոցիալական ինքնության տեսության հիմնադիրները՝ Հ. Թաջֆելը և Ջ. Թերները, հատկապես կարևորում էին սոցիալական ընկալման դերը սոցիալական ինքնության ձևավորման գործընթացում: Ըստ էության, սոցիալական ինքնությունը համարվում է մեր Ես-ի այն ասպեկտը, որը ձևավորվում է մեր և այլոց համեմատության հետ: Ինչպես նշում էր Թաջֆելը. *«Յուրաքանչյուր հասարակություն իրեն հատուկ իշխանության, կարգավիճակի և վարկանիշի բաժանման համակարգով, դիրքավորում է մեզ տարբեր սոցիալական տարակարգերի մեջ, որոնք իրենց հերթին դառնում են մեր ինքնադիրքավորման կարևորագույն մասը»*[105]:

Արդեն 70-ականներին Թերները վերաձևակերպեց սոցիալական ինքնության տեսութան որոշ հիմնադրույթներ և կոչեց դրանք *ինքնակատեգորիզացման տեսություն,* որն ըստ էության, համար-

[105] Տե՛ս նույն տեղում:

վում է առաջինի ածանցյալը և հատկապես կենտրոնացած է սոցիալական ինքնության կառուցակցման գործընթացում ճանաչողական տեսակյունների վրա[106]:

Ինքնակատեգորիզացման տեսությունը դիտարկում է Ես-ի կոնցեպտոալացման հիմնախնդիրը միջխմբային համատեքստում և այն, թե ինչպես է սոցիալական կատեգորիզացումների համակարգը ձևավորում և սահմանում անհատի տեղը հասարակությունում[107]: Ինչպես սոցիալական ինքնության, այնպես էլ ինքնակատեգորիզացման տեսությունների տեսանկյունից սոցիալական ինքնությունը սահմանվում է որպես «անհատի իմացությունը որոշակի սոցիալական խմբին պատկանելության վերաբերյալ համապատասխան զգացմունքային և արժեքային իմաստի հետ մեկտեղ, որն այդ պատկանելությունը տրամադրում է»[108]: Այս սահմանումը ներառում է երեք հիմնական բաղադրիչներ՝

1. կոգնիտիվ- իմացություն որոշակի խմբին պատկանելության մասին,
2. գնահատման-դրական կամ բացասական վերաբերմունք խմբի նկատմամբ,
3. զգացմունքային–խմբում զգացմունքային ներգրավվածության աստիճանը:

Սոցիալական ինքնության ուսումնասիրությունը ժամանակակից աշխարհում ձեռք է բերում հատուկ արդիականություն անընդհատ սոցիալական փոփոխությունների ժամանակ: Սոցիալական ինքնության, կոլեկտիվ գործողությունների և սոցիալական փոփոխությունների փոխկապվածության ուսումնասիրումը կարող է օգնել հասկանալու ներկայիս այնպիսի կարևորագույն երևույթներ, ինչպիսիք են սոցիալական շարժումների առաջացումը, կոլեկտիվ

---

[106] Տե՛ս Suls, J. & Wills, Th. *Social Comparison: Contemporary Theory and Research*. (1991).

[107] Տե՛ս նույն տեղում:

[108] Տե՛ս *The Psychology of the Social Self*, ed. By T. Tyler, R. Kramer, O. John. (2014).

ինքնագիտակցության, էթնիկ և սոցիալական ինքնությունների ձևավորումը: Սոցիալական ինքնության վերլուծությունը սոցիալական կոգնիտիվիզմի դիրքերից կարող է նաև տրամադրել պատասխաններ հետևյալ հարցերի. ա) Երբ է խումբը սկսում բացասական ինքնակատեգորիզացման գործընթացը, բ) Ինչ պայմաններում բացասականորեն բնորոշված խումբը պասիվ և անտարբեր կմնա և որ պայմաններում այն կոլեկտիվ ակտիվ գործողությունների, գ) Երբ խմբի անդամները հակված կլինեն կիրառել անհատական ռազմավարություններ՝ սեփական դրական Ես-հայեցակարգը պահպանելու/ձևավորելու համար, իսկ երբ առավել հետաքրքրված կլինեն դրական կոլեկտիվ Ես-հայեցակարգի ձևավորման մեջ և հետևաբար կանցնեն անհատական գործողություններից կոլեկտիվ գործողությունների:

Հետխորհրդային երկրներում սոցիալական կոգնիցիաների փոխակերպումների հիմնախնդիրը մշակվել է այսպես կոչված «հոմո սովետիկուս»-ի հայեցակարգի շրջանակներում, որը շեշտադրում է հետխորհրդային տարածաշրջանում ապրող մարդու «գիտակցության պաթոլոգիական ճեղկվածքը» և այնպիսի որակների և վարքի մոդելների գերակայումը, ինչպիսիք են անօգնականությունը, անկարողությունը ինքնուրույն որոշումներ կայացնել, կոնֆորմիզմը, երկակի ստանդարտների առկայություն և կիրառումը մտածողության, խոսքի և վարքի մեջ (Պ.Շտոմպկա):

Միգրացիայի ազդեցությունը սոցիալ-ճանաչողական ոլորտում ընթացող փոփոխությունների վրա. Միգրացիայի և սոցիալական կոգնիցիաների փոխկապվածության հարցը լիարժեք ուսումնասիրված չէ սոցիոլոգիայում: «Գյուղական համայնքները որպես անցումային հասարակությունում ազգային ինքնության ավանդական տարրերի վերարտադրման մեխանիզմ Հայաստանի և Բելառուսի օրինակով» ծրագրի շրջանակներում իրականացված որակական հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տվել որոշ չափով հասկանալ և նկարագրել միգրանտների արժեհամակար-

գում և դիրքորոշումներում տեղի ունեցող ֆունդամենտալ փոփոխությունները և վերլուծել ընթացող ճանաչողական փոփոխությունների ազդեցությունը Հայաստանում միգրանտների սոցիալական ցանցերի խաթարման/ամրապնդման և/կամ վերաիմաստավորման վրա:

Հետազոտությանը մասնակցել են տարբեր տարիքի 45 միգրանտ Նոյեմբերյանի սահմանամերձ գյուղերից: Հարցվողներից 17-ը կին էին, 28-ը տղամարդ: Հետազոտությունը իրականացվել էր 2012 թվ. գարնանը:

Մինչ ճանաչողական ոլորտում ընթացող փոփոխությունների վերլուծությանն անդրադառնալը՝ նկարագրենք միգրանտների երկրից մեկնելու դրդապատճառները և ադապտացիայի գործընթացի ազդեցությունը հետագայում արժեհամակարգի փոփոխության վրա:

Միգրանտների հետ հարցազրույցների տվյալների համաձայն՝ միգրանտների որոշումը մեկնել Հայաստանից հիմնականում պայմանավորված էր տնտեսական գործոններով, որոնցում առանձնանում են հետևյալները՝

- միգրանտի մասնագիտությանը և տարիքին համապատասխան աշխատանքի բացակայություն,
- ընտանիքի մինիմալ ծախսերը հոգալու աշխատանքի բացակայություն (աշխատանք կա, բայց այդ գումարով չենք կարող գոյատևել),
- երեխաների ուսման համար գումարի բացակայություն,
- պարտքերը և վարկերը մուծելու հնարավորության բացակայություն:

Տնտեսական դժվարությունները ուղեկցվել են նաև խորը հոգեբանական ճնշվածությամբ և հուսահատվածությամբ: Գրեթե բոլոր հարցված միգրանտները նշում են, որ Հայաստանում իրենց զգում էին մարգինալ և ոչ արտոնյալ պայմաններում: Տնտեսական դժվարությունները շատերի մոտ զուգակցվել են նաև ինքնագնահատականի և ինքնահարգանքի նվազմամբ: Այս երկու գործոնների համակցությու-

նը (տնտեսական դժվարություններ և սոցիալ-հոգեբանական կարգավիճակի կտրրուկ նվազում) պատճառ են հանդիսացել նաև, որոշ առումներով, բավականին ռիսկային վարքագծի դրսևորման: Հիմնականում միգրանտները հույսը դնում են մեկնող երկրում արդեն իսկ ունեցած հարազատների, բարեկամների, մտերիմ ընկերների վրա, սակայն որակական հարցազրույցի արդյունքների վերլուծությունը թույլ տվեց հանգել նաև հետևյալ եզրակացությանը. որքան ավելի մեկուսացված և խտրականացված է իրեն զգում պոտենցիալ միգրանտը Հայաստանում, այդքան ավելի է մեծանում նրա կողմից դրսևորված ռիսկային վարքագիծը: Ռիսկային վարք ասելով այս համատեքստում հասկանում ենք այն, որ միգրանտը որոշում է կայացնում մեկնել՝ հիմնվելով լայն սոցիալական ցանցի վրա: Այսպես, այն ռեսպոնդենտները, ովքեր նկարագրում էին իրենց իրավիճակը Հայաստանում որպես «թշվառ», «անհույս», «անտանելի», «անմարդկային» ավելի հակված էին բացատրել իրենց մեկնելու որոշումը նրանով, որ *«ավելի վատ լինել միևնույնն է չէր կարող լինել, և երբ ծանոթիս բարեկամը (կողքի խանութում աշխատողի ընկերը և այլն) ասաց, որ շինարարության վրա աշխատող մարդ են փնտրում Ռուսաստանի քաղաքներից մեկում, երկու օրում հավաքվեցի և մեկնեցի»*:

Միգրանտների զգալիորեն քիչ մասը մեկնել է արտասահման ինքնազարգացման և ինքնադրսևորման համար: *«Ես որոշեցի մեկնեմ Հայաստանից, որպեսզի դառնամ մասնագետ և ինքնադրսևորվեմ, քանի որ Հայաստանում ես չեի զարգանում» (կին, 22):*

Սահմանամերձ գյուղերի միգրանտների մեծ մասը առաջին անգամ մեկնել է արտասահման 1990-1998 թթ.: Հարվցածների զգալի - մասը մեկնել էր Ռուսաստան. երկրի ընտությունը պայմանավորված էր հետևյալ գործոններով՝ 1) Ռուսաստանում ապրում էին բարեկամներ կամ ընկերներ, 2) ռուսերեն լեզվի իմացություն, 3) վիզա ստանալու անհրաժեշտության բացակայություն և մեկնելու համեմատաբար էժան ճանապարհ, 4) Ռուսաստանի բարքերին և նորմերին ծանոթ լինելը, 5) ինչպես նաև (որոշ տարիքային խմբի պարա-

գայում), 6) ջերմ հիշողությունները սովետական ժամանակների մասին և Ռուսաստանը որպես մայրաքաղաք սիմվոլի ընկալումը:

Հետաքրքրական է նաև, որ գյուղերից մեկնած միգրանտների մեծամասնությունը խուսափում են իրենց անվանել «միգրանտ» և նախընտրում են ասել, որ «ժամանակավորապես փոխել են ապրելու վայրը»: Միևնույն ժամանակ ընդմիշտ Հայաստան վերադառնալը ավելի շատ սիմվոլիկ և զգացմունքային բնույթ ունի, քանի որ հարցվածներից ոչ մեկը չի պատրաստվում ընդմիշտ վերադառնալ Հայաստան մոտակա անռվազն տաս տարիների ընթացքում:

Միգրանտների ադապտացիայի գործընթացը մեծապես պայմանավորված է իրենց հրավիրող կողմի (բարեկամների, ընկերների) ադապտացվածության աստիճանով. որքան ավելի ինտեգրված է հրավիրող կողմը, այդքան ավելի արագ է ինտեգրվում միգրանտը և, հակառակը, եթե հրավիրող կողմը մեկուսացված է հատկապես հայ համայնքից տվյալ երկրում, միգրանտը ևս դառնում է մարգինալ: *«Մենք ընդհանրապես չենք շփվում հայ համայնքի հետ և քանի որ լեզու չգիտենք, գրեթե չենք կարողանում շփվել այլ ազգերի ներկայացուցիչների հետ: Մեր մեկուսացումը պայմանավորված է մեր բարեկամների մեկուսացմամբ, իրենք ընդհանրապես խուսափում են հայ համայնքից» (կին, 46):*

Միգրանտների դիրքորոշումներում ընթացող փոփոխությունների քննարկում. Ինչպես ցույց են տալիս որակական հետազոտության տվյալները առավել ցայտուն կոգնիտիվ փոփոխությունները տեղի են ունեցել գյուղական միգրանտների շրջանում հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1. **Դիրքորոշումը տարբեր ազգերի և կրոնների նկատմամբ:** Հետազոտության արդյունքների համաձայն միգրանտների մեծ մասը ավելի հանդուրժող են դարձել այլ ազգերի ներկայացուցիչների նկատմամբ, ինչը առաջին հերթին պայմանավորված է այլ ազգերի և կրոնների ներկայացուցիչների հետ անմիջական հաղորդակցություններով: *«Ես կտրուկ փոխել*

եմ իմ դիրքորոշումը այլ ազգերի նկատմամբ, դարձել եմ շատ ավելի հանդուրժող և հավասարի պես եմ վերաբերվում բոլորին՝ լինի դա սև, թե՝ չինացի: Հայաստանում ես միշտ մտածում էի, որ հայերը ամենալավն են» (տղամարդ, 42): Հետաքրքրական է նաև միգրանտների և իրենց հյուրընկալած կողմի էթնիկ և կրոնական դիրքորոշումների միջև կապը: Նկատվում է հետևյալ միտումը. որքան ավելի հանդուրժող և հաղորդակցվող է միգրանտնին հյուրընկալած անձը կամ ընտանիքը, այդքան ավելի դրական էթնիկ և կրոնական դիրքորոշում է դրսևորում հենց ինքը միգրանտը: Հակառակը, որքան ավելի բացասական է այլ ազգերի նկատմամբ հյուրընկալած կողմի դիրքորոշումը, այդքան ավելի ոչ հանդուրժող է դառնում միգրանտը: *«Մենք ոչ մեկի հետ չենք շփվում Ռուսաստանում, մենք լիովին գտնվում ենք իմ ամուսնու եղբոր ընտանիքի ազդեցության տակ, նա նույնիսկ հայերին չի ընդունում, էլ ուր մնաց այլ ազգերի: Ժամանակի հետ այնքան ենք մեկուսացել, որ որևէ ընկեր չունենք այստեղ» (կին, 46 տ.):*

2. **Սոցիալական շերտավորում և սոցիալական արդարություն**: Արտագաղթը իր ազդեցությունն է ունեցել նաև միգրանտների շրջանում սոցիալական արդարության մասին պատկերացումների վրա: Սոցիալական կոգնիտիվիզմի տեսանկյունից ապագայի մասին անորոշության և սեփական կյանքի անվերահսկելիության զգացումները (որոնք բնորոշ են այսօրվա Հայաստանին) անձի կամ խմբի մոտ ակտիվացնում են այսպես կոչված սոցիալական ինքնության ստատուս քվոյի պահպանման ռազմավարությունը: Այս ռազմավարությունը հիմնականում թեև պաշտպանական բնույթ ունի, սակայն այնուամենայնիվ ապակառուցողական է իր բնույթով: Սոցիալական ինքնության ստատուս քվոյի պահպանման առավելապես վտանգավոր հետևանքներից են այնպիսի

հայտնի սոցիալական կոգնիցիաները, ինչպիսիք են արդարության և սեփական ոչ արտոնյալ կարգավիճակի խեղաթյուրված ընկալումը, ստեղծված սոցիալական կառուցվածքի արդարացումը, ինստիտուցիոնալ լոյալությունը, սեփական սոցիալական կարգավիճակի լեգալիզացումը, ֆատալիզմը և, վերջապես, դիմադրությունը փոփոխություններին: Ըստ էության, Հայաստանում պոտենցիալ միգրանտների մեծ մասը, հակված է կիրառել հենց ինքնության ստատուս քվոյի պահպանման ռազմավարությունը, որը, մի կողմից հարմարվելու, իսկ մյուս կողմից սեփական կյանքը գոնե նվազագույն ձևով վերահսկելու և կառավարելու մեխանիզմ է իրենից ներկայացնում: Օրինակ, **արդարության խեղաթյուրված ընկալումը** դրսևորվում է նրանում, որ հաճախ մարդիկ այն իրավիճակը, որում հայտնվել են գնահատում են, որպես արդար, նույնիսկ եթե կան լուրջ ապացույցներ հակառակի մեջ: Ինչպես նշում է Էլստերզը. «Հասարակության ճնշված և շահագործված խմբերը հակված են հավատալու, որ ստեղծված սոցիալական կարգը միանգամայն արդարացի է»[109]: Այդ սոցիալական կոգնիցիայի ետևում ընկած դրդապատճառը իրավիճակը վերահսկելն է, քանի որ միայն այս դեպքում ճնշված խմբերը կարող են վերահսկել և կառավարել իրավիճակի հետևանքները: Այսպիսի սոցիալական կոգնիցաները, բնականաբար, ունեն շատ բացասական հետևանքներ ինչպես խմբի համար որպես միավոր, այնպես էլ այդ խմբի առանձին ներկայացուցիչների համար, քանի որ դրսևորվում են իրենց իսկ ճնշող սոցիալական ինստիտուտների և անհատների արդարացման մեջ: Բացի այդ, արդարության խեղաթյուրված ընկալումը կարող է հանգեցնել նրան, որ հենց

[109] Crosby, 1982; Deutsch, 1985; Fine, 1979; Jennings, 1991; Lerner, 1980; Lind & Tyler, 1988; Major, 1994; Martin, 1986; Tyler, 1990.

այդ անարդարության զոհերը սկսեն մեղադրել իրենք իրենց: Ինչպես նշում են Լերները և Միլլերը. «Մարդիկ պահանջ ունեն հավատալու, որ աշխարհը արդար է, և որ ընդհանուր առմամբ մարդիկ ստանում են այն, ինչին արժանի են»[110]: Բազմաթիվ սոցիալ-հոգեբանական հետազոտություններ ցույց են տալիս, որ հավատը առ այն, որ աշխարհը, հետևաբար ստեղծված իրավիճակը արդար է, բացասաբար կորելացվում են սոցիալական և քաղաքական ակտիվության և մասնակցության հետ: Չնայած արդարության խեղաթյուրված ընկալման վերաբերյալ բազմաթիվ առկա հետազոտությունների, դրանցից քչերն են անդրադառնում միջմշակութային համեմատությունների այս ոլորտում: **Մեփական ոչ արտոնյալ սոցիալական կարգավիճակի խեղաթյուրված ընկալումը** կարող է բերել նրան, որ մարդիկ սկսեն պարզապես չնկատել և գիտակցվել, որ գտնվում են անբարենպաստ և ոչ արտոնյալ պայմաններում: Ճնշված և խտրականացված լինելու փաստի մերժումը որոշակի պաշտպանական մեխանիզմ է այլ պարագայում անտանելի իրավիճակը մասամբ հաղթահարելու առումով: Այս երևույթը սոցիալական հոգեբանության մեջ կոչվում է «պարադոքսալ բավարարվածություն»[111]: Հետաքրքրական է, որ նույնիսկ եթե մարդիկ գիտակցում են իրենց անձի խտրականացված լինելը, սակայն որևէ բան չեն նախաձեռնում այնքան ժամանակ, քանի դեռ համարում են խտրականացված և ճնշված այն խումբը, որին իրենք պատկանում են: Ինչպես և խեղաթյուրված արդարության ընկալումը, այս սոցիալական կոգնիցիան ևս սահմանափակում է անհատների և խմբերի սոցիալական և քաղաքական ակտիվությունը, և թեև ժամանակավոր պահպանում

[110] Lerner. M., The Belief in a Just World: A Fundamental Delusion,1980.

[111] Crosbi F., Relative deprivation and working women, New York, 1982.

է խմբի սոցիալական ինքնությունը, սակայն երկարատև հեռանկարում կասեցնում է հնարավոր սոցիալական փոփոխությունները: **Սոցիալական դերերի բաժանման արդարացում:** Եվս մեկ սոցիալական կոգնիցիա, որը հակված է սոցիալական ինքնության ստատուս քվոն պահպանելուն, դրսևորվում է հավատքի մեջ, որ անձը կամ խումբը արժանի է այն դերին և կարգավիճակին, որ նա ունի տվյալ հասարակությունում: Այս կոգնիցիայի վտանգը հատկապես մակրո մակարդակում այն է, որ անհատները և խմբերը սկսում են փնտրել մեղքը միայն իրենց անհատական որակների մեջ՝ էապես անտեսելով մակրո մակարդակում ընթացող գործընթացները: Այս կոնգնիցիան առավելապես մեծ տարածում է ստանում այն ժամանակ, երբ հասարակությունում իշխանություն ունեցող ագենտները դառնում են այս գաղափարախոսության ջատագովները և օգտագործելով իրենց ձեռքի տակ ունեցած ռեսուրսները (ՋԼՄ-ներ) բացատրում և լեգիտիմացնում են իրենց օգտին ստեղծված իշխանության բաժանումը և սոցիալական շերտավորումը: **Ֆատալիզմի տարածումը** հիմնականում դսրևորվում է որևէ նույնիսկ փոքր փոփոխություն կատարելու անհնարիության և անկարողության մեջ և ինչպես վկայում են բազմաթիվ հետազոտություններ քաղաքական ապատիան և ֆատալիզմը առավելագունը զարգացած են ամենախտրականացված և ճնշված խմբերի շրջանում (երևույթը հայտնի է նաև «ֆատալիստական հոռետեսություն» կամ «ուսուցանված անօգնականություն» անվանումներով): **Եվ, վերջապես, դիմադրություն փոփոխությունների հանդեպ կամ, այլ կերպ ասած, վարքային կոնսերվատիզմը՝ ծանոթ, բայց ոչ արդյունավետ գործողությունների վերարտադրումը:**

Ինչպես երևում է հետազոտության արդյունքներից, միգրանտների շրջանում տեղի են ունենում որոշակի փոփոխություններ հենց

սոցիալական արդարության և սոցիալական շերտավորման ընկալումներում: Հարցվածների զգալի մասը գիտակցում էր արդարության մասին իրենից դիրքորոշումներում տեղի ունեցած փոփոխությունները: *«Ապրելով Հայաստանում, ես չէի նկատում ինչ մեծ է սոցիալական շերտավորումը տարբեր սոցիալական խավերի միջև, մենք չենք հարգում ցածր խավի ներկայացուցիչներին, եթե փող չունես, ուրեմն մարդ չես: Այստեղ, ես հասկացա, որ մարդիկ կարող են իրար հարգել՝ անկախ սոցիալական կարգավիճակից» (տարբեր հարցազրույցներից):*

3. **Գենդերային դերեր**: Հաջորդ ոլորտը, որտեղ ևս նկատելի են փոփոխություններ՝ գենդերային դերերի և նորմերի մասին պատկերացումների փոխակերպումներն են: Հատկապես հարցված երիտասարդ տղամարդկանց շրջանում արձանագրվել են փոփոխություններ կանանց և տղամարդկանց համար ընդունելի վարքի վերաբերյալ: *«Իմ վերաբերմունքը կանանց և տղամարդկանց դերերի մասին կտրուկ փոփոխվել է, ես դարձել եմ շատ ավելի լիբերալ, քան Հայաստանում էի, ես այլևս չեմ մտածում, որ կինը պետք է չաշխատի և մնա տանը: Շատ լավ է լինել պահպանողական և շարժվել ավանդույթներով, բայց ոչ ծայրահեղ, ինչպիսին ես էի» (տղամարդ, 25):*

4. **Երեխաների դաստիարակություն**: Միգրանտների դիրքորոշումները ծնող-երեխա հարաբերությունների մասին ևս փոփոխվել են արտագաղթի ընթացքում: *«Հայաստանը լքելուց հետո, իմ վերաբերմունքը երեխաների դաստիարակությանը կտրուկ փոխվել է: Առաջ ես կարծում էի, որ միշտ պետք է վերահսկեմ իմ երեխաներին, սակայն այժմ կարծում եմ, որ դա շատ սխալ մոտեցում է: Մենք պետք է ազատություն տանք մեր երեխաներին ընտրել սեփական ապրելաոճը: Յուրաքանչյուր երեխա ունի անհատականություն և մենք պետք է այն հարգենք» (կին, 45):*

Միգրանտների ճանաչողական ոլորտում ընտացող նկարագրված փոփոխությունները չեն կարող չանդրադառնալ իրենց և Հայաստանում ունեցած սոցիալական ցանցերի միջև հարաբերությունների վրա: Որակական հետազոտության արդյունքում հնարավոր դարձավ առանձնացնել միգրանտների երկու խումբ. 1) նրանք, ում հարաբերությունները Հայաստանում մնացած ընտանիքի անդամների և բարեկամների հետ ամրապնդվել են *(Հայաստանից մեկնելուց հետո, ես սկսեցի հետաքրքրվել այն մարդկանցով, ում հետ հազվադեպ էի հաղորդակցվում Հայաստանում)*: Հետաքրքրական է, որ որոշ դեպքերում Հայաստանում մնացած բարեկամների կամ ընկերների հետ հարաբերությունները բարելավվել են, քանի որ միգրանտը կարողացել է ետ վերադարձնել նախկինում ունեցած պարտքերը, 2) նրանք, ովքեր դադարել են հաղորդակցվել Հայաստանում ունեցած սոցիալական ցանցերի հետ: Սոցիալական ցանցերի խաթարման հիմնական պատճառը Հայաստանում սոցիալական ցանցերի ներկայացուցիչների և միգրանտի փոխընկալումների և սպասելիքների միջև եղած կոնֆլիկտներն են: Ըստ միգրանտների՝ իրենց սկսել են ընկալել որպես հարուստ և ակնկալում են աջակցություն, ինչը բերում է կոնֆլիկտների:

4.4 Ագրարային ոլորտի բարեփոխումների փորձը և հեռանկարները ՀՀ-ում

Ինչպես վերը նկատեցինք, տնօրինվող ռեսուրսների սպառման հարցերը ցուցադրում են քաղաքի և գյուղի միջև առկա տարբերությունները: Նախկինում այդ տարբերությունները բնութագրվում էին ի օգուտ քաղաքի, ինչը կապված էր ինդուստրիալիզացիայի, հասարակության մոդեռնիզացիայի և ուրբանիզացիայի, հետևաբար քաղաքականության հետ: Այսպիսի քաղաքականության շրջանակներում քաղաքի կյանքը ձևավորվում էր ի սկզբանե որպես ավելի հարմարավետ կենցաղային ենթակառուցվածք տարատեսակ օբյեկտնե-

րի հասանելիության տեսանկյունից: Սակայն այն պահից սկսած, երբ հեռուստահաղորդակցությունների զարգացման մակարդակը հասել է դրանց համատարած ընդգրկվածությանը, երբ ինտերնետը կարող է հասանելի լինել պրակտիկորեն մոլորակի ցանկացած անկյունում, գյուղական կյանքը ձեռք է բերել նշանակալի առավելություններ՝ ի տարբերություն քաղաքի կյանքի: Օրինակ՝ մասնակցությունը մշակութային կյանքին հնարավոր է դարձել առանց դեպի քաղաք ֆիզիկական կամ անընդհատ տեղաշարժման: Համերգների և բեմականացումների առցանց դիտումը նույն հաջողությամբ հնարավոր է ինչպես քաղաքային բնակարանում, այնպես էլ գյուղական տանը, իսկ ամենագնացների և զարգացած ավիահաղորդակցությունների կիրառումը թույլ է տալիս այցելել համերգների ոչ միայն մոտակա քաղաքներում, այլ նաև մոլորակի հակառակ կողմում:

Այսպես, Բելառուսում քաղաքների և գյուղերի միջև դեռևս գոյություն ունեն տարբերություններ ինֆորմացիոն և հաղորդակցային տեխնոլոգիաների կիրառման հաճախության և ծավալի առումով, ինտերնետի օգտագործումը քաղաքներում և քաղաքային տիպի ավաններում 10-20 %-ով բարձր է, քան գյուղական բնակավայրերում, սակայն այդ տարբերությունը այնուամենայնիվ վերաբերում է Բելառուսի գյուղական երիտասարդության ¼-ից քիչ մասին:

Համակարգչից օգտվելու նշանակալի տարբերություններ ըստ բնակության վայրի չեն նկատվում, սակայն ինտերնետի հաստատուն և անընդհատ մուտքի առումով քաղաքի բնակիչները գերակշռում են (15-20 % ավելի), քան գյուղի բնակիչները: Ընդհանուր առմամբ, Բելառուսում 15-24 տարեկան երիտասարդների շրջանում 98 %-ից ավելին (98.6 % կանայք և 98.4 տղամարդիկ) օգտվել են համակարգչից, իսկ մոտավորապես 95 %-ը (95.3 % կանայք և

94.2% տղամարդիկ) օգտվել են ինտերնետից որևէ տիպի սարքի միջոցով[112]:

Աղյուսակ 4.2

15-24 տ. բնակչության տոկոսը, որը օգտվում է համակարգչից կամ ինտերնետից

	Քաղաքում	Քաղաքատիպ ավաններում	Գյուղական բնակավայրերում	
	Կանայք	Տղամարդիկ	Կանայք	Տղամարդիկ
Օգտվել են համակարգչից				
Ինչ-որ ժամանակ	98,7	99,3	98,1	95,5
Վերջին 12 ամիսների ընթացքում	97,4	98,8	94,7	86,7
Վերջին ամսվա ընթացքում շաբաթական 1 անգամից ոչ շատ ավելի	91,9	95,7	83,7	81,3
Օգտվել են ինտերնետից				
Ինչ-որ ժամանակ	97,7	97,9	88,8	82,6
Վերջին 12 ամիսների ընթացքում	97,1	97,0	85,9	81,6
Վերջին ամսվա ընթացքում շաբաթական 1 անգամից ոչ շատ	93,7	92,9	77,8	70,8

Հեռուստահաղորդակցության և գլոբալ տեղեկատվական ցանցերի հասանելիության աստիճանաբար հավասարեցման, շարժա-

[112] Многоиндикаторное кластерное обследование по оценке положения детей и женщин, 2012. Предварительный отчет, февраль 2013 г. – Минск: Юнисеф, Национальный статистический комитет Республики Беларусь, 2013. – 20 с. – с. 19, http://belstat.gov.by/homep/ru/households/mics/results.pdf

կան սարքերի միջոցով ինտերնետի հասանելիության պայմաններում բացահայտվում են գյուղական բնակավայրերում կյանքի մի շարք առավելություններ՝ սկսած էկոլոգիայի և բնական էսթետիկայի մակարդակից մինչև վաղվա օրվա նկատմամբ վստահության և կայունության, քանի որ գյուղական բնակավայրերում մարդու գոյատևումը մեծ չափով կախված է իր իսկ ջանքերից (անգամ հաշվի առնելով կլիմայական փոփոխությունները), քան քաղաքում, որտեղ նրա ռեսուրսներով ապահովվածությունը կապված է աշխատավայրի հետ և ենթարկվում է գործազրկության վտանգի, ինչը նշանակում է եկամտի և սննդի միջոցների աղբյուրի կորուստ:

Այսօր նմանատիպ դիրքորոշումը հետաքրքիր է ոչ միայն միկրոսոցիոլոգիայի տեսանկյունից կյանքի ոճերի, հանգստի հնարավորությունների, արժեքային կողմնորոշումների և քաղաքային ու գյուղական բնակավայրերի բնակիչների վարքային մոդելների վերլուծության համար: Ինչպես ցույց է տալիս արևմտաեվրոպական երկրների հետճգնաժամային զարգացման պրակտիկան, մի շարք երկրների քաղաքականությունը 2008-2010 թթ. համաշխարհային ֆինանսական համակարգի փլուզումից հետո վերաուղղորդվել է դեպի իրական սեկտորի զարգացումը (ձևավորումը), ինչի արդյունքում ծագել է վերաինդուստրիալացում հասկացությունը, որի դեպքում պետության տնտեսական քաղաքականությունը համադրում է հետադարձ շարժումը արդյունաբերական արտադրությունների ապատեղայնացումից էժան աշխատուժ ունեցող երկրներից (մասնավորապես Ասիայից) դեպի տեխնոլոգիայի ծագման երկիր մասնավորապես արդյունավետության հիման վրա ավելի էժան էներգիայի հաշվին (ատոմային էլեկտրաէներգիան Ճապոնիայի և Ֆրանսիայի, էներգիայի այլընտրանքային աղբյուրները դրա խնայումը Սկանդինավիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Հոլանդիայի, Բելգիայի, մասամբ Մեծ Բրիտանիայի համար):

Վերաինդուստրիալիզացիայի գործընթացների նմանությամբ կարելի է խոսել երկրների վերաագրարարացման պահանջի մասին:

Այսօր ֆինանսական և էներգետիկ անվտանգության հարցերի հետ մեկտեղ քննարկվում են նաև սննդային անվտանգության հարցերը, ինչը ագրարացման հարցը դարձնում է ոչ միայն տնտեսապես, այլ նաև աշխարհաքաղաքականորեն արդարացված՝ նվազեցնելով երկրների բնակչության կախվածության ռիսկը արտասահմանյան սննդամթերքի ներմուծման աղբյուրներից: Սննդային ապահովվածության հարցը այսօր հատկապես սուր կերպով անցնում է ինչպես զարգացած արևմտաեվրոպական երկրներում, այնպես էլ զարգացող երկներում: Այսպես, բուսական յուղի և հացահատիկի կտրուկ թանկացումը աշխարհում բերել է սննդամթերքի գների ներքին աճին մասնավորապես Հյուսիսային Աֆրիկայի երկրներում՝ առաջացնելով այսպես կոչված «ժասմինային» հեղափոխությունները (2010-11 թթ.): 2013 թ. փետրվար-մարտ ամիսների ընթացքում Եգիպտոսում հացահատիկի անբավարարությունը առաջացրեց հերթական կառավարական ճգնաժամ և խռովությունների ալիք: Այս ամենը վկայում է այն հիմնախնդիրների իրականության մասին, որոնք կարող են կապված լինել ժամանակակից աշխարհում սնընդամթերքի անվտանգության ասպեկտների անբավարար հաշվարկի հետ:

Անշուշտ աշխատանքը գյուղական տնտեսությունում ունի մի շարք բնութագրիչներ, որոնք զիջում են գրասենյակային աշխատանքին. երիտասարդության զգալի մասը գրասենյակային փոշին նախընտրում է դաշտի հողից և կավից: Սակայն հողի հետ աշխատանքի համար պաշտպանական միջոցների տարածումը (ձեռնոցներից մինչև օդափոխիչով և կլիմայական վերահսկողությամբ կոմբայններ) զգալիորեն նվազեցնում է ժամանակակից քաղաքացիների հրաժարումը գյուղական աշխատանքի անհրամարությունների նկատմամբ: Արդյուքնում վերաագրարացման հարցերը դառնում են ոչ միայն տեսական մտորումների առարկա, այլ նաև աստիճանաբար ձեռք են բերում սեփական ապաստարան ունեցող սոցիալական պրակտիկիայի կարգավիճակ, որի դեպքում տարբեր սերունդների

ներկայացուցիչները, ովքեր քաղաքային կազմակերպություններում իրենց գործունեությամբ հասել են որոշակի կարգավիճակային և տնտեսական արդյունքների, որոշումներ են կայացնում այն մասին, որ փոխեն բնակության վայրը կամ նույնիսկ գործունեության վայրը՝ տեղափոխվելով գյուղական բնակավայր: Ընդ որում, եթե ինդուստրիալիզացիայի և ուրբանիզացիայի բարձր մակարդակ և նախևառաջ յուրահատուկ արժեքային սանդղակ ունեցող հասարակության մոդեռն զարգացման փուլում գտնվող երկրներում, ինչպիսին է Բելառուսը, ավանդական արմատներից անջատումը հասել է զգալի մասշտաբների, ապա Հայաստանում բնակավայրերի բոլոր ձևերում բնակիչները մինչ այժմ ակտիվ մասնկացում են գյուղական համայնքների (որտեղից նրանք ծագում են) գործունեությանը:

Հետազոտության շրջանակներում Հայաստանի հարցված բնակչության 88.2 %-ը պատասխանել են, որ մասնկացում են ազգակցական, ընկերական հանդիպումներն, ծեսերին, տոներին, ծիսակատարություններին, որոնք տեղի են ունենում իրենց համայնքում: Ընդ որում 53 %-ը մասնակցում են «հաճախ» կամ «միշտ»: Ավելին, 88 %-ը պատասխանել է, որ մասնակցում է համայնքային (ոչ ընտանեկան) ընգհանուր հիմնախնդիրների լուծմանը, որից 41.1 %-ը ընտրել են այս հարցի «միշտ» պատասխանը, իսկ 10.8 %-ը՝ «երբեք» և «գրեթե երբեք» պատասխանները:

Ընդ որում եկամտի հիմնական աղբյուրների շարքում առաջին տեղում նշվել են միջոցները արտասահմանից, երկրորդ տեղում՝ աշխատավարձը, իսկ երրորդ և չորրորդ տեղերում նշվել են հողագործությունն ու անասնաբուծությունը.

Աղյուսակ 4.3

Ֆինանսական եկամտի հիմնական աղբյուրները, տոկոսները ըստ պատասխանների

Ֆինանսական եկամտի աղբյուրները	**Ընտրված պատասխանների տոկոսը**	**Շարք/ տեղ**
Օգնություն արտասահմանից	28,4%	1.
Աշխատավարձ	21,9%	2.
Հողագործություն	14,5%	3.
Անասնաբուծություն	13,9%	4.
Կենսաթոշակ	11,8%	5.
Ձեռներեցություն	3,8%	6.
Նպաստ/ Դրամային հումանիտար օգնություն	2,8%	7.
Այգեգործություն	2,2%	8.
Օգնություն Հայաստանում բնակվող ազգականներից	0,4%	9.
Բնակարանի կամ հողի վարձատրում	0,3%	10.

Այսպիսով, Հայաստանի բնակչության զգալի մասի համար հողի վրա գործունեությունը (հողագործությունը, անասնաբուծությունը, այգեգործությունը՝ ընդամենը 30.6%) դեռևս հանդիսանում է եկամտի կարևոր աղբյուր արտերկրի ազգականներից ստացվող օգնության կամ այլ արտասահմանյան աղբյուրներից աշխատավարձի և կենսաթոշակի հետ միաժամանակ:

Հարկ է նշել, որ Հայաստանը և Բելառուսը իրենցից ներկայացնում են ԱՊՀ երկրների շրջանում ագրարային տնտեսության ոլորտում շուկայական հարաբերությունների անցման ամենահաջող (ՀՀ) և նվազագույն տրավմատիկ (ԲՀ) օրինակներ: ԱՊՀ-ում ռադիկալ ագրարային շուկայական հեղաշրջումները բնութագրվում էին սեփականության, սոցիալական կառուցվածքի, գործունեության մեխանիզմների, աշխատանքային գործընթացների կազմակերպման սկզբունքային ռազմավարական փոփոխություններով:

Բելառուսի Հանրապետությունում, հաշվի առնելով նրա միջանկյալ դիրքը Եվրոմիության և ՌԴ արևմտյան շրջանների միջև, արագ զարգացում է ապրում այսպես կոչված օրգանական («էկոլոգիական») գյուղատնտեսությունը, որն ուղղված է պարարտանյութերի (բնական ծագման) կիրառման մինիմալացմանը և սերմային ֆոնդի կամ այլ գենոմոդիֆիկացնող տեխնոլոգիաների ազդեցության կիրառման կատեգորիկ բացառումը: Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը զբաղեցնում է աննշանակալի տեղ: Հայաստանում միայն 336 հա տարածքն է զբաղեցվում օրգանական գյուղատնտեսությամբ կամ 0.2 % ամբողջ տարածքից՝ ի տարբերություն Լիխտենշտեյնի, որտեղ նմանատիպ ագրարային արտադրությամբ զբաղեցվում է 29,7%[113], որին հաջորդում են Ավստրիան և Շվեյցարիան:

Գյուղատնտեսությունը կարևոր դեր է խաղում Բելառուսի տընտեսությունում՝ չնայած բնական պայմանները մասնագետների կողմից գնահատվում են որպես միջին, այսինքն՝ որպես ռիսկային դանդաղեցման տարածք:

Հեղաշրջումների սկզբնական փուլում (1992–1995 թթ.) օգտագործվում էին տնտեսության ագրարային սեկտորի կառավարման տնտեսական մեթոդները, մասնավորապես դրամային էմիսիայի բարձրացումը, գյուղատնտեսական ապրանքների գների լիբերալիզացիան: Այդ շրջանում նախաձեռնվել են հողային հեղաշրջումների իրականացման առաջին քայլերը: 1992 թվականին տնամերձ տարածքների թույլատրելի չափերը ավելացել են երկու անգամ, ինչը բերել է ոչ ապրանքային գյուղատնտեսական արտադրության արագ զարգացմանը: Այդ շրջանում ստեղծվեցին առաջին ֆերմերային տնտեսությունները, սկսվեցին մի շարք կազմակերպությունների սեփականաշնորհման գործընթացները (գյուղատնտեսական ապ-

[113] Семенас С., Синицкий Д. Органическое сельское хозяйство в Беларуси. – Минск, 2009. – с. 11, http://agracultura.org/files/Organik_review.pdf

բանքների վերամշակման և սննդամթերքի վաճառքի կազմակերպություններ): 1995-98 թթ. կիրառվում էին տնտեսական կառավարման մասնավորապես վարչական մեթոդներ, տնտեսության ագրարային սեկտորի հեղաշրջումը դադարեցվեց:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առաջ եկած առաջին տարիների նեգատիվ միտումները, որոնք արտահայտվում էին գյուղատնտեսություններում և սոցիալական ոլորտում, կապված էին անցումային շրջանի, նախկին համակարգի դեֆորմացիայի, միասնական տնտեսական տարածության վերացման և հիմնավոր միջհանրապետական կապերի և փոխադարձ առաքումների դադարեցման հետ: Այսպես, Հայաստանում գործնականորեն ԽՍՀՄ-ի փլուզումից անմիջապես հետո առաջին տարիներին բացարձակորեն ավելացել է գյուղատնտեսական արտադրությունը: Ագրարային հեղաշրջումն իրականացվեց ավելի խորացված կերպով, և ըստ էության, նախկին կոլտնտեսությունների փոխարեն կառուցվեց ագրարային սեկտորի նոր սոցիալական կառուցվածք, որում գերակշռում էին տնտեսությունների անհատական մասերը, որոնք ներառված էին կամավոր գյուղատնտեսական կոոպերացիաներում, որոնք էլ հիմնված էին նախորդ դարերի համայնքային հողօգտագործման ավանդույթների վրա:

Բելառուսի գյուղատնտեսության ակտուալ էկոլոգիական հիմնախնդիրներից մեկը համարվում է հողերի դեգրադացիան: Այդ գործընթացի ուժեղացումը մեծ մասամբ կապված է նրա հետ, որ էկոլոգիապես անկայուն հողերի զգալի մասը օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով երկարատև հողային քաղաքականության արդյունքում, որի առաջնահերթությունը հողատարածքների մեծացումն է: Մի շարք դեպքերում այդ հողերի տիրացումը/մշակումը չի հիմնավորվել թե՛ տնտեսական, թե՛ էկոլոգիական տեսանկյուններից, և հանդիսացել է դրանց դեգրադացիայի պատճառ: Վերջին ժամանակներս արտահայտվում է նաև կլիմայական փոփոխությունների ազդեցությունը այդ գործընթացների վրա:

Հողարմատների դեգրադացիայի դեպքում տեղի է ունենում հողարմատային էկոհամակարգերի ոչնչացում, հումուսի քանակի նվազում, աղտոտում թունաքիմիկատների մնացորդների հանքային պարարտանյութերից և կենդանաբանական մնացորդների կոմպլեկսներից, ինչպես նաև արմատի կառուցվածքի խանգարում և դրա էրոզիա: Ժամանակի ընթացքում դիտվում է հողարմատային ծածկույթի ամբողջական ոչնչացում և հանքային ապարների առաջացում հողի մակերևույթին: Իրավիճակների նման զարգացման հողի դեգրադացիան վտանգավոր է ոչ միայն նրանով, որ մարդիկ կորցնում են հողագործության և բուսաբուծության համար հողերը, այլ նաև տեղի է ունենում էկոհամակարգերի ոչնչացում: Բելառուսում դեգրադացված և էրոզիոն-վտանգավոր հողերը ներառում են 2.6 մլն հա վարելահող: Եթե դիտարկենք բոլոր գյուղատնտեսական հողերը, ապա նման հողերը կազմում են 4 մլն հա կամ ամբողջ պետության տարածքի 19%[114]:

Հողերի դեգրադացիայի բոլոր ձևերից էրոզիան ամենատարածված և նշանակալին է: Վարելահողերի շրջանում դրա տարածման մասշտաբները, տնտեսական և էկոլոգիական վնասի չափերը վկայում են այն մասին, որ այն հանդիսանում է լուրջ խնդիր: Բելառուսում վարելահողերի ընդհանուր մակերեսի մոտավորապես 45 %-ը /կամ 2.3 մլն հա/ համարվում է էրոզիոն վտանգավոր, իսկ դրա 10 %-ը արդեն ենթարկվում է էրոզիայի: Առավել արտահայտված է տորֆային հողերի էրոզիան, որոնք մինչև դրանց ինտենսիվ տնտեսական օգտագործումը կազմում էին երկրի ընդհանուր մակերեսի 14%-ից ավելին: Համապատասխանաբար, տնտեսվարման էքստենսիվ մոդելը չէր կարողացել լուծել հողերի դեգրադացիայի խնդիրը, այլ միայն խորացրել էր այն:

Արևելյան Եվրոպայի երկրներում գյուղատնտեսական հեղաշրջումը առավելապես տեղի էր ունենում հողի մասնավոր սեփա-

[114] См. документы ООН: http://un.by/theme/yearofderertification/inBelarus/

կանաշնորհման հաշվին գյուղատնտեսական նշանակության հողերում մասնավոր սեփականաշնորհման ներմուծման միջոցով: Այսպես, Լեհաստանում, Չեխիայում, Սլովակիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Հարավսլավիայում, Խորվաթիայում, Գերմանիայի արևելյան հողերում ագրարային հարաբերությունների լիբերալիզացիայի հիմքը կազմում է հողի մասնավոր սեփականաշնորհումը և գյուղացիների ունեցվածքը:.

Գյուղում վերափոխումների սոցիալ-տնտեսական վերջնական նպատակների փուլային ձեռքբերումը պայմանավորված է մի խումբ գործոններով, որոնք երևան են գալիս ագրարային հեղաշրջման մոնիթորինգի ընթացքում: Դրանցից են ռադիկալ փոփոխությունների նկատմամբ գյուղական բնակչության մի մասի անպատրաստությունը, շուկայական ձեռներեցությամբ զբաղվող մարդկանց սահմանափակ կոնտինգենտը, հատկապես անհատական մասնավոր տնտեսությունների կազմակերպման համար նյութատեխնիկական բազայի սահմանափակությունը: Կազմակերպական և կառուցվածքային փոփոխությունների ընթացքի և դրանցից առավելագույն արդյունք ստանալու վրա նշանակալի ազդեցություն են ունենում այն գործոններն ու պայմանները, որոնք գտնվում են գյուղական տնտեսության սահմաններից դուրս: Նախ և առաջ տնտեսական քաղաքականության կարգավորված չլինելը, որը բերում է վճարումների բացակայության կամ փոխանակման համաձայնությամբ և գյուղատնտեսական արդյունաբերողներին իրենց ապրանքները ցածր գներով վաճառելու պարտադրման: Սա սահմանափակում է տընտեսվարման վարձակալական հնարավորությունները: Գյուղական տնտեսության մենաշնորհային շրջափակումը, շուկայի կարգավորման ոլորտում սեփական գործառույթների տնտեսականորեն հիմնավորված օգտագործման առանձնացումը պետությունից, ռեֆորմի հստակ, համաձայնեցված իրավական բազայի բացակայությունը բերում է գյուղատնտեսական արտադրության պոտենցիալ հնարավորությունից դանդաղ վերականգնման ու զարգացման:

Ժամանակակից համաշխարհային գյուղատնտեսությունը բարձր տնտեսական արդյունքի և սոցիալական բարեկեցության հասնելու կարևոր պայմաններից են հանդիսանում տնտեսության և կազմակերպությունների կոոպերատիվ ձևերը: Աշխարհում կոոպերատիվ շարժման բազմակողմանի զարգացումը հնարավոր է դարձել հստակ կոոպերատիվային օրենսդրության մշակման և դրա պրակտիկ իրականացման գործում պետության ակտիվ աջակցության շնորհիվ: Անցումային շրջանի բոլոր դժվարությունների պայմաններում գյուղական բնակիչները, հատկապես հողային հարաբերությունների հեղաշրջման հետ կապված, անդառնալիորեն «ներքաշվել են» արմատական սոցիալ-տնտեասկան վերափոխումների օբյեկտիվորեն անհրաժեշտ գործընթացի մեջ: Մի կողմից իրականանում են գյուղացիների նախ և առաջ «ջանասեր» տնտեսվարների ձգտումները, ովքեր միշտ ձգտել են ձեռք բերել ազատություն, սեփականության իրավունք, և հետևաբար, իրենց հողի վրա ինքնուրույն աշխատելու իրավունք, իսկ մյուս կողմից պահպանվում է այս կամ այն միասնական գործունեության նկատամբ բնական ձգտումը:

Գյուղատնտեսությունում ինդիվիդուալիզմի և կոլկտիվիզմի համադրումը պատմականորեն միշտ արտահայտվել է ավելի վառ և յուրահատուկ ձևերում: Սակայն ագրարային հեղաշրջման հետագա զարգացման ագրարային հարաբերութունների համակարգի տընտեսկան ու սոցիալական տեսակյունից դրա ռացիոնալացման համար սկզբունքային է համարվում երկու մոտեցումների ընդունման հարցը որպես ագրարային տնտեսվարման համակարգի նորմալ գործառնման հնարավոր և արդյունավետ հիմք: Այս ամենի հետ է կապված անհատական և ընդհանուր շահերի, մասնավոր և հասարակական ունեցվածքի, դրա իրականացման տնտեսական մեխանիզմի դերի և գործառույթների ընկալումը, որը հիմնված է շուկայական տնտեսության օրենքների վրա: Առանց ֆունդամենտալ դրույթների պարզաբանման հնարավոր չէ տալ մեթոդականորեն «ստուգված» ուղենիշեր, որոն անհրաժեշտ են ագրարային սեկտորում նշ-

ված և իրականացվող վերափոխումների ուղիով առաջընթացի համար:

Ագրարային հարաբերությունների համակարգի տարբեր կողմերի ուսումնասիրություններում վերջին տարիներին ավելի շատ է արտահայտվում ինդիվիդուալիզմի, անհատական շահի, մասնավոր սեփականության իրավունքի միանշանակ ընկալումը որպես նյութական արտադրության նկատմամբ մարդու ստեղծագործական ունակությունների զարգացման որոշիչ հիմք: Ինչ վերաբերում է կոլեկտիվիզմին, ապա տնտեսագետների, պրակտիկների, ընդհանուր առմամբ հանրության լայն շրջանների դիրքորոշումներում տվյալ հարցի վերաբերյալ գոյություն ունեն երբեմն նշանակլի տարաձայնություններ: Դա հատկապես վերաբերում է մասնավոր սեփականության, հողային շուկայի, ինդիվիդուալ և կոլեկտիվ տնտեսությունների, մանր և խոշոր արդյունաբերության հիմնախնդիրներին: Ոչ հազվադեպ որպես ապապետականացման, լայնամասշտաբ սեփականաշնորհման, հողերի մասնավոր տիրապետման և այլ փաստարկների դերում հանդես են գալիս ռուսական համայնքի ավանդույթները, որոնց դեմ դուրս չի գալիս անգամ Ստոլիպինը, ինչպես նաև Ասիայի և Աֆրիկայի (Իսրայել, Գվինեա և այլն) երկրների ժամանակակից պրակտիկան:

Կոլեկտիվիզմի նշանակությունը ոչ թե բացառող, այլ, ընդհակառակը, ընդգծող մեթոդաբանական մոտեցումները (մասնավոր սեփականության իրավունքի վրա հիմնված երկրորդային, ինքնուրույնից առանձնացող անհատական գործունեության) սկզբունքային նշանակություն ունեն գյուղատնտեսության հետագա վերափոխման, ստաբիլիզացիայի և զարգացման հետագա հեռանկարների գիտական հիմնավորման համար: Համայնքը որպես ընտանեկան կապերով կապված ցեղերի ամբողջություն կարող է և պետք է դառնա հիմք ոչ միայն անհատական, այլ նաև ցեղային և ընդհանուր շահի, սեփական ընտանիքի բարեկեցության ապահովման ձգտման համար:

Սա առաջացնում է հողագործությունում կոլեկտիվիզմի ձևի ընտրության հարցը: Հատկապես կարևոր է հաշվի առնել բարոյահոգեբանական գործոնը գյուղական բնակչության տարբեր խմբերի կողմից հեղաշրջման գաղափարի ընկալման մակարդակը, և հատկապես դրա իրականացման մեխանիզմները, այսինքն՝ փոքր հեղաշրջման սոցիալական հիմքի «հասունացման» աստիճանը: Վերջինս տեղի է ունենում շատ դանդաղ և դրա հետ հնարավոր չէ հաշվի չնստել, այլապես փոխհարաբերությունների նոր կառուցվածքներն ու ձևերը, ինչպես ժամանակին կոլտնտեսությունները, «կվայելեն» բոլոր բացասական հետևանքները:

ՄԱԿ-ի կողմից 2012 թվականը հայտարարված էր որպես կոոպերատիվների տարի: Հայաստանում ակտիվ աշխատանքներ էին տարվում կոոպերատիվների ստեղծման և ամրապնդման գծով: Հիմնվում և ամրապնդվում են տնտեսական և արտադրական փոխհարաբերությունները ֆերմերների միջև: Որոշումների համատեղ կայացման և միջոցառումների իրականացման շնորհիվ բարձրանում է գյուղացիների պատասխանատվությունը գյուղական համայնքների սեփականության նկատմամբ: Փոփոխվում են ֆերմերների աշխարհայացքները, ովքեր հասկանում են, որ ավելի շահավետ է կոլեկտիվ աշխատանքը, քան միայնակ գործունեությունը: Համեմատաբար կարճ ժամանկաշրջանում արոտավայրերի վիճակի բարելավման և ենթակառուցվածքի կատարելագործման, սննդային բազայի ստեղծման համար տեխնիկայի տրմադրման շնորհիվ արդեն արձանագրվել է ընտանի անասունների քանակի աճ 6000 գլխով:[115]

Այս փուլում ծագում է գյուղի աջակցման գործում պետության լայն մասնակցության և ագրոարդյունաբերական կոմպլեքսի սոցիալ-տնտեսական վիճակի ստաբիլացման անհրաժեշտություն: Իր հերթին շուկայական մեխանիզմի կարգավորման գործում պետա-

[115] Как идет процесс коллективизации в Армении. Интервью руководителя Агентства по реализации сельскохозяйственных программ Гагика Хачатряна // Новости Армении. http://m.news.am/rus/news/143617.html

կան միջամտության մասշտաբների լայնացման ելակետ պետք է լինի վարչական գործոնի երկրորդային դերի ժամանակ գլխավորապես տնտեսական գործիքների և լծակների կիրառման անհրաժեշտության ընդունումը:

Պետության մասնակցությունը ագրարային շուկայի կարգավորման գործում չի կարող հասնել ընթացիկ, «եզակի» գործողություններին: Դրա զարգացման հիմնական ուղղվածություն և գործառնման բազա պետք է հանդիսանա հիմնարկների ամբողջությունների (ծառայություններ, ֆոնդեր և այլն), որոնք ապահովում են շուկայական գործընթացների սիստեմատիկ և հետևողական կարգավորումը: Մասնավորապես հարկավոր է վերակառուցել կամ նորից ստեղծել կարգավորման այնպիսի ենթահամակարգեր, ինչպիսիք են ֆինանսակրեդիտային մեխանիզմը, հարկային և գնագոյացման համակարգերը: Պետությունը պետք է լիարժեք օգտագործի իր ուղղորդող գործառույթները ագրո-բնապահպանական կարգավորման, ստանդարտացման կառավարման, ընդհանուր վերահսկողության և աջակցության իրականացման հատկապես սոցիալական գործընթացների կառավարման ոլորտում:

Պետական կարգավորման ամբողջ համակարգը պետք է կարողանա ճկունությամբ հարմարվել ընդհանուր տնտեսական վիճակի փոփոխություններին: Սակայն միևնույն ժամանակ կարևոր է նախապես հաստատված ժամանակահատվածում կիրառվող տնտեսական կարգավորիչների որոշակի ստաբիլությունը: Պետական կարգավորման ամենաակտիվ և միևնույն ժամանակ չպարտադրող ձևերը կարող են հանդիսանալ գյուղատնտեսական, ընդ որում նաև տարածաշրջանային ծրագրերը: Տնտեսվարման սուբյեկտների մասնակցությունը նմանատիպ ծրագրերում կամավոր է, սակայն պետության կողմից առաջարկվող ցանկացած ծրագիր պետք է ներառի այնպիսի ազդակներ և սահմանափակումներ, որոնց համադրումը թույլ է տալիս յուրաքանչյուր գյուղատնտեսական արտադրողին և

նրա միջնորդներին իրենց համար որոշել ծրագրին մասնակցելու հարցը:

Դրամավարկային քաղաքականության ոլորտում նպատակահարմար է աստիճանաբար փոխարինել ուղղակի ֆինանսավորումը համա/ ինքնաֆինանսավորման համակարգերով: Դա նորմալ շուկայական հարաբերությունների զարգացման պայման է. Այն պայմանավորում է վարկի՝ պետական տնտեսական կարգավորման կարևորագույն լծակի յուրահատուկ դերը: Տոկոսային դրույքները անհրաժեշտ է հաստատել շուկայի պայմաններից ելնելով՝ տրամադրելով արտոնյալ վարկեր հատուկ ներդրումային ծրագրերի միջոցով դրանք իրականացնելու պայմանով, ինչպես նաև տնտեսությունների նոր ձեռնարկատիրական ձևերին (գյուղական, ֆերմերային կոոպերատիվներ և այլն) աջակցելու նպատակով: Կրեդիտային արտոնությունները, այդ թվում նաև առևտրային բանկերի կոմոից տրամադրվող արտոնությունները (ներառյալ վերջիններիս շահույթի նպատակահարմարությամբ տրամադրվող արտոնությունները) ծածկվում են բյուջետային դաշնային և տարածաշրջանային ֆինանսական միջոցների հաշվին: Վարկային արտոնությունները պետք է կրեն ժամանակավոր բնույթ և կապվեն դրանց տնտեսական և սոցիալական վերջնական արդյունքի հետ: Այսօր անհրաժեշտ է կիրառել և տարածել գյուղատնտեսական ապրանքների գնումների դիմաց պետական կրեդիտացման պրակտիկան: Վարկավորման այս ձևի ավանդային բնույթը պայմանավորված գումարով կամ շուկայական գնով վճարելու պետական երաշխիքների հետ համատեղ խթանում է գյուղատնտեսական ապրանքների հաստատուն մատակարարումը կենտրոնացված ֆոնդերում:

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղյուսակ 1

		Այսօր					3 տարիառաջ				
		1	2	3	4	5	1	2	3	4	5
գյուղատնտեսական հիմնախնդիրներ											
1	Հողատարածքների հասանելիություն	7%	21%	30%	28%	14%	5%	31%	33%	23%	8%
2	Գյուղտեխնիկա	50%	30%	13%	7%	0%	47%	24%	27%	2%	0%
3	Պարարտանյութ	51%	24%	22%	2%	0%	46%	18%	26%	10%	0%
4	Գյուղմթերքի իրացում	9%	18%	51%	18%	4%	10%	38%	40%	7%	5%
ենթակառուցվածքային հիմնախնդիրներ											
5	Ներհամայնքային ճանապարհներ	23%	21%	42%	13%	2%	40%	29%	20%	9%	2%
6	Միջհամայնքային ճանապարհներ	23%	13%	25%	27%	13%	31%	24%	16%	20%	9%
7	Տրանսպորտ	11%	17%	28%	28%	15%	14%	23%	33%	19%	12%
8	Հեռախոսակապ/փոստ	2%	4%	7%	42%	44%	5%	24%	12%	29%	29%
9	Ինտերնետ	13%	11%	28%	43%	6%	38%	38%	12%	7%	5%
10	Խմելուջուր	23%	10%	17%	33%	17%	30%	30%	20%	11%	9%
11	Ոռոգման ջուր	38%	20%	16%	13%	13%	40%	19%	23%	12%	7%
12	Կոյուղի	70%	5%	18%	5%	3%	69%	14%	14%	3%	0%

13	Աղբահանություն	20%	9%	24%	24%	24%	41%	27%	16%	5%	11%
14	Գազամատակարարում	21%	2%	0%	31%	46%	30%	9%	20%	18%	23%
15	Էլեկտրականություն	4%	2%	9%	26%	60%	5%	7%	16%	30%	43%
16	Դպրոց	10%	6%	21%	27%	35%	17%	17%	24%	22%	20%
ոլորտային հիմնախնդիրներ											
17	Բնակֆոնդի վիճակ	10%	8%	46%	26%	10%	14%	30%	32%	14%	11%
18	Բուժ. հիմնարկ	20%	2%	24%	33%	22%	24%	10%	31%	26%	10%
19	Մշակույթային կառույց/ակումբ	47%	15%	4%	9%	26%	68%	11%	11%	7%	2%
20	Մարզական կառույց	60%	17%	10%	14%	0%	64%	21%	10%	5%	0%
սոցիալ-մշակույթային հիմնախնդիրներ											
21	Գործազրկություն	20%	33%	33%	13%	0%	19%	30%	40%	12%	0%
22	Արտագաղթ	12%	23%	49%	9%	7%	13%	23%	41%	15%	8%
23	Դեմոգրաֆիական-խնդիրներ	9%	14%	55%	9%	14%	10%	20%	40%	20%	10%
24	Ավանդույթներիպահ-պանում	2%	2%	36%	45%	14%	0%	8%	39%	34%	18%

Աղյուսակ 1. Համայնքների անդամների բարեկեցության ընկալումը[116]

Կարգ	Բնութագիր	Բնակչության %
Հարուստ	Ունեն 15-20 հա մշակվող հողատարածք: Ունեն առնվազն 15 կով, ավելի քան 30 ոչխար: Հնարավոր է տունը երկհարկանի լինի՝ ավտոտնակով, ինչպես նաև ունենա եվրոպատուհաններ, կենտրոնական ջեռուցման համակարգ: Ունեն գյուղտեխնիկա և/կամ ավտոմեքենա: Հնարավոր է կենսաթոշակ ստանան, ընտանիքի անդամներից նվազագույնը մեկն աշխատում է: Ամսական միջին եկամուտը կազմում է 300.000-400.000 ՀՀ դրամ: Կարողանում են ապահովել երեխաների բարձրագույն կրթությունը:	14.9%

[116] Թալինի շրջանի գյուղական համայնքներում ամենաաղքատ տնային տնտեսությունների դասակարգումը արվել է ըստ հետևյալ պայմանների.

- Իրենց տիրապետության տակ ունեն կամ 1 կով, կամ մինչև 5 ոչխար:
- Կարող են ունենալ սեփական տուն, բայց բնակարանային պայմանները չափազանց վատ են:
- Չունեն հողամաս կամ չեն կարողանում մշակել այն:
- Մնունդը սահմանափակ է, հիմնականում բաղկացած է էժան ապրանքներից:
- Սեզոնային աշխատանքը վարձատրվում է օրական կտրվածքով 1000 ՀՀ դրամ:
- Երեխաները դպրոց հաճախել են, բայց նրանցից ոմանք չեն ավարտել նույնիսկ 8 – րդ դասարանը:
- Չունեն ոսկի և զարդեր:
- Չունեն մեքենա և գյուղատնտեսության մեքենայացման պարագաներ:
- Չի կարող ունենալ կենցաղային տեխնիկա:
- Մեծ մասը չի ստանում կենսաթոշակ ու նպաստ:
- Չի կարող հետևել առողջապահական խնդիրների լուծմանը նույնիսկ համայնքային բուժկետում:

Միջին	Ունեն 5-10 հա մշակվող հողատարածք: Ունեն առնվազն 5 կով, 25 ոչխար: Ունեն որևէ գյուղտեխնիկա և/կամ խորհրդային արտադրության հին մեքենա: Ունեն սեփական տուն, որում կա տեղական կահույք, ժամանակակից որոշ կենցաղային տեխնիկա: Ընտանիքի անդամներից առնվազն մեկը աշխատավարձ է ստանում, հնարավոր է նաև կենսաթոշակի առկայություն: Դժվարությամբ կարողանում են ապահովել երեխաների բարձրագույն կրթությունը: Ամսական միջին եկամուտը կազմում է 120.000-150.000 ՀՀ դրամ:	41.8%
Աղքատ	Ունեն մինչև 5 հա հողատարածք, սակայն այս կամ այն պատճառով չի մշակվում կամ մասամբ է մշակվում: Անասուն հիմնականում չունեն, սակայն հազվադեպ դեպքերում դրանց թիվը կարող է հասնել մինչև 1-2 կովի և/կամ 5 ոչխարի: Գյուղտեխնիկա չունեն, ավտոմեքենա չունեն կամ այն շատ հին է և չի շահագործվում: Տուն ունեն, սակայն դրանք ենթակա են կապիտալ վերանորոգման, կարող է նույնիսկ դռներ և լուսամուտներ չունենան: Ունեն հին, ժառանգություն ստացած կահույք: Թոշակ կամ նպաստ կարող է լինել, սակայն ծախսերը գերազանցում են: Երբեմն կարող է ընտանիքի անդամներից մեկն աշխատի: Հազիվ ապահովում են երեխաների միջնակարգ կըրթությունը: Ամսական միջին եկամուտը կազմում է 30.000-50.000 ՀՀ դրամ:	31.0%

Ծայրահեղ աղքատ	Հողատարածքը կարող է լինել մինչև 1 հա, սակայն չի մշակվում: Անասուն չունեն: Մեքենա և գյուղտեխնիկա չունեն: Կարող է ունենան խարխլված՝ անտանիք, անդուռ ու անլուսամուտ տներ, հնամաշ գույք, չունենան նույնիսկ այնպիսի կենցաղային տեխնիկա, ինչպիսին է հեռուստացույցն ու սառնարանը: Թոշակ/նպաստ կարող է ստանան, սակայն չի բավարարում կենցաղային հարցերը հոգալու համար: Աշխատանք չունեն կամ ընտանիքից մեկն օրավճարով աշխատում է, հիմնական եկամուտը գյուղատնտեսությունից է: Երեխաների կրթությունը սահմանապակվում է միջնակարգ կրթությամբ, որոշ դեպքերում՝ թերի միջնակարգ: Ամսական եկամուտը տատանվում է մինչև 20.000-40.000 դրամի սահմաններում, որի նույնիսկ բարձր շեմը բազմանդամ ընտանիքի պարագայում բավականին ցածր է ծախսերի համեմատ:	12.3%

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան Ղ.**, «Երկերի ժողովածու»// հտ. 2, Ե., 1939
2. **Անանուն Դ.**, Հայության հավաքական զորությունը// “Մշակ”, 1915 թ., N 178:
3. **Ավագյան Գ.**, «Հայաստանը 1920-1990 թթ.»// Ե., 1997
4. **Ավդալբեգյան Թ.**, «Հայ գյուղը Հովի. Թումանյանի յերկերում»// Յերևան: Տրեստի 2-րդ տպ, 1925
5. **Գաբրիելյան Մ.**, «Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը (ազգագրական ուսումնասիրություն)»// Ե., 2001
6. **Դյուրկհեյմ Է.**, «Սոցիոլոգիական մեթոդի կանոնները»// Ե., 2006
7. «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ»// Երևան, 2012
8. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը»// Երևան, 2011
9. **Նալբանդյան Մ.**, «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»// Ե., 1954:
10. **Պոտոսյան Ա.**, «Հայաստանի Հանրապետության գյուղական տարաբնակեցումը»// Ե., 1999
11. **Պռոշյան Պ.**, «Երկերի ժողովածու»// հտ. 2, Ե., 1962
12. «Սոցիալական բարեփոխումները Հայաստանում»// Երևան, 2011
13. **Վերմիշյան Հ.**, «Գյուղը և ազգային ինքնությունը սոցիալական փոփոխությունների հեռանկարում»// «Բանբեր Երևանի համալսարանի»- Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, N 137.5, Երևան: ԵՊՀ հրատ., 2012, էջ. 3-9:
14. **Акопян М. В.**, «Сельская община в Восточной Армении во второй половине XIX- начале XX вв.»// Е., 1988
15. **Ананун Д.**, “Армянский вопрос в России”// В кн: Сборник армянской литературы, под ред. М. Горького, Петроград, 1916, с. V-XLVI
16. **Араратян В.**, “Две горстки семян и два стакана солярки”// PanArmenian. 23 января 2013 г., http://www.panarmenian.net/rus/news/142477/
17. **Бауман З.**, “Город страхов, город надежд”// Логос, 2008, № 3. ст. 24–53
18. **Бахшян А. Ж., Оганян К. М., Покровская Н. Н., Саакян А. К.**, “Ценностные ориентации в трудовом поведении и кросс-культурное исследование трудовой миграции”// Ереван: Изд. «Эдит Принт», 2012
19. **Бергер П.**, “Священная завеса”// Религия и общество: Хрестоматия по социологии религии. - М.:Аспект-Пресс, 1996
20. **Бестужев-Лада И. В.**, “Альтернативная цивилизация”// М.: Алгоритм, 2003
21. **Вебер М.**, “Избранные произведения”// М., 1990
22. **Вебер М.**, “История хозяйства: Город”// М., 2001

23. **Вермишян А.**, “Село и национальная идентичность в перспективе социальных изменений”// Вестник Ереванского университета. Сер. Социология, экономика. 2012. № 5
24. **Вермишян А. Р.**, “Измененные формы взаимоотношений в современном армянском селе”// “Социология и Право”, СПб., № 1 (18), 2013
25. **Вукосавлевич С.**, “История крестьянского общества (социология обитания)”// Социология в странах Центральной и Восточной Европы: Хрестоматия, М., 2005, ст. 595-596
26. **Генкин Б. М.**, “Человек и его потребности”// М.: Норма, 2013
27. **Дюркгейм Э.**, “О разделении общественного труда”// М.: Канон, 1996
28. **Елисеева И. И.**, “Социальная статистика” М.: Финансы и статистика, 2001
29. **Елисеева И. И.**, “Социология”// М.: ЭКОС, 2003
30. **Зиммель Г.**, “Конфликт современной культиры”// Избранное, Том 1, Москва: Юрист, 1996
31. **Зиммель Г.**, “Социология Религии”// Избранное, Том 1, Москва: Юрист, 1996
32. **Зиммель Г.**, “Большие города и духовная жизнь”// “Журнальный зал”, М., 2002 № 3-4
33. **Ионин Л. Г.**, “Георг Зиммель — социолог: критический очерк”// М.: Наука, 1981
34. **Кертман П. И.**, “История культуры стран Европы и Америки”// М.: Высшая школа, 1987
35. “Крестьянские движения в Армении”// Составитель В. Ристуни. Ереван: изд-во АН Арм. ССР, 1948
36. **Лурье С. В.**, “Историческая этнология”// М.: Академический проект, 2004
37. **Маркс К.**, “Капитал. Критика политической экономии”// Т.1. – М.: Гос. изд-во политической литературы, 1950
38. “Многоиндикаторное кластерное обследование по оценке положения детей и женщин, 2012. Предварительный отчет, февраль 2013 г”// Минск: Юнисеф, Национальный статистический комитет Республики Беларусь, 2013. http://belstat.gov.by/homep/ru/households/mics/results.pdf
39. **Парк Р.**, “Город как социальная лаборатория”// “Социологическое обозрение”, Т. 2, № 3, М., 2002
40. **Парсонс Т.**, “Понятие общества: компоненты и их взаимоотношения”// Американская социологическая мысль, Москва, 1996
41. **Покровская Н. Н.**, “Трансформация нормативной регуляции экономического поведения”// Берлин: Lambert Academic Publishing, 2012
42. **Рощин С.**, “Равны ли женщины мужчинам?”// Демоскоп: население и общество. – 2005. – №219-220. http://demoscope.ru/weekly/2005/0219/tema04.php
43. **Рэдклифф-Браун А.**, “Методы этнологии и социальной антропологии”// Антропология исследования культуры. Т. 1: Интерпретация культуры. – СПб., 1997

44. **Семенас С., Синицкий Д.**, “Органическое сельское хозяйство в Беларуси” Минск, 2009. http://agracultura.org/files/Organik_review.pdf
45. **Синицына Е.**, “Трансформация общины”// Лаборатория социальных инноваций, http://www.cloudwatcher.ru/analytics/6/view/60/
46. “Социально-экономическое положение Республики Армения в январе-декабре 2012 года: Информационный месячный доклад”// Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2013
47. “Статистический ежегодник Армении, 2005”// Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2005
48. “Статистический ежегодник Армении, 2008”// Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2008
49. “Статистический ежегодник Армении, 2012”// Ереван: Национальная статистическая служба Республики Армения, 2012
50. “Статистический ежегодник республики Беларусь 2012”// Минск: Национальный Статистический Комитет Республики Беларусь, 2012
51. “Стратегия национальной безопасности Республики Армения”// Одобрена Советом национальной безопасности при Президенте Республики Армения 26.01.2007
52. **Теннис Ф.**, “Общность и общество”// СПб., 2001
53. **Тилли Ч.**, “Историческая социология”// 2009, http://comparsociology.com/wp-content/uploads/2012/07/Тилли-Историческая-социология.pdf
54. **Франгян Е.**, “Обществоведческие этюды. Обоснование социально-философского мировоззрения партии Дашнакцутюн”// Баку: изд. Арамазд, 1917
55. **Чичерин Б. Н.**, “Обзор исторического развития сельской общины в России”// "Русский Вестник", No 1, 1856. http://az.lib.ru/c/chicherin_b_n/text_1856_obzor.shtml
56. **Almgren G.**, “Community”// Encyclopedia of Sociology. New York, 2000
57. **Crow G. A.**, “Community life. An introduction to local social relations”// London: Harvester Wheatsheat. 1994
58. **Burr V.**, “Social Constructionism»// 2003
59. “Handbook of historical sociology”// Edited by G. Delanty and E. F. Isin, London: SAGE pub., 2003
60. **Gans. H.**, “People? Plans and policies”// New York: Columbia University Press and Russel Sage Foundation. 1991
61. **Giddens A.**, The Consequences of Modernity// London, 1990, p. 136.
62. **Habermas J.**, “Legitimation Crisis”// Boston, 1975
63. **Habermas J.**, “The theory of communicative action: reason and rationalization of society”// Beacon press, 1897
64. **Kunda Z.**, “Social cognition: Making sense of people»// 1999
65. “Labour Market in the Republic of Armenia 2007-2011. Statistical handbook”// Yerevan: National Statistical Service of the Republic of Armenia, 2012

66. **Loomis C. P.**, "Parochialism in the ASA"// The American Sociologist 16(February): 59. In Smith, Suzanne. "The Institutional and Intellectual Origins of Rural Sociology" (Paper for 2011 Rural Sociology Assn. meeting), 1981
67. **Moskowitz G.**, “Social Cognition: Understanding Self and Others”// 2005
68. **Polanyi K.**, “La Grande Transformation. Aux origins politiques et economiques des notre temps”// Paris: Gallimard, 1983.
69. **Ritzer G., Goodman D.**, “Classical Sociological Theory”// 2004
70. **Robert E.**, Park “The City as a Social Laboratory”// 1929
71. **Serbin T., Sheila K.**, “Studies in Social Identity”// 1983
72. **Smith S.**, "The Institutional and Intellectual Origins of Rural Sociology"// Paper for 2011 Rural Sociology Assn. meeting
73. “Social Snapshot and Poverty in Armenia: Statistical Analytical Report”// Yerevan, 2011
74. **Suls J., Wills Th.**, “Social Comparison: Contemporary Theory and Research”// 1991
75. **Wallerstein I.**, “The Modern World-System as a Capitalist World-Economy”// The globalizatin reader / ed. by Frank J. Lechner, John Boli. 3rd edition, 2008, Blackwell Publishing Ltd.
76. **Wirt L.**, “Urbanism, as way of life”// In. R. Sennet, Classical essays in urban culture. Appleton Century Grofts.New York. 1969
77. **Zerubavel E.**, “Social Mindscapes”// 1997
78. http://analitika.at.ua/news/2008-07-10-1195
79. http://crrc.am/research-and-surveys/completed-projects/world-salues-survey-in-armenia?lang=en
80. http://crrc.am/research-and-surveys/ongoing-projects/social-cohesion-survey?lang=en
81. http://m.news.am/rus/news/143617.html
82. http://un.by/theme/yearofderertification/inBelarus/
83. http://www.gnhc.gov.bt/
84. http://www.mss.am/home/list_report.php?id=12&sec=report, 19.04.2012

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մկրտիչյան Ա. Ե., Շահնազարյան Գ. Ն., Սահակյան Ա. Կ.,
Վարտիկյան Ա. Ռ., Վերմիշյան Հ. Ռ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 12,5:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1